

«ՄԱՏԱՐԱՆ»

ՄԵՄՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵԽԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՆԱՐԵԿՅԱՆ ԴՊՐՈՑԸ

ԳԻՐՔ Ա.

(Բնագրագիտական հետազոտություններ)

ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ» - 2013

ՀՏՏ 891.981.0

ԳՄԴ 83.3(2 Հ)

Ն 406 թ.

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Թամրապյան Հ.

Ն 406 թ. Գրիգոր Նարեկացին և Նարեկյան գպրոցը Ա / Եր.,

Նաիրի, 2013, 332 էջ:

ՀՏՏ 891.981.0

ԳՄԴ 83.3(2 Հ)

ISBN 978-5-550-01331-9

© Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, 2013
© «Նաիրի» հրատարակչություն, ՓԲԸ, 2013

ՆԱՐԵԿՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նարեկյան դպրոցի մատենագրությունը գերակշռող է Խ դարի հայ մատենագրության մեջ ոչ միայն խորքային-բովանդակային իր նշանակությամբ, այլև ծավալային առումով:

Գերջին տարիների ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս մեկտեղելու Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների պահպանված գրական ժառանգությունը, դիտարկելու այն ընդհանուր հենքի վրա, իր բազմազան կապերի ու առնչությունների մեջ, քննելու դպրոցի ընդհանուր գիտակրթական համակարգի ստեղծման, ձեսագրման ու զարգացման պատմությունը։ Այս առումով հարկ է նշել մի հանգամանք։ Հայ մշակույթի պատմության մեջ Նարեկյան դպրոցը յուրահատուկ է նաև նրանով, որ իր հիմքում ունի գրական մի ընտանիքի կյանքի ու գործունեության պատմությունը։ Հիշենք՝ այս ընտանիքի անդամներն են Անանիա Նարեկացին՝ դպրոցի հիմնադիրն ու ուսուցչապետը, և Խոսրով Անձեացին իր երեք որդիներով՝ Սահակ, Հովհաննես և Գրիգոր, որոնցից վերջին երկուսի կյանքի ու գործունեության պատմությունը կապված է Նարեկյան դպրոցի հետ։ Անանիայից հետո Հովհաննես Նարեկացին է ստանձնում վանքի առաջնորդությունը։ Խոսրովն ու իր որդիները Անանիա Նարեկացու հետ նաև բարեկամական կապեր ունեին. Խոսրովի կինը Անանիայի հորեղբոր գուստըն էր։

Կենսագրական սկզբնաղբյուրներից պարզվում է, որ Անանիա Նարեկացին ազգակից էր նաև Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսին, որն իր հերթին Անանիա Մոկացի կա-

թողիկոսի քեռորդին էր։ Այս ամենը հուշում է հոգեորազգական մի միասնական շղթայի առկայությունը X դարի հոգեոր վերնախավի մեջ։

Պատմությունը չի պահպանել այլ բազմաթիվ երգիչ-երգահանների, հոետոր-բանաստեղծների, աստվածաբան-մեկնիչների անուններն ու գործերը, որոնք ուսանել ու կենցաղավարել են Նարեկյան դպրոցում։ Հայտնի է միայն Պետրոս վարդապետը, որը սուրբ գրքերի մեկնիչ էր և Անանիա Նարեկացու կողքին էր նրա կյանքի և՝ նախանարեկյան, և՝ նարեկյան շրջանում։ Նրա երկերը չեն պահպանվել, բայց պետք է ենթադրել, որ նա իր մեծ դերն է կատարել դպրոցի վերլուծական-մեկնողական ավանդների ձևավորման գործում։ Դպրոցի տարածական ոլորտները քննելիս պետք է նրա շրջանակներում ընդգրկել նաև Ուխտանես պատմիչին, որն իր պատմական երկը գրել էր իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու «Հայոց պատմության» հետևողությամբ, նրա անմիջական պատվերով, համատեղ մշակած ծրագրով և պատմագրության սկզբունքներով¹։

Մինչև վերջերս դպրոցի գրական ժառանգության ուսումնասիրությունը կենտրոնանում էր միայն Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա, որն առավել անխաթար է պահպանվել։ Սակայն բնագրային նոր հետազոտությունները թույլ են տալիս ընդլայնել դպրոցի գրական ընթացքի պատկերը։ Խոսքը հիմնականում Անանիա Նարեկացու ստեղծագործության մասին է, որի նորահայտ գործերն արժեքավոր նյութ են տրամադրում Նարեկյան դպրոցի ձևավորման ու զարգացման շրջանի ուսումնասիրության հա-

¹ Այս մասին տե՛ս Հրաչյա Թամրապյան, Անանիա Նարեկացի. Կյանքը և մատենագրությունը, Երևան, 1986թ., էջ 40-43։

մար, թույլ են տալիս հաղթահարել որոշ միակողմանի մոռեցումներն այս ասպարեզում:

Իր հերթին Խոսրով Անձեւացու մատենագրությունը ևս, որ ձևավորվել է մշակութային նույն տարածքում, ուղղակիորեն առնչվում է Նարեկյան դպրոցի ձևավորման շրջանի հետ և խոր ազդեցություն է թողել նրա ընթացքի վրա:

Այս խոշոր մատենագիրների ստեղծագործության ուսումնասիրությունը հարցադրումների ու խնդիրների մի ամբողջ համակարգ է ներմուծում նարեկացիագիտության մեջ ընդհանրապես, որ մինչ այժմ ներկայանում էր միայն Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ, առանց իր նախընթաց աստիճանների ու գարգացման ընթացքի պարբերացման: Նրանց գրական-աստվածաբանական ժառանգությունը զգալիորեն փոխում է Նարեկյան դպրոցի մատենագրության մասին մեր պատկերացումները, և այն արդեն ներկայանում է իբրև տեսական խմորումների ու գրական ընթացքի մի պատմություն: Հստ այսմ՝ բանաստեղծական արվեստի Նարեկյան դպրոցը բնորոշվում է զարգացման երեք փուլերով՝ կապված դպրոցի երեք նշանավոր ներկայացուցիչների՝ Խոսրով Անձեւացու, Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հետ:

Ուսումնասիրությունը վեր է հանում նրանց ստեղծագործության ժառանգական կապը, տալիս գրական մի ընտանիքի պատկեր, որը մի ամբողջ դպրոց ու ժամանակաշրջան է ներկայացնում հայ միջնադարյան մշակույթի մեջ:

Ե՛վ սկզբնական շրջանում, և՛ զարգացման ողջ ընթացքում Նարեկյան դպրոցի ընդերքում մեծ, յուրատեսակ թուիչք է ապրում տեսական-վերլուծական միտքը: Գրվում են այնպիսի դավանաբանական-աստվածաբանական և մեկնողական երկեր, ինչպիսիք են Խոսրով Անձեւացու «Մեկ-

նութիւն ժամակարգութեան», Անանիա Նարեկացու «Հնդդէմ թոնդրակեցւոց» և «Հաւատարմատ» կոթողային երկասիրությունները, ինչպես նաև՝ «Սակս բացայայտութեան թուոց» գիտական տրակտատը, Գրիգոր Նարեկացու «Երդ երգոցի» մեկնությունը և վերլուծական-մեկնողական այլ գործեր:

Հնդհանրապես, դպրոցի ներկայացուցիչների համար բնորոշ են մեծ կտավի, հիմնարար երկերը, որոնցից են վերոհիշյալ գործերը, ինչպես նաև Անանիա Նարեկացու խրատների «Գիրքն» ու չպահպանված «Պատմութիւն Հայոցը», Գրիգոր Նարեկացու «Մատեանն» ու «Գանձտետրը»։ Այս երկերը կարենոր են մի շարք առումներով։ Նրանցում արտացոլված են դպրոցի կրթական համակարգը, մշակված ու համակարգված սկզբնաղբյուրները, «ներքին» ու «արտաքին» գիտելիքները, ուստի դրանք կարենոր են դպրոցի գիտական-կրթական տեսադաշտն ու շրջանակները պարզելու համար։

Օգտագործված սկզբնաղբյուրները դրվում են ներքին բարդ շրջանառության մեջ, միախառնվում են դպրոցի ստեղծագործական ընթացքներին՝ իրենց նպաստը բերելով գրական զորեղ շարժմանը։ Նորահայտ փաստերը վկայում են, որ Նարեկյան դպրոցն ունեցել է կրթական լայն համակարգ, որը ժամանակի համար բավական բարձր մակարդակ ուներ և մեծ արդյունքների էր հասել «արտաքին» գիտելիքների՝ աշխարհիկ գիտության ու արվեստի յուրացման և ուսուցման ասպարեզում²։

Առավելապես այս դպրոցի ներկայացուցիչների, և մանավանդ Անանիա Նարեկացու մեկնողական երկերում աստ-

²Տե՛ս նույն տեղում, էջ 74-177։

վածաբանությունը մեծապես սնվում է անտիկ գիտության նպաստներով։ Այստեղ՝ նպատակառուղղված ու արդյունավետորեն, անտիկ գիտությունը ի սպաս է դրվում աստվածաբանությանը՝ բարձրացնելով այն ժամանակի համար նոր մակարդակի, ընդգծելով տրամաբանության, համակարգված գիտելիքների դերը նրանցում և դաշտանաբանության մեջ ներմուծելով փիլիսոփայական-մեկնողական տարեր։

Նարեկյան դպրոցում անցյալի այդ ժառանգությունից ընդգծվում և բարձրացվում է նորպլատոնականության փիլիսոփայությունը՝ Պլատոն, Փիլոն Ալեքսանդրացի, Դավիթ Անհաղթ, Կեղծ Դիոնիսիոս Արեոպագացի, Դիօնիսիոս Թրակացու հայ մեկնիչներ և Ստեփանոս Սյունեցի վերընթաց շղթայով։ Հավանաբար Դավիթ Անհաղթի հետևողությամբ, նկատելի է հետաքրքրությունը նաև Արիստոտելի նկատմամբ։

Անցյալի տեսական ժառանգության յուրացման ընթացքում որոշակի ընտրության ու տեսական ուղղվածության հանգամանքն արդեն խոսում է դրա ոչ էկեկտիկ, այլ ստեղծագործական բնույթի մասին։ Այս ժառանգությունը յուրացվում է ոչ ինքնանպատակ, իբրև ավարտուն ու փակ մի համակարգ, այլ ենթարկվում է վերլուծության ու մեկնաբանության՝ հիմքեր ստեղծելով յուրատեսակ խաչասերման համար։ Նմանօրինակ վկայակոչումների ու հզումների ընթացքում շոշափվում են գոյաբանական, իմացաբանական, տարրաբանական, գեղագիտական, քերականական, տրամաբանական, մաթեմատիկական, բնագիտական, բժշկագիտական և այլ հարցեր։

Նարեկյան դպրոցի ընդերքում տեղի է ունենում մի յուրօրինակ խմորում-խաչասերում, որ նկատելի է աստվածաբանության և գրական տեսության ու փորձի մեջ։ «Ար-

տաքին»՝ աշխարհիկ գիտելիքն ու փորձը ի սպաս են դրվում ժամանակի պահանջներին, թափանցում են աստվածաբանության և հոգեոր գիտության ու արվեստի ոլորտները, որի ընթացքում դրսեորվում են նոր հնարավորություններով և վերահաստատում են պատմամշակութային զարգացման ընդհատված շղթան:

Այս ամենը խոսում է երևույթի տեսական նախահիմքերի ձևավորման, նորովի զարգացման և ընթացական շղթայի նպատակառուղղվածության մասին:

Վերոհիշյալ երկերը ռացիոնալ հիմք են ստեղծում ստեղծագործական հետագա խմբումների և թոփչքի համար, քանի որ բանական թոփչքին հետևում է հուզական-զգացմունքային թոփչքը՝ աննախաղեղ, զորեղ լիցքեր շարժելով հոգեոր արվեստների համակարգում:

Բազմազան են նաև աղերսները ժողովրդական բանահյուսության հետ, հաճախ այն ուղղակի է արտահայտված, հաճախ խորքային բնույթ ունի: Եթե տեսական հիմնադրույթների աղբյուրն անցյալի տեսական միտքն է, ապա բուն ստեղծագործական պրոցեսում ընդօրինակելու, ուսանելու առավել տեսանելի, անմիջական առարկան բանահյուսությունն է (դպրոցի բոլոր ներկայացուցիչները հատկապես շեշտում են այդ հանգամանքը և համեմատության եզրեր փնտրում իրենց երկերի ու բանահյուսության միջև): Այս եռամիասնությունից է ստեղծվում հոգեոր երգի, բանաստեղծության բարձրարվեստ համադրությունն ու խտացումը: Այսպիսով՝ նարեկյան դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործության քննությունն ընդհանուր տեսական համակարգում ընթանում է մի քանի ուղղություններով.

ա) ճշգրտվում է նրանց գրական ժառանգությունը, որ ներկայանում է բավական ծավալուն, բազմաբնույթ ու

բազմաշերտ երկերով (բնականաբար, աշխատանքն այս ասպարեզում ավարտված չի կարելի համարել, քանի որ եղած նյութերն այդ ժառանգության միայն մի մասն են կազմում)։

բ) վեր է հանվում հայ միջնադարի այս նշանավոր գործիչների կյանքի ու համատեղ գործունեության պատկերը, նրանց գերը հայ տեսական մտքի և բանաստեղծության գարգացման մեջ։

գ) արժեքավոր նյութ է տրամադրվում Նարեկյան դպրոցի ձևավորման և գարգացման շրջանի ուսումնասիրման համար, որ թույլ է տալիս հաղթահարել միակողմանի մոտեցումներն այս ասպարեզում։

դ) Հարցադրումների ու խնդիրների մի ամբողջ համակարգ է ներմուծվում նարեկացիագիտության մեջ ընդհանուրապես, որ մինչ այժմ ներկայանում էր փաստորեն լոկ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ՝ առանց իր նախընթաց աստիճանների և փուլերի։

ե) իբրև հետևանք՝ զգալիորեն փոխվում են Նարեկյան դպրոցի մատենագրության մասին մեր պատկերացումները, որ ներկայանում է իբրև շուրջ մեկդարյա տեսական խմուրումների ու գրական ընթացքի մի պատմություն։

զ) բացահայտում են այն վիթխարի ազգեցությունը, որ թողել է այս դպրոցը X դ. և հետագա հայ աստվածաբանական մտքի, եկեղեցական-քաղաքական կյանքի և մշակույթի գարգացման վրա։

է) ընդգծում են Հայկական վերածննդի այս շրջափուլի՝ իբրև համաքրիստոնեական և համամշակութային երեսույթի առանձնահատկություններն ու նշանակությունը։

Բոլոր այս խնդիրներին մենք անդրադարձել ենք մեր

նախորդ մենագրություններում³: Դրանք շոշափվել են նաև բազմաթիվ միջազգային գիտաժողովներում և առանձին մենագրություններում, կապված Գրիգոր Նարեկացու «Մատեանի» 1000-ամյա հոբելյանի հետ և դրանից հետո:

Մեր խնդիրն է ներկա հատորում ամբողջացնել և հարստացնել մեր բնագրագիտական ուսումնասիրություններն այս ասպարեզում նոր հետազոտություններով, որ հիմք կդառնա ներկայացնելու Նարեկյան դպրոցի գրական ժառանգությունը, դրա սկզբնավորման և զարգացմանընթացքի ողջ պատմությունը X դարի ողջ մատենագրության համատեքստում՝ ներքին կապերի և փոխառնչությունների մեջ, քանի որ այն բազմազբյուր և բազմաճյուղ կապեր ունի գարդի ներքին խմբումների ու տեղաշարժերի, հոգեսոր-քաղաքական ցնցումների, կրոնադավանաբանական զորեղ և կենտրոնաձիգ մաքառումների հետ, որոնք արտահայտված են եկեղեցական մատենագրության մեջ։ Դարի մի շարք գործիչների ուղիները խաչվել են Նարեկյան դպրոցի հետ, ոմանք հարել են այս դպրոցին, հաճախ նրանց տեսակետները բախվել են եկեղեցական իշխանությունների և նրանցում իշխող մտայնության ծայրահեղ դրսերումների հետ, անգամ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները մեղադրվել են աղանդավորության հարելու մեջ։

³ «Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը», Եր., 1986թ., «Նարեկյան դպրոցը», Եր., 2000թ., «Գրիգոր Նարեկացին և նորպատոնականությունը», Եր., 2004թ., «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը», Եր., 2005թ., «Գրիգոր Նարեկացին և բանաստեղծական արվեստի կիլիկյան դպրոցը», Եր., 2008, «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացու ասացեալ», Եր., 2009: «Մատենագիրք Հայոց», Ժ դար, Նարեկյան դպրոցը և X դարի հայ մատենագրությունը, Երևան, «Նաիրի», 2011թ., «Մատենագիրք Հայոց», Հ. ԺԲ, Գրիգոր Նարեկացի, Երևան, «Նաիրի», 2011թ.։

Սակայն էականն այն է, որ հենց նրանց հետ էին կապվում, նրանց շուրջ էին կենտրոնացած հակաաղանդավորական և հակաքաղկեդոնական դավանաբանական պայքարի տեսական-աստվածաբանական իմաստավորման և այդ պայքարը փիլիսոփայական-մեկնաբանական բարձրագույն մակարդակի հասցնելու խնդիրները: Եվ խոսքն այստեղ, առաջին հերթին, վերաբերվում է Անանիա Նարեկացուն, այդ խոչոր եկեղեցական-քաղաքական գործչին, ազատախոհ մտածողին, պատմիչին, փիլիսոփա-աստվածաբանին, մեկնիչին, հոենտոր-ճարտասանին, հոգեոր արվեստների նորարար տեսաբանին և բանաստեղծին, երաժշտին, որ Նարեկյան դպրոցի հիմնադիրն ու առաջնորդն էր, հակաքաղկեդոնական և հակաաղանդավորական պայքարի առաջամարտիկը, Անանիա Մոկացի և Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսների համախոհն ու ազգակիցը, Հովհաննես և Գրիգոր Նարեկացիների ուսուցիչն ու մոր կողմից ազգականը:

Մյուս կողմից, նման համատեքստում նորովի է վերաիմաստավորվում մի այլ խոչոր գործչ՝ Խոսրով Անձեացու կյանքն ու ստեղծագործությունը: Նա ի հայտ է գալիս իբրև հոգեոր արվեստների խոչոր տեսաբան, միջնադարյան հայ արձակի երևելի ներկայացուցիչ, որ խոր հետք է թողել Նարեկյան դպրոցի հատկապես սկզբնավորման շրջանի վրա, նրա մեկնությունները, կրքոտ, պաթետիկ քարոզներն ու խրատները ազգել են Անանիա Նարեկացու տեսական հայացքների և Գրիգոր Նարեկացու ստեղծագործական ձեռագրի վրա, իսկ «Մեկնութիւն ժամակարգութեան» երկը կրթական ձեռնարկ է եղել Նարեկյան դպրում:

Այս խնդիրներից շատերին, ինչպես նշեցինք, մենք անդրադարձել ենք մեր աշխատություններում:

Սակայն բնագրագիտական նոր հետազոտություններն ի հայտ են բերել նոր, բացառիկ նշանակություն ունեցող բնագրեր, որոնք մեծապես հարստացնում են դպրոցի գրական ժառանգության պատկերը, հնարավորություն տալով պարբերացնել դպրոցի ձևավորման և զարգացման պատմությունը, հնարավորին չափով որոշակիացնել նրա ներկայացուցիչների ստեղծագործության տարեգրությունը։ Ասվածն, առաջին հերթին, վերաբերվում է Գրիգոր Նարեկացուն, որի գրական ժառանգությունը համարվել է նոր գործերով, որոնք առանցքային նշանակություն ունեն նրա ստեղծագործության լուսաբանման համար։ Մենք դա կփորձենք անել հաջորդ ուսումնասիրություններում, իսկ ներկա հատորում մեր խնդիրն է եղել համադրել մեր բնագրագիտական հետազոտություններն այս ասպարեզում, որոնք, ինչպես նշել ենք, ի հայտ են բերում բազմաթիվ ու բազմաբնույթ նոր երկեր։

Այս հատորն, իբրև բնագրագիտական նոր և նորագույն հետազոտությունների շարք, իր ներքին աղերսներով, բնագրական բարդ ու բազմաշերտ կապերի լուսաբանմամբ, դպրոցի գրական ընդհանուր համատեքստի ու առանձին երկերի ներքին առնչությունների քննությամբ ունի ինքնուրույն արժեք ու ներկայացնում է մեր աշխատանքների շարունակական ընթացքն ու ուղղվածությունն այս բնագավառում։ Այն ի մի է բերում մեր հին ու նոր աշխատանքներն այս ասպարեզում, որոնց գերակշիռ մասը կատարված է վերջին տարիներին։ Այս նյութերը, համոզված ենք, դրվելով գիտական շրջանառության մեջ, նորանոր ուսումնասիրությունների և հետազոտությունների առիթ կհանդիսանան։

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑՈՒ
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

X դարի հայ նշանավոր գործիչ և մտածող Խոսրով Անձևացու գրական ժառանգության մի մասն է միայն պահպանվել: Տպագրված են նրա մեկնությունները՝ «Մեկնութիւն ժամակարգութեան» և «Մեկնութիւն աղօթից պատարագին»: Անանիա Մոկացի կաթողիկոսի և Հակոբ Մպատեցու հայտնի թղթերից պարզվում է, որ նա հեղինակ է նաև հակաճառական բնույթի երկերի՝ հակընդդեմ ժամանակի եկեղեցական տիրող կարգերին ու իշխանություններին, որի հետևանքով ենթարկվել է բանադրության:

Խոսրով Անձևացու նշված մեկնություններից բացի՝ նրա գրական ժառանգությունից գրեթե ոչինչ չի պահպանվել:

Մաշտոցի անվան Մատենադարանի երկու ձեռագրերում՝ թիվ 5441, թերթ 14ա-16թ (1817թ.) և թիվ 6302, թերթ 75թ-79ա (ԺԼ դ.) տեղ է գտել խրատական բնույթի մի գրվածք՝ վերնագրված «Խոսրովայ բանք առ վասն եկեղեցականս», որի քննական բնագիրը կազմել, աշխարհաբար թարգմանել և ուշագրավ ուսումնասիրությամբ հանդերձ հրատարակել է Վազգեն սրբ. Գալստյանը¹:

Խոսրով Անձևացու գրական ժառանգության և այս երկի հեղինակային պատկանելության մասին աշխատասիրողը գրում է. «Խոսրով Անձևացու կյանքը և գործերը ուսումնասիրելիս հանդիպեցինք Մ. Զամչյանի հետևյալ հաղորդմանը. «Եւ եղեւ երեւելի անարատութեամբ վարուց եւ աստուածաշնորհ իմաստութեամբ եւ շարագրեաց բազում գիրս եւ ճառս»²: Ենթադրելի է, որ Անձևացին բեղուն գրիչ է ունեցել, սակայն, ցավոք, բացի ժամակարգության և պատարագի մեկնություններից, նրա ժառանգությունից գրեթե

¹ Տե՛ս «Էջմիածին», 1994, Զ-Է, էջ 30-50:

² Մ. Զամչյան, «Հայոց պատմութիւն», Երևան, 1985 թ., Բ, էջ 835:

ոչինչ չի հասել մեզ: Մաշտոցյան Մատենադարանի թիվ 5441 և 6302 ձեռագրերում հանդիպեցինք «Խոսրովայ բանք առ վասն եկեղեցականսն» վերտառությամբ մի գրվածքի: Սույն գործի՝ Անձևացու հեղինակությանը պատկանելու մասին է վկայում Գարեգին Զարբհանալյանը: «Բանք երանելոյն Խոսրովայ» խորագրով երկասիրութեան մը յիշատակութեան հանդիպեցինք, որ հաւանականաբար Անձևացույն է»³: Գրության լեզուն, ոճը և նպատակային ուղղվածությունը նույնպես խոսում են գործի՝ մեծանուն եպիսկոպոսի գրչի արդյունքը լինելու օգտին: Կարծում ենք, որ Անձևացու գործերից հատվածներ կամ ամբողջական գործեր պահպանված են նաև նրա ժամակարգության և պատրագի մեկնությունների մեջ, որոնք մաս չեն կազմում կամ առնչություն չունեն սույն մեկնությունների հետ, բայց հավաքված և տեղադրված են այստեղ, ինչպես օրինակ՝ «Մեկնութիւն ժամակարգութեան» տպագրված օրինակում, գիշերային և առավոտյան ժամերգությունների միջև գետեղված «Բանք պիտանիք իրատականք». յոյժ օգտակարք եւ հոգեշահք՝ նորին սուրբ հոգեկիր վարդապետին Խոսրովու. Զկամքն եւ գերկիւղն Աստուծոյ ճշմարտութեամբ ծանուցողի»⁴ գործը»⁵:

Եվ իրոք, նշված գործի բնագրային-ոճական համեմատությունը մեկնությունների և հատկապես XIII դարում Մովսես Երգնկացու խմբագրած «Մեկնութիւն ժամակար-

³ Գ. Զարբհանալյան, «Հայ հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ)», Վենետիկ, 1886 թ., էջ 518:

⁴ «Մեկնութիւն ժամակարգութեան», էջ 63-76: Սույն գործի աշխարհաբար թարգմանությունը իրականացրել է Տիգրան Խաչատրյանը, տե՛ս «Գանձասար», Բ, էջ 152:

⁵ «Էջմիածին», 1994, Զ-Է, էջ 36-37:

գութեան» երկի մեջ զետեղված Խոսրով Անձևացու «Բանք պիտանիք խրատականք...» խրատի և մեկնության այլ հատվածների հետ կասկած չեն թողնում, որ նրանք պատկանում են նույն հեղինակի գրչին:

Խոսրով Անձևացին իր երկերում տալիս է ժամակարգության հիմնական աղոթքների ու քարոզների մեկնությունը, իր խոսքով՝ «յայտնաբանութիւնը»: Այստեղ չեն մտնում այն աղոթքներն ու քարոզները, որ կապված են առանձնահատուկ օրերի, եկեղեցական տոների, մարտիրոսների հիշատակի և ծեսերի հետ, քանի որ, իր պատճառաբանությամբ, խուսափել է երկարաբանությունից, և հիմնական հոգեոր տեքստերի մեկնաբանությամբ աշխատել է պատկերացում, գաղափար տալ ամբողջի մասին: Այսպիսով, նրա մեկնությունն առաջնորդող ձեռնարկ, նախագիտելիք է հանդիսանում եկեղեցական ամբողջ ծիսակարգի յուրացման համար:

Խոսրով Անձևացին թողել է երկու հիշատակարան՝ Ժամակարգության մեկնության սկզբում և Պատարագի աղոթքների մեկնության վերջում: Դա ենթադրել է տալիս, որ մենք գործ ունենք նույն մեկնության տարբեր մասերի հետ և կամ որ այս երկու մեկնություններն ել գրվել են միաժամանակ և զետեղվել են միևնույն մատյանում: Երկու հիշատակարաններում էլ հեղինակը խոսում է նույն հոգեորդ-գործնական հարցերի, եկեղեցական խաթարված կարգերի, հոգեոր համայնքի խնդիրների մասին, որոնք կոչված է քննելու, պարզաբանելու, բացատրելու իր մեկնությունը:

Նրանցում, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու պահպանված հիշատակարանում, չի նշվում, չի շեշտվում պատարագի աղոթքների առանձին մեկնության գոյության

փաստը. «Շնորհիւն Աստուծոյ եղեւ մեկնութիւն այսմ գրոց՝ ի ձեռն Խոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի... Արդ առաջին սուրբ գրոցս այսորիկ գծագրութիւն՝ եղեւ ձեռամբ Սահակայ որդույ տեառն Խոսրովու՝ սոյն սուրբ գրոցս մեկնողի, յերեք հարիւր իննսուն եւ ինն թուականութեանս Հայոց»⁶:

Խոսրով Անձեւացու որդին՝ Սահակը, չէր կարող գրի առնել միայն Պատարագի մեկնությունը առանց ժամակարգության մեկնության: Բնականաբար նա պիտի մեկտեղեր նրա նույնօրինակ երկերը, մանավանդ որ Պատարագի խորհուրդը եկեղեցական ժամակարգության մասն է կազմում:

Նույնը վերաբերվում է նաև Գրիգոր Նարեկացուն, որը հետագայում արտագրել է մեկնությունները. նա ևս նույն մատյանում պետք է զետեղեր այդ երկերը, և նրա հիշատակարանն ընդհանուր պիտի լիներ երկուսի համար:

Իրողությունն այն է, որ Խոսրով Անձեւացին գրել է մեկ մեկնություն: Նախնական բնագիրն ավելի ընդարձակ ու հանգամանալից խորագիր ունի, քան Մովսես Երզնկացու խմբագրած տարբերակում է: Վերջինս հարստացված է, և նրանից դուրս է թողնված Պատարագի աղոթքների մեկնության մասը.

«Բացայատութիւն կարգաց եկեղեցոյ, քարոզութեանց եւ աղաւթից ըստ իւրաքանչիւր ժամուց. Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի»⁷:

Նախնական այս օրինակն, ահա, միակտուր է. այստեղ Պատարագի մեկնությունն ընդհանուր մեկնության օրդա-

⁶ «Մեկնութիւն աղօթից պատարագին», Վենետիկ, Ս. Ղազար, 1869, էջ 67:

⁷ Մատենադարան, ձեռ N 1329, թերթ 1ա:

նական մասն է կազմում: Այդպես է նաև պահպանված մյուս հնագիր օրինակում (Մատենադարան, ձեռ. N 1328): Այս ձեռագրերն ավելի հին են (13-րդ դարի վերջ) Մովսես Երղնակացու ապրած ժամանակաշրջանից (13-14-րդ դդ.):

Խոսրով Անձևացին նշում է, որ մեկնողական ժանրին է դիմել եպիսկոպոսություն ստանձնելու բերումով, եկեղեցական խաթարված կարգերը վերականգնելու և համայնքի կրթության նպատակներով, իսկ Պատարագի մեկնությունը համընկնում է նրա եպիսկոպոսության տարեթվին (950թ.):

Սակայն այստեղ կտրվում է տրամաբանական շղթան, քանի որ, այդ նպատակներից ելնելով, նրա մեկնությունն ավելի համապարփակ պիտի լիներ, և ոչ սկզբնապես կենտրոնանար սոսկ պատարագի խորհրդի մեկնության վրա:

Աներկեա է, որ երկի հեղինակային խորագիրն արտահայտում է նրա բովանդակությունը: Պատարագի մեկնությունը ժամակարգության մեկնության մասն է կազմում, որ մեզ հասած ձեռագրերում չունի անգամ առանձին ենթախորագիր:

Սակայն հարցն ունի իր ավելի պարզ լուծումը, որի բանալին գտնվում է հենց Խոսրով Անձևացու երկու բավական ընդարձակ հիշատակարաններում: Համեմատությունը պարզում է, որ նրանք կցված են միենույն գործին:

Ժամակարգության մեկնության առաջաբան-հիշատակարանում արդեն Խոսրովը շոշափում է իր հիմնական խնդիրներն ու նպատակները, որոնք են՝ հավատի և պաշտոնակատարության նախահիմքերը, կրոնական ոգու զորացման խնդիրները: Այս ընթացքում, շեշտելով «սուրբ սրտով, բարի մտքով, անկեղծ հաւատով» պաշտոնավարելու և աղոթելու կարևորությունը, նա մի քանի անգամ ընդգծում է կարևորում է պատարագի խորհրդի նշանակությունը:

Խոսրովի առաջնահերթ խնդիրներից է նաև պատարագի աղոթքների մեկնությունը. «Բացայայտութիւն կարգաց եկեղեցոյ, քարոզութեանց եւ աղաւթից ըստ իւրաքանչիւր ժամուց. Խոսրովու Անձաւացեաց եպիսկոպոսի.»

Ընդ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ խաւսելով, ամենայն արթնութեամբ եւ զգուշութեամբ պարտիմք միտ դնել բանիցն սաստելոց, զի մի՛ ընդունայն կամ ի դատապարտութիւն մեզ իսկ ասացեալ լինիցին...

Եւ զի այս այսպէս է անշուշտ, ջանացուք ըստ կարի մերում զպաշտաւնն մեր ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղծաւոր հաւատոց Աստուծոյ ընծայել, քանզի եւ զսոյն ի Պաւլոսէ ունիմք գրութեամբն Աստուծոյ պատաղեալ, զի պատարագ կենդանի սուրբ հաճոյ Աստուծոյ զխաւառն պաշտաւնս մեր պատրաստեցուք: Ի սոյն եւ սաղմոսանուագն յորդորէ՝ երբեմն որպէս յինքենէ եւ երբեմն որպէս Աստուծոյ: Յինքենէ ասելն՝ Մատո՛ Աստուծոյ պատարագ աւրհնութեան եւ կատարեա՛ բարձրելոյն զուխտս քո: Եւ դարձեալ թէ՝ հատե՛ր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ աւրհնութեան եւ զանուն Տեառն կարդացից: Եւ որպէս յերեսաց Աստուծոյ՝ յորժամ ասիցէ՝ պատարագ աւրհնութեան փառաւոր արացէ զիս...»

Թաղագս այսորիկ կամեցայ բացայայտել որ ի պաշտաման եկեղեցոյ քարոզութիւնք եւ աղաւթք քահանայականք, զոր գիտակք մի արհամարհեսցեն, զի թէ իւրեանք անկարաւոտ են մերոց իմաստիցն, այլ ի պարզամտացն հայեցեալ յաւգուտ՝ ընկալցին զմեր ջանս վաստակոց եւ զպակասութիւն եղբայրական սիրով ուղղել խոկասցին»⁸:

Ինչպես տեսնում ենք, խոսքն ընդհանրապես բոլոր քահանայական աղոթքների և քարոզների մասին է, բայց

⁸ Մատենադարան, ձեռ. N 1329, թերթ 1ա-2բ:

Հիշատակարանում մի քանի անգամ շեշտվում է պատարագի խորհրդի նշանակությունը, որի աղոթքների և քառողների մեկնությունը ներառվել է հեղինակի ծրագրում:

Այս հիշատակարանին բովանդակությամբ տեղ-տեղ ուղղակիորեն նույնական է Պատարագի մեկնության վերջում կցված հիշատակարանը, որ տպագրում Յորդորակ վերնագիրն ունի: Հիշատակարանի սկզբում բառացիորեն կրկնվում է ժամակարգության մեկնության խորագիրը. «Ընորհիւն Աստուծոյ յայտնաբանութիւն արարեալ եկեղեցական կարգադրութեանց՝ ըստ իւրաքանչիւր ժամուց՝ ի կատարումն հասուցաք, ոչ որչափ ունէր խորհրդածութիւն քարոզացն եւ աղօթիցն բանք, այլ որչափ հասողութիւն մեր բաւեաց՝ համառօտեցաք: Եւ թէպէտ եւ բազում են եկեղեցականացն կարգաց զանազանութիւնք, քարոզաց եւ աղօթից եւ պատարագամատուցաց, եւ են որք ըստ մարտիրոսաց յիշատակի, եւ են որք ըստ տերունական տօնից... եւ է որ շնորհատրութիւն կարգեալք... զորս բովանդակ բան առ բան ընդ քննութեամբ արկանել, ոչ միայն մեք գրելոյն չլինէաք հանդուրժող, այլ եւ ոչ ընթերցօղքն՝ լսելութեան: Բայց եթէ հաստատութեամբ ոք միտ դնէ այսոցիկ՝ որ ասացանս, բաւականապէս առ այլսն ամենեսին միտս ստանայ: Եւ զի՞նչ ասեմք, թէ ամենեքումբք գրիցելովքս առ բովանդակ թողեալսն կարողանայ իմաստից, այլ թէ եւ մասին ինչ ի սոցանէ հասանէ մտաց՝ բաւականանայ առ ամենայն լրումն եկեղեցական կարգաւորութեանց:

Վասն որոյ աղաչեմ՝ մի՛ վարկպարագի գործ համարել զմտածութիւն աստուծեղէն բանից, մանաւանդ զքարութեանց եւ զաղօթից...

Վասն որոյ եւ դարձեալ իսկ ասէ Պաւղոս եղանելին, ի յիշել զօրինական պատարագսն, թէ վասն որոյ հարկ էր

օրինաւորացն այնպիսեօքն սրբիլ, եւ բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս պատարագօք քան զնոյնս։ Տեսանե՞ս, զի ոչ միայն զպատարագն երկնաւոր կոչէ, այլ եւ զմեզ՝ որք երկնաւոր պատարագին հաղորդեցաք։ Եւ դարձեալ եւս յայտնագոյնս՝ յորժամ ամէ. Եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բաժանորդ. եւ զերկնաւորն մատուցանեմք պատարագ...

Համարձակեցայ առ այս յանդգնաբար՝ ի հարկէ, եւ ոչ զի անձին փառս ստացայց, այլ զի զեպիսկոպոսութիւն վիճակեցայ, եւ ի վիճակելն՝ տգիտութիւն ի յոլովս վարկայ, եւ բանիւ ամենայն ումեք զբովանդակ զայս ծանուցանել՝ անհնար գիտացի, պատշաճ համարեցայ ի գրի հարկանել, զի թերեւս այսպէս գիւրին առ ուսանել արարից կամողաց...»⁹:

Համեմատենք իրար հետ խորագիրն ու վերջին հիշատակարանի սկիզբը, ուր նշված է երկի բովանդակությունը՝ «Բացայայտութիւն կարգաց եկեղեցոյ, քարոզութեանց եւ աղաւթից ըստ իւրաքանչիւր ժամուց...» և «Յայտնաբանութիւն եկեղեցական կարգադրութեանց՝ ըստ իւրաքանչիւր ժամուց ... քարոզացն եւ աղօթիցն բանք»։

Ինչպես տեսնում ենք, կրկնված է «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի խորագիրը, որն անառարկելիորեն վկայում է, որ Պատարագի մեկնությունը նրա մասն է կազմում։

Հեղինակի երկու հիշատակարաններն իրար են միացնում միենույն երկի՝ իրարից տարանջատված մասերը։

Խոսրով Անձեացու երկի՝ Պատարագի մեկնության մասում կա նման մի անառարկելի փաստ ես։

⁹ «Մեկնութիւն աղօթից պատարագին», էջ 64-67:

Խոսրով Անձևացին վկայակոչում է իր միենույն գործի նախորդ հատվածներից մեկը, որ չկա Պատարագի մեկ- նության այդ հատվածին նախորդող մասում, այլ հանդիպում է ժամակարգության մեկնության մեջ:

«Օրհնեա, Տէր. զի բեմասացութեան տեղի է, եւ աւարտեն զաղօթսն օրհնութեամբք, եւ ի վարդապետութեանն յունկնդրութիւն տան զանձինս, եւ ապա զխորհրդականն կատարեն: Բայց զի յայլում վայրի ասացեալ է մեր վասն որք ոչ կարեւոր համարին գունկնդրութիւն գրոց սրբոց, աստանօր հարկ համարիմ սակաւ ինչ ասել առ այնոսիկ որք ասենն, զի լսեմ եւ ոչ առնեմ՝ ապա բնաւ եւ ոչ լսեմ, զի մի՛ աւելի դատեցայց: Ի դէպ է ասել նոցա. ո՛վ աներեկիւղ երկիւղածութեանդ. պատգամ Աստուծոյ եկեալ յերկ-նից, Է՞ր իշխես ասել ոչ լսեմ եւ ոչ առնեմ. ապա ուրեմն առաւել դառնացուցիչ քան զհրէայսն գտանիս Աստու- ծոյ...»¹⁰:

Այս հատվածում խոսվում է սուրբ գրքերի ընթերցման ու ունկնդրության, և ընդհանրապես եկեղեցական արարողակարգի նկատմամբ անտարբերության ու արհամարհանքի մասին, որին նվիրված մի ամբողջական քարոզ կա ժամակարգության մեկնության մեջ¹¹: Այս հատվածն է, ահա, հիշատակում հեղինակը, որն ընդգծվում է իր պատկերավորությամբ ու խիստ ոճերով:

«Բայց թէ ընդէ՞ր այժմ խափանեալ է. ո՛չ վասն այլ իրի, այլ միայն վասն պղերգութեան. քանզի եւ զկանոնին գիրս ի յոլով տեղիս այժմ խափանեալ տեսանեմք. եւ ուր կարդանն, քնոյ պատճառ եւ ո՛չ խրատու օգտի զգիրս առ- նեն բազումք: Եւ ըստ յառաջանալոյ ժամանակիս՝ թուի թէ

¹⁰ Նույն տեղում, էջ 8-9:

¹¹ «Մեկնութիւն ժամակարգութեան» էջ 14-19:

Եւ սուղ կարդացումնս այս խափանի. քանզի աւելորդ իրս եւ ո՛չ կարեւոր յոլովից թուի:

Եւ երանի թէ աւելորդ միայն՝ եւ ո՛չ վնաս եւս իսկ համարէին բազումք, եւ վայրապար դատարկութիւն ի հոգեւոր եւ ի մարմնաւոր գործոյ: Եւ ասեն այսպիսի բանս. թէ զմեղս եւ զարդարութիւն ամենայն ոք գիտէ, եւ եթէ խոտորիլ կամի ի չարէն եւ զբարին առնել, տեղեակ է ամենայն մարդ, իսկ զգբովք պատաղիլն չէ՛ ինչ շահ, այլ խափանումն ի կարեւորացն:

Եւ այս է որ զամովսական ըսպառնացումն յարդիւնս ածէ. զսովն ո՛չ հացի, եւ զծարաւն ո՛չ ջրոյ. այլ սով լսելոյ զբանն Տեառն...

Եւ ո՞ր է բան արդարութեան, եթէ ոչ խրատք սուրբ գրոց. եւ որ նոցա տգէտն է. տակաւին տղայ է, թէպէտ եւ լսէ զնոսա, իսկ որ լսէ ո՛չ զիա՛րդ ապրի...

Եւ ո՛չ միայն մեռեալ են այնմ կենաց, որք ո՛չն կերակրին պատուիրանօքն Աստուծոյ, այլ եւ ի խաւարի աստէն են, քանզի ո՛չ ունին զլոյս պատուիրանացն Աստուծոյ...

Եւ եթէ այսպէս է, մթացեալ խաւարաւ ծածկեալ են ոգիք ատեցողացն զպատուիրանս Տեառն... Խելագարեալք են եւ նման շամշելոցն խօսին...

Բայց զի ի սատանայէ խօսին, որք խափան լինին գրոց լսելութեան, ասացաք փոքր ի շատէ. ի կարգս դարձցուք ուր սկիզբն արարաք:

Զի թէ եւ կարեւոր է ընդդէմ նոցա երկայնել զբանս, եւ յոլով են առ այս առասացութիւնք սրբոցն ձայնից, այլ ո՛չ թողու զմեղ պատաղիլ զայսու շատութիւն իրիս, որ առաջի

կայ: Վասն որոյ սակաւուք պատճառս տուեալ ուսումնասիրաց, ի մեր խնդրոցն լուծումն յառաջեսցուք»¹²:

Ինչպես տեսնում ենք Խոսրով Անձևացու երկի բնագրային համեմատություններն ու հիշատակարաններն, ինչպես նաև ձեռագրական տվյալները անառարկելիորեն վկայում են, որ նրա հեղինակած ժամակարգության և Պատարագի մեկնությունները մի ամբողջական երկի մասերն են կազմում:

Այդ է վկայում նաև հղացման բուն գաղափարը՝ կապված եպիսկոպոսական աստիճան ստանալու հանգամանքի և եկեղեցական ողջ արարողակարգը՝ նրա աղոթքներն ու քարոզները կրոնավորների դասին մեկնաբանելու և ժողովրդին լսելի դարձնելու նպատակի հետ, որ ենթադրում էր կրթական-լուսավորչական լայն ծրագիր՝ միտված արժնացնելու կրոնական զգացմունքը քրիստոնեական համայնքի ներսում, նորոգելու նրա խախտված արարողակարգը, նորովի մեկնաբանելու եկեղեցական պաշտամունքի ու ժամակարգության խորհուրդն ու աստվածային նշանակությունը, փրկելու եկեղեցին աշխարհականացումից, զորացնելու նրա հոգեսոր սկիզբները:

Այս ծրագրից ելենելով՝ նա պիտի քննության առներ ողջ ժամակարգության աղոթքներն ու քարոզները և կանգչառներ միայն պատարագի արարողակարգի վրա:

Մատենադարանի հնագույն ձեռագրերը թեև վերջից պակասավոր են, բայց իրենց մեջ են ներառում նաև Պատարագի մեկնության մի զգալի մասը, որի մեջ է նաև Պատարագամատույցի մի հատված: Այս պատարագամատույցի հատվածն էլ, ահա, ամբողջացնում է երկի կառուցված-

¹² Նույն տեղում:

քի մասին մեր պատկերացումները՝ այն ժամակարգության մեկնության վերջին մասն է կազմում։ Այդ մասին հիշատակում է նաև Խոսրով Անձեւացին երկի վերջին կցված իր հորդորակ-հիշատակարանում։ «Զի թէպէտ եւ բազում են եկեղեցականացն կարգաց զանազանութիւնք, քարոզաց եւ աղօթից եւ պատարագամատուցաց... Բայց եթէ հաստատութեամբ ոք միտ դնէ այսոցիկ՝ որ ասացանս, բաւականապէս առ այսն ամենեսին միտս ստանայ»¹³:

*

Ի՞նչ պատճառով են իրարից տարանջատվել նույն երկի տարբեր մասերը։ Ինչո՞ւ է Մովսես Երզնկացին իր խմբագրությունից դուրս թողել Պատարագի մեկնության մասը։

Անձեւացու այս երկու գործերը հրատարակվել են անջատաբար, հավանորեն այն պատճառով, որ սկզբնապես հրատարակվել է Մովսես Երզնկացու խմբագրած տարբերակը, ուր զետեղված չէ պատարագի աղոթքների մեկնությունը։

Հավանաբար XIII-XIV դարերում, երբ ապրել և գործել է Մովսես Երզնկացին, տեղի էր ունենում մեկնության նյութի խորացում, կենտրոնացում և ծավալում, և անհրաժեշտություն էր առաջացել Պատարագի աղոթքների առանձին մեկնության՝ խորհրդի կարևորությունն առավել շեշտելու և ավելի խոր ու հանգամանալից քննության համար, ինչպես, օրինակ, Ներսես Լամբրոնացու մեկնությունն է։ Փոփոխություններ էին կատարվում նաև ժամակարգության մեջ. այն ևս կարիք ուներ նոր հեղինակներով

¹³ Մատենադարան, ձեռ. N 1328, թերթ 126 ա:

լրացված ու հարստացված մեկնության, ինչպիսին Խոսրովի մեկնության՝ Երզնկացու խմբագրությունն է: Սակայն այդ խմբագրության մեջ կա Խոսրովին վերագրված մի ընդարձակ հատված (Էջ 63-76), որ չի հանդիպում նախօրինակը պարունակող ձեռագրերում: Այս հատվածն իրենից մի ամբողջական խրատ է ներկայացնում, որ ձեռագրերում հանդիպում է նաև իբրև առանձին գործ՝ վերագրված դարձյալ Խոսրովին: Մովսես Երզնկացին, փաստուրեն, իր խմբագրած ժողովածուի մեջ է ներմուծել Խոսրով Անձևացու խրատական գործը: Դրա վկայությունն է նաև այն, որ նշված հատվածը մեկնողական բնույթ չունի, առանձնանում է բնագրից իր ինքնուրույն արժեքով: Այդ է վկայում նաև նրա խորագիրը. «Բանք պիտանիք խրատականք, յոյժ օգտակարք եւ հոգեշահք՝ նորին սուրբ հոգեկիր վարդապետին Խոսրովու, զկամքն եւ զերկիւղն Աստուծոյ՝ ճշմարտութեամբ ծանուցողի»:

Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, համալրումներն ի հայտ են գալիս կարգախմբի աղոթքների ու սաղմոսների սկզբում և վերջում, իսկ հիմնական բովանդակությունը կազմում է Խոսրով Անձևացու մեկնությունը:

Հարկ է նշել, որ Երզնկացու խմբագրած տարբերակից դուրս են մնացել Հեղինակային մի շարք հատվածներ¹⁴: Նրանում կարեոր տեղ է հատկացված Ստեփանոս Սյունեցուց և Հովհան Օձնեցուց քաղած մեկնություններին, բացի դրանից, առկա է բավականին ընդարձակ մի շերտ, որի հեղինակային պատկանելությունը չի նշվում¹⁵: Դա, հավա-

¹⁴ Տե՛ս Մատենադարան, ձեռ. N 1329, թերթ 125թ-126թ, 130թ-133թ, 133թ-135թ, 135թ-143թ:

¹⁵ Տե՛ս «Մեկնութիւն ժամակարգութեան», Էջ 53-57, 90-120, 136-147, 150-155, 158-165, 172-178, 188-193, 196-207, 214-215, 220-237, 241-252:

նաբար, խմբագրի՝ Մովսես Երզնկացու հեղինակած մեկնությունների ու խրատաբանությունների շերտն է։ Անհավանական չէ, որ այդ հատվածները քաղված են Խոսրով Անձևացու բնագրի նախօրինակի չպահպանված հատվածից, քանի որ ոճական նմանություն է նկատվում։ Խնդիրը հետագա հետազոտության կարիք ունի։

Անանիա Մոկացի կաթողիկոսի (945-965թթ.) թղթերում եղած ուղղակի վկայություններից¹⁶, ինչպես նաև Մեկնության մեջ տեղ գտած և ձեռագրերում առանձին հանդիպող նշված երկու խրատների հանգամանքից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Խոսրով Անձևացին գրել է մեկնողական, խրատական, հակաճառական բնույթի նաև այլ գործեր, որոնք չեն պահպանվել։

¹⁶ Նշված թղթերը հրատարակել է Գ. Տեր-Մկրտչյանը (աե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1897, էջ 275-288): Տե՛ս նաև «Մատենագիրք հայոց», Ժ դար, Հ. Ժ, Երևան, «Նախիք», 2011, էջ 275-295:

**ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑՈՒ
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԱՐՑԸ

Անանիա Նարեկացու «Հայոց պատմութիւնը» հիշատակված է X դ. մատենագիր Ուխտանես եպիսկոպոսի «Հայոց պատմության» առաջաբանում: Ինչպես պարզվում է առաջաբանից, Ուխտանեսը Անանիա Նարեկացու աշակերտներից է եղել: Հենվելով այդ վկայության վրա, Հայագետներից ոմանք (Գ. Տեր-Մկրտչյան, Ղ. Ալիշան, Հ. Աճառյան) այն դնում են Անանիա Նարեկացուն պատկանող երկերի շարքում: Այս կարծիքը, սակայն, քննադատության է արժանացել (Ն. Ակինյան) և կամ դուրս է մնացել մյուս Հայագետների տեսադաշտից¹: Ուխտանեսի Պատմության վերոհիշյալ հատվածում ասված է. «Արդ քանզի լուեալ էր մեր յաղագս պատմութեան քո՝ սակաւ հատուածով առնել յսկզբան թագաւորացն Հայոց մինչև ի մեզ, և զքո բանիբուն պուետիկոս դաստաշարժիդ վարժս՝ ի ստադիս² ասպարէզ առ քո խաղաղութիւն, և զընթացս լեզուիդ, որ քնար է հոգւոյն և որպէս կամի՝ շարժէ զդա, և զուրախարար գիր Պատմութեան Հայոց փոքր հատուածօք, որպէս վերագոյն ասացաք, զոր արարեալ առ ի մխիթարութիւն ընթերցօղաց և ի լուսաւորութիւն լսողաց, և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ՝ յիշատակեալ զայս ևս պատմութիւն, Հայցէք փոքր ի շատէ գրով իմով, որ բերաւ առ քեզ սակաւ ինչ յայտարարութեամբ ի ձեռն Փիլիպպոսի

¹ Այսպես, օրինակ, Հ. Անասյանն իր «Հայկական մատենագիտության» մեջ (Հ. Ա. Երևան, 1959, էջ 726-727) Անանիա Նարեկացու անվան տակ, մատենագրության ցանկում նշելով վերոհիշյալ աղբյուրները, նրան պատկանող գործերի շարքում չի դրել այս գործը:

² Զեռագրում և տպագրում՝ իստագիւ:

Քահանայի, որպէս ի սկզբան ճառիս ասացաք, վասնզի և այսմ ևս ակն ոչ ունէի, եթէ ինձ հաւատալոց է ի քէն վիճակ պատմութեան»³:

Այս հատվածում Անանիա Նարեկացու համառոտ «Հայոց պատմությունը» հիշատակված է երկու անգամ, և եթե առաջին դեպքում կարելի է կարծել, որ խոսք է գնում գրվելիք Պատմության մասին («սակաւ հատուածով առնել յսկզբան թագաւորացն Հայոց մինչև ի մեզ...»), ապա երկրորդ դեպքում խոսվում է արդեն գրված, ավարտված Պատմության մասին, որի հասցեին հիացմունքի խոսքեր է հղում Ուխտանեսը («զուրախարար գիր պատմութեան Հայոց փոքր հատուածօք, որպէս վերագոյն ասացաք, զոր արարեալ առ ի միսիթարութիւն ընթերցօղաց և ի լուսաւորութիւն լսօղաց, և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ...»): Այսպիսով, Ուխտանեսն իր Պատմության առաջաբանում հիշատակում է մի այլ՝ արդեն գրված Պատմություն, միանգամայն պարզորոշ վերագրելով այն իր ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն:

Այս հատվածում, սակայն, տեղ է գտել քերականական-իմաստային մի հակասություն. հատվածն ամբողջությամբ մի բարդ ենթաստորադասական նախադասություն է, ուր մի սխալի հետևանքով անհամաձայնություն է առաջացել գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև, և ստացվել է այսպիսի կապակցություն. «Արդ քանզի լուեալ էր մեր յաղագս պատմութեան քո... և զքո բանիբուն պուետիկոս դաստաշարժիդ վարժու... և զընթացս լեզուիդ... և զուրախարար գիր Պատմութեան Հայոց փոքր հատուա-

³ Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 12-13:

ծօք... (ուստի) յիշատակեալ զայս ևս պատմութիւն՝ հայցէք փոքր ի շատէ գրով իմով, որ բերաւ առ քեզ... վասնզի... ակն ոչ ունէի, եթէ ինձ հաւատալոց է ի քէն վիճակ պատմութեան»: Այստեղ գլխավոր նախադասությունը պիտի անցյալ ժամանակի եղակի թվի առաջին դեմքով արտահայտված բայ ունենար, մինչդեռ դեմքի ու ժամանակի փոփոխության հետևանքով խզվել է նրա և երկրորդական նախադասությունների միջև իմաստային կապը: Բացի դրանից, անհասկանալի է մնում «հայցէք... գրով իմով, որ բերաւ առ քեզ» արտահայտությունը:

Եվ իրոք, ասվածը հաստատվում է բուն ձեռագրական տվյալներով: Մաշտոցի անվան Մատենադարանում Ուխտանեսի «Պատմության» պահպանված ընդամենը երեք ձեռագրերից երկուսում (№ 1774, թերթ 76թ, № 3732, էջ 10) նշված բայը հանդես է գալիս ոչ թե «հայցէք», այլ «հայցէի» ձեռվ, իսկ երրորդում (№ 8851) առաջբանն ու առաջին մասն ընդհանրապես բացակայում են: Այս ձեռագրերից առաջինն է հենց հրմք ծառայել նշված հրատարակությանը: Տպագրական սխալի հետևա՞նք է հայցէք-ի ք-ն, թե՞ հրատարակիչն է մտցրել այդ «ուղղումը», դժվար է ասել, բայց այդ վրիպակն, ինչպես կտեսնենք, քիչ դեր չի կատարել այս հատվածի սխալ մեկնաբանության մեջ:

Առաջինը Գալուստ Տեր-Մկրտչյանն է իր «Անանիա Մոկացի» աշխատության մեջ Անանիա Նարեկացու գործերի շարքում հիշում նաև նրա համառոտ «Հայոց պատմությունը»: «Նրա Հավատարմատ գիրքը հիշվում է Խաչիկ կաթողիկոսի ժամանակ, այդ թվերին է հիշվում և նրա Համառոտ Հայոց պատմությունը»⁴:

⁴ «Արարատ», 1897, էջ 95:

Նրանից հետո այս հարցի վրա կանգ է առել Ղ. Ալիշանը. «Թողլով այս խնդիրս կրոնաբանության... հիշենք մեր քննելին, որ է Պատմություն Հայոց... իր գրածն ի՞նչ նպատակով կամ ի՞նչ ոճով էր, այսչափ կիմացնե Ուխտանես գրելով անոր. «Լուեալ է մեր յաղագս Պատմութեանցս սակաւ հատուածով, յսկզբանց թագաւորացն Հայոց՝ մինչև ի մեզ... Զուրախարար գիրն Պատմութեանց Հայոց, փոքր հատուածովք, որպես վերագոյն ասացաք, զոր արարեալ առ ի միսիթարութիւն ընթերցօղաց... Յիշատակեալ զայս ևս Պատմութիւն Հայցի գրով իմով»⁵:

Ղ. Ալիշանը հայցէք-ը իրավացիորեն կարդացել է Հայցի և այդ մի ճշտուածով պարզություն է մտցրել բնագրի մեջ, մինչդեռ նրանից հետո Ն. Ակինյանը, իր կանխակալ կարծիքի համեմատ, այս հատվածը մեկնաբանելիս հենվել է հենց Հայցէք ձեի վրա և մի ամբողջական վարկած է կառուցել Ուխտանեսի կողմից նախապես, իր ուսուցչից գաղտնի գրած և նրան ուղարկած Պատմության մասին⁶: Հստ նրա, Ուխտանեսը երկու անգամ է Պատմություն գրել և վերոհիշյալ հատվածում խոսքը ոչ թե Անանիայի, այլ Ուխտանեսի «Հայոց պատմության» մասին է, որ հետագայում, ինչ-ինչ փոփոխություններով, միանալով նրա Հայտնի Պատմությանը՝ դարձել է նրա առաջին մասը: Այսպես՝ նա գրում է, թե Ուխտանեսը «իմանալով օր մը Անանիայի բաղձանքն Հայոց համառոտ պատմություն մ'ունենալու, կը հորինե ծածուկ, և նվեր կը խավրե Փիլիպպոս քահանայի ձեռոք Անանիայի ի նարեկ, թղթով մի միասին: Անանիա պատասխանն կու տա նմանապես գրավոր նույն

⁵ Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վաղարշապատ, 1901, էջ 87:

⁶ Ն. Ակինյան, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 56-60:

Փիլիպպոս քահանայի միջնորդությամբ։ Հոս Անանիա կառաջարկե իրեն ուրիշ խնդիրք մ’ալ, պատմագրել Վրաց Հայոցմե բաժանման պատմությունն ու ծաղերու մկրտությունն։ Ուխտանես... կը հրաժարի խոնարհաբար... Անանիա արյամբք ալ կու գա այցելության Խաչիկ կաթողիկոսին... Հոս էր նաև Ուխտանես... Ուխտանես կը հաղթահարվի Անանիայի թախանձեցուցիչ խոսքերու առջե և հանձն կ’առնու վերջապես Անանիայի առաջարկությունն՝ պատմագրել Վրաց և Հայոց բաժանումն և ծաղերու մկրտությունն... Բայց որովհետեւ ինչպես ըսինք վերը և պիտի ապացուցանենք, նույն վարդապետի խնդրանոք գրած էր Հայոց պատմություն մ’ալ, մատյանն պիտի բաղկանարերեք մասե.

Ա. Պատմութիւն Հայոց.

Բ. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց.

Գ. Պատմութիւն մկրտութեան ազգին, որ ծաղն կոչի»⁷:

Խոսելով բնագրի «վրիպակալից և դժվարիմանալի» լինելու մասին, «զոր ավելի միջնցուցած է հրատարակիչն շատ անիմաստ կետագրությամբ» և «հուսախաբ պատրանք» համարելով Ղ. Ալիշանի կարծիքը, «որ դյուրավ կրնար հայտնել փոքր-ինչ մտադիր ընթերցում», հեղինակն ինքը, իր խնդրի համեմատ վերծանելով այն, շատ ազատ է վարվել բնագրի հետ։ Համոզվելու համար բավական է համադրել բնօրինակն ու նրա վերծանությունը։

Բնագրի

Վերծանություն

Արդ քանզի լուեալ էր Լսած էի, թէ կը բաղձամեր յաղագս պատմութեան յիք որ ձեռնարկվեր պատքո՝ սակաւ հատուածով մություն մը «սակաւ հառոնել յսկզբան թագաւոր տուածով յսկզբանէ թագա-

⁷ Ն. Ակինյան, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, էջ 56-58:

րացն Հայոց մինչև ի մեզ, և զքո բանիբուն պուետիկոս դաստաշարժիդ վարժս՝ ի ստադիս ասպարէզ առ քո խաղաղութիւն և զընթացս լեզուիդ, որ քնար է հոգւոյն և որպէս կամի՛ շարժէ զդա, և զուրախարար գիր պատմութեան Հայոց փոքր հատուածօք, որպէս վերագոյն ասացաք, զոր արարեալ առ ի մխիթարութիւն ընթերցօղաց և ի լուսաւորութիւն լսօղաց, և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ՝ յիշատակեալ զայս ևս պատմութիւն հայցէք (էի) փոքր ի շատէ գրով իմով, որ բերաւ առ քեզ սակաւ ինչ յայտարարութեամբ ի ձեռն Փիլիպպոսի քահանայի, որպէս ի սկզբան ճառիս ասացաք, վասնզի և այսմ ևս ակն ոչ ունէի, եթէ ինձ հաւատալոց է ի քէն վիճակ պատմութեան⁸:

ւորացն Հայոց մինչև ի մեզ», Հորինեցի ըստ փափաքանացդ «պատմութիւն Հայոց փոքր հատուածօք առ ի մխիթարութիւն ընթերցօղաց և ի լուսաւորութիւն լսօղաց, և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ», և նույնն առաքեցի առ Տերդ թղթով մը. և դուք «յիշատակեալ զուրախար գիր(ս իմ) պատմութեան Հայոց», այն թղթին մեջ զոր ինձն խավրեցիք, «զայս ևս պատմութիւն (զբաժանման Վրաց և զմկրտության ծաղաց) հայցէք» ինձմե, որոնց վրա խոսած էի «փոքր ի շատէ գրով իմով (այս է ի Պատմության իմում), որ բերաւ առ քեզ սակաւ ինչ յայտարարութեամբ ի ձեռն Փիլիպպոսի քահանայի, որպէս ի սկզբան ճառիս ասացաք» ես բնավ չէի հուսար, թե այս դիպաց Պատմությունն ալ ինձ պիտի հանձնեք⁹:

⁸ Ուխտանես, Պատմութիւն, էջ 12:

⁹ Ն. Ակինյան, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, էջ 58-59:

Համեմատությունը ցույց է տալիս, որ Ն. Ակինյանի կատարած վերծանությունը կամայական է և չի համապատասխանում բնագրի իմաստին, ներմուծելով նրանում մի չեղյալ ենթատեքստ, որ հիմնված է ոչ թե բնագրի, այլ սոսկ վերծանողի վարկածի վրա: Այսպես՝ «Արդ քանզի լուեալ էր մեր յաղագս պատմութեան քո» հատվածը նրա մոտ դարձել է «Լսած էի, թե կը բաղձայիք, որ ձեռնարկվեր պատմություն մը», ավելացված է ամբողջ «և նույնն առաքեցի առ Տերդ թղթով մը» բառակապակցությունը, որպիսի իմաստ բնագիրն իր ենթատեքստում ամենևին չի պարունակում: Նմանօրինակ բառակապակցությունների թվին են պատկանում նաև «այն թղթին մեջ զոր ինձին խավրեցիք», «որոնց վրա խոսած էի» արտահայտությունները: Բնագիրը մեջ բերելիս անգամ (չակերտների մեջ), նա հարազատ չի մնացել նրան, ճշտումներ մտցնելով և իրար կցելով նրա տարբեր մասերը («յիշատակեալ զուրախարար գիր(ս իմ) պատմութեան Հայոց»): «Հայցէք փոքր ի շատէ գրով իմով» բառակապակցության հակասությանը Ն. Ակինյանը յուրօրինակ լուծում է տվել՝ տրոհելով այն երկու մասի և ներառելով իր ներմուծած տեքստի մեջ («այն թղթին մեջ, զոր ինձն խավրեցիք», «զայս ևս պատմութիւն հայցէք» ինձմէ, որոնց վրա խոսած էի «փոքր ի շատէ գրով իմով (այս է՝ ի Պատմության իմում)»): Ըստ այդմ՝ «հայցէք» ասելով Ուխտանեսը նկատի ունի իր ուսուցչի կողմից իրեն առաքված պատվերը՝ նոր Պատմություն գրելու մասին, իսկ «գրով իմով» ասելով՝ իր նախապես գրած և նրան ուղարկած Պատմությունը: Բնագրի «վասնզի և այսմ ևս ակն ոչ ունէի՝ եթէ ինձ հաւատալոց է ի քէն վիճակ պատմութեան» հատվածը վերարտադրվել է «ես բնավ չէի հու-

սար, թե այս դիպաց Պատմությունն ալ ինձ պիտի հանձնեք» ձևով։ Փոխված է շարադասությունը, համապատասխան հատվածները ետ ու առաջ են բերված, ավելացված ու դուրս են թողնված բառեր ու ամբողջ բառակապակցություններ։

Ն. Ակինյանի վերոհիշյալ վարկածը, սակայն, հերքվում է հենց իր՝ Ուխտանեսի վիճելի հատվածում հիշատակվող Պատմությանը տված բնութագրով. «Լուեալ էր մեր յաղագս պատմութեան քո՝ սակաւ հատուածով... յսկզբան թագաւորացն Հայոց մինչև ի մեզ», մինչդեռ իր Պատմության առաջին մասն Ուխտանեսն անվանում է «Թիւ թագաւորացն և հայրապետացն մերոց»։ («...կարգել մի ըստ միոցէ ըստ իւրաքանչիւր խորհրդոյ. նախ՝ զթիւ թագաւորացն և զհայրապետացն մերոց, և զբաժանմումն Վրաց ի Հայոց միաբանութենէ, և յետ այնորիկ զմկրտութիւնն ազգին՝ որ ծադն կոչի...»)¹⁰, ընդ որում առաջին մասը հասնում է ոչ թե մինչև Ուխտանես եպիսկոպոսի ապրած ժամանակաշրջանը, այլ ավարտվում է Հայաստանում քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանով։ Այս տարբերությունները ցույց են տալիս, որ վիճելի հատվածում Ուխտանեսը նկատի ունի մի այլ Պատմություն, այլապես ի՞նչ իմաստ ուներ «Հայոց պատմության» ամբողջական շարադրանքից հանել հետագա դարերի պատմությունը։

Կան նաև ուրիշ հակասություններ։ Դժվար է հավատալ, թե Ուխտանեսը, որ իր ուսուցչի հանդեպ այդպիսի երկյուղած սեր ու պատկառանք էր տածում, կարող էր նրա առջև նման գովեստով և բարձր գնահատանքով արտահայտվել իր գործի մասին («զուրախարար գիր պատմու-

¹⁰ Ուխտանես, Պատմություն, էջ 14:

թեան Հայոց... արարեալ առ ի միմիթարութիւն ընթերցօղաց... և ի պայծառութիւն սրբոյ եկեղացւոյ»), մանավանդ, որ նախորդ տողերում էլ նա գովեստի խոսքեր է հղում ուսուցչի հասցեին (Ն. Ակինյանն իր «Թարգմանության» մեջ շրջանցել է այդ տողերը):

Այս ամենը հաստատվում է նաև Ուխտանեսի Առաջաւանի մի այլ հատվածով, որտեղ խոսելով իր գրելիք Պատմության մասին, հեղինակն ասում է. «Աղաչեմ... անդադար աղօթս առնել առ Աստուած, զի թերես կարացից իմովս տկարութեամբ... կատարել զկամս քո... զի զայսոսիկ հրամայեալս ի քէն՝ քեզ պարտ էր կատարել առ իմս խնդիր, որպէս յառաջագոյն գրեցի առ քեզ՝ սակաւ ինչ զպատճառն յայտ արարեալ պատմութեանս, զի յայսմ ամենայնի բնաւ իսկ ոչ ունէի թէ լինիցի, այլ սակաւուք յայտարարութեամբ յիշատակել ի ձեռն գրոյն իմոյ, որ բերաւ առ քեզ»^{11:}

Հնարավոր չէ այս հատվածն այլ կերպ հասկանալ, քան. «Աղաչում եմ անդադար աղոթել Աստծուն, որ թերես կարողանամ իմ տկարությամբ... կատարել քո կամքը... քանի որ քո այս հրամանը հարկ էր, որ ինքդ կատարեիր իմ խնդրանքով, ինչպես գրեցի քեզ նախապես՝ փոքր-ինչ ծանոթություն տալով այս Պատմությունը (գրելու) պատճառի մասին, քանի որ բնակ չի սպասում, թե այս ամենը կլինի, այլ փոքրիկ ծանոթությամբ հիշատակեցի իմ գրով, որ բերվեց քեզ»:

Այս բնագրային փաստը, սակայն, միակը չէ: Նույն միտքն է արտահայտված Ուխտանեսի առաջարքանի վերջում, ուր նա ասում է. «Վասն զի այսոցիկ խնդրէր կամք

¹¹ Նույն տեղում, էջ 2-3:

իմ ի քէն, հանդերձ մախթանօք և բազում աղաչանօք կատարել, ըստ յառաջագոյն գրելեացն իմոց, զսոյն խորհուրդ խնդրոյն, որ ի քէն առ մեզ եղե, որպէս յառաջագոյն ասաց(աք) յսկզբան ճառիս...»¹²: Վերոհիշյալ հատվածները վկայում են, որ Ուխտանեսն ինքն է նախապես խնդրել Անանիա Նարեկացուն գրել իր՝ Ուխտանեսի հեղինակած Պատմությունը: Համեմատելով դրանք բնագրի վիճելի մասի հետ, տեսնում ենք, որ խոսքն այստեղ նույն Փիլիպպոսի միջոցով առաքված խնդրանքի մասին է: Նրանցում ոչ միայն նույն միտքն է արտահայտված, այլև օգտագործված են նման բառեր ու արտահայտություններ, ուստի վիճելի հատվածում ևս որպես պատվիրող պետք է հանդես գա ոչ թե Անանիան, այլ Ուխտանեսը, և բայն էլ պիտի արտահայտվի անցյալ ժամանակի եղակի թվի առաջին դեմքով: Զարմանալին այն է, որ այս հատվածներից առաջինը Ն. Ակինյանը բերել է որպես ապացույց իր ասածներին¹³, այնինչ այն հերքում է նրա փաստարկներն ու ենթադրությունները, և ամենից առաջ նրա վարկածը՝ Ուխտանեսի՝ Անանիայից «ծածուկ» գրած և նրան ուղարկած Պատմության մասին՝ մեկ անգամ ևս ցույց տալով, որ վերոհիշյալ հատվածում հիշատակվող Պատմությունը պատկանել է Ուխտանեսի ուսուցչի՝ Անանիա Նարեկացու գրչին:

Անանիա Նարեկացու «Հայոց պատմությունը» հիշատակում է միայն Ուխտանես պատմիչը. հետագա մատենագիրները լոռությամբ են անցնում այս փաստի կողքով: Անանիա անունով մի պատմիչ է հիշատակում Միսիթար

¹² Նույն տեղում, էջ 15:

¹³ Ն. Ակինյան, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, էջ 56:

Այրիվանեցին՝ իր ժամանակագրության մեջ զետեղված պատմիչների ցանկում։ Աչա ցանկի այդ հատվածը.

«32. Ղեռնդ Երէց,

33. Ուխտանես եպիսկոպոս,

34. Տէր Յովհաննէս կաթողիկոս,

35. Ստեփանոս վարդապետ Ասողիկ,

36. Ռստակէս Լաստիվերցի,

37. Յովհաննէս վարդապետ Կողեռն,

38. Յովհաննէս վարդապետ Տարօնեցի,

39. Մատթէոս վարդապետ Ուռհայեցի,

40. Անանիա վարդապետ,

41. Միհիթար քահանայ...»¹⁴:

Այս փաստին անդրադարձել է Հ. Աճառյանը. «Անանիա վարդապետ, անծանոթ պատմիչ, որին հիշում է Միհիթանեցին 37 հայ պատմագիրների շարքում, Մատթեոս Ուռհայեցի և Միհիթար Անեցի պատմիչների միջև։ Այս երկուսն էլ ժԲ դարից լինելով, Անանիա պատմիչն էլ պիտի լինի ժԲ դարից»¹⁵։ Զեռքի տակ ունենալով Ուխտանեսի հավաստի տեղեկությունը, մենք կարող ենք ենթադրել, որ Այրիվանեցու դասակարգման մեջ՝ այս դեպքում ժամանակագրական սխալ է թույլ տրվել, և հիշատակվող անհայտ Անանիա պատմիչը նույն ինքը՝ Անանիա Նարեկացին է, որ ձեռագրական ավանդույթում առավել հաճախ հիշվում է Անանիա վարդապետ անվամբ։ Մեջ բերված հատվածում, օրինակ, ժամանակագրական մի այլ սխալի հետեանքով Ուխտանես պատմիչը դրված է Հովհաննես Դրասխանակերտցուց առաջ, մինչդեռ հակառակը պետք է լիներ։

¹⁴ Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ Լ:

¹⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 153։

«ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԵՄ ԹՈՆԴՐԱԿԵՑԻՈՑ»

Անանիա Նարեկացու «Հակաճառութիւն բնդդէմ թոնդրակեցւոց» երկն ամենից հաճախի է հիշատակվում սկզբնաղբյուրներում։ Նրա մասին տեղեկություններ կան Գրիգոր Նարեկացու, Ասողիկի, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Ստեփանոս Օրբելյանի մոտ։ Սակայն նրանց հայտնած տվյալները, ստեղծագործության մասին որոշ պատկերացում տալով հանդերձ, չեն պատասխանում այն հիմնական հարցերին, որոնց առջև կանգնում է ուսումնասիրողը։ ի՞նչ ծավալ, ի՞նչ կառուցվածք է ունեցել այդ երկր, գիտական և գեղարվեստական ի՞նչ արժեք է ներկայացրել։ Սրա հետևանքով այս գործի մասին ուսումնասիրողների կարծիքները սոսկ կռահումների ու ենթադրությունների բնույթ էին կրում։ Ժամանակի ընթացքում, բնագրային նոր գյուտերի շնորհիվ, այս երկի շուրջ ծավալված խոսակցությունն ավելի հանդամանալից բնույթ ստացավ։ Նախ՝ Գ. Տեր-Մկրտչյանը Էջմիածնի մատենադարանի ձեռագրերից մեկում հայտնաբերեց և հրատարակեց Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան» գրվածքը՝ նույնացնելով այն հեղինակի վերոհիշյալ կորած աշխատության հետ, մինչդեռ իր ծավալով ու բովանդակությամբ այն չէր համապատասխանում հիշատակությունների վրա հիմնված պատկերացմանը։ Այս գործը թուղթ է՝ ուղղված ժամանակի կաթողիկոսին, հայտարարություն, որով հերքվում է հեղինակի՝ Անանիա Նարեկացու կապը թոնդրակեցիների հետ։ Հետագայում այս կարծիքին հարեցին Մ. Օրմանյանն ու Գ. Զարբհանալյանը, դեմ հանդես եկան Մուրացանը, Բ. Սարգիսյանը և Կ. Տեր-Մկրտչյանը։ Արժանահիշատակ են

Հատկապես Բ. Սարգիսյանի բերած փաստարկներն ու սկզբնաղբյուրներից քաղած տվյալները, որոնցով նա հիմնովին հերքեց Անանիա Նարեկացու հիշյալ թղթի ու նրա Հակաճառության նույնության հնարավորությունը՝ անառարկելիորեն ապացուցելով, որ դրանք միևնույն հեղինակի տարբեր գործերն են՝ գրված տարբեր ժամանակ և տարբեր հանգամանքների բերումով:

«Ստուգիւ՝ այսպիսի մի եղելութեան ակն յայտնի ապացոյց են նախ նոյն ինքն Անանիայի գրութեան վերջարանի այն խօսքերը. «Ի բոյոր սահմանեալ ամպարշտացն դաւանութեանց հեռի գոլով, ըստ յառաջագոյն գրելոց վասն նոցա»: Բ. Ն. Շնորհալին՝ իւր առ Միջագետս գրած թղթի մէջ՝ յետ յիշելոյ թոնդրակեցւոց մոլորամիտ բարբաջմունքը. «Զգիրս երանելոյն Անանիայ Նարեկացույ վարդապետի, որ րնդդէմ անիծելոյն Սմբատայ, անթերի ունի զայսոսիկ զպատասխանի»: Իսկ Անանիայի ձեռքերնիս հասած թղթի մէջ, որովհետեւ այսպիսի առարկութիւններ եւ պատասխաններ չկան եւ ոչ անունն անգամ Սմբատայ. ուրեմն պէտք է որ մեզ անծանօթ մի ուրիշ գրուածքի մէջ րւային, զորս Շնորհալին իսկ կարդայու բաղդն ունեցած էր: Գ. Գր. Մագիստրոս առ Կաթ. Ասորւոց ուղղած թղթին մէջ... «Աղէ, առ րնթերցիր, եթէ գտցես յայդմ գաւառի, զ Գիրս Անանիայի սրբոյն եւ զերիցս վարդապետին... եւ զՏեառն Յովհաննէսի Հայոց վերագիտողի, թէ որպիսի՝ ... անիծեալն այն Սմբատ երեւեցաւ»: Դ. ... Գր. Նարեկացի որ իւր առ Ուխտն Կծաւայ վանից գրած թղթոցն մէջ թոնդրակեցւոց մոլորութիւնները մի առ մի յիշատակելէն վերջ՝ կ՚րսէ առ Մուշեղ. «Արդ՝ զայսոսիկ հօրեղբայրն մեր ... եւ վարդապետ՝ մեծաւ քննութեամբ խնդիրս արարեալ իբրեւ

զԱստուծոյ ջատագով, եւ անդստին իբր զիմաստուն նախամարտիկ տապալեաց զառասպելաբան հայՀոյութիւն անօրինելոցն թոնդրակեացն»¹:

Հարցի պատմության մեջ վերջնական հստակություն մտցրեց Գ. Հովսեփյանը՝ դարասկզբին հայտնաբերելով և հրատարակելով Անանիա Նարեկացու նշանավոր Հակաճառությունից մի հատված: Ահա ինչ է գրում հրատարակիչն այդ առթիվ. «Հայտնի է, որ կորած է Անանիա Նարեկացու՝ րնդդեմ թոնդրակեցիների գրած աշխատությունը: Միաբանի հրատարակած «Գիր խոստովանութեան»-ը երբեք նույն լինել չէ կարող Անանիայի այն գրքի հետ, որ կարդացել են Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը և Ներսես Շնորհալին ու հանձնարարել իրենց բնթերցողներին՝ որպես յափագույն հերքում թոնդրակեցիների դեմ: Իր ժամանակին Միաբանի կարծիքի անրնդունելիությունը ցույց են տվել հ. Բարսեղ Սարգսյան և Կարապետ սարկավագ (այժմ՝ եպիսկոպոս) Տ. Մկրտչյան: Մեր ներկա հրատարակությամբ ոչ միայն վերջնականապես պարզվում է այդ խնդիրը, այլև գաղափար ենք ստանում Անանիա Նարեկացու գրքի բնավորության և գրելու եղանակի մասին իրական մնացորդից: Թեև այս հատվածը քաղված է Անանիայի Հակաճառությունից, բայց տեղ-տեղ բառացի պիտի լինի, ինչպես հատուկ է Երգնկացու աղբյուրներից օգտվելու եղանակին նաև յուր մյուս աշխատությունների մեջ»²: Մաշտոցյան Մատենադարանում պահպող այս արժեքավոր ձեռագիրը ԺԴ դարի է, և ինչպես ասացինք, Հովհաննես Երգնկացու կազմած զա-

¹ Բ. Սարգիսեան, Ուսումնասիրութիւն մանկքեա-պաւղիկեան թոնդրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացւոյ թուղթը, Վենետիկ, 1893, Էջ5-6:

² «Արարատ», 1914, էջ 919-920:

Նազան գործերի ժողովածու է: Անանիա Նարեկացու Հակաճառության հատվածն այնտեղ խորագրված է. «Նորին Յոհանի վարդապետի Եղնկայեցու՝ Բան համառօտ քաղեալ յԱնանիայի վարդապետին գրոցն որ ընդդէմ Թոնտրակեցոցն»³:

*

Անանիա Նարեկացու «Հակաճառութիւն բնդդէմ թոնդրակեցւոց» երկի պահպանված հատվածը որոշակի պատկերացում է տալիս ոչ միայն ամբողջ երկի, այլև աստվածաբանական մեկնության նրա եղանակի և դավանած սկզբունքների մասին: Զնայած իր փոքր ծավալին, այն ունի խիտ շարադրանք, հարուստ և բազմաշերտ բովանդակություն⁴:

«Երկու են մեզ տեսակք եկեղեցոյ եւ երկոքեան սոքա հոմանունք եւ երկոքեան ի հարցմունս բանի մասանցն միապէս ստորոգին, ի սերսն եւ ի տեսակս, ի ձեւս եւ ի թիւս, ի հոյովսն եւ յենթանկեալ անուանցն տեսակս, այլ եւ ի գարցմանազանութիւնս բարդիցն յերկուց լիոց տարրանան»⁵: Այսպես է սկսվում Անանիա Նարեկացու Հակաճառության վերոհիշյալ հատվածը՝ սկզբից ևեթ երեան հանելով հեղինակի դավանախոսության եղանակն ու օգտագործած հիմնական սկզբնաղբյուրները, որոնց շարքում առանձնանում են հին հունական գիտության դասական Դիոնիսիոս Թրակացու «Քերականութիւնն» ու նրա հայե-

³ Մատենադարան, ձեռ. 2173, թերթ 255 ա:

⁴ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրապյան, Անանիա Նարեկացի. Կյանքն ու մատենագրությունը, Երևան, 1986, էջ 56-74:

⁵ «Արարատ», 1914, էջ 912:

ըեն մեկնությունները, ինչպես նաև Դավիթ Անհաղթի փի-
լիսոփայական-տրամաբանական երկերն են՝ աշխատու-
թյուններ, որոնք կարեոր դեր են կատարել վաղ միջնա-
դարյան Հայաստանում աշխարհիկ գիտության և արվեստի
ձեւավորման ու գարգացման գործում: Հիշյալ հատվածում
օգտագործված են ոչ միայն մեծ քանակությամբ քերակա-
նական եզրաբառեր, այլև նշված աշխատություններից
վերցված ամբողջական ձեւակերպումներ ու սահմանում-
ներ: Այս հակածառության մեջ իրար են միահյուսված
աստվածաբանական մեկնությունն ու քերականական-
տրամաբանական վերլուծությունը: Նմանօրինակ մեկնու-
թյան է ենթարկվում եկեղեցի հասկացությունն իր երկու
հիմնական իմաստային նշանակությամբ՝ իբրև ժողով,
հավաք, նաև իբրև քրիստոնեական համայնք և քրիստո-
նեական կրոնը դավանող մարդկանց ամբողջություն և
իբրև ժողովատեղի, տաճար, քրիստոնեական կրոնապաշ-
տամունքային արարողության շենք: Մեկնաբանվում են
նաև եկեղեցու ընդունված տարբեր անվանումներ՝ կա-
թողիկե, կոչարան, տերունական տաճար և այլն: Փիլիսո-
փայական-աստվածաբանական այս հիմնավորումները հա-
ճախ վերափոխվում են ներբողի, և ընդհանրապես, ամբողջ
հատվածը կարելի է ներբող համարել տեսանելի, նյութա-
կան եկեղեցուն, որը թոնդրակյանների մերժած հիմնական
հասկացություններից մեկն էր:

Շարադրանքը հագեցած է աստվածաբանական, քե-
րականական, փիլիսոփայական հասկացություններով, այն
պարունակում է նաև մի արժեքավոր բժշկագիտական տե-
ղեկություն: Պահպանված հատվածն ունի նաև գեղարվես-
տական ընդգծված արժանիքներ: Զնայած իր բարդու-

թյանն ու բազմաշերտ բնույթին, այն կառուցված է ճարտասանական արվեստի օրենքներով, ներառելով ներբողի ժանրին հատուկ ճոխ ու հարուստ բառապաշար, գործառելով թանձր ու կառուցիկ փոխարերություններ, միաժամանակ աչքի է ընկնում թեթև ու խաղացկուն հնչերանգներով, խոսքի սահուն կառույցով ու հնարավոր պարզությամբ:

Բնագրում հատկապես շեշտված և ամենից ավելի գործածված է քերականական-տրամաբանական շերտը: Միայն մեջբերված հատվածում օգտագործված են ութ քերականական եղբարարուեր ու սահմանումներ: Այս սկզբունքը պահպանված է նաև հետագա շարադրանքի ընթացքում, կիրառված են նաև հասարակաբար (հասարակ) և հատկաբար (հատուկ), եզական (եզակի) և հոգնաբար (հոգնակի), հարանուն (նույն անունից կազմված կամ ածանցված բառ) և փաղանուն (հոմանիշ, նույնանիշ) եղբարարուերը: Այս բոլոր եղբարարուերը մեկնության ընթացքում հանդես են գալիս իբրև փիլիսոփիայական-տրամաբանական հասկացություններ:

Անանիա Նարեկացու օգտագործած քերականական տերմինների հիմնական մասի համար աղբյուր է Հանդիսացելի Դիոնիսիոս Թրակացու «Քերականութիւնը»: Սակայն կան հատվածներ, որոնք ի հայտ են բերում Հեղինակի ծանոթությունը նույն աշխատության հայ հեղինակների կատարած մեկնություններին: Դա վերաբերում է եկեղեցի և կաթողիկե անունների ստուգաբանությանը նվիրված հատվածներին:

Անանիա Նարեկացին ստուգաբանության է ենթարկում եկեղեցի անունը ընդունված երեք ձևով՝ ըստ իրի

(այսինքն՝ իրի ձևի), ըստ արվեստի (արհեստավորի գործողության) և ըստ ձայնի (հնչյունային կազմի). «Եւ զի երիւք տեսակօք գոլանա դրութիւն անուան՝ յիրէն, յարուէստէն և ի ձայնէն, և որպէս ամենայն անուն, նոյն և եկեղեցոյդ անուն»⁶: Ստուգաբանության այս երեք ձևերի տեսությունը չկա Դիոնիսիոսի «Քերականութեան» մեջ և նրա հույն մեկնիների երկերում և պատկանում է Դափիթ Քերականին⁷. «Ստուգաբանութեան ձեւք են երեք, յիրէն, յարուէստէն, ի ձայնէն: Եւ յարացոյց առաջնումն սափոր, եւ երկրորդին փայտհատ, եւ երրորդին ճնճուկ: Բայց ոչ ամենեցուն է գիւտս այս, այլ խոհեմագունիցն եւ եթ»⁸: Անանիա Նարեկացին համանման ստուգաբանության է ենթարկում եկեղեցի բառը. «Յառաջնո մասնէ իրին յատկացեալ ճանաչի, եկաւորական գումարութեամբ եկեալ ի մի հաւաքումն, եւ անուանադրեալ րստ ժողովման՝ եկեղեցի, իսկ առ ստուգաբանելն այսպէս իմասցի. եկեալ, լցեալ եւ ակաղձեալ, որում եւ անունն ըստ իրին պատահեցաւ, այսինքն ի գոլոյն լցեալ եւ բոլորեալ եւ կոչեալ բոլոր եկեղեցի... Արդ անունդ եկեղեցո ժողովումն թարգմանի, որպէս ասացաւ ըստ բառին ձայնի...»⁹: «Ըստ պատույն է գոյացութիւն սուրբ եկեղեցո եւ ի ժողովմանէ բոլորման առոնկայաւ գոյացութիւն, ստացեալ իւր գործ յատուկ գողովնելն եւ զգումարելն զցրուեալսն յազանց օտարաց... Ձի-

⁶ Նույն տեղում, էջ 921:

⁷Տե՛ս Հ. Ածոնց, Դիոնիսի Փրակիյսկի և արմանական տոլկօվածու, Պետրոգրադ, 1915, ս. CXXXVII, Ա. Մուլադյան, Հունաբան դարոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 175-176:

⁸ Հ. Ածոնց, Դիոնիսի Փրակիյսկի..., ս. 85.

⁹ «Արարատ», 1914, էջ 921-22/

րաւի ապա զանունն ըստ գործոյն առընկալաւ»¹⁰: Նա դիմում է նաև ստուգաբանության հաջորդ՝ լծորդ տառերի փոխարինման միջոցով բառի նախնական իմաստի վերձանության եղանակին: Այս սկզբունքը ևս հանդիպում է Դավիթ Քերականի մոտ, սակայն այն ավելի ավարտուն ու ամբողջական տեսք է ստացել Ստեփանոս Սյունեցու մեկնության մեջ¹¹:

Ստուգաբանության այս եղանակը Դավիթը վերապահում է բայերին, իսկ Սյունեցին՝ և՛ անվանր, և՛ բայերին, ուստի, եկեղեցի և կաթողիկե անունները ստուգաբանելիս Անանիա Նարեկացին հետևորդն է նաև Ստեփանոս Սյունեցու: «Այս գունի սարասիւ եկեղեցի. փոխանակ եչիդ՝ զինն եղեալ, վասն զի եւ ձայնորդքն փոխանակեն զմիմեանս, որպէս եւ եզանցն լծակցութիւն, նոյնպէս եւ տառք ձայնաւորք»¹²: Լծորդ տառերի այս պատկերավոր համեմատության (եզանց լծակցութիւն) հիմքում րնկած է Դավիթ Քերականի բացատրությունը («լծերդութիւն ասի, յորժամելեալ մինն ի լծոյն, մտանէ րնկերակիցն բառնալով զյուծն»), անվան ստուգաբանության ժամանակ ձայնավորների լծորդության կիրառման հիմքում, ինչպես սասցինք, Սյունեցու տեսությունը: Նմանատիպ ստուգաբանության է ենթարկվել նաև կաթողիկե բառը, որ եկեղեցու նման հունարենից փոխառված բառ է, և որի թարգմանու-

¹⁰ Նոյն տեղում, էջ 923-924:

¹¹ Տե՛ս Ա. Մուղաղյան, Հունաբան դպրոցը..., էջ 178-179, 270:

¹² «Արարատ», 1914, էջ 921: Այս ստուգաբանությունը բնագրում կարծես իր տեղում չէ, քանի որ նախորդում է դավիթյան ստուգաբանությամբ սահմանված վերոհիշյալ երեք եղանակներին և չի կապակցվում նախորդ շարադրանքի հետ: Հետեւաբար, դա ետեառաջության կամ համառոտման արդյունք է:

թյունը տալիս է հենց ինքը՝ հեղինակը («այսինքն բոլորակ, որ բնաւ րնդհանուր րնդ ամենայն տիեզերս միապէս, միատեսակ...»)¹³:

Ինչպես ասացինք, Անանիա Նարեկացին օգտագործել է բազմաթիվ քերականական եզրաբառեր, սահմանումներ ու ձևակերպումներ, որոնք գալիս են Դիոնիսիոս Թրակացու «Քերականութիւնից» և Հայ քերականների մեկնություններից: Նրա մոտ հանդիպում է նաև քերականական եզրաբառի ինքնուրույն բացատրության մի նմուշ: Դա վերաբերում է յարանուն եզրաբառին, որ նույն անունից կազմված կամ ածանցված բառ է նշանակում¹⁴: Սրա սահմանումը կա Դիոնիսիոս Թրակացու մոտ. «Յարանուն է որ յար յանուն ինչ քերդոցեալ է, որպիսի Տիրիճան, խրախճան»¹⁵: Հայ քերականները այս եզրաբառի ինքնուրույն սահմանումները չեն տվել, այլ բավարարվել են նոր օրինակների մեջբերումով: Իսկ աչա Անանիա Նարեկացու մոտ հանդիպում ենք եզրաբառի մի բացատրության, որ բավական հանգամանալից է և ամբողջական. «Յարանուն՝ վասն զի դրականաբար եղաւ եւ յարելութեամբ միացաւ ի մինն եւ ի պարզականն, եւ յարեալ ունի յինքն զնորայն նազելի խորհուրդ»¹⁶: Ինչպես տեսնում ենք, հեղինակը մեկնել է Դիոնիսիոսի սեղմ սահմանումք:

Հեղինակն իր գործի մեջ օգտվում է նաև փիլիսոփայական հասկացություններից. «Եւ զի ըստ բոլոր ժողովոյն և անունդ սահմանի... անունդ միապէս ունի զսահման

¹³ «Արարատ», 1914, էջ 922:

¹⁴ Ա. Մուղագյան, Հունաբան դպրոցը..., էջ 220:

¹⁵ Հ. Ածոնդ, Дионисий Фракийский..., с. 15-16.

¹⁶ «Արարատ», 1914, էջ 924:

Հասարակին և անհատին ըստ իմաստասիրական ներագիծն վարժից»¹⁷: Ըսդհանուր (հասարակ) և մասնավորի (անհատ) այս հասկացությունների աղբյուրը Դավիթ Անհաղթի աշխատություններն են:

Անանիա Նարեկացու՝ մեզ հասած հատվածի մեջ կանակ մի ուշագրավ բժշկագիտական տեղեկություն՝ կապված դարձյալ կաթողիկե անվան հետ. «Ունի դարձեալ կաթուղիկէ անունդ եւ այլ տեսակ զօրութեան, զոր եւ արուեստագէտք բժշկաց զնոյն անուն հոմանունաբար առեալ կոչեն ի վերա միո երակի եւ մայր եւ գյուիս ամենայն բոլոր երակացն զնա գոլ սահմանեն. քանզի որ ի նմանէ, ասեն, արեանն կաթուածք, գրեթէ փոխանակ րնդ ամենայն երակացն խաղացման բնութեան բաշխեալ տա զառողջութիւն բովանդակ մարմնոյն, զի որպէս նա նոյն անուամբ գյուիս եւ մայր ամենայն առողջութեան լեալ եւ կոչեցեալ, եւ տուիչ կենդանութեան բովանդակ անդամոց մարմնոյն... Այսպիսի բառիւ բացատրեալ յայտնելով զբանին զօրութիւն՝ կաթան եւ կաթիլ, եւ կայլակ, որ բազմամասնաբար տեսութեամբ բատ բաշխման երակացն, որ ի մարմնին բաղկացեալ, եւ րնդ միով նւաճեալ զերաբնիւն կաթողիկէիւ, յորմէ եւ առողջութեն հանդիպի նոցա բաշխումն»¹⁸:

Բժշկագիտական այս եզրաբառը հանդիպում է միջնադարյան հայ բժշկագիտության մեջ՝ Հերացու, Աբուսայիդի, Գրիգոր Տաթեացու աշխատություններում: Ինչպես նշում է Հերացին և ցույց է տալիս համեմատությունը, նրանց համառոտ տեղեկությունները քաղված են *XI* դ. առաջին կեսում հայերեն թարգմանված անտիկ բժշկագիտության

¹⁷ Նույն տեղում, էջ 922:

¹⁸ Նույն տեղում, էջ 922-923:

դասական Գաղիանոսի գործերից¹⁹. «Ի Գաղիանոսի ասացեալոցն պատեհ է ի յառաջի ստածումն զմարմինն տեսանել, թէ արիւնն յաւելցել լինի, պարտ է երակ առնուլ... եւ զերակն զոր կտրես՝ զկաթուղիկէն առ, կամ ի բասիլիկէն»²⁰: Ավելի հանգամանալից ու որոշակի է խոսվում այս երակի մասին Աբուսայիդի մոտ. «Եւ ի լերդէն է երակ ելանեն եւ սփոփին րնդ ամենայն գոդուածն, եւ այն է երակն ձիթ ճիւղ դառնայ, եւ այտ երակտ ոչ շարժին, որ տքան: Եւ այտ երակնուդ մէջտեղ երակ մի է, որ զվասիլիկէն կոչեն, եւ իւր ներքեւն կաթուղիկէն է, եւ իւր վերի երակն այն է, որ կէֆալ ասեն»²¹: Նույնատիպ բացատրություն է նաև Տաթևացու մոտ. «Իսկ յեարդն է սկիզբն արեան երակացն, որ ելանէ ի լերդէն է երակ լի արեամբ: Այլ երեքն ի սոցանէ մեծամեծք են: Եւ կոչի վերին երակն քայլասիկէ, եւ միջինն ասայիկէ: Եւ ներքին կաթալիկէ: Ի սոցանէ երակ կտրէ մարդն ի բազկացն»²²: Այս տեղեկությունների աղբյուրը Գաղիանոսն է: Գաղիանոսի գործերից հայերեն պահպանված մի րնդարձակ քաղվածքում լյարդից դուրս եկող մեծ երակների մասին ասվում է. «Եւ ելանէ ի լերդէն Ե մեծամեծ երակք՝ ի միջինն այն է, որ բասիլիկէ կոչեն եւ ներքոյ կաթուղիկէ, եւ վերնոյն կեփաղ ասեն»²³: Սակայն Գաղիանոսի, ինչպես նաև Հիպոկրատի աշխատություններն, բատընդունված կարծիքի, թարգմանվել են XI դ. առաջին կե-

¹⁹ Տե՛ս Ա. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 290-291:

²⁰ «Միմիթարայ բժշկապետի Հերացւոյ Ձերմանց միմիթարութիւն», Վենետիկ, 1832, էջ 124:

²¹ Աբուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն, Երևան, 1974, էջ 135-136:

²² Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 244:

²³ Մատենադարան, ձեռ. N 1713, թերթ 392թ, 1775, թերթ 130թ:

սին, մինչդեռ Անանիա Նարեկացու երկը գրվել է *X* դ. կեսերին։ Ումից է նա օգտվել։ Որոնումները ցույց են տալիս, որ այս տվյալը չկա մինչև *X* դարը հայերեն թարգմանված քրիստոնյա հեղինակների մարդակազմական աշխատություններից ոչ մեկում (այդ հայտնի աշխատություններն են Նեմեսիոս Եմեսացու, Գրիգոր Նյուսացու հանրահայտ գործերը)²⁴։ Սա ցույց է տալիս, որ Անանիա Նարեկացին օգտվել է կամ ձեռքի տակ եղած անտիկ հունական բժշկաբանների բնագրերից, կամ նրանց հայերեն թարգմանություններից։ Հատկանշական է այն հանգամանքը, որ նրա նկարագրությունն ավելի ընդարձակ է և տարբերվում է Գաղիանոսի ու նրանից օգտված Հերացու, Աբուսայիդի ու Տաթևացու՝ մեզ հասած նկարագրություններից։

Նմանատիպ մի ուշագրավ փաստի ենք հանդիպում Գրիգոր Նարեկացու «Մատեանում»։ այնտեղ կա մարդակազմության վերաբերյալ մի ամբողջական հատված, որն արժանի է առանձնահատուկ ուշագրության և՝ իր պարունակած այսօրինակ տվյալներով, և՝ նրանցից բխող իր տեսական եղբահանգումներով, որ պարզում են նրա հայցը դեպի մարդն ու նրա բնությունը։

**Երից հարիւրոց եւ տասանց վեցից յօդիւք
շաղկապեցար,**
**Յարեալի ի քեզ րնդ նոսին ի նոյն
եւ պատշաճական մասունըս չափուց
աղդողականաց հինգ րգբայութեանց,**

²⁴ «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», (Վենետիկ, 1889), «Գրիգորի Նիւսացւոյ տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» (Մատեանագրաբան, ձեռ. 5253, թերթ 1ա-65ա)։

Զի մի՛ եւ երեւելիդ նիւթականութիւն քումըդ
տեսութեան՝

Մրտացրդ դիտման անդատ եղիցի.

Զի ոմանք ստուարք են եւ զօրաւորք,

Եւ այլք փոքրունք են եւ պիտանիք,

Կէսք՝ կարծրակերտք եւ ազդողականք,

Են եւ գողտրականք եւ պատուականագոյնք,

Դարձեալ՝ կարեւորք եւ պատկառելիք²⁵:

Ուշագրավ է, որ մարդու՝ երեք հարյուր վաթսուն հոգերից շաղկապված լինելու այս տվյալը նույնպես չի հանդիպում մինչև X դարը հայտնի հայերեն թարգմանված բնագիտական աշխատություններում, ուստի հավանական է ենթադրել, որ այն ևս քաղված է անտիկ շրջանի հեղինակներից:

Ինչպես տեսնում ենք, դարձյալ կանգնում ենք Նարեկյան դպրոցի գրական փորձի հետ կապված մի օրինաչափ երևույթի առջև. այս դպրոցի երկու նշանավոր ներկայացուցիչները քաջատեղյակ են մարդակագմությանն ու բժշկությանը, իրենց ստեղծագործության մեջ կիրառում են ճշգրիտ տեղեկություններ ու տվյալներ՝ քաղված անտիկ շրջանի հեղինակներից: Արանից բխում են մի քանի հետևություններ: Արդեն այն փաստը, որ նրանց գիտելիքներն այս ասպարեզում չեն սահմանափակվում քրիստոնեական ժամանակաշրջանի նմանատիպ աշխատություններով, ինքնին խոսուն է և վկայում է նրանց յայն մտահորիգոնի ու տեսադաշտի մասին: Այն մտածել է տալիս նաև X դարում կամ նրանից առաջ անտիկ դարաշրջանի բժշկա-

²⁵ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, բան ԽԶ, Բ, Էջ 112:

րանների հայերեն թարգմանությունների գոյության հնարավորության մասին։ Պարզ է մի բան՝ այն, որ այդպիսիք բնագրով կամ թարգմանաբար շրջանառության մեջ էին Նարեկա դպրոցում և ամենայն հավանականությամբ ընդդրկված էին նրա կրթական համակարգի մեջ։

*

Անանիա Նարեկացու Հակաճառության պահպանված հատվածն աստվածաբանության, կրոնական սիմվոլիկայի ու մեկնության, փիլիսոփայական, քերականական հասկացությունների մի խտացում է, որն աչքի է բնկնում նաև իր գեղարվեստական առանձնահատկություններով, հետաքրքիր վերյուծություններով։

Այս հատվածի արժեքը մեծանում է նաև նրանով, որ, հրատարակչի խոսքերով ասած, նրա շնորհիվ «գաղափար ենք ստանում Անանիա Նարեկացու գրքի բնավորության և գրելու եղանակի մասին»²⁶։ Այս հատվածից մենք կարող ենք ենթադրել ամբողջ երկի բնույթը։ Ըստ ժամանակի և հետագայի վկայությունների՝ այն համապարփակ և րնդգրկուն է եղել՝ ներառելով իր մեջ եկեղեցական նվիրապետության բոլոր այն կետերի ջատագովությունը, որոնք ժխտվում էին թոնդրակեցիների կողմից, և որոնք նշում է Գրիգոր Նարեկացին Կճակա վանքի վանահորր գրած իր թղթում²⁷։ Ինչպես կարելի է դատել պահպանված հատ-

²⁶ «Արարատ» 1914, Էջ 920։

²⁷ Թոնդրակեցիները մերժում էին Զեռնադրությունը, Հաղորդությունը, Մշկառությունը, Պատրիարքը, Կիրակի օրվա ծննդրության, Երախայրիքի նշանակությունը, Խաչի երկրպագությունը (տե՛ս Բ. Սարգիսյան, Ուսումնասիրութիւն... Էջ 108-111)։

վածից, երկը զերծ է եղել դավանաբանական հակածառություններին հատուկ խիստ ոճերից, բանավիճային այն խտրողական եղանակից, որ բանեցնում էին թոնդրակեցիների դեմ հետագայի նշանավոր գործիչները։ Այս երկը ջատագովական բնույթ ուներ, որի մասին, ինչպես տեսանք, ակնարկում է Հենց Գրիգոր Նարեկացին («Արդ՝ զայսոսիկ հօրեղբայրն մեր... մեծաւ քննութեամբ խնդիրս արարեալ իբրև զԱստուծոյ ջատագով...»), և որի մասին խոսում է Բ. Սարգսյանն իր աշխատության մեջ²⁸։ Հակածառության նրա հիմնական եղանակը աստվածաբանական-փիլիսոփայական հիմնավորումն է հանդիսացել մեկնության, վերլուծության, ստուգաբանության եղանակով, լրացված գեղարվեստական հնարավորությունների օգտագործմամբ։ Հեղինակը հանդես է բերում «Եռյակ» արվեստների (*Trivium*)՝ քերականության, ճարտասանության և տրամաբանության խոր իմացություն։ Սրա հետ միասին, բնագիտական տվյալների առկայությունը նրա այս երկի և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ վկայում է «յոթ ազատ արվեստների» առկայությունը Նարեկյան դպրոցի ուսումնական-կրթական համակարգում։

Այսպիսով՝ աստվածաբանության մեջ նկատելի է տեղաշարժը դեպի «արտաքին» գիտությունները, որոնք ներառվում են աստվածաբանական մեկնության ոլորտում, ծառայում են աստվածաբանությանը (երեսույթ, որ հատուկ էր ավելի ուշ ժամանակահատվածում հանդես եկած միջնադարյան սքոյաստիկային)։ Անանիա Նարեկացին ազատորեն օգտվում է անտիկ շրջանի, ինչպես նաև V-VI դդ. ու

²⁸ Նույն տեղում, էջ 6:

Հետագայի հայկական նորպլատոնական-հունաբան դպրոցի տեսական ժառանգությունից, ինչպիսին էին Դավիթ Անհաղթի և հայ քերականների աշխատությունները²⁹, շրջանառության մեջ դնելով քերականական-տրամաբանական, փիլիսոփայական և մարդակազմական արժեքավոր տվյալներ։ Այս ամենը վկայում է հեղինակի լայն մտահորիզոնի և հիշյալ աշխատության ժամանակի համար բնդգրկուն ու համապարփակ բնույթի մասին։

Հակաճառության պահպանված այս հատվածով կապ է ստեղծվում նաև հեղինակի նմանատիպ այլ երկերի՝ «Հաւատարմատի» և «Սակս բացայայտութեան թուոց» երկերի միջև՝ ի հայտ բերելով փիլիսոփայական-տրամաբանական-քերականական մի ամբողջ շերտ նրա մեկնողական-դավանաբանական երկերի միջև, որն ուղղակիորեն առնչվում է V-VIII դդ. հայ հունաբան-նորպլատոնական դպրոցի և նրա ներկայացուցիչների հետ։ Այդ առնչությունները, որ նրանից անցել են իր հանճարեղ աշակերտին՝ Գրիգոր Նարեկացուն, առավել ծավալվում են բանաստեղծական արվեստի և գրական փորձի ասպարեզում, ստեղծելով մի հռչակավոր դպրոց, որին վերապահվում էր բարեշրջել հայ մշակույթի և գրականության ողջ ընթացքը։

Պահպանված հատվածը որոշակի գիտելիք է տալիս նաև ստեղծագործական կայուն կապերի, բնդհանրությունների ու փոխանցումների մասին, որ կան մեր հեղինակի ու նրա աշակերտի՝ Գրիգոր Նարեկացու միջև։

²⁹ Այս դպրոցի և նրա ներկայացուցիչների մասին տե՛ս Ս. Արեշատյան, Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում, էջ 242-328։

Այս գործի պահպանված հատվածը պատկերացում է տալիս ոչ միայն ամբողջ բնագրի, այլև հեղինակի դաշտանաբանական-հակածառական երկերի մասին ընդհանրապես՝ վերհանելով նրա գիտական համակարգն այս ասպարեզում, ուղենիշ դառնալով բնագրագիտական հետազոտությունների համար:

Խոսքը հատկապես նրա օգտագործած փելիսոփիայական-տրամաբանական-քերականական եզրաբանության մասին է, որ նա օգտագործում է իր դավանաբանական-հակածառական, մեկնողական երկերում, ինչպես նաև ներբողագրության մեջ: Այս յուրահատուկ շերտն է, որ միանալով ճարտասանական արվեստին, դառնում է նրա ոճի հիմնական առանձնահատկությունը՝ այնքան ընդգծված և ինքնատիպ, որ հենք է դառնում շատ երկերի հեղինակային պատկանելության հարցի լուծման համար:

«ՍԱԿՍ ԲԱՑԱՑԱՑՏՈՒԹԵԱՆ ԹՈՒՈՑ»

Անանիա վարդապետի անունով հայտնի գործերի շարքում այս աշխատությունը առանձնահատուկ տեղ է գրափում: Սա թվերի սիմվոլիկ նշանակության, թվային միստիկային նվիրված փիլիսոփայական երկ է, ընդարձակ ու խրթին մեկնություններով և գիտական բազմաբնույթ ու տարաշերտ տեղեկություններով, որով մեծ արժեք է ներկայացնում ուսումնասիրողի համար: Նրա կարևոր շերտն են կազմում «ներքին» և «արտաքին» գիտելիքները՝ քաղված հայրաբանական գրականությունից և անտիկ շրջանի փիլիսոփաների ու վաղ միջնադարյան հայ աշխարհիկ հեղինակների մի շարք երկերից: Այս իրողությունը վկայում է, որ այդ հեղինակների գործերը շրջանառության մեջ են եղել ժամանակի կրթական օջախներում: «Սակս բացայատութեան թուոց» երկը ևս, ըստ ամենայնի, ներկայացնում է այն հոգեւոր ժառանգությունը, տեսական գիտելիքների այն համակարգը, որ բնութագրական է ինչպես հեղինակի, այնպես էլ ողջ ժամանակաշրջանի համար:

Հայագիտության մեջ առաջին անգամ այս երկին անդրադարձել է Գ. Զարբհանալյանը և այն վերագրել է Անանիա Շիրակացուն, հիմք ընդունելով Շիրակացու այդօրինակ գիտական աշխատությունները և գործի խորագիրը¹:

Նրան հակառակ՝ Գ. Տեր-Մկրտչյանը այն վերագրում է Անանիա Նարեկացուն, առաջադրելով երկու կարևոր կովան՝ նախ այն, որ ձեռագրերում աշխատությունը հանդիպում է Անանիա Նարեկացուն պատկանող «Գիր խոստո-

¹ Տե՛ս Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 416:

վանութեան» թղթի հետ², հաջորդում է նրան, իբրև միեւնույն հեղինակի գործ, երկրորդ՝ որ աստվածաբանական մեկնողական բնույթ ունի, ինչը հատուկ չէ Շիրակացու գիտական աշխատություններին։ Հստ նրա, այս գործը իր միստիկական խորքով ու տարերքով կարող էր երևան գալ X դարում, երբ միստիկայի մի հզոր ալիք ընդգրկեց հայ մշակույթը՝ հեղաշրջելով այն և՛ ձեռվ, և՛ բովանդակությամբ³:

Գործը Անանիա Շիրակացուն է վերագրել նաև Ա. Հայրապետյանը՝ իր «Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը» հոդվածում⁴: Ա. Աբրահամյանը, որ հրատարակել է աշխատությունը Շիրակացու մատենագրության մեջ, հարում է Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքին. «Ուսումնասիրելով «Սակս բացայատութեան թուոց»-ի տեքստը, մենք ևս եկանք այն եզրակացության, որ այդ տեքստը իրոք Շիրակացունը չէ։ Սակայն, չցանկանալով մեր կարծիքը ներկայացնել որպես անվիճելի մի ճշմարտություն, նպատակահարմար համարեցինք հրատարակել այն Շիրակացու աշխատությունների շարքում՝ հնարավորություն տալով բանասերներին քննության առնել և վերջնականապես պարզել նրա հեղինակի հարցը»⁵:

Իր այդ կարծիքի օգտին, Գ. Տեր-Մկրտչյանի փաստերից բացի, Ա. Աբրահամյանը շրջանառության մեջ է դնում

²Տե՛ս Մատենադարան, ձեռ. №№ 499, թերթ 447 ա, 3710, թերթ 353:

³Տե՛ս «Արարատ», 1892, էջ 6:

⁴ՀՍՍՀ Մատենադարան, «Գիտական նյութերի ժողովածու», Երևան, 1941, էջ 17:

⁵Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 237:

նոր ուշագրավ փաստեր, որոնք հաստատում են այդ գործի պատկանելությունը Անանիա Նարեկացուն:

Ա. Նա ներկայացնում է հեղինակի աշխատությունից քաղած փիլիսոփայական տերմինների մի խումբ, որոնք, ստեղծված լինելով հունաբան դպրոցի ազդեցությամբ, գործառվել են X-XII դարերում և հատուկ են ոչ թե Անանիա Շիրակացուն, այլ Նարեկացուն:

Բ. Աշխատության մեջ հանդիպում է արաբական «նուսխայ» բառը, որ չէր կարող ծանոթ լինել Շիրակացուն:

Գ. Շիրակացին իրեն հարազատ աշխատությունների խորագրերում սովորաբար հիշվում է ոչ թե «վարդապետ» կամ «հայոց վարդապետ» կոչումներով, այլ «Անանիա Շիրակունի համարող» ձևով:

Դ. Այս ամենից բացի, «Սակս թուոց»-ի և «Գիր խոստովանության» երկի սկզբնավորության մեջ նկատելի է որոշ ոճական նմանություն:

Եթե Ա. Աբրահամյանի բերած վերջին փաստերը թեական են, ապա առաջին երկուսը՝ Գ. Տեր-Մկրտչյանի ապացույցներին միանալով՝ ամուր հիմք և կովան են դառնում աշխատությունն Անանիա Նարեկացուն վերագրելու համար:

Իրոք, այդ համոզմանն է բերում առաջին հերթին հեղինակի բառարանի ուսումնասիրությունը. այստեղ առկա են մի քանի շերտեր, որոնք բնագիրը տանում են դեպի X դար, Նարեկյան դպրոց և ի վերջո՝ Անանիա Նարեկացի: Առաջին հերթին դրանք հունաբան դպրոցի ազդեցությամբ ստեղծված բառակազմություններն ու փիլիսոփայական տերմիններն են, որ հաճախակի հանդիպում են բնագրում և որոնք հիմնականում մատնանշում է Ա. Աբրահամյանը: Դրանք են. շարայրել, վերտառութիւն, շարադրութիւն,

փոխատրութիւն, բացակատարել, շարաբերել, տարորոշ, սահման (իբրև սահմանում), արտատպութիւն, նախագիծ, շարամանութիւն, յարաբարել, շարաթուել, յարացոյց, շարաշարժութիւն, յարադրութիւն, արտամերժել, արտալածել, շարալծել, տարամերժել, տրամադրել, պարածածկել, բացամերժել։ Այս երեսույթը հատկանշական է Անանիա և Գրիգոր Նարեկացիների ստեղծագործության համար։

Բնագրում կան մի քանի խրթնաբանություններ և բառաձեեր, քաղված V-VI դդ. ինքնուրույն և թարգմանական իմաստասիրական երկերից։ Դրանք են թարց (առանց), սէ (իբրև սա դերանվան իդական ձև), սապէս (սոյնպես)։ Արա նման, Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց»-ի մեջ հանդիպում է որգան ձեզ։

Մի առանձին շերտ են կազմում այն քիչ գործարկված բառերը, որոնք նույնպես հատկանշական են Նարեկյան դպրոցի մատենագրության համար։ Ահա դրանցից մի քանիսը՝ քթթել ական, աղարտել, նախագիծ, թափանցանց, եղանութիւն, ապարասան, խաւարազգած։

Բնագրում ընդգծված են նաև մի քանի նորակազմություններ, որոնք նշված չեն Հայկազյան բառարանում։ Այս երեսույթը յուրահատուկ է առավելապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը։ Այդ բառերն են. լիաբողբոջ, ակահեղց, դեղնամակերեռյթեան, կուրաշաւիդ, մշտնջենակուսի (այս վերջինը հանդիպում է Փիլոնի հայերեն թարգմանություններում, բայց մշտնջենաւորակուսի ձեռվ)։ Հատկանշական է նուևխայաւրէն բառը, որ, ըստ Հայկազյան բառարանի տվյալների, առաջին անգամ հանդիպում է Գրիգոր Նարեկացու տաղերում⁶։ Ինչպես ճիշտ

⁶Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 72-73, 75, 124։

ձեռվ նշել է Ա. Աբրահամյանը, արաբական ծագում ունեցող այս բառի հետ Անանիա Շիրակացին ծանոթ չէր կարող լինել:

Անանիա և Գրիգոր Նարեկացիների մոտ հանդիպում է Քրիստոսի վերաբերյալ՝ կույսի «ծոցածին ծաղիկ» արտահայտությունը, որ պատահական լինել չի կարող. «Եւ Թամսեայ ժամանակաւք կրի ի ծոց կուսին ծոցածին ծաղիկն սիրական համբերութեամբ վասն մեր» (Անանիա Նարեկացի)⁷: Ահա մի հատված Գրիգոր Նարեկացու «Ծննդեան» տաղից.

Ի ծոց ծնողին ծագումն անուն...

Կուսին ծնեալ զծոցոյ ծաղիկ:

Ծաղիկ ծոցոյ, ծոց հայրենի...⁸

Քննարկվող գործը Անանիա Նարեկացուն վերագրելու օգտին է խոսում նաև այն Հանգամանքը, որ թվային ալեգորիան բնորոշ է առավելապես Նարեկյան դպրոցի մատենագրության համար: Այդ է վկայում Գրիգոր Նարեկացու «Մատեանը»՝ ագուցված թվային բարդ սիմվոլիկայով, որ կարիք ունի մանրամասն հետազոտության: Թվային միստիկան՝ ընդհանուր կառուցվածքից ու համամասնություններից զատ, արտահայտված է «Մատեանի» ԺԵ, Ի, ԼԱ, ԻԶ, ԻԹ, ԾԸ, ԿԵ, ՂԳ գլուխներում, ինչպես նաև «Յարութեան» (Ա և Թ), «Քառասնաւրեայ գալստեան Տեառն» (Ղ), «Համբարձման» (ԺԳ), «Տաղ եկեղեցւոյ եւ ի տաճարն սուրբ» (ԼԳ) տաղերում, ինչպես նաև «Երգ երգոցի» մեկնության մեջ:

⁷ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ. (այսուհետև՝ «Սակս թուղց»), էջ 246:

⁸ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 72-73, նաև էջ 75, 108:

Համեմատենք «Սակս թուղ»-ի և «Մեկնութեան» համապատասխան հատվածները.

«Սակս թուղ»

«Եւ արդ՝ անցցուք եւս ի տեսութիւն հնգից թուղն,
զոր կոչեն դարակոճատ, զի կատարեալ ժեակ (տասնեակ)
դարուն է կէս եւ ծնող նորին»⁹:

«Իսկ ժերորդ թիւդ է կատարումն թուղ միակաց եւ
ծնունդ ե-եկին... եւ կատարեալ ժեկին մաքրիլ քահանա-
յին եւ սրբագործել զպատարագն»¹⁰:

«Մեկնութիւն»

«Ի համարս թուղ տասնն է կատարեալ, եւ եթէ այլ
թուէ՝ ի մին դառնայ, ասել մետասան եւ որ ի կարգին է:
Նաեւ Աստուածաբան վկայէ այսմ:

Արդ, որպէս ի միակսն, նոյնպէս եւ ի տասնեակսն,
տասն տասն հարիւր է, եւ հինգ տասն՝ յիսուն: Հարիւրն
կատարեալ թիւ է, որպէս զտասն, եւ յիսուն կէս թիւ է,
որպէս զհինգն՝ տասին»¹¹:

«Զի տասն եւ հարիւրն եւ հազարն՝ կատարեալ թիւք
են: Զի մինն ի տասն աւարտի, եւ այլ ոչ յառաջէ, բայց եթէ
երկրորդէ, նոյնպէս եւ մի տասնն, տասն տասն լեալ հա-
րիւր, այլ ոչ յաւելու, նոյնպէս եւ հազարն՝ տասն հա-
րիւրիւ»¹²:

Մեջ բերենք նաև մի հատված, ուր միահյուսվել են
լեզվառական համընկնումներն ու թվային խորհրդապաշ-
տությունը: Նրանում տեղ են գտել նուսխայաւրէն բառը և
«ծոցածին ծաղիկ» արտահայտությունը.

⁹Տե՛ս «Մատենագիրք հայոց», Հ. Ժ., Ժ դար, Երևան, «Նաիրի», Էջ 447:

¹⁰Նույն տեղում, Էջ 450:

¹¹Տե՛ս «Մատենագիրք հայոց», Հ. Ժ., Գրիգոր Նարեկացի, Էջ :

¹²Նույն տեղում, Էջ :

**Միան եին ել նմինն ի յերկուց
Մի երկակի հանգոյն էից զուարձ միշտ.
Միշտ անբաւ այսր հրաշունակի բան,
Բան խորհրդաբեր եւթներգին աղի չափ.
Չափ վայր ասպարէզ իջեալ ի տեղի
տարրայոյտարփ,
Տարփ ի վեր արփային տարփ,
Տարփ ի վայր նուսիսայաւրէն ճեմ,
Ճեմ կուսինածոց ծաղիկ, վարդ փթթեալ
ի գիրկս մաւր...¹⁵**

Մի այլ գեպքում՝ մեկնաբանության մեջ օգտագործված են քերականական-տրամաբանական տերմիններ, որ Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» գործի հական առանձնահատկություններից է. «Զի դէմք մարդոյն ընդ առեւծուն շարալծեալ ոչ բաղհիւսական, այլ տարալծական շաղկապաւ...»¹⁴:

Այստեղ տեղին է հիշել փիլիսոփայական, քերականական-տրամաբանական եզրաբառերի ու հասկացությունների այն շարքը, որ կիրառված է «Ընդդեմ թունդրակեցւոց»-ում. հոմանուն, հոմանունաբար, ստորոգութիւն, շաղկապութիւն, յարանուն, փաղանուն, շարագծութիւն, ներագիծ, ինչպես նաև սեռ, տեսակ, ձև, թիւ, հոլով, հասարակ, անհատ, հասարակաբար, յոգնաբար, եղական և այլն: Բոլոր այս «հունաբան» տերմինները, ինչպես կտեսնենք, Անանիա Նարեկացու մյուս գործի՝ «Հաւատարմատ»-ի տերմինաբանական հիմնական շերտն են կազմում:

¹³ Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Դ, էջ 75:

¹⁴ «Մակա թուղթ», էջ 446:

Այս երկը Անանիա Նարեկացուն վերագրելու օգտին է խոսում նաև այն յուրահատուկ ոճը, որ կիրառում է նրա հեղինակը: Այն հարուստ է իմաստասիրական խրթին եղբաբառերով՝ ու դարձվածներով, անսովոր բառաբարդումներով՝ ու ոճավորումով, խոսքի անսովոր տարածական ընդգրկումներով՝ ու խտացումներով, որ պահանջել է աշխատության բնույթը, բայց դրա հետ միասին հնարավորին չափ զուսպ է ու կառուցիկ, ամբողջական, կապակցված, որով հիշեցնում է «Ընդդէմ թոնդրակեցւոց»-ի պահպանված հատվածը: Խոսքն առաջ է գնում ներքին ոիթմով, հնչերանգներով, նրա տարբեր մասերն ու միավորները հաճախ աղերսված են իրար հնչյունական առձայնույթային ու բաղաձայնույթային կապերով:

Համեմատելու համար մեջ բերենք հատվածներ «Ընդդէմ թոնդրակեցւոց» և «Սակս բացայայտութեան թուոց» գործերից:

«Որք առ սա ժողովեալ յայս կաթողիկէս... և ընդ սմա միացեալ հոգիայարդար շաղկապութեամբ... յորում և շտեմարանեալ կան ամենայն գանձք հոգեոր պարզեաց գիտութեան և իմաստութեան տեառն: Այլ և ցուցական երեսութիւ խաղան ի սմա երակ բաշխից Սուրբ Հոգոյն շնորհաց. վասն առ ի յերկնից կաթելոյն ի սա աստուածային անճառելի ճառագայթիցն չող և նշոյլք իմանալի ծագման արեգականն արդարութեան: Այսպիսի տեսակաւ գերակայեալ կայ իւրական ի փառսն, ունելով յինքեան զկաթանն մշտնջենաբուխ հոգեսնունդ կաթինն ստեացն կառուցմանց. այս է ի Հին ու ի Նոր կտակարանաց... եւ եռավտակ յորձանք հոսանաց Հոգոյն ի սմա աղբերացեալ, այսինքն առաքելական և մարգարէական և վարդապետական մասին շնորհացն տեսակը... նա և ոչ միայն իբր ի

բուլէ ինչ ցայտեալ կաթիլ, այլ լցեալ և ծովացեալ ի սմաբագում մասունք շնորհաց Հոգոյն մաքրութիւն...»¹⁵:

«Զի որ ակայեղձ ունի զգոյն դեղնութեան, զի որ ի վարժս կրթութեան երկասիրաբար դեգերին դեղնամակերեւութեան տեսակն ճնշելով զմարմին խոնարհութեան, արտամերժելով զբազմահոյլ տեսակ փշաբեր ախտիցն և ճնշելով զստինս մտացն, թերեւս լիցի բղիսիչ կաթին եւ մեղու հճաշակումն սկսեցելոց և կատարեցելոց. հայելով ի բանական երկիրն, զի պարարտ է բնութեամբ և բազմաբեղուն ունի հովիտս և զընդարձակ դաշտս մտաց...»¹⁶:

Զի եւ ի նոյն իսկ ճշմարիտ Բանէն և ի կենդանի աղբերէն բղիսեալ չորս առաջս յԵղեմական դրախտէն եկեղեցւոյ ի չորեքծագեան ոլորտս աշխարհի ոռոգանել զդէմս մտաց բանաւոր երկրի: Զի նա իսկ է ճշմարիտ աղբեր կենաց՝ բղիսեալ ի Հաւրէ: Որ աղբիւրացուցանէ զմերձեցեալսն...»¹⁷:

Այստեղ միանում են հմուտ աստվածաբանն ու փիլիսոփան, բնագետն ու ճարտասանը, ստեղծելով բանաստեղծական «զեղումների» և գիտական ամենաբազմազան ու խորը փաստարկների համակարգով լեզվի մի յուրատիպ շաղախ, որն ակնհայտորեն հարում է «Ընդդէմ թոնդրակեցւոց» գործի հեղինակին՝ Անանիա Նարեկացուն:

Այս գործերն իրար ներքնապես աղերսվում են և՝ աստվածաբանական մեկնության եղանակներով, և՝ բանաստեղծական տարերքով ու լեզվաոճական առանձնահատկություններով: Երկու գործերի ներքին հարազատության մասին է խոսում նաև «արտաքին» գիտելիքների հանդեպ առանձնահատուկ հակումը, տեսական ու գործնական գիտե-

¹⁵ «Արարատ», 1914, էջ 923:

¹⁶ «Սակս թուոց», էջ 445:

¹⁷ Նույն տեղում, էջ 446:

լիքների ընդգրկման լայն շրջանակները, ինչպես նաև լեզվական տարերքը, որ հեղինակին հաճախ տանում է լայնածավալ ու ընդգրկուն փոխաբերությունների ու նորակազմությունների:

Ոճական ու տեսական այս ներքին հարագատությունն, ինչպես կտեսնենք, ակնառու է այս գործերի և նույն հեղինակի մի այլ աշխատության՝ «Հաւատարմատ»-ի միջև, որի հետ «Սակս թուց» երկը բառացի համընկնումներ ունի: Սույն երևույթն ընդգծվում է գործառված գիտելիքների ու սկզբնազբյուրների, գիտական սկզբունքների և առավելապես լեզվի ու ոճական նախասիրությունների այն միակառույց համակարգի մեջ, որին ենթարկվում են նրանք: Հաճախ միասնականությունն այնքան տեսանելի է, որ թվում է, թե գործ ունենք միևնույն բնագրի տարբեր հատվածների հետ:

Հարկ է նշել նաև, որ այս բառային ամբողջ հենքը, լեզվական տարերքը, յուրահատուկ ոճը հատուկ չեն Անանիա Շիրակացուն: Նույնիսկ աստվածաբանական բնույթի նրա աշխատությունները գուտ գիտական հարցեր են շոշափում: Հայտնությանն ու Զատկին նվիրված նրա ճառերը տոմարագիտական մանրակրկիտ հաշվարկների բնույթ ունեն: Մյուս գործերում ևս բացակայում է ճարտասանական հակումը՝ յուրահատուկ, ստեղծագործական վերաբերմունքը լեզվի նկատմամբ, բանաստեղծական թոփչքներն ու պատկերավոր մտածողությունը:

Նշված երկի և Շիրակացու աշխատությունների միջև որոշ կապ նկատելի է բնագիտական տեղեկությունների ոլորտում և դա բացատրելի է, որովհետև, ըստ երևույթին, Շիրակացին հեղինակի տեսական աղբյուրներից մեկն է եղել:

Դա վերաբերում է հատկապես «դար» և «կոճատ» թվերի, երկնային մարմինների և լուսնի վերաբերյալ հեղինակի օգտագործած տվյալներին։ Այս առումով անհրաժեշտ է հիշատակել մի հետաքրքիր փաստ։ Հայկազյան բառարանում **եղջերցեմ** բառահոդվածը հղվում է Շիրակացուն. «Արտալածէ զխենեշութիւն՝ եղջերցելով և ցրուելով զներհակս հոգւոյ. Շիր առ լեհ»¹⁸: Այս հատվածը նույնական է քննարկվող բնագրի հետևյալ հատվածին. «Զոր արիաբար պաշարեալ արտալածէ զկնատեսակ խենէշութիւն եղջերցելով և ցրուելով զներհակս ոգւոյ»։ Իսկ «առ լեհ» հղումը պարզվում է, որ վերաբերում է Ստեփանոս Լեհացուն. նրա անտիպ բառարանից են քաղված այս և մի քանի այլ բառահոդվածները¹⁹:

Լեհացին հավանաբար ձեռքի տակ ունեցել է նույն այս բնագիրը կամ Շիրակացուն վերագրված մեկ այլ աշխատություն։ Հարց է առաջանում, եթե Լեհացին օգտվել է նույն բնագրից, արդյոք ձեռագրու՞մ է այն վերագրված եղել Շիրակացուն, թե՞ դա իր կուահումն է։ Երկու գեպքում էլ կարող ենք ասել, որ վերագրողները սխալվել են, հավանաբար հիմք ընդունելով գործի խորագիրը, ինչպես և վարվել են նորագույն շրջանի որոշ ուսումնասիրողներ։ Իսկ եթե նա օգտվել է մի այլ բնագրից, որ այսպիսի ակնհայտ կապ ունի քննարկվողի հետ, ապա պետք է կարծել, որ այն՝ մյուսների կողքին, հանդիսացել է Նարեկացու օգտագործած հիմնական սկզբնաղբյուրներից մեկը։ Վերը թվարկված փաստերի շարքը այլ եղրակացության հնարավորություն չի տալիս։

¹⁸ «Նոր բառգիրք Հայկակեան լեզուի», հ. Ա, Երևան, 1979, էջ 657:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՀԱԻԱՏԱՐՄԱՏ» ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԸ

Անանիա Նարեկացու այս երկն իր նախնական տեսքով մեզ չի հասել: Այն ընդգրկվել է XI դարի նշանավոր մատենագիր Անանիա Սանահնեցու կազմած «Հակածառութիւն բնդդէմ երկարնակաց» ժողովածուի մեջ:

Անանիա Նարեկացու և Անանիա Սանահնեցու այս երեկերի առնչությունների մասին հայագիտության մեջ հայտնվել են հակասական կարծիքներ: Այս խնդրին մենք հանգամանորեն անդրադարձել ենք «Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը» գրքում (Եր., ԳԱ, 1986 թ.), բնագրագիտական հետազոտությամբ և պատմական հավաստի փաստերով փորձելով ապացուցել, որ Անանիա Նարեկացու «Հաւատարմատն» իր հիմնական մասով բնդդրկված է Անանիա Սանահնեցու հիշյալ քաղվածո բնույթի աշխատության մեջ: Սակայն հետագայում Հ. Քյոսեյանն իր «Անանիա Սանահնեցի» մենագրության մեջ (Ս. Էջմիածին, 2000 թ.), գուցե ծանօթ չի ինելով մեր աշխատությանը (քանի որ աշխատության մեջ նա հղում է մեր անտիպ հոդվածին)¹, Սանահնեցունն է համարում Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» գերակշիռ մասը: Ուստի հարկ ենք համարում կրկին անգամ, հին ու նոր փաստերի հիման վրա, համալրումներով ու խմբագրումներով, ներկայացնել մեր փաստարկներն ու հիմնավորումներն այս խնդրի շուրջ:

Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» երկը հիշատակում է Ուխտանես պատմիչն իր «Հայոց պատմութեան» մեջ: Հստ նրա, Անանիան, այցելելով Արգինայի կաթողիկո-

¹ Տե՛ս անդ., էջ 92, 173, 389-390:

սարան, իր այս նշանավոր դավանաբանական-աստվածաբանական երկն ընծայաբերել է Խաչիկ Ա. Արշարունի (972-992 թթ.) կաթողիկոսին (ինչպես ցույց է տալիս քննությունը՝ 983 կամ 987 թվականին)²: Այս հանգամանքը վկայում է, որ վերջինս եղել է նրա պատվիրատուն:

Այս կարևոր հիշատակությունը վկայում է դարի քառաբական-դավանաբանական պայքարում Անանիա Նարեկացու խաղացած նշանակալից դերի մասին: Այդ է վկայում նաև X դ. նշանավոր դավանաբան Սամվել Կամրջաձորեցին՝ ներկայացնելով Առաջավորաց պահքի շուրջ եղած դավանաբանական վեճերի պատմությունը, ըստ որի՝ Անանիա Նարեկացին եղել էր այդ իրադարձությունների կենտրոնում և հակառակ Գեորգ վարդապետի, Հարել էր Մտեփանոս Կամրջաձորեցու տեսակետին: Իսկ Առաջավորաց պահքի խնդիրը հակաբյուզանդական դավանաբանական պայքարի գլխավոր կետերից մեկն էր:

Հակաբյուզանդական այս դավանաբանական շարժումը X դարում ծայր աստիճան սրվել էր, որ հետեւանք էր Հայ պետականության վերականգնման և եկեղեցու դիրքերի ամրապնդման: Այդ ուժի ցուցանիշներից է դարի 60-ական թվականներին Անանիա Մոկացի կաթողիկոսի հրապարակած Հայ եկեղեցու կյանքում խիստ բացառիկ կրկնամկրտության օրենքը՝ վերստին մկրտել բյուզանդական ծեսով մկրտվածներին³: Դրա վառ վկայությունն է Ծափդեացվոց գավառի կրկնամկրտության դեպքը, որին նվիրված էր Անանիա Նարեկացու աշակերտներից Ուխտանեսի

² Ուխտանես, Պատմութիւն Հայոց, Էջ 11-12:

³Տե՛ս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Էջ 258: Տե՛ս նաև Մ. Օրմանյան, Ազգապատում, Էջ 1105-1106:

Պատմության երրորդ մասը: Ինչպես պարզվում է նրա տեսեկություններից՝ դա եղել է քաղաքական խոշոր իրադարձություն, որին մասնակցել են արքունական և իշխանական զորքերը, ինչպես նաև հոգևորականների մեծ բազմություն, որոնք գենքի ուժով գավառի բնակչությանը կրկին ենթարկել են հայ եկեղեցու և պետականության իշխանությանը: Դարի վերջերին հայ եկեղեցին այնքան էր ամրապնդվել, որ հայադավան եկեղեցական թեմեր էր կարգում նաև երկրի սահմաններից դուրս. «Իսկ յաւուրս տեառն Խաչկայ հայրապետին Հայոց սփռեալ տարածեցաւ ազգս հայոց զկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիռք Ասորւոյ եւ ի Տարսոն Կիլիկեցւոյ, եւ ի Սուլյանդայ եւ յամենայն գաւառն յայսոսիկ»⁴:

Այս մեծ շարժումը չէր կարող չարտացոյվել եկեղեցական գրականության մեջ: Եվ իրոք, գավանաբանությունը դառնում է նրա կարեորագույն կողմերից մեկը: Գրվում են բազմաթիվ գավանաբանական ճառեր, աշխատություններ, հատուկ աշխատանք է տարվում անցյալի այդօրինակ ժառանգությունը ժողովելու ու համակարգելու ուղղությամբ: Այս պայքարի արտահայտություններից են նաև նույն Ուխտանեսի «Հայոց պատմութիւնը» և Անանիա Նարեկացու նշանագոր «Հաւատարմատ» երկը, որը, մյուս համարնույթ գործերի նման, ի սպաս էր դրվել հայ եկեղեցու դավանաբանական պայքարին:

Անանիա Նարեկացու «Հաւատարմատն» ամբողջությամբ չի պահպանվել: Հայագետներից կ. Տեր-Մկրտչյանը, ե. Դուրյանը⁵ նույնացրել են այն Անանիա Սանահնե-

⁴Տե՛ս Ասորիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 258:

⁵կ. Տեր-Մկրտչյան, Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, Վա-

ցու անունով պահպանված «Հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց» երկի հետ՝ հիմք րնդունելով Ուխտանեսի վկայությունը «Հաւատարմատ»ի մասին: «Հակաճառութեան» ընծայականը, որտեղ նշված է Պետրոս Հայոց կաթողիկոսը, նրանք համարել են հետագա գրիչների հավելում: Կ. ՏերՄկրտչյանը կանգ է առնում աշխատության վերջավորությանը կցված հեղինակի ուղերձի վրա, ուր հիշվում է Խաչիկ կաթողիկոսը, որին նույնացնում է Խաչիկ Ա. Արշարունու հետ և ամբողջ աշխատությունը վերագրում Անանիա Նարեկացուն: Պարզվում է, որ ուսումնասիրողի ձեռքի տակ եղել է Հովհաննես Երգնկացու կազմած հակաքաղկեդոնական դավանաբանական նյութերի ժողովածուն, ուր, բացի հիշված «Հակաճառութիւնից», գետեղված են նաև Խոսրովիկ թարգմանչի և Հովհաննես Իմաստասերի նույնաբնույթ երկերը:

Սակայն հետագա ուսումնասիրողները, հենվելով պահպանված հիշյալ րնծայականի և Հովհաննես Երգնկացու հիշատակության վրա՝ աշխատությունը վերագրել են Անանիա Սանահնեցուն⁶: Ըստ նրանց, հիշատակվող Խաչիկ կաթողիկոսը Խաչիկ Անեցին է, որն ապրել է Սանահնեցու օրոք, և Անանիա Սանահնեցին, իր երկը սկսելով Պետրոս Գետադարձի կաթողիկոսության վերջին տարիներին (մահ. 1058 թ.), այն ավարտել է վերջինիս հաջորդի՝ Խաչիկ Բ. Անեցու (1058-1065 թթ.) օրոք:

դարշապատ, 1914, էջ CVIII-CX: **Ե.** Դուրյան, Պատմութիւն Հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 169:

⁶ Տե՛ս, օրինակ, Լ.Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Ա, Երևան., 1934, էջ 105-106:

Հ. Անասյանը ևս իր «Հայկական մատենագիտության» մեջ այն դասել է Անանիա Սանահնեցուն պատկանող երերի շարքը:

Մեջ բերելով սույն երկի մանրամասն մատենագիտությունը՝ քաղված բազմաթիվ գրչագրերից, Հ. Անասյանը, «Հակաճառութեան» վերոհիշյալ խմբագրությունից գտ, նշում է նաև երկու այլ խմբագրություն:

Հարկ ենք համարում հիշատակել Հ. Անասյանի կարևոր տվյալները, որոնք ուղի են հարթում հետագա ուսումնասիրության համար: Ըստ նրա՝ առաջին խմբագրությանն են պատկանում Մաշտոցի անվան Մատենագարանի 567 (թերթ 6ա-111թ), 6453 (3ա-83ա), 436 (304ա-363ա), 2751 (2ա-82թ), ինչպես նաև Վենետիկի Միսիթարյան Մատենագարանի հին 50, Լենինգրադի ԼիրՅՈՒՑՅՅ ԹՏՐՅ. ՀՐՎ. ՀցԱ. Թ-95 ձեռագրերը:

Երկրորդ խմբագրությանն են պատկանում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենագարանի 3062 (թերթ 75ա-96ա), 2966 (1ա-26թ), 2678 (139ա-156 ա), 7026 (60ա-64թ, թերի) ձեռագրերը:

Այս երկրորդ խմբագրության մասին Հ. Անասյանը գրում է. «Այս բնագիրը միակտուր է, չունի նախորդի ստորաբաժանումները, թեև նույն են խորագիրն ու սկզբնավորությունը: Այստեղ միաձուլված են նախորդի տարրեր գլուխներից զանազան մասեր՝ նոր խմբագրությամբ: Կարելի է համարել նախորդի համառոտությունը: Կասկած չկա, որ այս խմբագրությունը հետագա ժամանակների գործ է, որովհետև Դաշտանց թղթի հետքերը կան այստեղ»⁷:

⁷ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Եր., 1959, էջ 781:

Երրորդ խմբագրությանն են պատկանում Մաշտոցի անվան Մատենադարանի 568 (2ա-54ա), 2174 (185ա-196ա) ձեռագրերը:

Անասյանի բերած այս ձեռագրացանկին ավելանում են նաև նոր ձեռագրական տվյալներ. Մաշտոցի անվան Մատենադարանի 5618 (թերթ 1ա-196ա), ինչպես նաև Երուսաղեմի մատենադարանի 1296 (թերթ 190բ-259ա, երկրորդ խմբագրություն), 963 (էջ 429-455), 1001 (էջ 1-89), 1353 (թերթ 1ա-48ա, երրորդ խմբագրություն):

Առանձնահատուկ նշանակություն ունի Մատենադարանի 5618 ձեռագիրը, որն ավելի նախնական է (XIII դար) և մեզ է ներկայանում ավելի բնդարձակ տարբերակով և յրացուցիչ գյուխներով, որոնք, ինչպես ցույց է տալիս քննությունը, պատկանում են Անանիա Նարեկացուն: Համեմատությունը ցույց է տալիս, որ Անասյանի նշած երկրորդ խմբագրության օրինակները նրա համառոտ տարբերակներն են:

Այսինքն, բայց էության, «Հակաճառութիւնն» ունի երկու խմբագրություն, որոնց առնչություններին ու տարբերություններին կանդապառնանք:

Հ. Անասյանը նշում է այն ձեռագիր կանոնագրքերի ցուցակը, ուր վերոհիշյալ ժողովածուի ճառերից մի քանիսը (Գ, Բ, նաև՝ Դ) հանդես են գալիս միասին՝ «Անանիայի Հայոց վարդապետի սակս անխտիր հաղորդելոյն Յունաց» կամ «Անանիայի Հայոց վարդապետի սակս անխտիր հաղորդելոյն Յունաց»: Վասն ոչ հաղորդելոյ գժողովրդական յաւուր մեծի հինգչաբաթւո՞յ» ընդհանուր խորագրի տակ⁸:

⁸Տե՛ս Մատենադարան, ձեռ. 654 (264-268բ), 2677 (273բ-278ա), 3098 (333ա-338ա), 3276 (190ա՝ փոքր հատված), 3544 (285բ-298բ), 3788

Հ. Անասյանը ներկայացնում է նաև Վարդան Այգեկ-ցու «Համառօտ հաւաքումն սրբոց վարդապետաց» դավա-նաբանական ժողովածուի այն հատվածները, որտեղ իրեն հեղինակ է հիշված Անանիա Հայոց վարդապետը: Ըստ Ա-նասյանի՝ այս հատվածները պիտի քաղված լինեն Անանիա Սանահնեցու հիշյալ ժողովածուից: Այդ հատվածներն են.

Անանիայի Հայոց վարդապետի. «Արդ՝ որ ոչ խոստո-վանի զմարմինն Տեառն յետ միանալոյն անբաժանելի, ան-մահ եւ անապական եւ չարչարելեաւն անչարչարելի եւ մահուամբն անմահ... (Մաշտոցի անվան Մատ., 4425, թերթ 178թ):

Ի մեծափառ Հաւատոյ գրոցն Անանիայի Հայոց վար-դապետի. «Հօր հաւասար եւ Սուրբ Հոգոյն խորհրդակից Որդին ի կուսական ամենասուրբ յարդանդին զմաքրագործ ակն զայն ներդործեաց զմիաւորութիւն... (նույն տեղում, թերթ 181 ա):

Նորին յետ սակաւուց. «Եւ խառնումն որպէս հուր րնդ ոսկի եւ րնդ երկաթոյ, որ ոչ յեղաշրջէ զնիւթոյն բնութիւն, այլ յիւրն փոխարկեսցէ բնութիւն... (նույն տեղում):

Նորին. «Արդ՝ կիրք բաժանականք երեք ասին ի Քրիս-տոս. Հոգոյն եւ մարմնոյն եւ աստուածութեանն... (նույն տեղում, թերթ 181աթ):

(Է 168-173), 4028 (123ա-126ա). աե՛ս նաև Վիեննայի Միլիթ. Մատ., ձեռ. 256 (181թ-184ա), Փարիզի Bibl., Nat. Ms. Arm. 172 (fol 375), Օքսֆորդի Bodl. Libr. Neg. d. 15 (fol 337v), Թբիլիսիի Պետ. թանգ. հայ.-ձեռ. 54 (228ա), Բեռլինի Konigl. Bible. Ms. Or Peterm 1-st.34: Բնագրից մի հատված, որ զետեղված է վերջին ձեռագրում («Անանիայի Հայոց վարդապետի ընդդէմ Յունաց, որ վասն յաճախ հաղորդելոյ») տպագ-րվել է «Կանոնք սուրբ ժողովոց եւ հարց եկեղեցւոց» ժողովածուի մեջ (պրակ Ա, Թիֆլիս, 1904, Էջ 134-138, հրատ. Ստ. Դավիթյան): Նույն այս հատվածը հանդիպում է նաև Մատ. 2245 ձեռագրում (275թ-278ա):

Նորին. «Արդ՝ որպէս երիս Անձինս որ ի նոսա իմանամք զերրորդութիւնն, բայց երիս Աստուածս եւ երիս բնութիւն ոչ ասեմք՝ այլ մի, սոյնպէս եւ... (նույն տեղում, թերթ 181թ):

Անանիայի Հայոց վարդապետի. «Տեսցուք եւ զայն, զոր ասեն յոյնք, թէ յորում աւուր պապանձեցաւ Զաքարիա, ի նմին աւուր յդացաւ կին նորա... (նույն տեղում, թերթ 183աթ):

Անասյանը նշում է գրչագրերը, որոնցում զետեղված են սույն հատվածները: Դրանք են՝ Մաշտոցի անվան Մատ., 3295 (թերթ 358թ, 361թ-362ա, 370աթ), 1982 (71ա, 79թ-82ա, 111ա-113ա), եւ Հռոմի Bibl. Vat. Cod. Borg. Arm. 31, (fol. 141)⁹:

Իր աշխատության մեջ Անասյանը նշում է նաև, որ ժողովածուի ԺԲ ճառը՝ «Վասն տօնի ծննդեանն Քրիստոսի», մի շարք ձեռագրերում վերագրված է Անանիա Շիրակացուն և հանդես է գալիս «Ի Յայտնութեան Տեառն եւ Փրկչին» խորագրով: Համեմատելով այս բնագրերը՝ ուսումնասիրող եղրակացնում է, որ ԺԲ ճառը վերոհիշյալ օրինակներից շեղվում է վերջին մասում, ուր վկայակոչված են Անդրեաս Բյուզանդացին, առաքելական կանոնները և այլն¹⁰:

Անանիա Նարեկացու և Անանիա Սանահնեցու վերոհիշյալ երկերի առնչության հարցով, ինչպես նշել ենք, զբաղվել է նաև Հ. Քյոսեյանը¹¹: Նա Անանիա Նարեկացուն է վերագրում Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ում

⁹ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, էջ 782:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 780-781:

¹¹ Հ. Քյոսեյան, Անանիա Սանահնեցի, էջ 82-96:

տեղ գտած Անանիա վարդապետի անունով պահպանված հատվածները: «Հակաճառութիւն բնդէմ երկարնակաց» երկր վերագրելով Անանիա Սանահնեցուն՝ նա նշում է վերջինիս բնագրային կապը Նարեկացու երկի՝ նաև Այգեկցու ժողովածուում պահպանված հատվածների հետ¹²: Սրանից բացի, հենվելով «Հակաճառութեան» վերջին գրիսին կից հիշատակարանում հանդիպող Անանիա վարդապետի անվան փաստին, նա բնդծում է գրա՝ Անանիա Նարեկացուն պատկանելու հնարավորությունը. «Այնքանով, որքանով առայժմ անհայտ է Անանիա Շիրակացու անվամբ «Երից սրբասացութեան» հետ առնչվող որևէ գրվածք, կարելի է ենթադրել, որ վկայաբերված հատվածում հիշվող Անանիա վարդապետը Անանիա Նարեկացին է: Հակաճառության՝ «Փրկագործ խաչելութեան» խորհրդին նվիրված (անտարակույս Քրիստոսի Ծննդյան տոնի հետ ոչնչով չկապվող մասը), ինչպես նաև «Պատճառ Երից սրբասացութեան» բաժինը շարադրելիս «Անանիա վարդապետի» գրքից ծաղկաքաղ անելու վերաբերյալ հիշեցումը, կարծում ենք, որոշակի ակնարկ է Անանիա Նարեկացու դավանաբանական աշխատության՝ «Հաւատարմատոյ»-ի մասին»¹³:

Այս ամենը հեղինակին հիմք է տվել եզրակացնելու. «Հավատարմատի ամբողջական, ձույլ բնագիրը մեզ անհայտ լինելու պատճառով այսօր հնարավորություն չունենք Հավատարմատի պահպանված բնագրին հետևող, Հակաճառության խորական հատվածում Հավատարմատից արված ենթադրվող բանաքաղումների, խմբագրումների և ինքնուրույն հատվածների սահմանը որոշել»:¹⁴

¹² Նույն տեղում, էջ 93-94:

¹³ Նույն տեղում, էջ 95:

¹⁴ Նույն տեղում, էջ 94:

Մեր համոզմամբ, մենք այս խնդիրը լուծել ենք մեր վերոհիշյալ աշխատության մեջ՝ հստակորեն որոշելով Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» րնդգրկվածության չափն ու սահմաններն այս երկի մեջ։ Դրանում Անանիա Նարեկացուն պատկանող ամբողջական մասերն ու գլուխները ծավալային առումով նրա գերագույն մասն են կազմում։ Անանիա Սանահնեցու գերն այս ժողովածուի պահպանված Ա և Բ խմբագրություններում սահմանափակվել է որոշ հավելումների, գիխակարգությունների ու շեշտադրումների շրջանակում։

Այս առումով մեր նշված մենագրության մեջ ի մի բերված փաստերին ավելանում են նորեր՝ հնարավորություն տալով առավել ամբողջական և անխաթար ներկայացնել Անանիա Նարեկացու այս կոթողային երկը։

*

Անանիա Սանահնեցուն վերագրված «Հակաճառութիւն րնդէմ երկաբնակաց» երկը մեզ է հասել երեք խմբագրությամբ։ Մի կողմ թողնելով երկրորդ և երրորդ խմբագրությունների և առաջինի հետ ունեցած նրանց առնչությունների ու տարբերությունների խնդիրը, սկսենք նախ երգնկացու կազմած ժողովածուից, որ գտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում։

Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանված է Հիշյալ ժողովածուի չորս ընդօրինակություն։ Դրանցից թիվ 6453 ձեռագրի, որ XVIII դարի ընդօրինակություն է, սկզբում գետեղված գրչի Հիշատակարանում կարդում ենք.

«Գիրք Հակաճառութեան եւ րնդիմաբանութեան րնդէմ երկաբնակաց արարեալ ի վաղնջուց ժամանակաց ի մե-

բոց նախնի երանելեաց երից արանց գերիմաստից եւ հմտագունից: Նախ Անանիայի վարդապետի Զորագետցւոյ՝ յաւուրս հայրապետութեան տեառն Պետրոսի Գետադարձի, երկրորդ՝ Խոսրովկա թարգմանչի քաջ Հռետորի (որ յառաջ է ժամանակաւ քան զԱնանիա վարդապետն), երրորդ՝ Յոհաննէս վարդապետի Սարկաւագ կոչեցելոյ Հախպատեցւոյ, զորս դարձեալ յառաջ ժամանակաւ հաւաքեալ է ի մի երանելի վարդապետն մեր Յովաննէս Երգնկայեցի: Իսկ նարդենիս ի յաւուրս գերիշխանական հայրապետութեան տեառն Ղուկասու սրբազանակատար կաթողիկոսի ի Հնագոյն եւ յընտիր օրինակէ ետու գրել վասն իմ՝ նուաստ ծառայն Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ յետինս ի պաշտօնէից մօրս Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի ի Սահակ վարդապետս Գեղամեցի ի թուոջ Փրկչին ՌԶԶէ (1787) եւ ի մերումս թուոջ ՈՄԼԶ»¹⁵:

Հիշատակարանից պարզվում է երկու բան. նախ, որ ձեռագիրն ընդօրինակված է հին և ընտիր օրինակից, և որ գրիչը «Հակաճառութիւնը» վերագրում է Անանիա Սանահնեցուն: Այս տեսակետից կարեոր է Հովհաննես Երգնկացու նախադրություն-Հիշատակարանը, որ ներկայացնում է ժողովածուի կազմման և իր՝ Հովհաննես Երգնկացու այդ գործում խաղացած դերի հանգամանքները:

«Նախադրութիւն գրոց».

Նախ քան զմտանել քո ի բանս ընթերցման գրոցս, պարտ է մեզ ցուցանել զգիւտ այս պատուական եւ բարելի գանձուց:

Նուաստ եւ տկար ոգի Յովհաննէս Եղնկայ եպիսկոպոս

¹⁵ Մատենադարան, ձեռ. 6453, թերթ 1ա:

սպասաւոր բանի եւ իմաստից գրոց ծարաւի՝ յոլով ժամանակօք եւ աշխատութեամբ բազմաւ ստացայ զերեք գիրքս՝ որք են հիմունք հաւատոյ ուղղափառութեան, եւ թէ զմին մի ի սոցանէ գտանէ ոք՝ բարեբախտութիւն մեծ եւ փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեան գիտողի, զոր եւ գտի ես յայլ եւ յայլ տեղի եւ ժամանակի, եւ ստացայ զերիս գիրսն, եւ ի նոցունց դարձեալ ետու գրել, եւ առ միմեանս եղի եւ արարի մի գիրք։ Առաջին՝ զԱնանիայի գՀայոց վարդապետի։ Երկրորդ՝ զԽոսրովկայ թարգմանչի եւ զհզօր գիտնականի։ Երրորդ՝ զՍարկաւագ վարդապետին եւ զմեծի իմաստասիրի զՀախապատեցւոյ։ Եւ թողում զսա որում յետ իմ ժառանգէք, յոգնագան բարեաց ճոխութիւն ամէնառատ գանձուց փարթամութիւն՝ աստուածաբանական հանճարով յերկինս թռուցելոց սա թեւք զօրաւոր եւ վերացուցիչ… զի որք օգտիք եւ զուարձանայք՝ զողորմելի Յովհաննէս յիշեսիք եւ մեղուցելոյս անձին եւ վարդապետին իմոյ, եւ ծնողաց ուղորմութիւն ի Քրիստոսէ Հայցեսիք»¹⁶։

Նախադրությունից պարզվում է, որ Երգնկացին նախապես պատվիրել է ժողովածուում զետեղված երեք նույնաբնույթ աշխատությունները, ապա նորից ընդօրինակել տվել և կցելով իրար, կազմել է ժողովածուն։ Երգնկացու նախադրության մեջ անորոշ է մնում առաջին երկի հեղինակի հարցը։ Նախադրության տվյալներով բացառվում է Երգնկացու մասնակցությունը ժողովածուի ընդօրինակման աշխատանքներին, առավել ևս նրա կողմից որևէ խմբագրական միջամտություն։

¹⁶ Նույն տեղում, 2ար։

«Հակաճառութեան» այս խմբագրությունը բաժանված է 15 գլուխների:

3ա-40ա Անանիայի վարդապետի Հայոց բան հակաճառութեան ընդդէմ երկարնակաց զոր գրեաց հրամանաւ Տեառն Պետրոսի Հայոց վերադիտողի – Որք իմաստութեան են բաղձացեալ միշտ՝ յարամնայ բարեաւ (յարամնաբար) անփոխանցելի են գերասերտեալ յայն խոկալով անյագաբար կրեն բաղձանս բարեաց զօրէն ծարաւեաց... եւ ոչ ի Հոգւոյն ծնանին վերստին, զի Հոգին ի մարդոյ մահ ոչ ի-ջանէ: Փառք Աստուծոյ:

40ա-41ա Սակս անխտիր Հաղորդելոյ – Արդ, եթէ զմահն մարդոյ համարիք եւ մարմինն, որ չարչարեցաւն եւ մեռաւ՝ մարդոյ մարմին է, ապա յիրաւի անխտիր բաշխէք յանցաւորաց... ուստի՝ ուսայք անխտիր Հաղորդեցուցանել անարժան ժողովրդեան ձերոյ, մանաւանդ՝ յաւուր մեծի հինգաբաթին:

41բ-42բ Վասն մեծի հինգաբաթին – Որ ոչ է ամենեցուն ժողովրդականաց հաղորդել, բայց միայն քահանայիցն... զնոր արբումն ի նոր արքայութեան յարութեամբն նորոգեալք: Մեղայ Տեառն Աստուծոյ:

42բ-54բ Առ ապականացու ասօղսն է զմարմին Տեառն – եւ արդ՝ չեն ինչ պէտք առ այդ ասել ինչ ձեզ, որովհետեւ ապականացու խոստովանիք զմարմին Տեառն... զիա՞րդ էր հնար զայլոցն շարաբառնալ զտկարութիւնս, որ յիւրոցն վտանգիւր կրիցն:

54բ-57բ Առ ներքինացեալսն – եւ արդ, հարցից սուր ինչ բան՝ ի ձէնջ պահանջելով, ուստի՝ ուսայք զխոտեալս եւ զարտամերժեալսն ոչ միայն յեկեղեցւոյ, այլեւ ի բնու-

թենէ արանց եւ կանանց... որք ի ժամ վարդապետութեան շնականք իմաստասէրք ծածկէին զգլուխս իւրեանց:

58ա-59ա Վասն պատկերապաշտից – Դարձեալ ասացից սուղ ինչ բան յաղագս պատկերապաշտաման պատկերաց... Եւ արդ, բաւական լիցի այս առ ի յանդիմանութիւն տգիտաց եւ խրատ իմաստնոց:

59ա-60բ Վասն ժողովոյն Քաղկեդոնի – Այլ եւ են ումանք, որք տգիտաբար հակառակէք եւ ասէք, թէ հայք միայն ոչ բնկալան գժողովն Քաղկեդոնի... եւ ոչ յեպիսկոպոսաց գաւառաց յայսցանէ ցուցանել կարէք գալ ի ժողովն Քաղկեդոնի:

60բ-61ա Վասն բաժանման Վրաց – Իսկ գի՞նչ ասացից վասն Վրաց որոշելոյն ի մերոյ հաւատոյս... Այս են պատճառք Վրաց որոշելոյն ի մէնջ:

61ա Ի յԱղուանից պատմութեան – Քառասներորդ ամէր թուականին հոռոմոց, յորժամ լուսաւորեցան հայք ի հաւատս... Եւ նախ յԱղուանս գրեաց եւ նզովեալ արտաքսեցաւ Կիւրիոն:

61ա-63ա Պատճառ բաժանման Վրաց – Ասացին յոյնք ընդ հայս՝ թէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի թ՛ դաս... այդպէս ստուգութիւն իրացդ:

63ա-64ա Վասն չորից աթոռոցն: Փառք Աստուծոյ – Այլ վասն այնր, զի ասեն յոյնք, եթէ հայք ոչ են ի չորից աթոռոցն՝ արդար են... ո՞չ ապաքէն հակառակ գտանի այնպիսին Հոգւոյն Սրբոյ՝ որ բնտրեաց զմեզ ողորմութեամբն իւրով եւ շնորհիւ:

64ա-64բ Վասն մեռոնին – Դարձեալ վասն մեռոնին ասէք, թէ ձէմն ձիթենւոյ ոչ է... Բայց յաւելուածովք զհոգեւորն կատարեմք, որպէս հրաման առաք յԱւետարանէ անտի:

64թ-66ա Վասն բաղարջին – Դարձեալ եւ զայս ասասցուք, թէ բնդէ՞ր զայդ առնուք վկայ յօրինացդ, զոր չէ ինչ հարկ առնուլ... եւ միաւորութիւն մեզ ի միասնական Սուրբ Երրորդութիւն, որում փառք եւ զօրութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

66ա-72թ Վասն տօնի Ծննդեանն Քրիստոսի – Բագում աշխատութիւն գործառնութեանս մերոյ՝ վասն սրբոյ տօնիս յԱստուծոյ էր զոր հասաքս... իսկ յոյնք թէ վասն բռնաւոր հրամանացն Յուստիանոսի կայսեր թողին զաւանդութիւն սուրբ Հարցն եւ գերանելի առաքելոցն եւ թիւրեցան ի ճշմարտութենէն, մեզ չէ փոյթ, ինքեանք տայցեն պատասխանի յաւուրն դատաստանի:

72թ Պատճառ երից սրբասացութեան, զոր հայք ի գէմս Որդւոյ ասեն (մեղայ Տեառն Աստուծոյ) – թէ վասն է՞ր երիցս սրբասացութիւն վերաբերի հասարակ աստուածութեան... եւ այսպէս բոլորեցունց Արարչին հաճոյասցուք եւ կամ հանդիպեսցուք ի Քրիստոս Յիսուս, որում փառք յաւիտեանս:

Աշխատությունը սկսվում է հեղինակի բնծայականով, որ հարուստ է հոեստորական ոճավորումներով:

«[Ղ]ըք իմաստութեան են բաղձացեալք միշտ՝ յարամնայ բարեաւ (յարամնաբար) անփոխանցելի են գերասերտեալ յայն խոկալով անյագաբար կրեն բաղձանս բարեաց զօրէն ծարաւեաց, բնաւորաբար յարաշարժեալք առ ի լնուզ գպասքումն հոգէտենչ րդից, ոչ միայն յականակիտ եւ յարաբուղիս աղբերաց կամելով զովացուցանել գներտրամադրեալ անձինն կիրս ծարաւոյ ներվտակացն ըղձումն, որ յոգիսն են ունակութիւնք, այլ թէպէտ եւ կաթիլ մի ի դուէէ

կամ մէտ մի ի կշռոց խոնարհեալ գտցեն՝ ոչ հրաժարեն յայնցանէ առնուլ եւ հատուցանէ զոգւոցն արգասեացն պտուղս:

Որում եւ ձեր բաղձացեալ, ո՛ տէր հովուապետ՝ շնորհօքն առլցեալ երկնայնովք վերատեսուչ Հայաստանեայց եւ ամենայն ազգաց եւ ազանց ուղղափառաց, առ որ հրամայեցիք սուղ ինչ՝ տրամաբանել ընդդէմ երկարնակացն՝ ոչ առ յօդուտ ինչ նոցայն ընդդիմութեան, այլ առ ի հաստատութիւն մերոյս ճշմարիտ հաւատոյ եւ ծանուցանել ուղղոցն սրտիւ զթիւրութիւն ժողովոյն Քաղկեդոնի, զորս իրեւ ի հայելո՞յ յայտնի ցուցցուք ի գրոց սրբոց յառաքելական եւ ի մարգարէական մատենից, եւ ի սրբոց հոգէլիր վարդապետաց, որք գտնօրէնութիւն բանին բացայայտ քարոզեցին մեզ, շարժեալք ի Հոգւոյն Սրբոյ, որ խոսեցաւ յօրէնս եւ ի մարգարէսն եւ յԱւետարանն վասն նորա, եւ նոյն զօրացեալ ի ժողովս սրբոց հայրապետաց, յորոց եւ ստորանկեալ չարն ի բանէն իրեւ գփայլակն եւ կոխան եղեալ անմեղաց, եւ դարձեալ զօրացեալ ի ձեռն գործակցաց իւրոց՝ Արիոսի ասեմ եւ Նեստորի չարափառի եւ Մակեդոնի, զոր կրկին ի ձեռն երից սուրբ ժողովոցն յերկիր կործանեաց զսկզբնաչարն վիշապ, որում դարձեալ կենդանութեան առիթ եղեալ չարին՝ ժողովն Քաղկեդոնի եւ հարկ եղեալ բռնութեամբ՝ որոց ընդ իշխանութեամբ ունէին՝ զերկարնակն ընդունել հաւատ, այլ մեր ոչ է հաւանել անօրէն հրամանացն եւ միայն ոչ մեք, այլ եւ ամենայն ազգ, որք ոչ են ընդ իշխանութեամբ նոցա՝ որոշեալք ի ժողովոյն Քաղկեդոնի՝ ընդ մեզ ունին զանշարժ դաւանութիւն երից սուրբ ժողովոյն:

Եւ արդ՝ պարտ է մեզ բացայայտել զնոցին եւ դաւանութիւն հաւատոց, զի ծանուցեալք զվնասն հոգւոց՝ փախիցուք իբր ի մահացու կերակրոց...»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, Պետրոս կաթողիկոսի անունը Հիշատակվում է միայն գործի խորագրում, իսկ բուն բնձայականում կաթողիկոսի անունը չի տրվում: Կաթողիկոսի անունը նշվում է միայն վերջին բնձայականում. «Բայց արդ՝ առեալ զաղքատիմաց մտաց ընկալցիս զպտուղ, ո՞վ գերազարդ եւ ամէնիմաստ հանճարով առլցեալ տէր Խաչիկ վերադիտող Հայոց մեծաց, փոխանորդ մեծի Լուսաւորչին պետ. թէ եւ ոչ զյաւէտ կատարեալն, սակայն ըստ կարի մերում գյօժարութիւն յիապէս ցուցեալ: Յաղագս որոյ աղաչեմ ըստ աղքատատուր տրոյ տառապելապետ այրոյն այնորիկ համարեսցին գվարձս շնորհին, ո՞չ ըստ տրոցն, այյ միայն հարուստ յօժարութեան րնդ յաջահաւատսն գովեցաւ յամենեցունց Տեառնէն: Ըստ այնմ եւ զմեր րնկալցիս զսակաւ տուրս երկուց լոմայիցդ, եւ եթէ սղայանք ինչ իցեն ի բանիդ, ըստ տկար եւ հոսանուտ բնութեան մերոյ, ուղղեսջիք սիրով Հոգւոյն, եւ կորովահանճար իմաստիւք լոցի պակասն եւ սղայանքն ծածկեսցի ըստ գրոյն, եթէ սէր ծածկէ զբազմութիւն յանցանաց, եւ այնպէս բոլորեցունց Արարչին հաճոյասցուք եւ կամ հանդիպեսցուք ի Քրիստոս Յիսուս, որում փառք յաւիտեանս»¹⁸:

Ինչպես տեսնում ենք, հիշատակվում է Խաչիկ կաթողիկոսը, որ կարող է նաև Խաչիկ Ա Արշարունին յինել, ուստի անհավանական չէ ենթագրել, որ այս վերջին բնձայականը պատկանում է Անանիա Նարեկացուն: «Հակաճառու-

¹⁷ Նույն տեղում, թերթ Յաբ:

¹⁸ Նույն տեղում, թերթ 82թ-83ա:

թեան» հիշատակարանների մեջ իր նշանակությամբ առանձնանում է վերջին՝ «Պատճառ երից սրբասացութեան...» գլխին կցված նախադրությունը, որ պարզություն է մտցնում դրա հեղինակային պատկանելության հարցում:

«Թէ վասն է՞ր երիցս սրբասացութիւն վերաբերի հասարակ աստուածութեան եւ մի երրեակ «խաչեցարն»՝ կցորդ ի վերայ յատուկ յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ, եւ թէ յորո՞ւմ ժամանակի եւ յորո՞ց ոմանց նախ կարգեցաւ: Բայց նախ զյառաջագրեալ զխորհուրդ խաչին տեսչիր սկզբնաւորեալ ի կենաց տնկոյն, որ ի դրախտին, զի անդուստ ի վերուստ իսկ արկեալ էր ի միտ երեքսրբեան տէրութեան զխորհուրդ փրկագործ խաչելութեան Աստուածն Բանի, զոր յայլում տեղւող քաղեալ եմ եւ եղեալ, եւ ապա զայս, զոր յԱնանիա վարդապետին գրոցն համառօտ ժողովեցի»¹⁹:

Մենք նշել ենք, որ Հովհաննես Երգնկացին չի միջամտել բնագրին, երկր պահպանվել է նախօրինակի անաղարտությամբ, և դա վկայում է, որ նախադրության հեղինակը Անանիա Սանահնեցին է: Սակայն ստացվում է, որ Անանիա Սանահնեցին, իբրև աշխատության վերջին մասի հեղինակ, հիշատակում է մի այլ Անանիա վարդապետի, որը, փաստերի տրամաբանությամբ, կարող է միայն Անանիա Նարեկացին լինել:

Այսպիսով, «Հակաճառութեան» վերջին գլուխը պատկանում է Անանիա Նարեկացուն: Բայց Անանիա Սանահնեցու իսկ հիշատակության, նա այս գլուխն համառոտել է Անանիա Նարեկացու աշխատությունից:

¹⁹ Նույն տեղում, թերթ 72բ-73ա:

Առաջ է գալիս նաև մի այլ ընծայականի խնդիր, որ հանդիպում է երրորդ խմբագրության սկզբում և ոչնչով չի հիշեցնում առաջինին, նույնիսկ արմատականորեն տարբեր է նրանից: Այլ է նաև գործի խորագիրը: Մյուս կարևոր տարբերությունն այն է, որ նյութը ստորաբաժանված չէ բայց գյուխների: Բնագիրը թերի է և ավարտվում է նախորդ խմբագրության երկրորդ գյուխով: Ներկայացնենք խորագիրն ու ընծայականն ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի 568 ձեռագրի:

«Անանիայի Հայոց վարդապետի լուծումն մաքառման երկարնակացն, որք ի կարծիս ճշտութեան (ճշմարտութեան)` անյարմար դաւանին երկակս ի մինն մուծանել բնութիւն, որ է Աստուած Թանն Աստուած մարդն Յիսուս Քրիստոս – Ո՞վ պատուականդ ինձ եւ սրտի սիրեցեալդ եղբայր պատուական, Հարազատ եւ Համասնունդ, յոդնեռանդ սիրով պարապնդեալ եւ Հոմամիաւորեալ Հոգէզուարճ խնդութեամբ, յարամնաբար կառուցեալ եւ գերասերտեալ անփոխալը յորաբար պահելով զսահման սիրոյն առ մեզ եւ ի մէ[ն]ջ պահանջես ի նոյն խոկալ եւ Հատուցանել զարժանն պարտ սիրոյ, ոչ յերկրաւորացս ինչ ցանկացեալ՝ այլ յերկին[ս] բաղձացեալ ի բաղձան սրտի ձեր գանձուն, որ ոգոց է փրկութիւն: Եւ մեր Հայեցեալ ի բաղձանս սրտի ձեր, զոր մի անգամ եւ երկիցս աղաչեալ յօժարակամ սրտիւ տալ սուղ ինչ առ բանի ընդդէմ երկարնակ ժողովոյն Քաղկեդոնի, յորոց ասես միշտ վտանկ ի յանցանացն Հակառակաբանութեանցն: Վասն որոյ եւ Հարկեալ ի ձերոց թախանձանացդ սուղով բանիւք շարադրեցից քեզ, ո վ պատուականդ ինձ եւ սիրելի եղբայր, թէպէտ ոչ կատարելապէս աստուածաբանեալ կարացեր, այլ բաւական

տաց պատճառս յիմաստիցդ ձեր՝ տրամաբանել առ հակառակորդսն ճշտութեան (ճշմարտութեան): Բայց սկսանելի է մեզ նախ գնոցայն բացայայտել զաւտարութիւն հաւատոցն, զի ծանուցեալ զվնասն՝ փախիցուք իբր ի մահկանացու (մահացու) կերակրոց...»²⁰:

Ինչպես տեսնում ենք, երկրորդ րնծայականը ոչնչով չի առնչվում առաջինի հետ: Եթե առաջին րնծայականում հեղինակը երկյուղածորեն խոնարհվում է կաթողիկոսի գերապատվությանը և գործը ձեռնարկում է՝ ենթարկվելով նրա հրամանին, ապա երկրորդ դեպքում հեղինակն ու պատվիրատուն հանդես են գալիս իբրև համապատիվ անձնավորություններ, հոգեւոր եղբայրներ, և պարզվում է, որ հեղինակը գործը ձեռնարկել է պատվիրատուի երկար թախանձանքներից հետո: Այս համապատիվ անձնավորությունները՝ հեղինակն ու պատվիրատուն, կարող են լինել միայն Անանիա Նարեկացին և Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը, որոնց կենսագրական տվյալները համապատասխանում են րնծայականին: Նրանք կապված էին ազգակցական և հոգեւոր կապերով և սերտ շփումների մեջ էին ինչպես Անանիա Նարեկացու կյանքի նարեկյան, այնպես էլ նախանարեկյան շրջանում: Անանիա Նարեկացին Խաչիկ Ա-ի եպիսկոպոսության տարիներին նրա պատվերով գրել է մի ամբողջական խրատաշար, որի րնծայականները հար և նման են հիշյալ ընծայականին: Այստեղ բավարարվենք միայն այդ ընծայականներից մի քանիսի մեջբերումով.

«Արդ՝ ո՞վ տէր հոգեւոր, դու խոնարհեցար իմ նուաստութիւնս եւ աղաչեցեր, թէ ինձ խրատ գրեա քահանայա-

²⁰ Մատենադարան, ձեռ. 568, թերթ 2ա:

կան կարգի եւ խաղաղութեան, եւ խոնարհութեան, եւ վասն այս կենացս ունայնութեան, ծանո՛ ինձ եւ վասն խորհրդոց մաքրութեան, եւ սասցեր, թէ գիլը արա, որ առ իս պահեմ եւ հանապազ ընթեռնում, եւ ես սակաւուք քո իմաստութեանդ պատճառ ետու: Արդ՝ յորժամ բնթեռնուս, յիշեա ի քո յաղօթս:

Ի խնդիր հարցման Խաչկա եպիսկոպոսի եւ խրատ[ք] Անանիա Նարեկա վարդապետի»²¹:

Ուշագրավ են նաև այդ խրատագրքի որոշ խրատների նախադրությունները.

«Այլեւ զայդ հարցեր, եթէ որչա՞փ մասունք են, որ մարդն կատարեալ խոնարհութիւն ստանայ եւ աղաչեցեր, եթէ զայդ գրեա ի գիրս, Անանիա...»

Այլեւ զայդ հարցեր, թէ գիա՞րդ կարէ մարդ արհամարհել երկրաւորս, որ անցաւոր է եւ Աստուծոյ միայն ցանկայ եւ արքայութեան նորա, Անանիա...»

Այլեւ զայդ աղաչեցեր, եթէ յաղագս խորհրդոյ խրատ գրեաս...»²²:

Տեղին է հիշել նաև «Գիր խոստովանութեան» գործի նախադրության այն հատվածը, ուր հեղինակը դառնացած դիմում է Խաչիկ Արշարունուն՝ հիշատակելով իրենց ազգակցական կապը, երկար տարիների մտերմությունը, համատեղ կենցաղավարությունն ու հոգևոր առնչությունները. «Սննդակիցդ աւտարացեալ եւ ի ծննդենէ տէր գոլով մինչեւ ի ծերութիւն՝ ծառայի անտեղեակ բարուց եւ հաւատոց: Նախահարբք եւ գաւառաւ, եւ ազգաւ եւ ախորժակովք, եւ վարժիւք եւ կենակցութեամբ ի բնէ ի միասին

²¹ Մատենադարան, ձեռ. 5707, թերթ 331ա:

²² Մատենադարան, ձեռ. 5707, թերթ 328ա, 329ա, 330ա:

կրաւնիւք միակամ վարելով առ Աստուած եւ առ մարդիկ...»²³:

Վերոհիշյալ բնծայականի ու նախադրությունների համեմատությունը կասկած չի թողնում, որ երրորդ խմբագրության սկզբում հիշատակվում են Անանիա Նարեկացին և Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը: Սա իր հերթին վկայում է, որ Անանիա Նարեկացուն է պատկանում առնվազն նաև երկի առաջին գլուխը, սակայն, քանի որ նույն խմբագրության ձեռ. 2174-ր, առանց խորագրի, բնդգրկում է նաև երկրորդ գլխի սկիզբը (թերթ 195ր), ուստի այն ևս պատկանում է Նարեկացուն:

Հարցի մեջ առավել հստակություն է մտցնում Մաշտոցի անվան Մատենադարանի 5618 ձեռագիրը, որ XIII դարի գրչություն ունի: Այն գլուխների թվով (8) զգայիրեն գիծում է առաջին խմբագրության ձեռագրերին: Այս երկի հեղինակային պատկանելության հարցը որոշելիս էական է առաջին չորս գլուխների խնդիրը: Ճիշտ է գլուխների բաժանված տարրերակը, թե՝^o մենք գործ ունենք միասնական բնագրի հետ: Հարցի կարեորությունը մեծանում է նրանով, որ երկրորդ գեպքում հաջորդ երկու գլուխները ես, իբրև ամբողջական բնագրի մասեր՝ պետք է պատկանեն Անանիա Նարեկացուն: Բնագրի քննությունը հաստատում է երկրորդ տեսակետի ճշտությունը հետևյալ պատճառներով. նախ՝ հենց առաջին խմբագրության մեջ բնագրի սկզբնական մասը գուրկ է խորագրից, երկրորդ՝ նյութերի ստորաբաժանումը արհեստական է, քանի որ թեմատիկ այնպիսի սահմանագատումներ, որ խորագրերն են նշում, բնագրում չկան, եր-

²³ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Էջ 224:

բորդ՝ գլխակարգության հետևանքով առաջացել է նյութերի ետևառաջություն. խորագրի տակ ամփոփված հատվածներին հաճախ նախորդում կամ հաջորդում են նույն բովանդակությամբ հատվածներ:

Այդ արհեստականությունն առավել ակնհայտ է «Սակս անխտիր հաղորդելոյ» և «Վասն Մեծի հինգաբաթին» գլուխներում: Նախ՝ «Սակս անխտիր հաղորդելոյ» գլխի հենց սկզբում արծարծվում է Ավագ հինգաբթի օրով համրնդհանուր հաղորդության խնդիրը, որ հաջորդ գլխի բուն նյութն է կազմում. «Զի եւ հարկ ի վերայ դնէք, թէ որ յԱւագ հինգաբթւոշն ոչ հաղորդի, ի բաց հանէք ի հաւատոցդ ձերմէ, եւ դիտէք ճշմարտութեամբ, զի ոչ ամենեքեան սուրբ եւ արժանաւորք են»²⁴: Այս երկու հաջորդական գլուխների մասնատումն այնքան բռնագրոսիկ է, որ երկրորդի խորագիրը բնագրի մեջ է ներխուժում նախադասության կեսից, և կիսատ մնացած միտքը շարունակվում է խորագրից հետո. «Եւ արդ՝ եթէ այս ամենայն վկայութիւնք գրոց սրբոց եւ ձերոց վարդապետաց են, ուստի՝ ուսայք անխտիր հաղորդեցուցանել անարժան ժողովրդեան ձերոյ, մանաւանդ Մեծի հինգաբաթին»:

Վասն Մեծի հինգաբաթին – Որ ոչ է ամենեցուն ժողովրդականաց հաղորդել, բայց միայն քահանայիցն...»²⁵: Պարզ երևում է, որ այս հատվածում մտքի տրամաբանական կապն ընդհատվում է, և դա վկայում է, որ խորագիրը հետագայում է ներմուծված բնագրի մեջ: Իրականում բնագիրը չափեալ է բնդհատվի, այլ շարունակվի առանց խորագրի («...մանաւանդ Մեծի հինգաբաթին, որ ոչ է ամե-

²⁴ Մատենադարան, ձեռ. 6453, թերթ 40թ:

²⁵ Նույն տեղում, էջ 41աբ:

նեցուն ժողովրդականաց հաղորդել, բայց միայն քահանա-
յիցն...»): Բնագրի շարունակությունն է հուշում նաև չոր-
րորդ գլխի սկիզբը, որը սկսվում է միանգամից, առանց
նախադրության: Բացի դրանից, այս գլխում ևս խոսվում է
Ավագ հինգշաբթվա ծիսական նախահիմքերի մասին²⁶:
Նշված փաստերը ցույց են տալիս, որ առաջին խմբագրու-
թյան առաջին չորս գլուխների ստորաբաժանումը կատար-
վել է հետագայում այլ հեղինակի կողմից, և նախապես
դրանք հանդես են եկել որպես ամբողջական բնագիր: Դա
իր հերթին վկայում է, որ աշխատության այս մասը ևս,
վերջին գլխի նման, պատկանում է Անանիա Նարեկացուն:
Նյութի այդ ստորաբաժանումը, հավանաբար, կատարել է
Անանիա Սանահնեցին ժողովածուն կազմելու և խմբագրե-
յուն բնթացքում, թեև բացառված չէ, որ այն կատարված լի-
նի նաև հետագայում, այլ գրչի կողմից:

*

Նշված փաստերն արդեն յիշվին բավարար են՝ ժողովա-
ծուի հիշյալ հինգ գլուխները Անանիա Նարեկացուն վե-
րագրելու համար: Սակայն այս իրողությունն հաստատ-
վում է նաև այլ էական փաստերով, որոնք ի հայտ են գա-
լիս բնագրի բովանդակության և յեզվառնական առանձնա-
հատկությունների քննությամբ, և որոնք անհրաժեշտ ենք
համարում մեջ բերել: Այս առումներով այն հարազատ է
Անանիա Նարեկացու նախորդ՝ «Ընդդէմ թոնդրակեցոց» և
«Սակս թուոց» աշխատություններին: Նկատելի է նույն
հռետորական հակումը, պատկերավոր մտածողությունը,
որ հաճախ հանգեցնում է ոճի միակերպության ու նույնա-

²⁶ Տե՛ս նույն տեղում, թերթ 43ա:

տիպ լեզվական կաղապարների: Մեջ բերենք մի պատկերավոր հատված, որ հարում է «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկում տեղ գտած ծավալուն փոխաբերությանը, հյուսված կաթողիկե երակի և կաթան, կաթիլ, կայլակ բառերի շուրջ. «Ի միտ առ յօրինակէն, զի խախայն ոչ այլ ինչ է, այլ ի նոյն կաթանէ յորովայնի գառինն պանրացեալ եւ արտաքս եկեալ, բնդ որս խառնի կաթինն, զլոյծ բնութիւն պնդէ եւ փոխադրէ յիւր նմանութիւն. եւ մարմինն այն ի մեր բնութեանս յորովայնի կուսին փոխադրեալ... բատ իւր նմանութեան՝ իբր խմոր յայեր գանգուածի եւ իբր խախաց կաթին յիւր անմահութիւն շարախառնեալ:

Տես եւ գնոյն ճշմարիտ կենդանի, զի խոցեալ զկողն՝ կայլակեալ արիւնն նշանակէ զճշմարիտ կենդանութիւն...»²⁷:

Գործը Նարեկացուն պատկանելու օգտին է խոսում նաև բառապաշարի ուսումնասիրությունը: Այս գործի մեջ հեղինակը կիրառել է հունաբան դպրոցի ազդեցությամբ ստեղծված նույն այն փիլիսոփայական-քերականական տերմինաբանությունն ու հասկացությունները, որ առկա է նրա «Ընդդէմ թոնդրակեցւոց» և «Սակս բացայայտութեան թուոց» երկերում: Դրանք են. անուն, արտասահմանեալ, բացորոշեալ, բացափայլեալ, բաղհիւսական, համաբանել, համագոյական, հոմաբնութիւն, յարանուն, յարանունաբար, մակամտածութիւն, մականունութիւն, շարադրութիւն, շարաթուել, շարահարել, շարալծել, շարահիւսել, շարառութիւն, շարագրել, շարախառնել, շաղկապ, որակութիւն, տարալուծական, տարորոշեալ, սահման, սեռ, տեսակ,

²⁷ Նույն տեղում, էջ 10աբ:

Վորխատրութիւն, Վորխաձեռութիւն, Վաղառութիւն եւ այլն:

Սրանից բացի, հանդիպում են թարգ (առանց) կապի օգտագործման օրինակներ:

Նմանություններն այնքան առկա են, որ տեղ-տեղ հանդիպում են բառացի համրնկնումներ «Սակս թուոց» գործի հետ: Ահա զուգագիր մի հատված երկու գործերից, ուր խոսվում է երեք թվի աստվածային, կատարյալ էռթյան մասին.

«Առաջին թիւ կատարեալ՝ «Առաջին կատարեալ թիւ երրորդն է, որպէս ասաց իւ մաստունն Փիլոն, լի եւ հոծ եւ բոլորումն բովանդակութեան, զոր եւ Աստուածաբանն շարաթւէ ասելով՝ միակին շարժեցելոյ մինչեւ յերկեակն եւ յերշրեակն եկաց մնաց, զի մի՛ աղքատութեամբ աստուածութեան դատապարտեցուք, պակասումն թւոյն խոստովանելով, եւ մի՛ յաւելլովն ի բազմաստուածութիւնն խոտորեսցուք»²⁸:

(«Հաւատարմատ»)

(«Սակս թուոց»)²⁹

Այս նույնությունը բխում է հեղինակի որդեգրած թվերի միստիկ տեսությունից, որ ներկայացված է «Սակս

²⁸ Մատենադարան, ձեռ. 6453, թերթ 4ա:

²⁹ Տե՛ս Մատենագիրք հայոց, հ. Ժ. Ժ դար, Էջ 481-482:

թուղց» գործում։ Նման մի ուշագրավ փաստի ենք հանդիպում նաև բնագրերի այլ հատվածներում, ուր հեղինակը տարբեր առիթներով վկայակոչում է Եղեկիելի կառքի օրինակը, «Զիա³⁰ ըդ ոչ այլասէր բնութիւն առանձնացեալ կրիւք եւ որակութեամբ եւ ներգործութեամբ բացայայտեն մեզ գայլ ոմն շարայարեալ յերրորդութիւն եւ քառադէմ զերրորդութիւն յայտնապէս դաւանեն ոչ ինչ րնդ հատ ի կառացն Եղեկիելի բացայայտեն տարալծական շաղկապաւ ընդ բանականին գանբանն եւ ընդ վերաթոռուցելոյն զվայրաքարչ հողանիւթ ծանրութիւն։ Այսպէս եւ նոքա զարարածական բնութիւն ընդ անեղին շարալծեալ եւ զժանձրութիւն մարմնոյն եւ զվայրաքարչն րնդ անմարմին Բանին կապակցեալ տարալծական իմն շաղկապաւ ներհակաբար...»³⁰։

Այս հատվածը «Սակս թուղց»-ում հանդես է գայիս մասնակի փոփոխություններով, սակայն այստեղ ևս առկա են եղբարառերի ու արտահայտությունների կրկնություններ, որ ակնհայտ է դարձնում բնագրային կապը։ «Գեղեցկապէս յարմարի յայսոսիկ եւ քառադէմ կառքն Եղէկիելի՝ վայելչապէս յարմարեալ չորից տեսակացն րնդ միմեամբք՝ բանականն ընդ սրտմտականին։ Զի դէմք մարդոյն րնդ առեւծուն շարալծեալ ոչ բաղհիւսական, այլ տարալծական շաղկապաւ, զի մի՛ անբանաբար սրտմտականն շարժեսցի, այլ բանականաբար դաստիարակեալ ձեռամբ բանական վարժողին։ սապէս եւ ողջախոհականն ընդ ցանգականին շարայարեալ, թեթեւն եւ վերբերողն րնդ ծանրագունին եւ ի վայր ցնդողին..., րնդ ինքեան թեւաւք հոգւոյն վերաթոռուցեալ...»³¹։

³⁰ Մատենագարան, ձեռ. 6453, թերթ 4ար։

³¹ Տե՛ս սույն հատորի էջ 446։

Ինչպես տեսնում ենք, այս աշխատություններն առնչվում են նաև մի էական առանձնահատկությամբ՝ երկուսի մեջ էլ մեկնությունը կառուցվում է քերականական-տրամաբանական եղրաբառերի օգնությամբ. երեսույթ, որ ավելի ցայտուն է արտահայտված «Ընդդէմ թոնդրակեցւոց» աշխատության մեջ: Այս առումով վերոհիշյալ հատվածը միակը չէ: Բնագրում կան քերականական-տրամաբանական եղրաբառերի կիրառության նաև այլ նմուշներ, որոնք ապացուցում են, որ այս բնագիրը պատկանում է «Ընդդէմ թոնդրակեցւոց» և «Սակս թուոց» երկերի հեղինակ Անանիա Նարեկացու գրչին: Ահա մի ցայտուն օրինակ, որտեղ առկա են հեղինակին բնորոշ յեզվառնական առանձնահատկությունները և գիտական տերմինաբանությունը: «Իսկ Է՞ր վասն շարագրեցելոյ մարմնոյն րնդ Աստուծոյ Բանին եւ րստ այսմ յարանունաբար խոստովանիմք զնա Աստուած... յաղագս շարախառնութեան հոգւոյն եւ գերադրական մաքրութեան զայսապիսի առատութիւն րնկայեալ անուանց րստ փոխադրութեան վեհագունին: Թուի թէ եւ ոչ յարանունաբար խոստովանիք. զի սահման յարանութեան է, որ հաղորդութիւն տայ անուան եւ իրի՝ րստ փոխաձեւութեան, յանդակի փաղառութեան: Իսկ դուք թէպէտ եւ անուան հաղորդութիւն տայք, այլ ոչ իրի...»³²:

Այս հատվածում հեղինակը կիրառված բազմաթիվ եղրաբառերից բացի տալիս է հարանուն եղրաբառի սահմանումը: Նույն այս փաստին ենք հանդիպում «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկում:

³² Մատենադարան, ձեռ 6453, թերթ 53թ:

Բառի քերականական-տրամաբանական վերլուծության նման մի օրինակ կա նաև «Հակաճառութեան» վերջին՝ «Յաղագս երից սրբասացութեանց» գլխում³³:

Այսպիսով՝ «Հակաճառութեան» վերոհիշյալ մասերի և Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» և «Սակս թուոց» երկերի համեմատությունը ի հայտ է բերում դրանց բնագրային հարազատությունը: Այս երկերին միացնում են հեղինակային լեզվառնական առանձնահատկությունները, գիտական տերմինաբանությունը, մեկնաբանության, վերլուծության որդեգրած սկզբունքների նույնությունը: Բնագրական կապն այնքան ակնառու է, որ հաճախ նկատվում են բնագրային փոխանցումների օրինակներ:

Ընդհանրություններ են երևան գայիս նաև աղբյուրների րնտրության, տեսական նախասիրությունների և ընդհանրապես տեսական համակարգի տարրեր մակարդակներում: Դարձյալ րնդգծված է հեղինակի հակումը դեպի անտիկ փիլիսոփայությունը, Փիլոն Ալեքսանդրացու ու Դավիթ Անհաղթի ուսմունքները:

Հեղինակն իր դավանաբանական-մեկնողական երկերի մեջ ներմուծում է փիլիսոփայական-տրամաբանական տարրերք, որ նրա ոճի յուրահատկությունն ու գիտական հենքն է, և որին խարսխված են նրա տեսական հայացքներն ու աստվածաբանական համակարգը:

Այսպիսով, Անանիա Սանահնեցուն վերագրվող «Հակաճառութեանը» կցված հիշատակարանների, բնագրի տարրեր մասերի հետազոտությամբ ի հայտ եկած փաստերին ավելանում են նոր, ակնառու փաստեր, որոնք ուղղա-

³³ Տե՛ս նույն տեղում, թերթ 80թ:

կիորեն առնչվելով Անանիա Նարեկացու տեսական հայցքներին՝ հնարակորություն են տալիս ժողովածուի քննարկվող գլուխները վերագրելու նրան:

Ամփոփենք հետազոտության այս մասի արդյունքները: Նշված փաստերը հիմք են տալիս եղրակացնելու.

Ա. «Հակածառութիւն րնդդէմ երկարնակաց» երկի առաջին չորս գլուխները սկզբնապես հորինվել են իբրև ամբողջական, միակտուր բնագիր, և գլխակարգությունը կատարվել է հետագա խմբագրությունների բնթացքում:

Բ. Բնագրին կցված բնծայականներից նախնականը երրորդ խմբագրության ընծայականն է, որը պատկանում է Անանիա Նարեկացուն:

Գ. Երրորդ խմբագրությունը ոչ այլ ինչ է, քան Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի՝ պահպանված սկզբնական մասը, որ նույնությամբ ներմուծվել է հետագա խմբագրությունների մեջ:

Դ. Անանիա Սանահնեցուն վերագրվող «Հակածառութեան» նշված հինգ գլուխները, որոնք երկի ծավալի մեծ մասն են կազմում, պատկանում են Անանիա Նարեկացուն:

Սա որոշակի պարզություն է մտցնում առաջադրվող խնդրի լուծման մեջ և թույլ է տալիս նորովի քննել նաև մյուս գլուխների հեղինակային պատկանելության հարցը:

*

Քննությունը ցույց է տալիս, որ բնագրի մի քանի գլուխներ նույնպես քաղված են այլ հեղինակների աշխատություններից: Այսպես, ինչպես արդեն նշել է Հ. Անասյանը, «Յաղագս ծննդեան» գլխի մի մասը բանաքաղություն է Անանիա Շիրակացու «Ի Յայտնութիւն Տեառն եւ

Փրկչին» ճառից եւ Անդրէաս Բիւզանդացուց³⁴: «Հակաճառութեան» փոքրիկ գլուխներից երկուսը՝ «Պատճառ բաժանման Վրաց» եւ «Աղուանից պատմութեան», քաղված են Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկից³⁵:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ Սանահնեցին իր ժողովածուն կազմել է Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» հիման վրա առանձին հավելումներով և ամբողջական քաղվածքներով, որ նրա աշխատանքի հիմնական սկզբունքը պետք է համարել: Հարցական է մնում մնացած յոթ գլուխների հեղինակային պատկանելության խնդիրը: Այդ գլուխներն են՝ «Առ ներքինացեալս», «Վասն պատկերապաշտիցն», «Վասն ժողովոյն Քաղկեդոնի», «Վասն բաժանման Վրաց», «Վասն չորից աթոռոցն», «Վասն մեռոնին», «Վասն բաղարջին»:

Բնագրային համեմատությունն ու բանասիրական քննությունը մեզ բերեցին այն համոզման, որ սրանցից չորսը՝ «Առ ներքինացեալս», «Վասն պատկերապաշտիցն», «Վասն բաղարջին» եւ «Յաղագս ժողովոյն Քաղկեդոնի», պատկանում են դարձյալ Անանիա Նարեկացուն: Առաջին երկուսի դեպքում մեր ելակետը նույնն է եղել՝ բնագրային առնչությունների առկայությունը նշանակած գլուխների և Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի պահպանված մասերի միջև:

«Առ ներքինացեալս» գլուխը «Հակաճառութեան» ամենահետաքրքիր և արժեքավոր հատվածներից է, ուր հե-

³⁴Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Հ. Ա, էջ 731:

³⁵Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Հ. 2, գլուխ Խէ, ԽԸ:

ղինակի բարոյագիտական և միստիկ հայացքներն ամբողջական արտահայտություն են գտել և այդ իմաստով յուրատեսակ կապող օղակ են «Սակս թուոց» երկի և հեղինակի խրատական գործերի միջև։ Այս գլխի հեղինակային պատկանելությունն է հուշում նաև նրա սկզբնավորությունը, որ նման է «Հաւատարմատ»-ի առաջին մասի սկզբնավորությանը («...սուզով բանիւք շարադրեցից քեզ...»³⁶)։ Դրանից բացի, այստեղ ևս հանդիպում են այն հունաբան բառերն ու տերմինները, որ կան հեղինակի նախորդ գործերում։ Աչա այդ սկիզբը. «Եւ արդ, հարցից սուզինչ բան ի ձէնջ պահանջելով, ուստի՝ ուսայք զխոտեալս եւ գարտամերժեալս ոչ միայն յեկեղեցւոյ, այլ եւ ի բնութենէ արանց եւ կանանց՝ րստ սրբոց հայրապետաց կանոնի գարտասահմանեալ կրտացն ասեմք, զորս ամենայն աստուածաշունչ գիրք տարագրեալ արտորոշեն ի սուրբ հաւատոց եւ րնդ մանիքեցիսն դասեն»³⁷։

Այս գործի մեջ ևս հեղինակը հղում է Փիլոնին³⁸, որ մեծ հեղինակություն է նրա համար, և որից բազմաթիվ վկայություններ են բերված «Սակս թուոց»-ում և «Հաւատարմատ»-ի բնագրի այլ հատվածներում։

Իսկ ահա բնագրային հարազատության մի օրինակ «Առ ներքինացեալս» և «Յաղագս երից սրբասացութեանց» գյուխների միջև. «Զի թէ մարմին գործի ոգւոյն է, յորժամ ոգին սուրբ իցէ՝ ի հարկէ եւ մարմինն լինի սուրբ, զի ոչ կարէ ի վերայ իշխանի մաքուր մտացն յայտնել» («Առ ներքինացեալս», ՄՄ, 6453, 57ա): «Մի կոչի մարդ, բայց

³⁶ Մատենագարան, ձեռ. N 568, թերթ 2ա:

³⁷ Մատենագարան, ձեռ. N 6453, թերթ 54թ:

³⁸ Նույն տեղում, թերթ 55ա:

գլխաւորութիւն հոգին ունի, զի անմահ է եւ կենդանի, եւ շարժող մարմնոյն, եւ գործքն հոգւոյն կոչին մարմնականքն եւ հոգեւորքն, վասն զի հոգին իրրեւ զգործի ունի զմարմինն ի ձեռին»³⁹:

Նման մի հատված է հանդիպում նաև աշխատության առաջին մասում՝ անտիկ հեղինակների վկայակոչումների շարքում. «Պիսիդոս Կորնթացի ԵՀարզ ցԹողիոս Թագերգիչ. «Զի՞նչ է մարմին»: Պատասխանի. «Գործի ոգոց առ կենցաղս»⁴⁰:

Փաստարկների բնդհանուր համակարգի և հարաբերության այս պայմաններում, մեր կարծիքով, եղած տվյալներն արդեն բավարար հիմք են տալիս այս գյուխը ևս վերագրելու Անանիա Նարեկացուն:

Նույնն է նաև «Վասն բաղարջին» գլխի հարցը: Բանն այն է, որ այս խնդրին նվիրված մի ամբողջ հատված կարնագրի առաջին մասում: Այստեղ դարձյալ հանդիպում ենք Անանիա Նարեկացու գործերում հաճախակի կրկնվող բնագրային փոխառության երևույթի: Ահա բնագրի հիշյալ հատվածը, որ հարագատ է Հակաճառության «Վասն բաղարջին» գլխին. «Եւ դա ոչ միայն բանիւ ասես ապականացու, այլ արդեամբք ապականես խմորով եւ ջրով, զի խմոր ապականութեան եւ կեղծաւորութեան է օրինակ: Որպէս Տէրն աշակերտացն պատուիրեաց զգուշանալ ի խմորոյ փարիսեցւոյն, որ է կեղծաւորութիւն: Երբ յաւրինակի անդ գառինն զենման, հրամայեաց անհետ առնել զիմոր ի տանց յոր գառն զենանէր. եւ թէ գտանի, ամէ, խմոր ի տանն, սատակեսցի նա ի ժողովրդենէն: Եւ Տէր ի վերնատունն բա-

³⁹ Նույն տեղում, թերթ 81ա:

⁴⁰ Նույն տեղում, թերթ 43թ-44ա:

դարձովն աւանդեաց զիսորհուրդն, որպէս գրեալ է, թէ յառաջնումն աւուր բաղարձակերացն զատկին եկն ի վերնատունն, եւ այրն, որ ընդունէր զնոսա՝ հրէայ էր եւ չէր հնար գտանել խմոր ի տան նորա: Եւ Աստուածաբանն ասէ, եթէ՝ «Խմորեալն ոչ լինի հաց կենդանական»: Եւ դարձեալ ասէ. «Ի հնմէն եւ ի քացախուտ չարութենէն մաքրումն»: Եւ արդ, զոր Քրիստոս ի բաց սրբեաց զքացախուտ չարութիւն ապականութեան, դուք վերստին կամիք բռնութեամբ մուծանել յանապական խորհուրդ մարմնոյն Քրիստոսի...»⁴¹:

Այլ է «Վասն ժողովոյն Քաղկեդոնի» գլխի հարցը: Հստ բովանդակության՝ այս գլուխն առանձնանում է «Հակածառութեան» ամբողջ գլխակարգի մեջ: Այն պատմաշայխարհագրական մի ակնարկ է, որտեղ արտացոլված է ժամանակի հայ-բյուզանդական եկեղեցական-քաղաքական պայքարի կացությունը: Ուշագրավ է, որ աշխարհագրական տեղանունները համապատասխանում են Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցին», որ կարող է կովան լինել գործը նրան վերագրելու համար: Սակայն նրանում արտացոլված եկեղեցական-քաղաքական իրավիճակը բնորոշ չէ ո՛չ Անանիա Շիրակացու, ո՛չ էլ Անանիա Սանահնեցու ապրած ժամանակաշրջանին. «Վասն ժողովոյն Քաղկեդոնի» գլուխը, մեր կարծիքով, կարող էր գրված լինել *X* և ոչ *XI* դարում, քանի որ այնտեղ արտացոլված եկեղեցական-քաղաքական իրադրությունը համապատասխանում է *X* դարի քաղաքական իրավիճակին, երբ երկիրը քաղաքական վերելք էր ապրում և աճել էին հայ եկեղեցու հեղինակությունն ու ազգեցության ոլորտները: Այս շրջանում, ըստ Ասողիկի վկայության, հայ եկեղեցին եպիսկոպոսական թե-

⁴¹ Նույն տեղում, թերթ 36թ-37ա:

մեր է կարգում երկրի սահմաներից դուրս՝ Կիլիկիայի, Ասոռիքի շրջաններում և այլ վայրերում⁴²:

Այս շրջանում, ինչպես նշվել է, Անանիա Մոկացի կաթողիկոսը հրաման է արձակում կրկնամկրտության ենթարկել բյուզանդական ծեսով կնքված բոյոր հայերին: Նրա հաջորդի՝ Խաչիկ Ա Արշարունու օրոք կրկնամկրտության են ենթարկվում մի ամբողջ՝ Ծավայաց գավառի բնակիչները: Դարի այս կարևոր անցքերի ուղղակի անդրադարձը կա «Հաւատարմատ»-ի առաջին մասում, ինչպես նաև Հիշյալ գլխում, որ գրված է Հայ եկեղեցու ուժի և ազգեցության գիտակցության դիրքերից, և որտեղ ներկայացված իրականության պատկերը յիշովին համապատասխանում է Ասողիկի հայտնած տվյալներին:

«Հաւատարմատ»-ի առաջին մասում ուղղակի արտահայտություն են գտել կրկնամկրտության հետ կապված եկեղեցական-քաղաքական իրադարձությունները: Այսպես, հեղինակը գրում է. «Եւ արդ՝ եթէ Հին եւ Նոր կտակարանք վկայեն զջուրն ի մկրտութեան խորհուրդ բղխեալ եւ զարիւնն ի կենաց ճաշակս, դուք ուստի՝ ուսայք ի բաժակն խառնել եւ չփօթել զերկաքանչիւր բնութիւննան: Վասն այնորիկ հարկ յինի մեզ զայսպիսաբար մկրտեալսն դարձեալ վերստին մկրտել, զի ոչ ի կենդանի զուրն բղխեալ ի կողահոս աղբերէն մկրտին, այլ ի սոսկ ջուր, եւ ոչ ի մահ Աստուծոյ մկրտին բստ առաքելոյն, այլ ի մահ մարդոյն, եւ ոչ ի Հոգւոյն ծնանին վերստին, զի Հոգին ի մարդոյ մահ ոչ ի ծանէ»⁴³:

Պատկերը նույնական է «Վասն ժողովոյն Քաղկեդոնի» գլխում, ուր հեղինակը թվարկում է բոլոր այն երկրամասենէ»:

⁴² Ասողիկ, Պատմություն տիեզերական, էջ 258:

⁴³ Մատենադարան, ձեռ. 6453, թերթ 40ա:

րր և գավառները, որտեղ հայկական թեմեր կան, և որտեղ հայ եկեղեցին եպիսկոպոսներ է ձեռնադրում. «Ահա քաջայլութիւն է, զի յայս ազգս, որ ոչ ընդ նոսայն իշխանութեամբ են, ոչ ընկալան գհաւատն Քաղկեդոնի, զորս յայտ ցուցին, թէ որչափ գաւառք են, որ ընդ մեզ են եւ ոչ ընդունին գնոցայն հաւատ մինչեւ ցայսօր: Նաեւ՝ որ ընդ նոցա իշխանութեամբ են, ո՞չ ահա բազում այն են, որ ոչ գնոցայն, այլ գմերս ունին հաւատ: Եւ տես, որչափ եպիսկոպոսունք կան ի մէջ երկրէ այսդ՝ յԱսիայ եւ ի Գամիրս, եւ ի Բիւթանիա, եւ ի Գաղատիայ, եւ յառանձնակ Ասիայ, եւ ի Սուսիայ, եւ ի Լիւստրիայ, ի Կիլիկիայ եւ ի Տարսուս, եւ ի Միջագետս եւ ի Փուիւքիայ եւ բոյոր յամենայն Ասորիք ընդ մերով իշխանութեամբ, ի Գամիրս եւ ի Գանգրայ, եւ մերձ ի Պոնտոս եւ յայն կոյս ի Թարսիս եւ ի Մակեդոնիայ եւ որք միանգամ ընդ ձերով իշխանութեամբ են, ո՞չ ահա բազում եպիսկոպոսունք ի Հայոց ձեռնադրեալ՝ հաստատուն կան ի ճշմարտութեան հաւատս, ոչ թիւրեալ յերից սուրբ ժողովոցն ի Նիկիայն, ի Կոստանդնուպոլայսին եւ յեկեսոսին, եւ ի սրբոյն Գրիգորի սահմանեալ հաւատսսն»⁴⁴:

Համեմատության համար ներկայացնենք Ասողիկի հայտնած նույնատիպ տեղեկությունները, որոնք վերաբերում են Խաչիկ Ա Արշարունու ժամանակաշրջանին. «Իսկ յաւուրս տեառն Խաչիկայ հայրապետին Հայոց սփոեալ տարածեցաւ ազգս Հայոց գկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց եւ ի Տարսոն Կիլիկեցւոյ, եւ ի Սուլնդայ, եւ յամենայն գաւառսն յայնոսիկ»⁴⁵:

⁴⁴ Նույն տեղում, թերթ 59թ:

⁴⁵ Ասողիկ, Պատմություն տիեզերական, էջ 258: Ասողիկի հայտնած տվյալների առնչությամբ Մ. Օրմանյանը գրում է. «... Խաչիկի որոշ

Ինչպես տեսնում ենք, աշխատության նշված հատվածն հարազատ է Ասողիկի հիշատակությանը և զգալիորեն լրացնում է այն՝ ընդլայնելով մեր պատկերացումները ժամանակի հայ եկեղեցու ազդեցության ոլորտների, հայկական գաղթավայրերի տարածման և զարգացման ընթացքի մասին, և այս առումով կարեղոր նյութ է տալիս ուսումնասիրողներին։ Ժամանակաշրջանի այս պատկերը համընկնում է X և ոչ XI դարի իրականությանը, երբ Հայաստանը գտնվում էր Բյուզանդական կայսրության քաղաքական գերիշխանության տակ, և հայ եկեղեցին ստիպված էր պաշտպանվել բյուզանդական եկեղեցու հարձակումներից։

Հետաքրքիր է, որ XI դ. հայ եկեղեցու այդ ծանր կացությունը արտացոլվել է հենց Անանիա Սանահնեցու առաջաբանում, ուր նա խոսում է բյուզանդական եկեղեցու հակահայկական քաղաքականության, բռնությունների և

րնթացքը եւ վճռական յեզուն հարկադրեց, որ աւելի մօտէն հոգ տանի պաշտպանել իւր եկեղեցւոյն հաւատարիմ հաւատացեալներ, որոնք յունական գաւառներու մէջ կր գտնուէին, Յունական Հայաստանի սահմաններէն դուրս... իսկ այդ վիճակներէն դուրս օտար երկիրներու մէջ գտնուող գաղթականներ՝ յոյն եպիսկոպոսներու պիտի հպատակէին, եւ չուզերով այ յունադաւան կերին ձեռքք պիտի մնային։ Ուստի նաչիկ ասոնց համար հոգաց, եւ ձեռնարկեց անոնք հովուելու համար ձեռնադրել եպիսկոպոսունս, որոնք յարկաւ իրենց ձեռքին տակ քահանաներ այ ունէին եւ կր շատցնէին բատ պատշաճի։ Անունով կր յիշուին Անտիոք Ասորւոց եւ Տարսոն Կիլիկեցւոց, եւ Սուլյրնդա, իրեւ հայ եպիսկոպոսուններ դրկուած յիներ կր քաղուի յամենայն գաւառսն յայնոսիկ բազատրութենէն։ Այդ ժամանակէն կսկսին երեւայ Հայոց ստուար գաղթականութիւնները, որոնք կր սփռուէին զկողմամբք արեւմտից (Ասողիկ, 249), իրենց նպատակ ունենալով Միջերկրականի ծովերեալ գաւառները տարածուիլ...» (Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1137-1138)։

հարկադրանքների մասին, որ հակասում է բուն աշխատության ոգուն և փաստական տվյալներին⁴⁶:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը հիմք են տալիս ասելու, որ «Առ ներքինացեալս», «Վասն բաղարջին» և «Վասն ժողովոյն Քաղկեդոնի» գլուխները ևս պատկանում են Անանիա Նարեկացու գրչին:

Նշված «Հակաճառութեան» «Վասն պատկերապաշտից» գլխի սկզբնավորությունը հիշեցնում է Նարեկացուն պատկանող «Առ ներքինացեալս» գլխի սկիզբը: «Վասն պատկերապաշտից» գլխի սկզբնատողերն են. «Դարձեալ ասացից սուղ ինչ բան յաղագս պատկերապաշտաման պատկերաց»⁴⁷:

Այս հանդամանքը, ինչպես նաև գլխի ոճական առանձնահատկությունները, հավանական են դարձնում, որ այն ևս պատկանում է Անանիա Նարեկացու գրչին: Կան այս տեսակետն հաստատող նաև այլ փաստեր, որոնց կանդրադառնանք:

Թեական է մնում երեք՝ «Վասն բաժանման Վրաց», «Յաղագս մեռոնին» և «Յաղագս չորից աթոռոց» գլուխների հեղինակային պատկանելության հարցը:

«Հակաճառութեան» առաջին խմբագրության բնագրագիտական հետազոտությունից հետո առաջ են գալիս երկրորդ խմբագրության առանձին գլուխների և Վարդան

⁴⁶ «Որում դարձեալ վերստին կենդանութեան առիթ եղեալ չարին՝ ժողովն Քաղկեդոնի եւ հարկ եղեալ բռնութեամբ՝ որոց ընդ իշխանութեամբ ունէին՝ զերկարնակն ընդունել հաւատ, այլ մեր ոչ է հաւանել անօրէն հրամանացն, եւ միայն ոչ մեք, այլեւ ամենայն ազգ, որք ոչ են ընդ իշխանութեամբ նոցա՝ որոշեալք ի ժողովոյն Քաղկեդոնի՝ ընդ մեզ ունին զանշարժ գաւանութիւն երից սուրբ ժողովոցն» (Մատենագարան, ձեռ. 6453, թերթ 3ա):

⁴⁷ Նույն տեղում, թերթ 58ա:

Այդեկցու «Արմատ հաւատոյ» ժողովածուի՝ Անանիա վարդապետին վերագրված հատվածների հարցերը: Բանն այն է, որ «Հակաճառութեան» երկրորդ խմբագրությունը տարբեր է առաջինից. որոշ գլուխներ նրանում բացակայում են, սակայն բնագիրն ունի նաև հավելյալ գլուխներ: Այս խմբագրությունն առավել ամբողջական տեսքով ներկայանում է Մատենադարանի 5618 ձեռագրով, որի սկզբը պակասավոր է, չկան խորագիրը և բնծայականը: Մյուս գրչագրերում պահպանված օրինակները սրա համառոտ տարբերակներն են: Այդ համառոտ տարբերակներում ժողովածուն սկսվում է Սանահնեցու բնծայականով, որին հաջորդում է առաջին չորս գլուխներն ընդգրկող ամբողջական բնագիր՝ նախնական տարբերակի նման միակտուր (բայց Մատենադարանի 5618 ձեռագրի՝ 1ա-196ա), ապա ևս չորս գլուխներ՝ «Յաղագս խաչին» (196ա-228բ), «Յաղագս ծննդեան» (228բ-230բ), «Յաղագս Առաջաւորաց պահոց» (230բ-237բ), «Յաղագս կրտելոյն» (նույնն է՝ «Առ ներքինացեալս» (238ա-252ա), «Յաղագս գիսաւորաց արանց» (նախորդ գլխի մասն է կազմում, 252ա-254ա), «Յաղագս պատկերացկաւներոյն» (նույն է՝ «Վասն պատկերապաշտից», 254ա-259բ). այնուհետև անանջատաբար, առանց խորագրի, հանդես են գալիս «Վասն ժողովոյն Քաղկեդոնի» (259բ-265ա), «Վասն բաժանման Վրաց» (265ա-267ա) գլուխները եւ «Յաղագս խաչին» գլխի շարունակությունը (267ա-270բ):

Հիմնական տարբերությունը «Յաղագս Առաջաւորաց պահոց» գլուխն է, որ չկա նախորդ խմբագրության մեջ, և «Յաղագս խաչին» գլուխը, որ բովանդակության հարազատությամբ հանդերձ չի նույնանում «Յաղագս երից սրբասացութեանց» գլխի հետ:

Սամվել Կամրջաձորեցու վկայությամբ, Անանիա Նաբեկացին իր աստվածաբանական-դավանաբանական երկերում անդրադարձել է Առաջավորաց պահքի խնդրին, ուստի բնական կրիներ ենթադրել, որ այս խմբագրության մեջ պահպանված բնագիրը պատկանում է նրան։ Այդ է հուշում նաև գործի սկիզբը, որ հարազատ է Նարեկացու ձեռագրին. «Այլ յաղագս Առաջաւորաց պահոցն հակառակութեան յանտեղի բացայայտութեան տարամերթեալ արտալածեցաք զայդպիսի ներմտածութիւն, ոչ ուղղակի գոյ զայդպիսի խորհուսն վարկաք, ոչ ջատագով գոյ ճշմարտութեան, այլ պարսաւագէտք, անծող մտաց հանդիպեալք...»⁴⁸: Սակայն հաջորդ հատվածներում, ինչպես նշել է Հ. Անասյանը, «Դաշանց թղթի» հետքերը կան⁴⁹: Այս փաստը վկայում է, որ աշխատության վերոհիշյալ խմբագրության մեջ ընդմիջարկություններ են կատարվել հետագայում։

Հնարավոր է, որ պահպանելով աշխատության սկիզբը՝ հետագայի խմբագրողը ժամանակի խնդրի համեմատ բնագրին կցել է Առաջավորաց պահքի առաջացման իր վարկածը։ «Յաղագս խաչին» գլուխր «Յաղագս երից սրբասացութեանց» գլխի հարատության տպավորություն է թողնում։

⁴⁸ Մատենադարան, ձեռ. 5618, թերթ 230թ-231ա:

⁴⁹ Դա հաստատվում է այն հանդամանքով, որ հեղինակը Առաջավորաց պահքի հաստատումը կապում է Տրդատ և Կոստանդիանոս արքաների կապած դաշինքի հետ. «Եւ յորժամ աստուածային յայտնութիւնն եղեւ առ սրբոյն Կոստանդիանոսի եւ նորա ծանուցեալ զճմարտութիւնն աստուածահրաշ տեսլեամբ՝ եւ կոչեցեալ զսուրբն Սեղբեստրոս հաւատայր ի Տէր մեր Յիսուս Քրիստոս... եւ յետոյ ի հանդիպիյն Տրդատայ եւ սրբոյն Գրիգորի թագաւոր Կոստանդիանոսի եւ դաշնադաւան եղեալ առ միմեանս կարգեցին զմերն ի սրբոյն Գրիգորէ հաստատեալ զպահս նոցա պահել եւ տաւնել յիշատակ սրբոյն Գրիգորի եւ Տրդատայ...» (Մատենադարան, ձեռ. 5618, թերթ 233աթ):

առաջ են քաշվում նույն խնդիրներն ու հարցերը, որոնք նույնատիպ մեկնաբանություններ են ստանում: Այստեղ ևս ակնհայտ է ոճի միակերպությունը: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ մենք գործ ունենք նույն հեղինակի՝ Անանիա Նարեկացու նախնական բնագրի հաջորդական մասերի հետ: Հեղինակը տեղ-տեղ օգտագործում է նույն եղրաբանությունը, օգտագործում է փիլիսոփայական-տրամաբանական հասկացություններ: Մեջ բերենք մեկ օրինակ. «Զի թէ բոյոր մարդկութիւնք, որ տարբերին ի միմեանց, բազում ինչ զանազան որակաւք եւ ունակութեամբք՝ սակայն ի միում անհատի բոյորն տեսանի՝ մարդկութեան տեսակ, որչափ եւս առաւել յերրորդական միութեանն, որ ոչ իրիւք գանազանքն ի միմեանց» (N 5618, 315ա): Այս առումով «Յաղագս երից սրբասացութեանց»-ի նախադրությունում ուշագրավ փաստ է հաղորդում Անանիա Սանահնեցին. «Բայց նախ զյառածագրեալ զխորհուրդ խաչին տեսջիր սկզբնաւորեալ ի կենաց տնկոյն որ ի դրախտին, զի անդուստ ի վերուստ իսկ արկեալ էր ի միտ երեքսրբեան տէրութեան զխորհուրդ փրկագործ խաչելութեան Աստուածն Բանի, զոր յայլում տեղւոջ քաղեալ եմ եւ եղեալ. եւ ապա զայս, որ յԱնանիա վարդապետին գրոցն համառօտ ժողովեցի»⁵⁰:

Խաչի խորհրդի վերաբերյալ բազմաթիվ հատվածներ կան «Հաւատարմատ»-ի առաջին մասում, որ Սանահնեցու «Հակածառութեան» առաջին խմբագրության առաջին գլուխն է կազմում, սակայն բացառված չէ, որ Սանահնեցին այստեղ ակնարկում է իր «Հակածառութեան» երկրորդ խմբագրությունը և նրա «Յաղագս խաչին» գլուխը: Այս դեպքում ստացվում է, որ ըստ Սանահնեցու վերոհիշյալ

⁵⁰ Նույն տեղում, թերթ 72բ-73ա:

հիշատակության, առաջին և երկրորդ խմբագրությունները պետք է փոխեն իրենց տեղերը, քանի որ Սանահնեցին խոսում է արդեն ավարտված մի այլ խմբագրության մասին, և նախնական պետք է համարել երկրորդ խմբագրությունը: «Դաշանց թղթի» հետքերը, որ առկա են նրանում, կարող են լինել հետագա դարերի ընդմիջարկություն՝ կատարված գուցե նույն այն ժամանակահատվածում, երբ ընդորինակվել է «Հակաճառութեան» պահպանված հնագույն՝ Մաշտոցի անվան Մատենադարանի 5618 ձեռագիրը (XIII դ.):

Մեր համոզմամբ, հնագույն այս ձեռագիրը ամենամոտն է գաղափար օրինակին և առավել անխաթար է պահպանել այն, և Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի մասն են կազմում նաև վերոհիշյալ գլուխները:

*

Մեր վերոհիշյալ փաստարկներն ամրապնդվում են Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (972-992)⁵¹ Սեբաստիայի Ստեփանոս մետրոպոլիտին ուղղված երկարնակության ուսմունքի դեմ գրված դավանաբանական թղթով⁵¹, որում շոշափված հարցերը, բնականաբար, համահունչ են Անանիա Նարեկացու «Հաւատարմատին»:

Ինչպես նշել ենք, Անանիա Նարեկացին հակաքաղկեդոնական շարժման գլխավոր գաղափարախոսն էր, և այդ շարժումը գլխավորում էր Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը: Բնականաբար, այդ դավանաբանական պայքարում մշակված էր այն կարևորագույն խնդիրների շրջանակը, որի առաջքաշմանն, ընդգծմանն ու ապացուցմանն էին

⁵¹ Տե՛ս «Մատենադարք հայոց», Հ. Ժ, էջ 665-684:

նպատակառուղղված նրանց դավանաբանական-հակաճառական երկերը:

Իր այս թղթում Խաչիկ Ա. Արշարունին բանաձևում է Խ դ. Հայ դավանաբանական պայքարի հիմնական եղանակն ու սկզբունքը՝ Հակառակորդի դեմ պայքարել իր իսկ Հայրաբանական-Հայրախոսական ավանդությամբ՝ եկեղեցու Հայրերի քրիստոսաբանությամբ ու վարդապետությամբ:

«Մեք ոչ միայն ... նոքաւք եւ ի ձեռն նոցա բան դնեմք ընդդիմ բաժանողացդ, այլ եւ ո՛չ ազգական եւ սեռն ընտանի եւ ուսուցիչ վարդապետաւք մերաւք, այլ որպէս ընդ Հրէայսն ո՛չ աւետարանական եւ առաքելական վարդապետութեամբք վիճեմք, այլ ի նոցունց մարդարէիցն հաւանեցուցանեմք, առյնպէս եւ ընդ ձեզ, ի վարդապետաց ձերոց եւ որ յաշխարհ ձեր պայծառացան՝ բանադիր լինիմք յոգնազան եւ բազմապատիկ պիտառութեամբք, զի առաւել երեւելի եւ նշանաւոր յաղթութիւնն լիցի ամենայն հերձուածողաց եւ պիղծ աւանդիցն»:

Այս սկզբունքով են առաջնորդվել դարի նշանավոր դավանաբանները՝ Հատկապես Անանիա Նարեկացին, որի «Հաւատարմատն» ամենասերտ առնչություններն ունի Խաչիկ Արշարունու թղթի հետ. Նրանցում արծարծվում է Հարցերի ու խնդիրների նույն շրջանակը, կապված Քրիստոսի միեղեն բնության, անապականության, խաչի նշանակության ու զորության, երից սրբասացությունը «խաչեցարիւ» ասելու, անխառն գինով պատարագ մատուցելու, ներքինացյալների, պատկերապաշտների, Ծննդեան տոնի և այլ Հարցերի մասին՝ վկայելով, որ այս գլուխները ներառված են եղել «Հաւատարմատ»-ի մեջ:

Այս երկերի միջև կա բնագրային ուղղակի կապ, որը վկայում է, որ նրանք սերում են միևնույն աղբյուրից: Գաղափարական հենքից զատ, դա վկայում է նաև համատեղ տեսական աշխատանքի և մշակված սկզբունքների մասին, որ տարածվում է նաև աղբյուրների ընտրության վրա:

Համեմատենք երկու նման հատվածներ.

«Հարցանեմ դարձեալ այլ ինչ մեծագոյն, որ փոքրագոյն թուեցաւ յաչս ձեր. զքահանայութիւնն, որ բարձր է պատուով, ըստ նմանութեան քահանայապետին Քրիստոսի, զիա՞րդ համարձակեցայք կանանց տալ. եւ զի՞նչ ասեմ կանանց, զի այն ստեղծուած Աստուծոյ է, այլ չէզոքացն, զոր դուք ստեղծիք իբրեւ զիշակէս, արտաքոյ սահմանեաց եւ ստեղծուածոց Աստուծոյ...»

Եւ բերանն ոսկի Յովհան... ի Գաղատացւոց թղթին մեկնութեան բանին՝ «Երանի՝ թէ մաւտակտուր իսկ լինէին...»

Արդ, ձեզէն դուք զիրաւն, արժա՞ն է յայնպիսին ի

«Եւ ձեր, ընդդէմ ճշմարտութեան խորհեցեալ, ոչ միայն ի կարգ չեզոքացն ընդունիք... այլ եւ ի գլուխ գահերէցութեան կարգէք... յԱստուծոյ խոտեալն եւ գտարամերժեալն ի բնութենէ զիա՞րդ մարթի ի գլուխ գահերէցութեան... Որպէս զիշակէսս հնարեցան մարդիկ արտաքոյ բնութեան ստեղծուածս...»

Ոչ ընդունի Հոգին զայնպիսիսն ձեռնադրել յաստիճան առաջնորդութեան, զի եւ ոչ զոք ծանեաք յայսպիսեացս ի Հոգւոյն ազդմանէ կոչեցեալ յաստիճան հայրապետութեան...»

Եւ արդ... մեք ոչ յանձնէ ասեմք զայս, այլ... ի Յոհաննու Ոսկերեանէ... ի Գաղատացւոց թղթին մեկ-

**գլուխ եկեղեցւոյ եւ բաշ-
խիչ շնորհաց կացուցա-
նել»⁵²:**

նութեան յայն բանի, որ ա-
սէ առաքեալ. «Երանի՛ թէ
մաւտակտուր իսկ լինէին,
որ զձեզն խռովեցուցա-
նէին»⁵³:

(«Թուղթ»)

«Հաւատարմատ»

Այս երկերի առնչությունն ակնհայտ է անգամ ոճա-
կան-պատկերային շերտում. իրենց դրույթների ապացուց-
ման համար հեղինակները կիրառում են նույն պատկե-
րավոր օրինակները: Հատվածաբար մեջ բերենք նման մի օ-
րինակ.

«Եւ սուրբն Բարսեղ ի ճա-
ռի Ծննդեան Քրիստոսի ա-
սէ. «Աստուած ի մարմնում
ո՛չ առածոյ գործովք, որ-
պէս ի Ճեռն մարդարէից,
այլ բուսակից ինքեան եւ
միաւորեալ ներկայացու-
ցանելով զմարդն: Եւ զի՞նչ
օրինակ ի մարմնումն Աս-
տուածութեան, որպէս հուր-
յերկաթում, ո՛չ փոխարկա-
բար այլ փոխատրաբար,
քանզի ո՛չ եթէ արտաքս
ինչ յիւրմէ ընթանայ հուր
առ երկաթ, այլ մնալով ըստ

«Եւ արդ, կամիմ, զի յաւ-
րինակէ հրոյ յայտ ցուցից
զմիաւորութիւն Բանին եւ
մարմնոյն, որպէս սուրբն
Բարսեղ եւ Դիոնիսիոս յայտ
ցուցանեն մեզ. զի որպէս
երկաթ ընդ հրոյ միաբա-
նեալ, ընդունի զհուրն ոչ
փոխարկաբար, այլ փո-
խատրաբար զիւր բնական
որակութիւնսն ի բաց գնե-
լով ի հրոյն, փոխադրի ի
որակութիւնսն եւ ոչ
զիւրսն, այլ զնորայն ներ-
գործէ զաւրութիւնսն: Իսկ

⁵² Նույն տեղում, էջ 682:

⁵³ Նույն տեղում, էջ 552-553:

բնութեանն ի տեղւո՞ց՝ փո-
խատրէ ի նման յիւրմէ զաւրութենէն, որ ոչ նուա-
զէ փոխատրութեամք, եւ զբոլորն լնու զընդունողն:
Հստ այսմ եւ աստուածային
Բանն ոչ շարժի յիւրմէ. եւ
բնակեաց ի մեզ, եւ ոչ յե-
զումն ինչ կրեաց, եւ Բանն
մարմին եղեւ: Եւ զիա՞րդ,
ասեն, ի մարմնական տկա-
րութենէ ոչ լցաւ Աս-
տուածն Բան. ասեմ՝ եթէ ոչ
հուրն ի յատկութենէ եր-
կաթոյն առնու ինչ՝ սեաւ է
երկաթ եւ ցուրտ, բայց սա-
կայն հրացեալ՝ զհոյ կեր-
պարան զգենու, եւ ինքն պայծառանալով՝ ոչ սեւա-
ցուցանէ զհուր, քանզի եւ
ոչ ստեղծականիս այս հոյ
հանգիտաբար տայցես ազ-
դել Աստուածութեանն»⁵⁴:

(«Թուղթ»)

բնութիւն հրոյն ոչ շփոթի
կամ ի բաց դնէ զծայրս ո-
րակութեան՝ բնաբար ունե-
լով զանյեղափոխութիւն ի
միաւորելն երկաթոյն, այլ
զնորայն փոխադրէ յիւրն
ունակութիւն, ըստ զաւրու-
թեան բնաբար ունելով զան-
յեղափոխութիւն, թէպէտ եւ
ընդ ամենայն գոյս ունի
զհաղորդութիւն:

Եւ արդ, միացեալ ընդ եր-
կաթոյ՝ ոչ ինչ կրէ ի նորայց
որակութեանց, այլ պար-
զեալ ձգէ ի ծայրս որակու-
թեան իւրոյն բնութեան:
Զորակութիւնս երկաթոյն
ասեմ զցրտութիւն եւ զսե-
ւութիւն, լուսափայլ եւ ջեր-
մին փոխադրեալ: Վասն
որոյ ասեմք զերկաթն հրա-
ցեալ, այլ ոչ անդրադարձի
ասել զհուրն երկաթա-
ցեալ...»⁵⁵:

«Հաւատարմատ»)

⁵⁴ Նույն տեղում, էջ 669:

⁵⁵ Նույն տեղում, էջ 551:

Նույն պատկերն է կրկնվում նաև Վարդան Այգեկցու ժողովածուում Անանիա Նարեկացու «Հաւատարմատից» քաղված մի հատվածում.

«Նորին՝ յետ սակաւուց.

Եւ խառնումն որպէս հուր ընդ ոսկի եւ ընդ երկաթոյ, որ ոչ յեղաշրջէ զնիւթոյն բնութիւն, այլ յիւրն փոխարկեացէ բնութիւն եւ հաւասարէ իւրում լուսոյն, եւ կամ որպէս պարզութիւն լուսոյ ընդ աւդ խառնեալ, եւ կամ որպէս հոգի եւ մարմին, զի միաւորեալ են անշփոթ, եւ մի կոչի բնութիւն մարդոյս, այսպէս եւ Բանն Աստուած միաւորեալ ի վեր քան զմիտս եւ անշփոթ մնացեալ»⁵⁶:

Ահա նույն պատկերների և յեղվական կաղապարների կիրառության ևս մի օրինակ «Թղթում» և 5618 ձեռագրում տեղ գտած «Հաւատարմատի» «Յաղագս խաչին» գլխում.

«Զի՞ ասացից ինչ ծաղրաւ կանս այս եւ ամաւթալիս. ընդէ՞ր եւ խորհրդական բաժակն ձեր մկրտեք ջրով, զաւրէն կրպակաւորացն խարէութեամբ ժանտացուցանելով զանապական եւ զսեռն զուրախացուցիչն սրտից մարդկան...»⁵⁷:

«Առաւել խոտան է եւ ականս այս եւ ամաւթալիս. նընդունելի, որ զանապական արիւն Քրիստոսի շփոթեալ խառնակեն իբրեւ կրպակաւորսն... (125ա):

... Պահոց պնդութիւն պանծալի է կրողացն զայնպիսոյ՝ նոր բաժակի զսեռն եւ զանապակ զաւրութիւն տեւողաբար ի կիր առեալ միշտ կրելով յինքեան»

(«Թուղթ»)

(231ա):

⁵⁶ Նույն տեղում, էջ 597:

⁵⁷ Նույն տեղում, էջ 682:

Մեջ բերենք մի ընդարձակ հատված նաև «Հաւատարմատի» առաջին մասից.

«Եւ ջրոյ եւ գինւոյ խառնակումն ո՞չ ահա շփոթումն եւ լուծումն երկոցունցն է եւ խառնակումն, զի այնուհետեւ ապականեալ է ջուրն ի գինւոյ, եւ գինին՝ ի ջրոյն, որպէս անիծանէ մարդարէն զկրպակաւորսն, որ խառնեն զջուր ընդ գինի:

Զի թէ այն պիղծ է եւ խոտելի, եւ անիծից արժանի գործ կրպակաւորացն, եւ պիղծ է եւ խոտան ըմպողաց, որչափ եւս առաւել խոտան եւ անընդունելի է, որ զանապական արիւնն Քրիստոսի շփոթեալ խառնակեն իբր զկրպակաւորսն...»⁵⁸

Բնականաբար, սրանով չեն սահմանափակվում գաղափարական և ոճական առնչություններն ու բնագրային փոխներթափանցումները: Դա հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ Անանիա Նարեկացին «Թղթի» ստեղծման անմիջական մասնակիցն է եղել, կամ դրա համար հիմք է հանդիսացել նրա՝ նախապես գրված «Հաւատարմատը»:

Այս ենթադրությունն ամրապնդվում է նաև Մելիտենի մետրոպոլիտին ուղղված Խաչիկ կաթողիկոսի թղթով: Բանն այն է, որ թեև այն սկզբնաղբյուր ձեռագրում պահպանված է Խաչիկ Ա Արշարունու անունով, սակայն նույն ձեռագրի լուսանցքում իբրև հեղինակ հիշատակվում է Սամվել Կամրջաձորեցին. «Տեառն Խաչիկայ Հայոց Կաթողիկոսի թան խոստովանութեան, պատասխանի յունաց գրոցն, զոր արձակեալ էր առ նա մետրոպոլիտն Մելիտենոյ» (ի լուսանցս՝ «Թուղթ Սամուէլի Կամրջաձորեցոյ Հա-

⁵⁸ Նույն տեղում, էջ 529:

յոց փիլիսոփայի, պատասխանի թղթոյն Թէոդորոսի մետրո-պոլարի Մելիտինոյ, գրեալ հրամանաւ Խաչկայ Հայոց կա-թողիկոսի»⁵⁹:

Այստեղ էլ, կարծես, խոսք է գնում համատեղ աշխա-տանքի մասին, թուղթն առաքվել է Խաչիկ Կաթողիկոսի ա-նունից, թեև այն, նրա հրահանգով ու ցուցումներով, հե-ղինակել է Սամուել Կամրջածորեցին՝ Խաչիկ Ա Արշարու-նու և Անանիա Նարեկացու հավատարիմ զինակիցը դավա-նաբանական պայքարում:

*

Վերջում հարկ է անդրադառնալ Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» դավանաբանական ժողովածուում Ա-նանիա վարդապետի անունով Հիշվող հատվածների խնդրին: Բնագրային համեմատությունը ցույց է տալիս, որ այդ՝ թվով յոթ հատվածները (տե՛ս Մատենադարան, ձեռ. 4425, թերթ 178թ, 181ա (երկու հատված), 181թ, 181թ, 188թ), չեն հանդիպում «Հաւատարմատ»-ի պահպանված մասերում, թեև նմանատիպ բազմաթիվ հատվածներ կան այնտեղ: Իսկ որ դրանք պատկանում են Անանիա Նարեկա-ցուն, հաստատվում է դրանց բնդհանուր խորագրով՝ «Ի մեծափառ հաւատոյ գրոցն Անանիայի Հայոց վարդապե-տի», որն ուղղակի հղում է նրա «Հաւատարմատին», քանի որն ժողովածուում դրանց անմիջապես հաջորդում են Գրի-գոր Նարեկացուց բերված քաղվածքները (թերթ 181թ):

Այս փաստը վկայում է, որ Անանիա Նարեկացու «Հա-ւատարմատ»-ի որոշ հատվածներ դուրս են մնացել Սա-

⁵⁹ Նույն տեղում, էջ 747-761:

նահնեցու կազմած ժողովածուից: Սակայն, անտարակույս, «Հաւատարմատ»-ի մեծագույն մասը մեզ է հասել անխաթար վիճակում: Այն Անանիա Նարեկացու առ այսօր պահպանված գործերի շարքում ամենախոշոր բնագիրն է:

Այս ամենից հետո հարկ է անդրադառնալ նաև Անանիա Սանահնեցուն վերագրվող խմբագրության «Յաղագս Ծննդեան» գլխի հեղինակային պատկանելության խնդրին, որը մնում էր թեական: Հարցի մեջ պարզություն է մտցնում Վարդան Այգեկցու ընդարձակ քաղվածքն այդ գլխից՝ վերագրված Անանիա Նարեկացուն: Նույնանուն մի գլուխ կա նաև ՄՄ 5618 ձեռագրում, որը որոշ տարբերություն ունի երկուսից. նրանում տարբեր ելակետային տոմարական հաշվարկներ են արկում: Զի բացառվում, որ իր տեսակետներն ու փաստական տվյալները հեղինակը փոփոխել և հարստացրել է տարբեր ժամանակներում: Հարցը լրացուցիչ քննության կարիք ունի Անանիա Նարեկացու և X դ. դավանաբակական պայքարի և մատենագրական ժառանգության համատեքստում:

Իսկ «Վասն մեռոնին» գլխի կապակցությամբ հարկ է շեշտել, որ նրանում ևս հանդիպում ենք բնագրային փոխներթափանցման փաստի, որն ակնառու է Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի տարբեր մասերի միջև: «Վասն բաղարջին» գլխում կրկնվում են «Վասն մեռոնին» գլխում արտահայտված մտքերը մեռոնի ձեթի վերաբերյալ՝ վկայելով, որ դրանք նույն հեղինակի գործերն են:

«Իսկ դուք զայսու պատուիրանաւ զանց արարեալ՝ միայն զձէթ ձիթենւոյ բերէք ի մէջ, զոր յիշելն ոչ ինչ մեծ է, եւ թողուլն ոչ ինչ վնաս առնէ, քանզի ամենայն ձէթ Աստուծոյ է, զոր եւ աւրհնեմք սուրբ Խաչիւն Քրիստոսի,

զոր յիշել զմահ Տեառն զկենարար, եւ աղաւթելով, տեառնագրէ եւ կնքէ՝ ընդունի զշնորհս Հոգւոյն Սրբոյ եւ կատարէ զմկրտեալքն սուրբ աւծութեամբն»⁶⁰:

«Վասն չորից աթոռոցն» գլխի մասին կարող ենք ասել, որ գաղափարական և լեզվաոճական կապ է նկատվում այս փոքրիկ հատվածի և Անանիա Նարեկացու «Հաւատարմատի», ինչպես նաև Վաղարշապատի Սուրբ Կաթողիկեին նվիրված Ներբողի միջե, մասնավորապես, հետեւյալ հատվածում. «Բայց, աղէ, տեսցուք, թէ ո՞ր ազգ այնպիսի աստուածային սքանչելիք եղեն, որպէս առ մեզ: Զի ահա յերկնից եղեւ կոչումն մեծին Տրդատայ եւ ամենայն Հայաստանեայցս, որպէս եւ մեծին Պաւղոսի: Եւ երկնային ահաւոր տեսլեամբ կոչեցաւ յաթոռ առաքելութեան մեծին Թաղէոսի եւ Բարդուղիմէոսի սքանչելին Գրիգորիոս Լուսաւորիչն մեր, եւ երկնային չնորհաւեքն դարձեալ տուաւ մեզ գիր ի ձեռն սրբոյն Մեսրովբայ եւ մեծին Սահակայ՝ առանց մարդկային իմաստութեան որպէս որդւոցն Իսրաիլի ի ձեռն Մովսէսի: Եւ դարձեալ Խաչն կենարար փայլեաց յերկրի մերում եւ յերուսաղէմ փայլեաց, եւ այժմ հանգուցեալ է ի լեառն Վարագ...»⁶¹:

Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի Անանիա Սահանեցուն վերագրվող խմբագրությունից մնում են երկու փոքր քաղվածքներ՝ «Պատճառ բաժանման Վրաց» և «Յաղուանից պատումութենէ»՝ կատարված Մովսէս Կաղանեկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկից, որ կարող էր նաև Անանիա Նարեկացին կատարած լինել:

⁶⁰ Նույն տեղում, էջ 562:

⁶¹ Նույն տեղում, էջ 560:

Այսպիսով, բանասիրական-բնագրագիտական այս հետազոտությամբ ճշգրտվում է դավանաբանական այս ժողովածուի մեջ Անանիա Սանահնեցու ներդրման և մասնակցության չափը, որը, մեր կարծիքով, սահմանափակվում է խմբագրության, գլխակարգության, համառոտումների և փոքրիկ հավելումների շրջանակում:

Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ը մեզ է հասել տարբեր խմբագրություններով, գրեթե անխաթար վիճակում: Թեպետ նաև չպահպանված մասերից քաղվածքների փաստեր կան, որոնք հուշում են որոնումները շարունակելու անհրաժեշտության մասին: Բոլոր նման դեպքերում, յուրաքանչյուր բնագիր կամ բնագրային քաղվածք պետք է դիտարկել Նարեկյան դպրոցի միեղեն, ամբողջական համաբնագրում, որ նոր եզրաբանություն, իմաստային ուղղաւներ և տարածական խորքեր էի հայտ բերում:

**ԵՐԱՆԵԼԻՈՅ ՀՕՐ՝ ԱՆԱՆԻԱ ՀՈԳԵՎԱՐԺ
ՓԻԼԻՍՈՓԱՅԻ «ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲԻ
ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ» ԵՐԿԸ**

Նարեկացիագիտության կարևորագույն խնդիրներից է Անանիա փիլիսոփայի անունով պահպանված Վաղարշապատի Սուրբ Կաթողիկե եկեղեցուն նվիրված ներբողի հեղինակային պատկանելության հարցը։ Ներբողի խորագիրն է «Երանելոյն Անանիայի հոգեշնորհ փիլիսոփայի ներբողեան ասացեալ ի Սուրբն Կաթուղիկէ եկեղեցի, որ է ի նորքաղաք, որ այժմ կոչի Վաղարշապատ, յորում տեղուոջ ցուցաւ հրաշալի տեսիլն մեծի նահատակի սրբոյն Գրիգոր Լուսաւորիչի» (այսուհետ՝ Ներբող)։

Նորագույն շրջանի ուսումնասիրողներից Հ. Քյոսեյանի «Անանիա Սանահնեցի» մենագրության մեջ այն զետեղված է Սանահնեցուն պատկանող երկերի շարքում։ Իր այս տեսակետը հեղինակը փորձել է ամրապնդել Կիրակոս Գանձակեցու մի տեղեկությամբ, ըստ որի Անանիա Սանահնեցին հեղինակել է մի ներբող՝ նվիրված Շողակաթ եկեղեցուն։

«Իսկ յԱրեւելս արք անուանիք եւ գիտնականք՝ լուսաւորիչք եկեղեցւոյ՝ Անանիա վարդապետ ի Սանահինն, յաւուրս Դէսկորոսի, այր մտաւոր եւ հանճարեղ, գիտող տոմարական արշեստի եւ գրոց աստուածայնոց մեկնող։ Սորա ասեն ի մի հաւաքեալ ի մեկնութիւնն առաքելոյ... արար եւ

¹ Հ. Քյոսեյան, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 19-42, 117-156։ Հրատարակության համար հիմք է ծառայել Ա. Այվազյանի «Ճռաքաղ» ամսագրի Հրատարակությունը՝ հիմնված 1348 թ. Արև քաղաքի Հայսմավուրքի օրինակի վրա (տե՛ս «Ճռաքաղ», Մուկվա, տպ. Լազարյան ճեմարանի, 1859, տետրակ Հ-ԺԲ, էջ 259-272, 291-298, 323-332, 399-406)։

մտաւոր տեսութիւն եւ համեմատութիւն Աւետարանացն ... գրեաց եւ լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբաւացութեանս, որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասեն, եւ զՆերբողեանն Շողակաթին»²:

Այստեղ նշենք, որ Գանձակեցու վկայակոչման մեջ երկու Անանիաների՝ Նարեկացու և Սանահնեցու երկերի շփոթկա, քանի որ հիշատակող «Վասն խորհրդական սրբաւացութեանս, որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասեն» երկը Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դավանաբանական-իմաստասիրական ժողովածուի մասն է կազմում³, և դա իր մենագրության մեջ նշում է նաև Հ. Քյոսեյանը⁴:

Ներբողը Անանիա Նարեկացուն են վերագրել «Նոր Հայկագեան բառարանի» հեղինակները, Ա. Սոմալյանը, Կ. Նոյմանը, Մ. Մսերյանցը, Հ. Տաշյանը, Ն. Զամինյանը, Կ. Կոստանյանցը, Հ. Աճառյանը, Ն. Ակինյանը, Ա. Ղազինյանը, Հ. Միրզոյանը⁵:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, ԳԱ հրատ., 1969, էջ 112-13:

³ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրապյան, Անանիա Նարեկացի, էջ 74-117:

⁴ Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 94-95:

⁵ ՆՀԲ, Ա, էջ 9: Somal P. S., *Quadro della storia letteraria di Armenia*, Venezia, 1829, p. 60-61: S. Neumann, *Versuch Geschickte der armenischen literature*, Leipzig, 1836, s. 127-128: Մ. Մսերյանց, Անանիա Նարեկացի, «Ծոռաքաղ», 1859, Հտ. Ա, տետրակ Բ, էջ 261: Հ. Տաշյան, «Յուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Միսիթմարեանց ի Վիեննա», Վենետիկ, 1895, էջ 1057: Ն. Զամինյան, Հայ գրականության պատմություն, Ա, Նոր Նախիչևան, 1914, էջ 145: Կ. Կոստանյանց, Ստեփանոս Օրբելյան, Ողբ, էջ 13: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 148-151: Ն. Ակինյան, Դավիթ Հարքացի, Անհաղթ փիլիսոփա, Վիեննա, 1959, էջ 126: Ա. Ղազինյան, Ներբողը Հայ Հին գրականության մեջ. Հայ միջնադարյան գրականության ժանրերը (հոդժող), Եր., 1984, էջ 154-155: Հ. Միրզոյան, Գրիգոր Նարեկացու բանաստեղծական աշխարհը, Երևան, «Նախիրի», 2006, էջ 7-55:

Հենվելով Կիրակոս Գանձակեցու նշված վկայության վրա՝ Ներբողը Անանիա Սանահնեցուն են վերագրում Ե. Դուրյանը, Գ. Զարբհանալյանը, Մ. Մուրատյանցը, Բ. Սարգիսյանը, Կ. Ղաֆարարյանը, Հ. Անասյանը⁶:

Հստ Կիրակոս Գանձակեցու, Անանիա Սանահնեցու Ներբողը նվիրված է եղել Շողակաթ եկեղեցուն, որ ուսումնասիրողներից ոմանք նույնացնում են Վաղարշապատի Կաթողիկեի հետ:

Հ. Քյոսեյանը վկայակոչում է նաև Վարդան վարդապետ Հաղբատեցու «Բարձրացուցէք»-ի մեկնության հետեւյալ հիշատակությունը՝ «Ի շինութեան եկեղեցեացն ի Վաղարշապատ քաղաքի, վասն ներբողելոյ յԱնանիայէ զայնը նաւակատեաց տաւնս» (ՄՄ, ձեռ. թիվ 2020, թերթ 298ա, թիվ 3276, թերթ 113ա):

Սակայն այս հատվածում պարզ չէ՝ Անանիաներից ո՞րի մասին է խոսքը և խոսվում է ոչ թե Վաղարշապատի Կաթողիկեի մասին, այլ քաղաքի եկեղեցիների շինության մասին, որոնց նավակատեաց տոներն է ներբողել հեղինակը:

Ներբողը պահպանված է երկու տարբերակով: Մաշտոցյան Մատենադարանի թիվ 2216 ձեռագրում (երկրորդ տարբերակ) այն վերագրված է Անանիա Սանահնեցուն. «Անանիայի Սանահ[ն]եցոյ ասացեալ ներբողեան ի վերայ Սրբոյ Էջմիածնայ» (թերթ 141ա-151ա):

⁶ Ե. Դուրյան, Պատմություն Հայ մատենագրության, Կ. Պոլիս, 1885, էջ 40-41: Գ. Զարբհանալյան, Հայկական հին գլուխթյան պատմություն (Դժգութակ), Վենետիկ, 1897, էջ 532-534: Մ. Մուրատյանց, Պատմություն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Երուսաղեմ, 1872, էջ 423: Բ. Սարգիսյան, Անանիա թարգմանիչն եւ իւր գրական գործոց նմոյշներ, Վենետիկ, 1899, էջ ԺԹ, տողատակ: Կ. Ղաֆարարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957 թ., էջ 49: Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Հ. Ա. Երևան, 1959, էջ 775:

Այս ձեռագիրը XVIII դարի է (1766թ.), և, ըստ ուսումնասիրողի, շեղվում է նախնական տարբերակից և ավելի ուշ շրջանների ազդեցությունների է կրել: Այնուամենայնիվ, այն իր հիմքում ունի նախնական տարբերակը, որի մի շարք հատվածների համառոտման հետքեր է ի հայտ բերում:

Այս հանգամանքները հեղինակին հիմք է տալիս ենթագրելու, որ այն հորինվել է 15-18-րդ դդ. ընթացքում, և առաջինի կերպարանափոխված տարբերակն է ներկայացնում: Համաձայնելով հեղինակի ներկայացրած փաստարկեների հետ, հարկ ենք համարում նշել, որ այստեղ դարձյալ պարզաբանումների և ներքին աղերսների բացահայտման կարիք կա: Ի վերջո, Վաղարշապատի անվան փոխարինումը էջմիածնով կարող է հետագա գրչի միջամտության արդյունք լինել, այն էլ խորագրում, քանի որ բուն բնագրում էջմիածնը չի հիշատակվում: Նույնը վերաբերում է նաև այլ «կրօնաքաղաքական եւ հասարակական վերաիմաստաւորումներին», որոնք առկա են ներբողի այս տարբերակում:

Ներբողի այս երկու տարբերակների առկայությունը և բնագրային աղերսները չեն բացառում, որ երկրորդի գեպքում մենք գործ ունենք իրոք Անանիա Սանահնեցու ներբողի հետ, որ մեծապես օգտվել է իր նշանավոր նախորդի համանման երկից:

Դրա ակնառու օրինակը նա տալիս է իր «Հակաճառութիւն ընդգեմ երկաբնակաց» քաղվածո ժողովածուում, ստեղծված Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի ամբողջական մասերի, քաղվածքների ու համառոտագրությունների հիման վրա: Սակայն այս հարցը հետագա ուսումնասիրության կարիք ունի:

*

Այս նշանավոր Ներքողի նախնական տարբերակը Անանիա Սանահնեցուն վերագրելիս Հ. Քյուսեյանը, մեր կարծիքով, իր տեսադաշտից դուրս է թողել էական մի շարք հանդամանքներ՝ հեղինակի երկի ոճական հատկանիշները, բանաստեղծական-ճարտասանական տարբերքը, բառաստեղծման հենքը՝ իբրև երկի հղացքի էական գործոն և հատկանիշ, ընդհանրապես՝ տվյալ հեղինակի պահպանված գրական ժառանգության, գրական այն միջավայրի ու դպրոցի համատեքստը, որտեղ գրվել է երկը։ Այս կոնկրետ բնագրագիտական, լեզվաոճական վերլուծությունն ու քննությունն առավել կարեոր է ընդհանրական բնույթի, հաճախ թեական դատողություններից ժամանակի հասարակական-քաղաքական մթնոլորտից բխող ինչ-ինչ դրդապատճառների, ժամանակի եկեղեցական գաղափարախոսության ընդհանուր ոգու և ուղղվածության տեսանկյունից, ըստ որոնց նա փորձում է գործը վերագրել Անանիա Սանահնեցուն։ Սակայն այս դեպքում անգամ երկն առավել համահունչ է Անանիա Նարեկացու ապրած ժամանակաշրջանին և եկեղեցական գաղափարախոսությանը⁷, որ հակաքաղկեդոնական և հակապանդավորական ուղղվածությունն ուներ և որի կենտրոնական դեմքերից էր Անանիա Նարեկացին՝ մեծ մտածողն ու աստվածաբանը, հռետորն ու բանաստեղծը, որ Անանիա Մոկացի և Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսների հետ ղեկավարում էր կենտրոնամետ և հայրենանվեր այդ շարժումն իր բեղուն գրչով և իր գրական ու եկեղեցական-քաղաքական բուռն գործունեությամբ։ Բավական է ասել, որ այս

⁷ Այս մասին տե՛ս «Անանիա Նարեկացի», էջ 74-117։

կաթողիկոսների պատվերով է նա գրել իր դարակազմիկ երկու՝ «Հնդկէմ թոնդրակեցւոցն» և «Հաւատարմատ» դավանաբանական երկերը: Ընդ որում, «Հնդկէմ թոնդրակեցւոցն» երկի պահպանված հատվածը մի իսկական ներքող է Կաթողիկե եկեղեցուն՝ հար և նման նշված Ներքողին, որի հետ ակնհայտ նմանություններն ու համընկնումները հեղինակը համարում է ազդեցության արդյունք:

X դ. ընդհանուր քաղաքական վերելքի, իմաստասիրական-դավանաբանական ոգու և եկեղեցական քաղաքականության զարթոնքի վկայություն է հատկապես Անանիա Նարեկացու «Հաւատարմատը», որի մի շարք գլուխներ կարևոր տեղեկություններ են տալիս X դ. հայ եկեղեցու զորության, դիրքերի ամրապնդման և աճող հեղինակության մասին երկրի ներսում և նրա սահմաններից դուրս, ուր հայ կաթողիկոսները հայադաշտան թեմեր էին կարգում:

Այս փաստերն առավել հավանական են դարձնում այն վարկածը, որ այս Ներքողը գրվել է X, այլ ոչ XI դարում, երբ հայ եկեղեցու դիրքերը սասանվել էին, երբ չկար նրա երբեմնի ուժը և դավանաբանական հզոր շարժումը, որի կենտրոնում Անանիա Նարեկացին էր՝ հոչակավոր դավանաբանն ու փիլիսոփան:

Հեղինակի պնդումը, որ այս գործը XI դ. հայ եկեղեցական շրջանակներում տիրող՝ կորցրած պետականությունը վերականգնելու համազգային բաղձանքների արտահայտություն էր, մեր կարծիքով, քննություն չի բռնում:

Կա նաև մի կարևոր հանգամանք՝ ուսումնասիրողը չի համեմատում այս Ներքողը Գրիգոր Նարեկացու երկերի, հատկապես նրա հանրահայտ ներքողների հետ, ավելին,

անգամ չի նշում դրանք մինչև XI դ. եղած այս ժանրի գործերի շարքում:

Հարցը կարեորվում է նաև նրանով, որ Գրիգոր Նարեկացու համանման ներբողները հոգեորշաղաքական բուռն վերելքի արտահայտություններ են, հատկապես նրա եռագրությունը՝ «Ապարանից Ս. Խաչի պատմութիւնն» ու Ս. Խաչի և Աստվածածնի ներբողները, վերջապես, նույն Անանիա Նարեկացու «Հաւատարմատն» ու «Ընդդէմ թոնդրակեցւոցն» երկի պահպանված հատվածը, որ նույնանման ճարտասանական ոճերով գրված ներբողի նմուշ է:

Այս ներբողը, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու եռագրությունը՝ ազգային զարթոնքի, հոգեոր բուռն վերելքի արտահայտություններ լինելով, առավել կապված են Նարեկյան դպրոցի գրական միջավայրի, զարգացման զորեղ ընթացքների հետ, որ անխախաղեալ խորքերի ու թուիչքների տարան հայ հոգեոր գրականությունն ու արվեստներն ընդհանրապես: Այս առումով՝ ներբողն ընկած է դպրոցի ձեավորման նախահիմքերում: Անգամ պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ այն մեծապես ազդել է Գրիգոր Նարեկացու բառաշխարհի և ընդհանրապես նրա ստեղծագործությունը ձեավորման վրա:

Հարկ է շեշտել՝ Անանիայի ներբողը և Գրիգոր Նարեկացու եռագրությունը գրվել են նույնատիպ շարժառիթներով՝ եկեղեցական համաժողովրդական տոնակատարության առթիվ: Գրիգոր Նարեկացու եռագրությունը կապված է վանական համալիրի կառուցման հետ, որին մասնակցում էին ողջ արքունիքը, հոգեորականությունը, ժողովուրդը, Արծրունի երեք թագավոր եղբայրները՝ Աշոտ-Մահակը, Գուրգեն-Խաչիկը, որը պատվիրել էր Գրիգոր Նարե-

կացուն գրել «Երգ երգոցի» մեկնությունը, և Սենեքերիմ-Հովհաննեսը⁸:

Դրանք, ուժի, զորության, հզոր պետականության և հոգեոր զարթոնքի արտահայտություններ լինելով, վկայում են, որ Ներբողը գրվել է պատմական-մշակութային վերելքի այդ ժամանակաշրջանում։ Մնացած դեպքերում, պետականության կորստի անմիջական տպավորության տակ, առավելապես ողբեր են գրվում։

Մինչդեռ, ըստ Հեղինակի, ներբողը «... Եկեղեցական-ազգային զարթոնքի մասին Հեղինակի քաղաքական երազանքն է, որն այստեղ պետական իշխանության վերահաստատման հույսով տոգորված մի կոչ է՝ ուղղված հայ իշխանավորներին, հայ ժողովրդին առհասարակ։ Ըստ այսմ, այն քաղաքական ինքնորոշման և կենտրոնաձիգ պետականության վերահաստատման գաղափարական խթաներից մեկն է հանդիսանում։ Այսօրինակ դիտումները հնարավորություն են տալիս գոնե մոտավոր ստուգությամբ ուրոշել Սանահնեցու Ներբողի ստեղծման ժամանակը։ Ելնելով Սանահնեցու վերոբերյալ բաղձանքից՝ կարելի է ենթադրել, որ Ներբողը ծնվել է պետականությունից զուրկ պայմաններում... Վաղարշապատի իդեալականացմամբ կարելի էր քաղաքական իշխանության վերականգնման հնարավորությամբ հուսադրել ժամանակակիցներին։ Նկատի ունենալով այս պարագան՝ թվում է, որ Վաղարշապատի ներբողը Անանիա Սանահնեցին գրել է Բագրատունյաց թագավորության անկումից՝ 1045 թվականից հետո»⁹։

⁸ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրազյան, Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը, Էջ 24-28։

⁹ Անանիա Սանահնեցի, Էջ 23-24։

Անմիջապես ասենք, որ ազգային-քաղաքական ճառի, հայ իշխանավորներին և հայ ժողովրդին ուղղված կոչի նման տարրեր ներբողում ընդհանրապես չկան: Եվ հետո ներբողը ձոնված է Վաղարշապատի կաթողիկեին և ոչ Վաղարշապատին:

*

Այս ներբողի հեղինակային պատկանելության հարցը քննելիս ցանկանում ենք շեշտել մի կարևոր հանգամանք. նրանում ի հայտ է գալիս հեղինակի ստեղծաբանության խոր շերտերից մեկը, որ կապված է նրա խորհրդագոված (միտուիկ) աշխարհընկալման հետ: Դա բառաստեղծման, նորաբանությունների ու նորակազմությունների շերտն է, հարաշարժ, փոխներթափանցող մի աշխարհ, որը խոսքի մի նոր, յուրօրինակ ոլորտ է ձևավորում՝ բացահայտելով, առաջին հերթին, հեղինակի բանաստեղծական-ճարտասանական բացառիկ հմտությունները:

Համեմատությունը, բնագրային ներքին աղերսների վերհանումը որոշակիացնում են Գրիգոր Նարեկացու բառագանձի ու լեզվական-բառաստեղծական ներքին ընթացքի վրա այս ներբողի ակնհայտ ազգեցությունը:

Բառաստեղծման տարերքը, իբրև ուսուցչի և աշակերտի ստեղծաբանության կարևորագույն բաղադրիչներից մեկը, ուղղակիորեն սերում է մարդկային ստեղծագործության մեջ անհատական սկզբի բացարձականացման, «խոսքի զորության արվեստի»՝ իբրև անմիջնորդ աստվածաբանության և աստվածահաղորդության նրանց դավանած սկզբունքներից: Նրանց համար բառերը հոգեկիր, հոգեզգայուն միջոցներ, «պատճառներ» են՝ ներշնչանքի, հուզագե-

դության, հոգեոր տարփանքի հասնելու համար։ Այս ընկալումները և դրանց բացարձականացումը հաղթահարում էին հոգեոր երգերի ավանդական բառային և շարահյուսական կաղապարները, բառ-հասկացությունն ազատում էին պատենավորումից՝ նոր ոլորտներ բացելով ստեղծագործական ազատության և անսանձ երևակայության համար։

Բառերը նրանց ստեղծագործության ծիրում ընկալվում էին իբրև էություններ, որոնք տանում էին բանաստեղծին երկնային աստիճանակարգություններով։ Եվ այս «լուսերգության», բառաստեղծման, նորաբանությունների անվերջ արարման այս տարերքն ի հայտ է գալիս հատկապես ներբողական ժանրում¹⁰։ Սրանք այս դպրոցի և նրա ներկայացուցիչների ինքնօրինակ ոճի յուրահատկություններն են, որոնցով նրանք ընդգծվում և առանձնանում են միջնադարյան գրականության պատմության մեջ։

Ասվածի լավագույն ապացույցներից է նաև Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոցն» երկի ներբողանման հատվածը, որին ուղղակիորեն հարում է նշված ներբողը։ Բանն այն է, որ այն նույնպես ուղղված է կաթողիկե եկեղեցուն և նույնություններ ու համբնկնումներ ունի ներբողի հետ և՝ մեկնության արվեստի սկզբունքների ու դրանց կիրառման, և՝ գիտական եղբարանության, և՝ ոճի ու բառամթերքի, և՝ բառաստեղծման ոլորտներում, որոնք աներկըան դարձնում դրանց հեղինակային նույնությունը։ Որոշ ակնհայտ առնչություններ այս երկերի միջև նկատել է նաև Հ. Քյոսեյանը, սակայն ճիշտ եղբարանգում անելու համար, մեր կարծիքով, նրան խանգարել է իր կանխակալ կարծիքը։

¹⁰ Այս մասին տե՛ս «Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը», Էջ 318-365։

Այսպես, նա գրում է. «Որ այս գործն իրապես հակա-
աղանդավորական բովանդակություն ու նպատակ ունի, հա-
վաստվում է նաև Անանիա Նարեկացու «Հնդէմ թոնդրա-
կեցւոցն» ջատագովական երկի հետ նրա ունեցած որոշակի
աղերսներով... Անանիա Նարեկացու «Հնդէմ թոնդրակեց-
ւոցն» հակաճառության պահպանված հատվածից երևում է,
որ նա հերքում է թոնդրակեցիների այն դավանությունը,
ըստ որի եկեղեցին մերժվում է իբրև նյութական կառույց:
Նման հարցերի է նվիրված նաև Անանիա Սանահնեցու
Ներբողը: Իբրև այս կարգի հարցերով ապրող հեղինակ, ծա-
նոթ լինելով Անանիա Նարեկացու Հավատարմատին՝ Սա-
նահնեցին ամենայն հավանականությամբ օգտվել է «Հնդ-
էմ թոնդրակեցւոցն»-ից: Այսպես, օրինակ.

Անանիա Նարեկացի

Անանիա Սանահնեցի

«Ի հարցմունս բանի մա-
սանցն միապէս ստորոգին ի
սերսն եւ ի տեսակս, ի ձեւս
եւ ի թիւս, եւ հոլովսն եւ
յենթանկեալ անւանցն տե-
սակս...»:

«Հնդէմ թոնդրակեցւոցն»

Այս համեմատությունը ցույց է տալիս, որ Անանիա
Նարեկացու երկի ազդեցությունը որոշակի է, նույն միտքն
է՝ փոքր-ինչ փոխված, և բառացի նմանությունն էլ
ակնհայտ»¹¹ (վերջին ընդգծումը մերն է – Հ. Թ.):

Այստեղ շեշտենք, որ սա «բառացի ակնհայտ նմանու-

¹¹ Հ. Քյոսեյան, Անանիա Սանահնեցի, էջ 20-21:

թյան» միակ դեպքը չէ. դրանք բազում են ոչ միայն Անանիա Նարեկացու այս, այլև այլ երկերի հետ: Բառացի համընկնումներ և ակնհայտ նմանություններ կան նաև այդ երկերի և Գրիգոր Նարեկացու երկերի միջև, որ պարտադրում է նման օրինակները համադրել Նարեկյան դպրոցի ընդհանուր հենքի, տեսական համակարգի՝ իբրև համարնագրի հետ, որը չի արել ուսումնասիրողը:

Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության ուսումնասիրողներից Հ. Միրզոյանն իր «Նարեկացու բառաշխարհը» ուշագրավ ուսումնասիրության մեջ¹², հենվելով «Նոր Հայկագեան բառարանի» հեղինակների տեսակետի վրա, այս երկը բնականորեն դիտարկում է Անանիա Նարեկացու երկերի շարքում, վեր հանելով բառարանից բոլոր այն բառերը, որոնք հանդիպում են միայն Անանիա Նարեկացու և ապա Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններում: Արդյունքներն, իրոք, անսպասելի են. Անանիա Նարեկացու այս Ներբողում օդտագործված 177 նորաբանություններ վկայված են միայն Անանիա Նարեկացու, 17-ը՝ միայն Անանիա և Գրիգոր Նարեկացիների մոտ¹³: Հստ էության, բոլոր այդ բառերը բառ-բանաստեղծություններ, բառ-խտացումներ են, որ բոլորովին նոր շարժման մեջ են դնում հոգեւոր բանաստեղծության խորհրդանիշների աշխարհը, լեզվին հաղորդելով միանգամայն նոր շարժունակություն և ճկունություն՝ օժտելով այն գուներանգների աշխարհով, լուսեղեն բխումների տպավորչականությամբ: Լեզվաստեղծման այս տարերքը, ստեղծագործական ան-

¹² Հ. Միրզոյան, Գրիգոր Նարեկացու բանաստեղծական աշխարհը, Երևան, «Նաիրի», 2006, էջ 7-55:

¹³ Նույն տեղում, էջ 52-55:

սանձ երևակայության պաշտամունքը, ստեղծագործական ազատության, անհատական սկզբի բացարձականացման սկզբունքները, ինչպես նշել ենք, ներհատուկ են Նարեկյան դպրոցին և ընդգծված են նրա երևելի ներկայացուցիչների՝ Խոսրով Անձեացու, Անանիա և Գրիգոր Նարեկացիների երկերում, հատկապես վերջիններիս ներբողական ժանրի գործերում։

Այս ամենը նկատի ունենալով՝ «Նոր Հայկագեան բառարանի» հեղինակները գործն աներկբայորեն վերագրել են Անանիա Նարեկացուն՝ շեշտելով նրա ոճի յուրահատկություններն ու բառաստեղծման տարերքը. «Անանիայի վարդապետի Նարեկացւոյ՝ Հօրեղբօր մօր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Ճառ ի վերայ եկեղեցւոյ՝ պերճ եւ փառացի ոճով, Հանդերձ անսովոր բարդութեամբ բառից...» (տես անդ, էջ 9):

Այստեղ նշենք, որ Հայկազյան բառարանի հեղինակները, բնականաբար, բառարանի մեջ ամբողջությամբ չեն ներառել Ներբողի բառամթերքը, որի մեջ զգալի տեղ են գրավում նորաբանություններն ու նորակազմությունները։

Պարզ է ինքնին, որ բառարանի ներհմուտ և խորագետ հեղինակները, որևէ մի երկի հեղինակին որոշելիս, առաջին հերթին հենվել են լեզվաոճական տվյալների վրա։ Սա առանձնահատուկ նշանակություն ունի՝ նկատի ունենալով միջնադարյան մատենագրության այն աննախադեպ համընդգրկուն ոլորտը, որը նրանք իրենց հետազոտության մեջ են ներառել և որի խորքում է համագրվում, ընդգծվում և որոշարկվում յուրաքանչյուր լեզվական իրողություն։

Կոնկրետ, Ներբողն Անանիա Նարեկացուն վերագրելիս, բնականաբար, ի թիվս այլ փաստերի, նման եղբահանգման պատճառ է հանդիսացել դրա լեզվաոճական հա-

բազատությունը Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ամբողջական համատեքստի հետ։

Այստեղ հարկ է շեշտել, որ բառարանում ներառված չեն Անանիա Նարեկացու մյուս երկերը, որոնցում ևս, հատկապես մեկնողական-դափանաբանական երկերում, կան նորակազմություններ։ Մասնավորապես, «Սակս բացայայտութեան թուոց» երկում հանդիպում են մի քանի բառեր, որոնք վկայված չեն Հայկազյան բառարանում։ Դրանք են՝ լիաբողբոջ, ակահեղճ, դեղնամակերևոյթեան, կուրաշափիդ, մշտնջենակուսի։

Համարնագիրը և եղբարանությունը

Բառաստեղծման բարդ ու հարաշարժ ենթաշերտին Անանիա Նարեկացու երկերում զուգակցվում է նրա իմաստասիրական բառաշերտը, որը գերակայում է «Ընդդէմ թոնդրակեցւոցն», «Հաւատարմատ» և «Սակս բացայայտութեան թուոց» երկերում, յուրօրինակ ձևով ներհյուսվելով նաև այս Ներբողին։

Նրա ուրույն ոճի բաղկացուցիչներն են հունաբան դպրոցի ազգեցւությամբ ստեղծված փիլիսոփայական-տրամաբանական-քերականական եղբարանությունն ու բառհասկացությունները, որ նրա փիլիսոփայական-մեկնողական երկերի հիմնաշերտն են կազմում։ Համեմատության համար մեջ բերենք այդ բառաշերտերը նրա տարբեր երկերից։

«Ընդդէմ թոնդրակեցւոցն»

Հոմանուն
Հոմանունաբար
ստորոգութիւն

«Հաւատարմատ»

անուն
արտասահմանեալ
բացորոշեալ

շաղկապութիւն	բացափայլեալ
յարանուն	բաղհիւսական
փաղանուն	տարալուծական
շարագծութիւն	շաղկապ
ներագիծ	համաբանել
սեռ	համագոյական
տեսակ	հոմաբնութիւն
թիւ	յարանուն
ձեւ	յարանունաբար
հոլով	մակամտածութիւն
հասարակ	մականունութիւն
անհատ	շարադրութիւն
հասարակաբար	շարաթուել
յատկաբար	շարայարել
յոգնաբար	շարալծել
եղական	շարահիւսել
	շարառութիւն
	շարագրել
	շարախառնել
	որակութիւն
	տարորոշեալ
	սահման
սեռ	
տեսակ	
փոխատրութիւն	
փոխաձեւութիւն	
փաղառութիւն	

«Սակս թուղ»

շարայարել
շարադրութիւն
վերտառութիւն

«Ներբող»

ներտաղական
մակբայ
մակադրական

փոխադրութիւն	առասացութիւն
բացակատարել	արտալածեալ
շարաբերել	հոլովումն
տարորոշ	անուն
սահման (սահմանում)	ենթանկեալ
արտատպութիւն	տեսակ
նախագիծ	շարադրական
շարամանութիւն	գերադրական
յարաբարդել	եղական
շարաթուել	բագձածական
յարացոյց	որակութիւն,
տարացոյց	որականալ
շարաշարժութիւն	քանակութիւն
յարադրութիւն	բացաբարձումն
արտամերժել	բացաբառումն
արտալածել	հանգիտահաւասար
շարալծել	շարայարել
տարամերժել	արտորոշել
տրամադրել	շաղաշարումն
պարածածկել	տարրական
բացամերժել	ներմարդութիւն
տարացոյց	տարացոյց
անքակ	անորիշ
անորիշ	բարանութիւն
	պարագրապէս
	պարածածկել
	բաղդատութիւն
	անպարիմանալի
	շարապնդեալ

Լեզվա-ոճական առանձնահատկությունները

Այս Ներբողն Անանիա Նարեկացուն վերագրելու համար, ինչպես նշեցինք, հիմք են հանդիսացել առաջին հերթին լեզվաօճական հարազատությունը, բնագրային ակնհայտ կապը, փոխանցումներն ու համընկնումները նրա և Նարեկյան դպրոցի մյուս ներկայացուցիչների, առավելապես Գրիգոր Նարեկացու երկերի հետ։ Այդ առումով հատկանշական է Ներբողում առկա մի առանցքային պատկերի՝ Քրիստոսի սրբազն արյան գեղարվեստական-ճարտասանական ոճավորումների շարքը, որի հիմքում Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոցն» երկի նմանատիպ փոխաբերական պատկերն է։ Այս պատկերն անընդհատ խաղարկվում է Ներբողում։ Մեջ բերենք բնորոշ օրինակներ։

«Եւ թաղումն, զոր առ ի հրախառն ջուր սուրբ աւազանին առկոչէ զլուացումն, որ նոյն ինքն յորջորջի արգանդ հոգեւոր եւ հոգեծին մաւրս մերո Սիոնի սուրբ եւ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ։ Հստ այսմ աստուածային ծննդեան, եւ ի ճաշակումն սննդեան պատշաճեալ պատրաստի տղայացեալն ծննդոց հոսումն վտակաբուղիս կենսակայլակ կողահոս սուրբ եւ անապական արիւնն Քրիստոսի՝ ի սմա միշտ պատարագեցելոյ ուղղափառ հաւատով։

Այս են հրաշք զարմանալիք, ի վեր քան զմիտս իմացականաց բանականաց սեռից իմանալեաց, մահուամբ սիրոյ ծնանել մանկունս անմեղս եւ արիւնաթոր ստեամբք սնուցանել առ ի զարգացումն հոգեսնոյց աճմանց, որ ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ»¹։

¹Տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ժ հատոր, Ժ դար, Երևան, Նաիրի, 2011, էջ 627-628

«Այլ կենսատու զաւրութեամբ սուրբ աւագանին... յորմէ բղխեալ հոսէ կենսակայլակ վտակն տիեզերածաւալ եւ աշխարհակեցոյց նոր եւ չնաշխարհիկ նորոգչին տիեզերաց...»²:

«Եւ հրախառն կայլակաւք կողահոս հիւթից յորդասահ վտակաց ամենակեցոյց բոլորիցն Արարչի, որ ոչ պակուցեալ կիզու եւ առ ի հրդեհումն տոչորման, այլ կանաչազարդ ոռոգմամբ դալարեցեալ, ծաղկեցուցանէ զհովիտս շուշանափայլս յարկի մաւրս մերոյ մեծի սուրբ եկեղեցւոյ»³:

«...Զիսումբս մարդարէից եւ աստուածախօս արանց... ի Սուրբ Հոգւոյն շնորհացն հիւթից կաթեցուցանելով հանապագացաւղ ծորմամբ եւ զանձրեւս հոգեբուղիսս աստուածածիր եւ քրիստոսազարդ վարդապետութեան... ցաւրեն զարտոսրաթոր զվտակս մարդարտերանդս կաթուածոց»⁴:

«... Սակս որի սմա մշտամատոյց եւ հանապագաբուղս ծորման իջիցն կողահոսն կաթուածոց եւ կենդանի կայլակման կենեղուտ եւ կենսացուցիչն վտակաց կենդանարարարեանն կենարարին եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի»⁵:

Համեմատությամբ ընդգծվում և պարզորոշ է դառնում բոլոր այս հատվածների կապը Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոցն» գործի պահպանված մասի հետ. մենք գործ ունենք նույն բնագրային հենքի տարբերակների հետ և լեզվաօճական նույնությունն առավել քան ակնհայտ է: Դրանք բոլորը սերում են Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոնց» գործի մի փոխաբերական պատկերից, ո-

² Նույն տեղում, էջ 635:

³ Նույն տեղում, էջ 637:

⁴ Նույն տեղում, էջ 642-643:

⁵ Նույն տեղում, էջ 621:

րում կաթողիկե եկեղեցին համեմատվում է նույնանուն երակի հետ, որ բժշկական եզրաբառ է և սերում է Գաղիանոսի աշխատություններից⁶: Ահա այդ պատկերի ծավալումն ու ճարտասանական ճյուղավորված ոճավորումներն իրար են հյուսում նույն հեղինակի այս երկու ներքողները, քանի որ հակածառության պահպանված մասը ոչ այլ ինչ է, եթե ոչ ներբող կաթողիկե եկեղեցուն, որի նշանակությունը մերժում էին թոնդրակեցիները: Ահա նշված հատվածը.

«Ունի դարձեալ կաթողիկէ անունդ եւ այլ տեսակ զաւրութեան, զոր եւ արուեստագէտք բժշկաց զնոյն անուն հոմանունաբար առեալ կոչեն ի վերայ միոյ երակի եւ մայր եւ գլուխ ամենայն բոլոր երակացն զնա գոլ սահմանեն, քանզի որ ի նմանէ, ասեն, արեանն կաթուածք, գրեթէ փոխանակ ընդ ամենայն երակացն խաղացման բնութեանն բաշխեալ տա[յ] զառողջութիւն բովանդակ մարմնոյն, զի որպէս նա նոյն անուամբ գլուխ եւ մայր ամենայն առողջութեան լեալ եւ կոչեցեալ, եւ տուիչ կենդանութեան բովանդակ անդամոց մարմնոյն ... Այսպիսի բառիւ բացառեալ յայտնելով զբանին զաւրութիւն կաթան եւ կաթիլ եւ կայլակ, որ բազմամասնաբար տեսութեամբ ըստ բաշխման երակացն, որ ի մարմինն բաղկացեալ, եւ ընդ միով նւաճեալ գերաբնիւն կաթողիկէիւ, յորմէ եւ առողջութեանն հանդիպի նոցա բաշխումն»⁷:

Ահա այս պատկերն է, որի հիմքում բժշկագիտական տվյալն է, հետագա հատվածներում, ինչպես նաև հեղինա-

⁶ Այս մասին տե՛ս «Անանիա Նարեկացի», Էջ 67-72:

⁷ «Մատենագիրք Հայոց», Ժ հատոր, Ժ դար, Էջ 436-437:

կի այլ գործերում փոխաբերությունների ու ճարտասանական ոճավորումների շարժառիթ հանդիսացել:

Դրա վառ արտահայտություններից է բնագրի հաջորդ հատվածը. «Որք առ սա ժողովեալ յայս կաթողիկէս... եւ ընդ սմա միացեալ հոգիայրդար շաղկապութեամբ... յորում եւ շտեմարանեալ կան ամենայն գանձք հոգեւոր պարզեւաց գիտութեան եւ իմաստութեան Տեառն: Այլ եւ ցուցական երեւութիւ խաղան ի սմա երակ բաշխից Սուլք Հոգոյն չնորհաց՝ վասն առ ի յերկնից կաթելոյն ի սա աստուածային անճառելի ճառագայթիցն չող եւ նշոյլք իմանալի ծագման արեգականն արդարութեան:

Այսպիսի տեսակաւ գերակայեալ կայ իւրական ի փառսն՝ ունելով յինքեան զկաթանն մշտնջենաբուխ հոգեսնունդ կաթինն յերկարոյս ստեանցն կառուցմանց, այս է ի Հին եւ ի Նոր Կտակարանաց...

Եւ եռավտակ յորձանք հոսանաց Հոգոյն եւ ի սմա աղբերացեալ, այսինքն՝ առաքելական եւ մարգարէական եւ վարդապետական մասին չնորհացն տեսակք...

Նա եւ ոչ միայն իբր ի դուլէ ինչ ցայտեալ կաթիւ, այլ լցեալ եւ ծովացեալ ի սմա բազում մասունք չնորհաց Հոգոյն... յորմէ իբր ընդ ցնցուղ ինչ հոգեւոր երակաց կայլակք արեանն արձակեալ, տուիչ կենդանութեան անդամոց մարմնունք եկեղեցունք»⁸:

Այժմ ներբերենք համանման հատվածներ նույն հեղինակի «Սակս բացայայտութեան թուոց» երկից:

«Զի որ ակահեղց ունի զգոյն դեղնութեան, զի որ ի վարժու կրթութեան երկասիրաբար դեգերին դեղնամակե-

⁸ Նույն տեղում, էջ 437:

բեւոյթեան տեսակն ճնշելով զմարմին խոնարհութեան, արտամերժելով զբազմահոյլ տեսակ փշաբեր ախտիցն եւ ճնշելով զստինս մտացն, թերեւս լիցի բղխիչ կաթին եւ մեղու ի ճաշակումն սկսելոց եւ կատարելոց՝ հայելով ի բանական երկիրն, զի պարարտ է բնութեամբ եւ բազմաբեղուն ունի հովիտս եւ զընդարձակ դաշտս մտաց...⁹:

Զի եւ ի նոյն իսկ ճշմարիտ Բանէն եւ ի կենդանի աղբերէն բղխեալ չորս առաջս յԵղեմական դրախտէ եկեղեցւոյ ի չորեքծագեան ոլորտս աշխարհի ոռոգանել զդէմս մտաց բանաւոր երկրի: Զի նա իսկ է ճշմարիտ աղբիւր կենաց՝ բղխեալ ի Հաւրէ: Որ աղբիւրացուցանէ զմերձեցեալսն...»¹⁰:

Բոլոր այս համեմատությունները ցույց են տալիս, որ գործ ունենք միևնույն հեղինակի երկերի հետ, որի անկրկնելի ու յուրատիպ ոճն անհնար է շփոթել այլ հեղինակի հետ: Նրա երկերում ներթափանցված են դիտական եղբարանությունն ու գեղարվեստական նրբագեղությունը, բարձրարվեստ ու շքեղաշուրք ոճը, որին հատուկ է բառաստեղծման տարերքը: Այս հենքը, այս բազմաշերտ ներհյուսվածքն, ահա, բոլոր այս երկերը կապում է իրար, տանելով հաճախ բնագրային փոխներթափանցումների, համընկնումների ու ճյուղավորումների:

Այս պատկերներն ու ոճավորումները ուսուցչից անցել են նաև աշակերտին՝ Գրիգոր Նարեկացուն, որի ներբողների վրա հսկայական է այս երկի թողած ազգեցությունը: Ահա մի հատված Հակոբ Մծբնեցուն նվիրված նրա ներբողից.

⁹ Նույն տեղում, էջ 445:

¹⁰ Նույն տեղում, էջ 446:

«Եւ թէ պարտ է զտարացոյց փոքուն առ մեծին աւրի-նակ դասել, որպէս սքանչան ի թիւրակէ ի խածանող մա-հացու սողնոց առ կենացս նիւթ պատրաստեալ, յորոց որք զբժշկայինսն միշտ համբուրեն կրթականութիւն. ի թորմա-նէ բոսորակայլակ կաթուածոց քառոտանեաց անմաքրից՝ ներկուածք կայսերական հանդերձից...»¹¹:

Իսկ ահա մի բնորոշ օրինակ Գրիգոր Նարեկացու «Քա-րոզ ասացեալ ի սուրբ Լուսաւորիչն Գրիգոր» գանձից.

Ուր զկրկինս արբեր զկաթինս ի ստեանցն ելեալ
Սիոնի,
Յարբումն մանկանց զնոր եւ զՀին Կտակարանս
հոգեբուղիս...

Բաշխող շնորհաց Հոգւոյն Սրբոյ մանկանց
բոլորից...

Կաթամբ մայրաբար դիեցուցեր զերկամբք քո
ծնեալ զզաւակսն անհամարս...¹²:

Կաթուած բառը «Մատեանում» հանդիպում է 12 ան-դամ: Առավել համապատասխան և հարազատ է Ներբողին «Մատեանի» հետեւյալ բառակապակցությունը.

Արեամբ Քո սրսկեա՛ զշրջարկութիւնս կայիցս,
Զհետս ելումտիցն կաթուածով կենարար կողիդ
գծագրեա ...
(ՂԱ, Բ)

Առավել հատկանշական են կայլակ բառի օգտագործ-ման դեպքերը, որոնք ուղղակիորեն աղերսվում են Ներբո-ղի նմանատիպ հատվածների հետ.

¹¹ «Մատենագիրք Հայոց», ԺԲ Հատոր, Գրիգոր Նարեկացի, Երևան, «Նալիրի», էջ 1000:

¹² Նույն տեղում, էջ 685, 687:

Եւ կայլակ կողիդ զարիւն խաղողոյ ... (ՂԳ, Ժ)

Զոր կողից քոց կայլակք նորոգեցին ... (ՀՀ, Ա)

Զվճիռ հոգւոյս մահու ջրեսցես

Կայլակաւք արեան Որդւոյդ սիրելւոյ ... (ՀՀ, Ա)

Հատկանշական է նաև Գրիգոր Նարեկացու «Ճառ լուսոյ Խաչի» ներբողում կիրառված օրինակը.

«Ճրոյն կենդանոյ նորագործն Աւազանի մաքրարանդ նիւթ, նշան երկրպագեալ, վասն զի իբր ի կենդանական խմոր արդեան զանգուածոյ, զծորումն իջման համայնաբուղիս աղբերաց՝ստեանց մաւր երկրի, յընկդմական խորութեանց մեղաց կարմրազարդ արիւնակայլակ այլայլմամբ ի խառնութենէ միութեան արեան կենարարին ի նոր փոկութիւն ծածկութիւն զգեստու լուսոյ պատրաստես»¹³:

* *

Ներբողը, ինչպես նշել ենք, Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոցն» գործից բացի, բնագրային աղերսներ ու համընկնումներ ունի նաև նրա «Հաւատարմատ» և «Սակս բացայատութեան թուոց» երկերի հետ: Մասնավորապես, «Հաւատարմատ» դավանաբանական երկում հեղինակը Քրիստոսի միեղեն բնության հիմնադրույթն ապացուցելու համար, հաճախ կիրառում է մարդու միեղեն բնության մարմնի, հոգու և բանականությունից բաղկացած լինելու օրինակը, որ հանդիպում է նաև հիշյալ ներբողում: Մեջ բերենք օրինակներ Անանիա Նարեկացու «Հաւատարմատից» և ներբողից:

«Ճի թէ բոլոր մարդկութիւնք, որ տարբերին ի միմեանց,

¹³ Նույն տեղում, էջ 938:

բազում ինչ զանազան որակաւք եւ ունակութեամբ՝ սակայն ի միում անհատի բոլորն տեսանի՝ մարդկութեան տեսակ, որչափ եւս առաւել յերրորդական միութեանն, որ ոչ իւիք զանազանին ի միմեանց»¹⁴:

Մարդկային բնության՝ իրեւ տարբեր սեռերի ու տեսակների բաղկացության վերաբերյալ այս միտքն ավելի ամբողջական է ներկայացված «Հաւատարմատ»ի «Պատճառ երից սրբասացութեան» գլխում և ներբողում:

«Եւ զոր աւրինակ մարդն հոգւով միացեալ եւ մարմնով եւ մտաւք մի մարդ կոչի եւ մի դէմ, եւ մի անձն, եւ մի գոյացութիւն, եւ մի բնութիւն, եւ մի անուն իւր կոչի՝ ոմն մարդ, թէպէտ եւ ի բազում խառնուածոց եւ յայլ եւ յայլ տեսակաց եւ յաննման սեռից ունի գոյացութիւն իւր, սակայն մի մարդ կոչի եւ մի անուն... թէպէտ եւ գիտեմք, եթէ անմահ է հոգին եւ անչարչարելի, եւ միտքն չանկանի ընդըմբռնմամբ եւ ընդ շաւշափմամբ, սակայն զհոգեկանսն եւ զմարմնականսն միոյ մարդոյ եւ միոյ անուան համարիմք:

Հստ այսմ աւրինակի համարեսցուք եւ զՔրիստոս՝ Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ յոքնանուն անուանի, այլ ըստ գործոյն կոչի, որպէս դուռն եւ այլն: Բայց տիրական անուն մի կոչի»¹⁵:

Այս հատվածում հեղինակն օգտագործել է ըստ գործողության անունն ստուգաբանելու սկզբունքը, որն այս հատվածում ձեռք է բերել տրամաբանական եզրաբառի իմաստ: Այսպիսի օրինակներ կան նաև հեղինակի այլ գործերում, ինչպես նաև ներբողում:

¹⁴ ՄՄ, ձեռ. թիվ 6453, թերթ 3ա:

¹⁵ ՄՄ, ձեռ. թիվ 6453, թերթ 80բ:

Այժմ ներբերենք Ներբողի համանման հատվածը. «Զիթէպէտ եւ գոյութեամբ առ բաղկացութիւն բնութեանս մերոյ կատարելանայ այս աստուածահրաշ սիրոյ եռացումն, որ հրաշալի խառնմամբ եւ անձառ խառնուածով ի վերքան զմիտս եւ զիմացումն իմացականաց՝ միաւորեալ միացոյց Աստուածն Բան զպարզութիւն աստուածային բնութեան իւրոյ ընդ յաւդականութիւն տարրական բնութեանս մերոյ, եւ մի բնութիւն ըստ տնաւրինական ներմարդութեան աստուածային անձնաւորութեամբ երեւեցոյց աշխարհի:

Վասն զի ինքն էնն Աստուած մարմնազդեցիկ խառնմամբ, անշփոթ եւ անհեղի մարմնաւորութեամբ եկն երեւեցաւ աշխարհի ըստ տարացուցի մարդկային բնութեանս, որ ի հոգւոյ եւ ի մարմնոյ գոյացեալ մի բնութիւն ճանաչի: Ըստ այս իմացեալ տեսցի եւ աստուածային անձառ մարմնաւորութեան երեւումն, որ անքակ եւ անորիշ միաւորութեամբ զընտանութիւն անհաս եւ անհուն սիրոյն իւրոյ ներգործեալ կատարեաց ի մեզ աստուածապէս, հարսն սիրելի եւ գեղեցկատիպ պճնապաճոյճ զգեստիւ զարդարեալ զբնութիւնս մեր անուանելով»:

Հատկանշական է նաև Վարդան Այգեկցու կազմած «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» ժողովածուում Անանիա Նարեկացուց քաղված համանման հատվածներից մեկը, ուր Քրիստոսի բնությունը խորհրդանշող պատկերավոր օրինակները (Հուր-երկաթ, լույս-օդ, հոգի-մարմին), հանդիպում են նաև Անանիա Նարեկացու այլ երկերում:

«Եւ խառնումն որպէս հուր ընդ ուկի եւ ընդ երկաթոյ, որ ոչ յեղաշրջէ զնիւթոյն բնութիւն, այլ յիւրն փոխարկես-

ցէ բնութիւն եւ հաւասարէ իւրում լուսոյն, եւ կամ որպէս պարզութիւն լուսոյ ընդ աւդ խառնեալ, եւ կամ որպէս հոգի եւ մարմին, զի միաւորեալ են անշփոթ, եւ մի կոչի բնութիւն մարդոյս, այսպէս եւ Բանն Աստուած միաւորեալ ի վեր քան զմիտս եւ անշփոթ մնացեալ»¹⁶:

Ինչպես տեսնում ենք, այս հատվածների ներքին կապն ակնհայտ է:

Ներբողի մեջ տեղ է գտել թվային միստիկային վերաբերող մի հատված, որի աղբյուրը, մեր կարծիքով, Անանիա Նարեկացու «Սակս բացայայտութեան թուոց» երկն է՝ այդ խնդրին վերաբերող եղակի մի սկզբնաղբյուր հայ մատենագրության մեջ:

«Սակս թուոց»

Իսկ սքանչելի թիւ Եւերորդ-
դիդ յոգնաթիւ ունի խոր-
հուրդ, զանազանեալ ան-
խառն տարրոշ թիւ, սեռն
եւ անապական բնութիւն, զի
ոչ ծնանի զոք, եւ ոչ ծնանի
յումեքէ ի ներքոյ ժինդ,
զոր կոչեն մշտնջենակուսի
եւ անմաւր, միակ ի բնու-
թիւն, զոր ասեն ծնեալ յուղ-
ղոյն Արամազդայ՝¹⁷

Ներբող

Այս սմին զուգաթուեսցի եւ
Աթենայ իւրով անլծորդ
եւթնեկիւն, որ եւ սա կոյս
կոչիւր ըստ Հեթանոսական
առասպելաբան բաջաղա-
ոչ ծնանի նաց՝¹⁸

¹⁶ Վարդան Այգեկցի, «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ», աշխատ. Տ. Շահե քհն. Հայրապետյանի, ներած. Հակոբ Քյոսեյանի, էջ 131:

¹⁷ «Մատենագիրք Հայոց», Ժ հատոր, Ժ դար, Երեան, «Նաիրի», էջ 448-449:

¹⁸ Նույն տեղում, էջ 640:

Քերականական-տրամաբանական մեկնություններ

Ինչպես «Ընդդիմ թոնդրակեցւոցն» երկի հանրահայտ հատվածում, այս Ներբողում ևս կիրառվում է տրամաբանական-քերականական հասկացությունների մի շարք, որ ներհյուսվելով հեղինակի ուրույն ոճին, այս երկու երկերն, ասես նույն բնագրի տարբեր մասեր, աղերսում է իրար:

Այս դեպքում ևս, ինչպես Անանիա Նարեկացու դավանաբանական-մեկնողական երկերում, տեսական ակունքներն են Դավիթ Անհաղթի, ինչպես նաև Դիոնիսիոս Թրակացու և նրա V-VIII դդ. հայ մեկնիչների երկերը:

«Եւ յառեալք հոգւոյ ակամբք, գիտեացուք զսորա սրբութեանս զաւրութիւն, որ զանազանեալ տարբերի հինգ եղանակաւք ըստ հոլովմանց անուանն բանի, որ ներդատեալ քերդածինդ ենթանկեալ տեսակացն՝ շարադրական, գերադրական, եղական, բագձածական, մակադրական:

Եւ է շարադրականն շինողական, որ յայլազան սեռիցն յարաբարդեալ ժողովի ի մի գոյութիւն:

Եւ գերադրականն՝ գերակայեալ ի փառս եւ աստուածունակ շնորհիւ առլցեալ:

Եւ եղականն՝ միայնակ յատուկ առանձնապէս որոշեալ ըստ անհատին, որկէն՝ վէմ արձան:

Իսկ բագձածականն՝ պարագայ շրջաւորութեամբն ներփակ առեալ ըստ իրին, որկէն տուն եւ տեղի եւ յարկ ապաւինի, եւ այս ըստ ներտաղական երից ծայրիցն կալմանց:

Եւ մակադրականն՝ մակաւէտ հիւսմամբ շարալծեալ ընդ աստուածապարգեւ շնորհս Աստուածն Բանի, կոչի կոչարան եւ բնակարան զաւրութեանն էմանուէլի, ուստի եւ

ըստ իմացականին ցուցանի հրաշութիւն սորա, վասն զի հայի առ մահ որակութիւն սորա եւ առ կեանս քանակութիւն զաւրութեան սորա»:

Այս հատվածում առկա է նաև կաթողիկե բառի՝ ըստ իրի ստուգաբանության եղանակը, որ դարձյալ հանդիպում է Դիոնիսիոս Թրակացու քերականության մեջ և այստեղ կիրառվում է իբրև մեկնության տրամաբանական եզրաբառ.

«Իսկ բագծածականն՝ պարագայ շրջաւորութեամբն ներփակ առեալ ըստ իրին, որկէն՝ տուն եւ տեղի եւ յարկ ապաւինի, եւ այս ըստ ներտաղական երից ծայրիցն կալմանց»:

Եթե այստեղ՝ կաթողիկե բառն ստուգաբանվում է ըստ իրի՝ այսինքն իր իրեղեն նշանակությամբ, ապա մի այլ հատվածում՝ ըստ անվան՝ նույնն է՝ ըստ ձայնի, ըստ իր արտահայտած իմաստի և բովանդակության, ըստ այդ՝ կաթողիկե նշանակում է համընդհանուրը։ Եվ ինչպես «Ընդդէմ թոնդրակեցւոցն» երկի պահպանված հատվածում, Հեղինակն այս բառի ստուգաբանության վրա է կառուցում Ներբողի այս հատվածը՝ հոմանիշներով ու ճարտասանական ոճերով հարստացնելով այն.

«Աւրհնեալ ես դու, աստուածագարդ եւ քրիստոսապահեալ վէմ սուրբն պայծառ եւ պատուական երկնաբերձ աշտարակ, որ ընդ անուան քում պարագրապէս պարունակեալ ունիս զընդհանուր էակս եղանակաց, որ անեղբական ոլորտիւք եւ անծայր ծայրիւք ծայրազարդեալք՝ խրախանալով հրաշազարդապէս պայծառանան ի քո փառս եւ ի գովեստ եւ ի պատիւ ներդատական եւ ընտրելաշնորհ սուրբ քո անուամբդ կաթողիկէ գոլով յերկրի։ Այսինքն՝ բոլորումն իսկ ի բնաւիցս վերագունեալ բարձրանալով ի

փառս եւ ի պատիւ անզուգական եւ անհամեմատ փառաւորեալ եւ անփոփխելի Սրբոյ Երրորդութեան»¹⁹:

Այստեղ, ներբողի ժանրի մասին խոսելիս, հեղինակը օգտագործում է «ներդատական և ընտրելաշնորհ» եզրերը, որոնք կապվում են Թրակացու քերականության վեցերորդ մասի՝ «դատումն քերդածացի» հետ, որ գրական երկերի ստեղծման, կառուցման և քննության, քննադատության նշանակությունն ունի: Դրա տարբերակն է Ներբողում տրամաբանական-քերականական վերոհիշյալ վերլուծությունների շարքում տեղ գտած «ներդատեալ քերդածինդ» արտահայտությունը, որը նույնպես քերականական-գրականագիտական հասկացության նշանակություն ունի և նույնանում է դատումն քերդածաց հասկացության հետ: Նարեկյան դպրոցում, մասնավորապես Անանիա Նարեկացու խրատներում, այն նաև «արուեստ ընտրութեան», «ընտրութիւն եւ արվեստ», «դատումն ընտրութեան» անվանումներն է ստացել, առավելապես կիրառվելով գրական երկի, ստեղծագործական ընթացքի գործուն սկզբունքի ու ներքին կառույցի ընտրականության՝ իբրև նրա պատճառականության և խոհական-հուզական հագեցվածության կարեռագույն միջոցի իմաստով և նշանակությամբ:

Նշված Ներբողում այս գրականագիտական եզրը ներբողական ժանրի՝ տարբեր եղանակներով կառուցման և դրանց քննության իմաստն ունի:

«Եւ յառեալք հոգւոյ ակամբք՝ գիտեսցուք զսորա սրբութեանս զաւրութիւն, որ զանազանեալ տարբերի հինգ եղանակաւք... որ ներդատեալ քերդածինդ ենթանկեալ տեսա-

¹⁹ «Մատենագիրք Հայոց», Ժ, Ժ դար, Էջ 630:

կացն՝ շարադրական, գերադրական, եզական, բագձածական, մակադրական»:

Բոլոր այս փաստերը վկայում են, որ հանձին Ներբողի հեղինակի, մենք գործ ունենք նաև բանաստեղծական արվեստի տեսաբանի հետ, որպիսին էր Անանիա Նարեկացին:

Բարառնություն և դիմառնություն

Շարունակենք մեր համեմատական վերլուծությունը:

Այս Ներբողը, ինչպես Գրիգոր Նարեկացուն պատկանող «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ» երկն ու «Մատեանի» որոշ գլուխներ²⁰, ընթերցվել է եկեղեցում՝ հանդիսարանի առջև:

Այդ է վկայում հեղինակի ներբող-հանդիսախոսության հետեւյալ հատվածը.

«Արդ, յաղագս այսքան գերագոյն եւ անճառ պարզեւաբաշխութեանցն մեզ առթողին, որ ի ձեռն սուրբ եւ կաթողիկէ եկեղեցւոյ, ա՛ւն առեալ առ նոյն ինքն ապաւինելով, իբր ձեռամբ աստուածայնով աւժանդակեալ, գովասանական ձայնիւ, ըստ կարի մերում, անցցուք ի հանդիսի բարառնութեան բանիւ, իբր ընդ կենդանւոյ, ընդ սրբոյ մաւրա մերոյ խաւսելով՝ ընդ առաքելական եւ ընդ կաթողիկէ սուրբն եկեղեցւոյ»:

Նախաբանից հետո հեղինակը պարզաբանում է ներբողի կառուցման իր հստակ սկզբունքը՝ նա այն կառուցում է «բարառնութեան բանիւ», որ նշանակում է ներբողվող երեսույթի, առարկայի (տվյալ դեպքում՝ կաթողիկե եկեղեցու) հետ խոսելն՝ իբրև կենդանի էակի: Այս հնարքը, որն

²⁰ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրապյան, «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», Երևան, «Նաիրի», 2009թ.:

օգտագործվել է միջնադարյան բանաստեղծության մեջ, առավելապես ներբողի և ողբի ժանրերում, հաճախակի է հանդիպում Կիլիկիայի գրական դպրոցում։ Այս եզրաքառը նաև այլաբանության, նմանաբանության իմաստ ունի և այդ նշանակությամբ օգտագործված է Գրիգոր Նարեկացու երկերում։ Սրա հետ նույնանում է դիմառնություն եզրն, այն տարբերությամբ, որ անշունչ իրից, երևույթից և առարկայից բացի այն կարող է վերաբերել կենդանի էություններին և մարդկանց, որոնց հետ բանաստեղծը խոսում է, որոնց դիմում է՝ իրրև կենդանի ներկայության՝ դեմ առ դեմ՝ դիմառնաբար։ Ոճական այս Հնարքը միտված էր ավելի անմիջական ու հուզական դարձնելու բանաստեղծական քերթվածը։

Դիմառնությունը նաև փոխաբերություն է նշանակում։ Այս իմաստով է այն օգտագործված Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ՂԳ՝ Մեռոնին նվիրված գլխում։

«Մառնամուտ, որ եւ այս միւռոն... Որ եւ սոյն կոչումն դիմառութեան չէ աւտարացեղ...» (ՂԳ, ԺԹ)։

Բարառնություն բառի խորհրդանշական կիրառության ենք հանդիպում նաև «Մատեանի» ՂԲ՝ Կոչնակին նվիրված գլխում («Ի փայտն երջանիկ բարեբաստութեան ժամահարին խորհրդածութեան...»)։

Կոչնակը եկեղեցական ժամերգության կարևոր բաղկացուցիչներից ու խորհրդանիշներից է, ուստի Գրիգոր Նարեկացու մաղթանք-ներբողն այստեղ, բնականաբար, վերաբերում է նաև ողջ եկեղեցուն՝ «Նոր Սիոնին», որի սպասք-ներից մեկն է այն՝ «Մի սա սպասուցն կազմուածոց արարչաւանդից գլխաւորաց...»։

Պարփակարան անխորտակելի նորոյս Սիոնի,

Մի սա ի սպասուցն կազմուածոց
արարչաւանդիցն գլխաւորաց,
Զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ ղեւտականացն
զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն,
Աւրինակ ձայնի հրեշտակին...
Նոր գործի շնորհի նուագարանաց Աւետարանին՝
Զարթուցիչ Հոգւոյն առ մեզ....
Սկզբնապար նախընթացութեան աղէյարմար
չութակաց՝
Բարետաւիդ ողբերգարկութեանց,
Բարացուցական բամբուան բառացի
բարառնութեանց,
Արինգ նորոգ այլ իմն տեսակաւ՝
Առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ....

(ՂԲ, Ը)

Բառեզրի նման կիրառության բնորոշ օրինակ է հանդիպում նաև Գրիգոր Նարեկացու «Ներքող ի Սուրբ Խաչն» երկում։

Ահա այսքանեաւք եւ այսպիսեաւք
եւ եւս ընտրականաւք բարեզարդ բառիւք
Միշտ բարեբանեալ քրիստոսեան նշան,
Որ զաստուածագործ պատուաստ պարծանաց
Պատուոյ պսակին ի ձեւ պատկերի քումդ
տեսակի մեք ժառանգեցաք։
Եւ մուտն անձուկ դրախտին սենեկի՝
ի բոցեղէնն սրոյ պարփակեալ,
Քեւ մարդկան ազանց հորդեցաւ։
Եւ սիւնհոգոս կաթողիկէ
Անսասանական վերինն Սիոնի

Սիւն եւ նեցուկ նորին ամրոցի
Հաստատ պնդութեամբ դու խարսխեցար:
Վասն այսորիկ խոստովանութիւն
Յաւդակապս բարառնութեան
Փոքը եւ նուազ է քումդ հիացման.
Որ գերազանցդ ես բանից գովութեան²¹:

Այս ներբողում բազմիցս հիշատակում է նաև Կաթողիկե եկեղեցին, որին «խարսխուել է» Սուրբ Խաչը: Գրիգոր Նարեկացին ևս իր ներբողը կառուցում է «բարառնաբար» (նույնն է՝ դիմառնաբար), դիմելով Սուրբ Խաչին՝ իբրև կենդանի էության: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնությունն ակնհայտ է, որն ինքնին խոսում է Ներբողի՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա թողած էական ազդեցության մասին:

Բարառնաբար է հորինված նաև Գրիգոր Նարեկացու «Քարոզ եկեղեցւոյ եւ տապանակին Տեառն» գանձը.

Ժողովեալքս ամենեքեան ի սուրբ կաթողիկէ
առաքելական եկեղեցի,
Երգեմք ի սմա, յոգնախմբեան
փառաբանութեամբ երկրային պարաւորքս՝
ի հոյլս հոգեղէնս, հրաշազանութեամբ
Ընդ արփիափայլ սեռիցն պարակցեալ...
Անեղաշէն խորան, կաթողիկէ սուրբ,
Որ հիմնեցար ի մէջ տիեզերաց այսաւր
սուրբ եկեղեցի,
Յաւրինակ արարչագործ եւ գեղեցկատեսիլ
Եղեմատունկ դրախտին փափկութեան...

²¹ «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Գրիգոր Նարեկացի, Էջ 951:

*Եւ մեք, պայծառագուարճ համարձակութեամբ
երկրային պարաւորքս*

Հնդ արփիափայլ սերովբէիցն պարակցեալ...²²

Աղերսները Գրիգոր Նարեկացու երկերի հետ

*Ինչպես նշել ենք, մեծ է Ներբողի ազդեցությունը
հատկապես Գրիգոր Նարեկացու ներբողական ժանրի երկե-
րի և գանձերի վրա, որը հաճախ բերում է նույնություն-
ների, համընկնումների, բառապատկերային նույնահենք
տարբերակների: Մեջ բերենք մի օրինակ:*

Ներբող

*«...Հոգին Սուրբ զիմանալի եւ զաստուածածագն լոյս
ջահեցուցանելով, որով լուսով եւ սկզբնատպին տեսեալ
ճանաչի անիմանալի եւ անճառելի լուսոյն ճառա-
գայթ...»²³:*

«Ներբող ի սուրբն Յակոբ Մծբնայ»

*«Մի յեւթնեակ բերանոյ լուսապատրոյգ, ճաճանչեղ,
տիրագաւր... անճառապատկեր եւ խորախորհուրդ աշտա-
նակակիր ճրագացն տեսանողին ջահացեալ»²⁴:*

*Եփս մի հատված «Քարոզ եկեղեցւոյ եւ տապանակին
Տեառն» դանձից.*

Արփիափայլ խորան, արեգակնահրաշ

ճառագայթիւք ջահաւորեալ...

Քառանկիւն տաճար՝ գերահրաշ ծագմամբ,

Զթափանցիկ լուսով ճառագայթեալ...

*Միշտ ի քեզ երեւի՝ փոխանակ տեառնագրեալ
տախտակացն...*

²² Նույն տեղում, էջ 691:

²³ «Մատենագիրք Հայոց», Ժ, Ժ, էջ 633:

²⁴ «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Ժ, էջ 993:

Քառաջահեան տաճար,
Գերահրաշ ճառագայթիւքն լուսաւորեալ ի մէջ

տիեզերաց...²⁵

Ներբողը կապվում է նաև Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնության հետ: Անանիա Նարեկացու ներբողում կա «Երգ երգոցի» մեկնաբանության մի ընդարձակ հատված, որի ազգեցությունը Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնության վրա ակնհայտ է²⁶: «Երգ երգոցի» պատկերային համակարգի հիմքում է հարսու փեսայի կերպարների պատկերաշարքը, ինչպես Գրիգոր Նարեկացու մոտ, մեկնաբանվում է իբրև եկեղեցու և Քրիստոսի խորհրդի այլաբանություն:

Այստեղ ևս նկատելի են բնագրային ներթափանցումների և ճյուղավորումների օրինակներ, որոնք նույն թեմայի տարբերակներ են հիշեցնում և հաճախ բառային համընկնումների փաստեր են տալիս:

Ահա նման օրինակներ Ներբողի և Գրիգոր Նարեկացու «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ» և «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի» գործերից.

Ներբող

«Նոյն ինքն եւ հարսն անուանելով յաղագս Հոգեծին անախտ արգանդին, որ յաւագանին կառուցմանէ ծնանի գհաւատացեալս...

... Նոյն ինքն յորջորջի արգանդ Հոգեւոր եւ Հոգեծին մաւրս մերոյ Սիոնի սուրբ եւ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ...

²⁵ «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Գրիգոր Նարեկացի, Էջ 692-693:

²⁶ «Մատենագիրք Հայոց», Ժ, Ժ դար, Էջ 626-628:

Հստ այսմ... պատրաստի տղայացեալն ծննդոց հոսումն վտակաբուղիս կենսակայլակ կողահոս սուրբ եւ անապական արիւնն Քրիստոսի...

Այս են հրաշք զարմանալիք... մահուամբն սիրոյ ծնանել մանկունս անմեղս եւ արիւնաթոր ստեամբք սնուցանել առ ի զարգացումն հոգեսնոյց աճմանց, որ ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ»²⁷:

Ճառ

«... Եկի ի պատկեր Արարչին յարգանդ եկեղեցւոյ եւ ապրեցայ յերկանց ծննդենեն... յանախտ արգանդէ ի նա անկայ... եւ կաթնածուծ եղէ ի հոգեւոր ստեանցն... եւ հին եւ նոր գանձուց նորա ընդունակ լինել արժանացայ... ի հոգի եւ ի միտս գանձել...»²⁸:

Մեկնություն

«Պատրաստեաց զքեզ յարգանդէ, գեղեցիկդ ի կանայս, մայր քո:

Արգանդ՝ սուրբ ավազանն է, եւ մայր՝ Սիոն, եկեղեցի կոչի, զի Սիոն ասի մայր, եւ մարդ ծնաւ ի նմա:

Ծնցի մարմին առ նոյն անխիղճ, անախտ...

Այսինքն՝ ի Հոգւոյն Սրբոյ...»²⁹:

«Որով եւ նովիմքք լուսաւորին միտք եւ սիրտք, որ ի մէջ ստեանցն է, յորոց եւ կաթնն ի ձեռն հոգեւորական կենդանութեանն ժողովեալ մածանի՝ տալ եւ այլոց զկերակուր»³⁰:

«Զնոյն աւրինակ ստեամբքն զսրտից մաքրութիւն

²⁷ Նույն տեղում, էջ 627-628:

²⁸ Նույն տեղում, էջ 1041:

²⁹ «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Գրիգոր Նարեկացի, էջ 771:

³⁰ Նույն տեղում, էջ 804, 805:

զսրբոցն, որ յեկեղեցւոց բուսան, գուշակէ, զի սիրտն առ ստեանցն է»:

«Բանք Սրբոյ Հոգւոյն ի սրտից սրբոց բղխեալք, այսինքն՝ ի ստեանցն, զուարձացուցանեն զլսողսն եւ զանձառն տան կենդանութիւն եւ ուրախութիւն»³¹: Մեջ բերենք ավելի բնորոշ օրինակներ.

Ներբող

«Եւ այս իսկ է խորութիւն անհաս խորհրդոյ հարսին գոգոցն շաղաշարումն շաղկապութեան յորդեռանդն առ ուաւելութիւնք»³²:

Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնությունն ակնհայտ է. մենք գործ ունենք բնագրային համընկնումի հետ, որ պայմանավորված է «Երգ երգոցի» նույնօրինակ մեկնաբանությամբ: Այն մեկ անգամ ևս վկայում է ներբողի՝ Գրիգոր Նարեկացու վրա թողած ուղղակի ազգեցության մասին:

Գրիգոր Նարեկացին նույն այդ արտահայտությունն օգտագործել է նաև իր այլ երկերում: Այսպես, «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» երկում, որն սկսվում է «Հայեա՛ց ի քեզ...» բնաբանով, կարդում ենք. «Գուլթ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յատակ սիրոյ նորա...»³⁴:

Մեկնութիւն

«... Եւ զայլն ամենայն այսպիսեաց բանից տոփականաց եւ սրտից խտղտանաց, սեռն սիրոյ շաղկապ միաւորութեան...»³³:

միմեանս սեռն սիրոյն ա-

ռաւելութիւնք»³²:

Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնությունն ակնհայտ է. մենք գործ ունենք բնագրային համընկնումի հետ, որ պայմանավորված է «Երգ երգոցի» նույնօրինակ մեկնաբանությամբ: Այն մեկ անգամ ևս վկայում է ներբողի՝ Գրիգոր Նարեկացու վրա թողած ուղղակի ազգեցության մասին:

Գրիգոր Նարեկացին նույն այդ արտահայտությունն օգտագործել է նաև իր այլ երկերում: Այսպես, «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» երկում, որն սկսվում է «Հայեա՛ց ի քեզ...» բնաբանով, կարդում ենք. «Գուլթ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յատակ սիրոյ նորա...»³⁴:

³¹ Նույն տեղում, էջ 805:

³² «Մատենագիրք Հայոց», Ժ, Ժ դար, էջ 626:

³³ Նույն տեղում, ԺԲ Հատոր, Ժ դար, էջ 883:

³⁴ «Մատենագիրք Հայոց», Ժ, Ժ դար, էջ 1040:

Նույն արտահայտությունն է օգտագործված նաև «Մատեան»-ի հիշատակարանում. «Արդ, հայցեմք... յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս եւ ի պատկանաւոր խնդրուածս՝ սեռն սիրով ի միտս բարիս...»³⁵:

Նման բնագրային համընկնումներ կան նաև Ներբողի և Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն «Ով է Դա»-ի» երկերի միջև.

Ներբող «Եւ փոխանակ եռանդնաւ- պտոյտ կայծակնատարափ կագոյն շանթիցն ցոլմանց՝ ի սէրով- բէասարսափ աստուածա- կայծակն սեղանոյն առ լցմանէ արտաշիկագոյն արտաձգութեամբ, իբր յե- ռանդնուտ քրայէ, հրա- նուտ հոսմամբ՝ արտաքս արձակես: Եւ հրախառն կայլակաւք կողահոս հիւ- թից յորդասսահ վտակաց ամենակեցոյց բոլորիցն Ա- րարչի...» ³⁶ :	«Մեկնութիւն «Ով է Դա»-ի» «...Ոսկէպատեան արտաշի- պտոյտ կայծակնատարափ արեամբն մատուակեալ ի ձեռանէ Տեառն»:
---	---

Արտահայտչամիջոցները

Նշված ներբողում և Գրիգոր Նարեկացու երկերում
առկա են նաև արտահայտչամիջոցների՝ մասնավորապես

³⁵ «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Ժ դար, Էջ 605:

³⁶ «Մատենագիրք Հայոց», Ժ, Ժ դար, Էջ 637:

բառ-պատկերների, առձայնույթի և բաղաձայնույթի նման կիրառության օրինակներ։ Այսպես.

«Անդանաւը յորդեալ ծովանայր ապա եւ ծովն
ծիրանածաւալ...³⁷:

Աստուածահրաշն հրախառնեալ մաքրագործակ
ծիրանափայլ ծովուն գոլով ընդունակ»³⁸:
(Ներբող)

Այժմ տեսնենք, թե բաղաձայնույթներով զեղուն այս պատկերը ինչ արտահայտություններ, ելևէջներ ու նրբագորումներ է ստացել Գրիգոր Նարեկացու տաղերում։

Հոսէր, իջանէր անդր ի ծովն առաջին,
Խաղայր, ծաւալէր անդր ի ծովն, որ յետոյ…
Ծաւալ ծով ծիծաղ քաղցր աւդով շարժենայր…
Արփիատեսիլ ճառագայթիւք փայլեալ,
Ծիր ի ծիրայնոյ վառի վառեալ ըգդէմս:
(«Տաղ եկեղեցւոյ»)

Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պղպջէր գոյնն այն ծաղկին…
(«Տաղ Վարդաւառին»)

Ազգեցություններն այնքան մեծ են, որ հանգեցնում են նույնատիպ բառ-պատկերների ու լեզվական կաղապարների օգտագործման։ Դրա գեղեցիկ օրինակն է տալիս Գրիգոր Նարեկացու «Տաղ Յարութեան»-ը.

³⁷ Նույն տեղում, Էջ 624:

³⁸ Նույն տեղում, Էջ 632:

Ներբող
 Աւրհնեալ ես, խորան
 սուրբ...
 Լուսածեմ ճառագայթիւք
 Եւ անընդհատ լուսով՝
 փաղփեալ փայլմամբ³⁹...
 ... Զգերազանցիկ լուսոյն
 զճառագայթս
 Անձառ եւ անհատ
 սիրոյն Քրիստոսի
 Յերկրի մերում սփռեալ,
 Ծաւալեալ տարածեցեր⁴⁰:

«Տաղ Յարութեան»
 Գետ քառանիւթեայք
 պաղպաջ երկնի
 փայլ փայլ,
 Փայլք փաղփինատար
 անծայրենի լոյս.
Լոյս գերազանցիկ
 երկնաշաւիդ ուահ,
 Ուահ արքունածեմ վերայ
 ծովու քայլ...

Փոխանցվում են քառ-պատկերները, պատկերավոր ար-
 տահայտությունները՝ վերածվելով լեզվական հանգույցնե-
 րի, որոնք ներհյուսում են այդ բնագրերը:

Ներբող
 Անձայր ծայրիւք
 ծայրագարդեալք
 Խրախանալով՝ հրաշազար-
 դապէս պայծառանան...
 Սուրբ քո անուամբդ՝ կա-
 թողիկէ գոլով յերկրի⁴¹...

«Մատեան»
 Նոյնպէս եւ մաքրեալն
 քոյինաշունչ շնորհին
 Ընտրութեամբ... ի մեզ
 անտեսիդ
 Հրաշափառապէս պայծա-
 ռացուցանէ»

(Ղ, Գ, Գ)

Ինչպես տեսնում ենք, Ներբողի իմաստային, գունային

³⁹ Նույն տեղում, էջ 632:

⁴⁰ Նույն տեղում, էջ 644:

⁴¹ Նույն տեղում, էջ 630:

սիմվոլիկան, ներդաշնությունը և ներքին մեղեղայնությունը փոխանցվել են Գրիգոր Նարեկացուն՝ արտահայտվելով նոր նրբավորումներով ու խաղացկուն կառույցներով:

Բնագրային այս նույնությունների, համընկնումների, փոխանցումների, նորաբանությունների ու նորակազմությունների, յուրօրինակ ոճի ու եզրաբանության շարքը կարելի է երկար շարունակել:

Մենք մեջ բերեցինք միայն ամենաբնորոշ օրինակները, որոնք վկայնում են, որ հանձին երկի խորագրում հիշվող Անանիայի՝ մենք գործ ունենք ճարտասահն-բանաստեղծի և գեղագետ-փիլիսոփայի հետ, որի այս երկն ակնհայտ ազգեցություն է թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը՝ թյան վրա:

Ներբողի ազգեցություններն ակնհայտ են, փաստորեն, Գրիգոր Նարեկացու բոլոր ժանրերի երկերի՝ «Մատեանի», գանձերի և տաղերի, մեկնությունների և ներբողների վրա: Դրանք վկայում են, որ այս գործը նախորդում, ոչ թե հաջորդում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը՝ աղբյուր և ազգակ հանդիսանալով նրա համար:

Հակառակ պարագայում պետք է ընդունենք, որ ենթադրյալ հեղինակը՝ ներհմուտ գիտելիքների տեր, մեծ տեսաբան և տաղանդավոր բանաստեղծ լինելով՝ բանաստեղծական իր քերթվածում ծաղկաքաղ է արել Անանիա և Գրիգոր Նարեկացիների բոլոր ժանրերի երկերից: Այսինքն, ոչ միայն ծանոթ, այլև խորագիտակ է եղել նրանց բոլոր ստեղծագործություններին: Անանիա Սանահնեցին նման բանաստեղծ-տեսաբան և նարեկացիագետ չէր:

*

Այսպիսով, բազմաշերտ ու բազմաբնույթ փաստերը վկայում են, որ Ներբողի Հեղինակը՝ «Երանելի Հոգեցնորհ Անանիայ փիլիսոփան», Անանիա Նարեկացին է՝ Նարեկյան Հռչակավոր դպրոցի հիմնադիրը, որն իր բանաստեղծական արվեստի նորարարական տեսությամբ և բանաստեղծություններով ուղի է հարթել իր հանճարեղ աշակերտի՝ Գրիգոր Նարեկացու համար:

Ներբողը, մեր կարծիքով, գրվել է մինչև 977 թ., որը Գրիգոր Նարեկացու «Երգ Երգոցի» մեկնության գրման տարեթիվն է, քանի որ մեկնության մեջ, ինչպես նշել ենք, Անանիա Նարեկացու Ներբողի ակնհայտ ազդեցությունների և բառային համընկնումների փաստեր կան:

Այս երկը կարելոր օղակ է Նարեկյան դպրոցի զարգացման շղթայի պատմության մեջ, որն առավել տեսանելի է դարձնում և մեծապես հարստացնում Անանիա և Գրիգոր Նարեկացիների միջև բազմազբյուր և բազմաճյուղ տեսական և ստեղծագործական կապերի պատմությունը, առատ նյութ տալով հետագա ուսումնասիրությունների համար:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՀԱՅՏՆԻ ԽՐԱՏՆԵՐԸ ՆՈՐ ՓԱՍՏԵՐԻ ԼՈՒՑՄԻ ՏԱԿ

Միջնադարյան հայկական ձեռագրերում կան Անանիա վարդապետի անունով հանդիպող մի խումբ խրատներ ու ճառեր, որոնց հեղինակային պատկանելության հարցը դեռևս պարզված չէ: Այդ գործերը՝ թվով 16, ինչպես նշել ենք, թվարկված են Հ. Անասյանի «Հայկական մատենագիտության» մեջ: Դրանցից մեզ հետաքրքրում են 8-ը, որոնք, մեր կարծիքով, պատկանում են Անանիա Նարեկացու գրչին: Վերջինները հանդիպում են Անանիա Նարեկացու, Անանիա Շիրակացու, Անանիա Սանահնեցու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Լուսավորչի, Եփրեմ Ասորու, Նեղոսի, Վարդան Այգեկցու անուններով, ինչպես նաև՝ անանուն: Ձեռագրերի մեծ մասում որպես հեղինակ հիշված է Անանիա վարդապետը ու պարզ չէ, թե Անանիաներից որին են դրանք վերագրված: Նշված խրատներն են.

1. Անանիայի խօսք և խրատ աւետարանական, առաքելական և մարդարէական որ տանին զմեզ ի կեանսն յաւիտենական և ոչ տան խոտորել յաջ կամ յահեկ. «Քանզի գրեալ է և պատուիրեալ է, թե մի՛ յաջ խոտորեալ և մի՛ յահեկ...»:

2. Խրատք ոգեշահք վասն զղջման արտասուաց ասացեալ Անանիայի սուլք և ընտրեալ վարդապետին. «Ով աստուածասէր սիրելի եղբայր (խնդրող) սիրոյն աստուծոյ, զբանն զոր աղաչեցեր զիս, ցուցանել քեզ յաղագս զղջման և արտասուաց...: Արդ շնորհք արտասուաց...»:

3. Յաղագս խորհրդոց զգուշութեան. «Արդ նախ յառաջ քան զամենայն խորհրդոց մաքրութեան ջան տար...»:

4. Եղանելի սուրբ վարդապետի Անանիայի ասացեալ խրատ վասն խոնարհութեան. «Արդ որպէս եսէ առաքեալ(ն)` ամենայն խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել քան զանձինս...»:

5. Անանիայի Հայոց վարդապետի ասացեալ խրատ վասն համբերութեան և խաղաղութեան. «Արդ յորժամ մարդն չնորհս առնու յաստուծոյ իմաստութեան և երկիւդի, նա ոչ տայ պատճառս տրտմութեան ընկերին...

6. Նորին բանք աղօթից. «Զկարգեալ աղօթսն հասարակաց զտուընջեան և զգիշերոյ բնաւ մի անտես առներ...»:

7. Այլև զայդ հարցեր, թէ զիա՞րդ կարէ մարդ զերկրաւորս արհամարհել որ անցանէ. «Արդ եթէ կամիս որ յաղթես աշխարհի և ոչ ըմբռնիս ի կենցաղոյս պատրանս, դու իսորհոդեամբ միտ դիր և իմաստութեամբ փորձեա...»:

8. Անանիայի Հայոց վարդապետի խրատք քահանայից. «Արդ՝ քահանայական աստիճանն ինքն յայտնի է արժանաւորութեամբ՝ թէ որպէս պարտ է լինել սուրբ և անրատութեամբ»¹:

Այս խրատներից մի քանիսին առաջին անգամ անդրադարձել է Հ. Տաշյանը: Նա «Վասն զղման և արտասուաց» խորագրով խրատը դասել է Անանիա Շիրակացու, իսկ «Վասն խոնարհութեան», «Վասն համբերութեան ու խաղաղութեան» խրատները՝ Անանիա Սանահնեցու գործերի շարքը²:

¹Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Էջ 790-795: Համարակալումը մերն է: Հիշյալ խրատները ձեռագրերում հանդես են գալիս խորագրային տարբերակներով:

²Հ. Տաշյան, Յուցակ Հայերէն ձեռագրաց մատենագրաւանին Միսիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, Էջ 1057: Նախապես այս խրատներից

Գ. Զարբհանալյանը նշում է, որ ճառընտիրներում վերպհչյալ խրատներից 2-ը հանդիպում են Անանիա Նարեկացու անունով. «Ճառընտրաց մեջ կը հանդիպինք հետեւյալ խորագրով հիշատակված երկասիրությանց. «Ծնորհալից վարդապետին Անանիայի Նարեկացւոյ ասացեալ վասն աղօթից, պահոց և արտասուաց»: Ասկե զատ ուրիշ ճառի մը՝ խորագրովը առաջինին նման՝ բայց իմաստիւք տարբեր. «Անանիայի հոգելից վարդապետի և Նարեկայ վանից առաջնորդի ասացեալ վասն զղջման և արտասուաց և աղօթից»³: Դարձեալ. «Անանիայի հոգենորոդ վարդապետի խրատ հոգեոր՝ ցուցեալ, թէ որպէս կարասցէ մարդ որոշել զմիտս երկրաւորացն և զայս կեանս արհամարհել, և աստուծոյ միայն ցանկալ և արքայութեան նորա»⁴: Գ. Զարբհանալյանը, սակայն, բավարարվում է այս փոքրիկ ծանոթությամբ և խնդիրը քննության առարկա չի դարձնում: Մի այլ դեպքում նա «Անանիայի վարդապետի

երկուը՝ «Վասն խոնարհութեան», «Յաղագս խորհրդոց զգուշութեան», Հրատարակվել են Եփրեմ Ասորու անունով (տե՛ս «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք» Հ. Դ. Վենետիկ, 1836, էջ 215-219): Հրատարակիչը որևէ խոսք չի ասում այդ առթիվ:

³ Այստեղ մենք գործ ունենք ոչ թե առանձին խրատների, ինչպես նկատել է Հեղինակը, այլ միևնույն «Վասն զղջման և արտասուաց» խրատի հետ, որի բնագիրը երկու մասի է բաժանված: Այդպես է, օրինակ, Մատենագրաբանի - 1521 ձեռագրում. «Ծնորհալից վարդապետին Անանիայի Նարեկացւոյ ասացեալ վասն աղօթից, պահոց և արտասուաց» (թերթ 282ա-284թ, սկ. «Արդ շնորհն արտասուաց նշան է...») և «Նորին Անանիայի հոգելի վարդապետի և Նարեկայ վանաց առաջնորդի ասացեալ վասն զղջման և արտասուաց և աղօթից» (թերթ 284թ-286ա, սկ. «Մի՛ ոք ի մարդկանէ փոքր համարեսցի զշնորհս զղջման...»):

⁴ Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886, էջ 596: Նշված խրատներից վերջինը հանդիպում է նաև «Վասն անցաւոր աշխարհիս» խորագրով:

խրատ հոգեցահ, թե որպէս կարասցէ զմիտս որոշել յերկրաւորաց», «Խրատ քահանայից», «Երանելոյն Անանիայի խօսք և խրատ աւետարանական, որ տանի զմեղ ի կեանս յաւիտենական և ոչ տայ խոտորել յաջ կամ յահեակ» խրատները դասում է Անանիա Սանահնեցու գործերի շարքը, նշելով, որ դրանք կարող են նաև մի ուրիշ Անանիայի գործերը լինել⁵: Ընդ որում, թվարկված խրատներից առաջինը հիշատակված է և Անանիա Նարեկացու, և Անանիա Սանահնեցու գործերի շարքում:

Գ. Աշբգյանը, հրատարակելով «Վասն զղջման և արտասուաց» խրատը⁶, իրավացիորեն նշում է այս գործի հոգեհարազատությունը Նարեկյան դպրոցի մատենագրությանը և զուգահեռներ է անցկացնում Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հետ: Այս ամենը նրան հիմք է տալիս ենթադրելու, որ խրատը պատկանում է Անանիա Նարեկացու գրչին⁷:

Այս խրատի մասին նուրբ դիտողություն ունի Ն. Մառը: Նա նշում է Վարդան Այգեկցու խրատների ընդհանուր թեմատիկ նմանությունը՝ «Վասն զղջման և արտասուաց» խրատի հետ: Այնուհետև նա խոսում է այդ խրատի մեջ եղած աղոթքի և Վարդան Այգեկցու «Զմեռն և գարուն» առակի սյուժետային ընդհանրության մասին: Բայց, որ ամենակարևորն է, քննելով լեզվի հարցը, ենթադրում է, թե խրատը X դարի հեղինակի գործ է⁸:

Մեզ հետաքրքրող խրատների վրա ավելի հանգամա-

⁵Տե՛ս նույն տեղում, էջ 571-572:

⁶«Պատկեր» թ: տարի, 1898/99, էջ 197-201, 217-221, 241-245, 426-428:

⁷Տե՛ս նույն տեղում, էջ 571-572:

⁸Տե՛ս H. Mapp, Сборники притч Вардана, ч. 1, СПб., 1899, с. 376-377.

նորեն կանգ է առել Բ. Սարգիսյանը։ Չնայած արտահայտած կարծիքների որոշ հակասություններին, Բ. Սարգիսյանը ոչ միայն այս խրատներից մի քանիսը կապում է Անանիա Նարեկացու անվան հետ, այլև նախնական լեզվառնական քննությամբ փորձում է հաստատել իր կարծիքը։ Հստ նրա՝ «...ի խնդրոյ Գրիգորի միայնակեցի մի գրուած՝ Յաղագս գղջման և արտասուաց ճառն, գոր Հ. Յ. Տաշեան (տե՛ս Յուցակ, Զեռ. 371, Էջ 1057) Անանիա Շիրակացվույն գործոց մեջ դասած է, իրոք մի ուրիշ Անանիայի, այն է Նարեկայ վանահորն է. վասն զի ինչ ինչ տարբերությամբ նույն գտանք 1898-ի Պատկերի (թիվ 8, 9, 10, 11, 12, 13) մեջ հրատարակվածին հետ և Էջմիածնի թիվ 914 ճառընտրի մեջ իսկ իրոք Ան. Նարեկացվո անունը կը կրե։

Մեր Մատենադարանի թիվ 57 գրչագրին (Ա. Ոսկեփ.) մեջ, Անանիա վարդապետի ասացեալ խրատ հոգեշահ ի վերայ արհամարհելոյ զաշխարհ, «Արդ եթէ կամիս». այսպէս մի ուրիշ գրչագրի՝ Անանիայի վարդապետի՝ ասացեալ վասն անցաւոր աշխարհիս, խորագրված երկու ճառերն՝ թեպետ և արտաքնապես տարբեր կ'երեին, սակայն ըստ իսկության հարասությունք են Նարեկացւոյ հիշեալ ճառին, ինչ ինչ հաւելվածով և հապավումներով, որք կատարված են տգետ գրչի մի ձեռքով՝ լի սխալագրությամբք»⁹:

Բ. Սարգիսյանը «Վասն անցաւոր աշխարհիս» խրատը համարում է «Վասն զղջման և արտասուաց»-ի հարասությունը։ Հիշյալ խրատները, սակայն, միենույն հեղինակին պատկանելով հանդերձ, տարբեր գործեր են։ Այնուհետև, անդրադառնալով «Խրատ քահանայից» և «Խօսք և խրատ

⁹ Բ. Սարգիսյան, Անանիա Թարգմանիչն և իւր գրական գործոց նմուշներ, Վենետիկ, 1899, Էջ ԺՀ-ԺԹ։

յաւիտենականք...» գործերին, Բ. Սարգիսյանը գրում է. «Նարեկացվույն է, ըստ իս, նաև մեր թիվ 1108, այն է հզ Ոսկեփորիկի մեջ, Անանիայի Հայոց վարդապետի ասացեալ Խրատ քահանայից. «Արդ քահանայական աստիճան» մակագրվածն, զի ճառիս լեզուն և ոճն նույն է Յաղագս զղջման, և այլն, ճառի լեզվին և ոճերու հետ, նամանավանդ երկուքին մեջ ևս որ դերանունը ստեղ գործածված է զի, որպէս զի շաղկապներու նշանակությամբ: Այսպես նաև Խոսք և խրատք յաւիտենականք, որ տանի ի կեանս յաւիտենականս. «Քանզի գրեալ է և պատուիրեալ», - Խորհուրդ կատարման առաքելոյն Պետրոսի. «Իսկ երանելին Պետրոս» - և ի խաչելութիւն Պետրոսի, որ կը սկսի. «Իսկ Պետրոս երկրորդ» բառերով՝ նույնպես Անանիայի մակագրված են, բայց հավանորեն Շիրակացվույն են և օտար բնագրե թարգմանաբար հերյուրված»¹⁰: Ճիշտ նկատելով «Խրատ քահանայից»-ի լեզվածական նմանությունը՝ «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի հետ, հեղինակը, սակայն սխալվում է «Խոսք և խրատ յաւիտենական...» խրատի հարցում, վերագրելով այն Անանիա Շիրակացուն և համարելով «օտար բնագրե թարգմանաբար հերյուրված»: «Վասն խոնարհութեան» խրատի մասին Բ. Սարգիսյանը գրում է. «Վասն խոնարհութեան ճառը Հ. Տաշյան՝ Ան. Սանահնեցվույն ընծայած է, յուր հիշյալ գործին մեջ. բայց մեր թիվ 57 գրչագրին մեջ՝ Ան. Շիրակացվո մակագրված է: Էստ իս ոչ միույն և ոչ այլ մյուսին արժանավոր գրված մ'է. այլ կամ Տիրվա հոր Անանիային ըլլալու է կամ Սեաստացվույն»¹¹: «Յաղագս զղջման և արտասուաց»

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ ԺԹ-ի:

խրատին Բ. Սարգիսյանն անդրադարձել է նաև իր «Ճուցակում», գրելով. «Իմաստասէր» տիտղոսից դատելով հավանորեն հեղինակ խրատիս ըլլալու էր կամ Ան. Շիրակացին, և կամ Նարեկացին»¹²:

Ուրեմն՝ «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի հեղինակային պատկանելության հարցը նրա մոտ վերջնական լուծում չի ստացել. սկզբում նա այդ գործը հաստատապես համարում է Անանիա Նարեկացունը, իսկ հետո՝ նրանը, կամ Անանիա Շիրակացունը:

Անանիա Սանահնեցու գրական ժառանգությունը քննելիս այս խրատների վրա կանգ է առել Ե. Տեր-Մինասյանը: Հստ նրա՝ «Խրատ ոգեշահ, թէ որպէս կարասցէ մարդ զմիտս որոշել երկրաւորացս», «Խրատ քահանայից», «Վասն խոնարհութեան», «Վասն համբերութեան և խաղաղութեան», «Վասն զղջման և արտասուաց», «Յաղագս խորհրդոց» խրատները պատկանում են Անանիա Սանահնեցուն: Որպես առանձին գործ (վերագրված դարձյալ Անանիա Սանահնեցուն) նշված է «Վասն անցաւոր աշխարհիս» խրատը¹³, որը, սակայն, նույն «Խրատ ոգեշահ, թէ որպէս կարասցէ մարդ զմիտս որոշել երկրաւորացս» գործն է:

Քննվող խրատներին անդրադարձել է նաև Ա. Աբրահամյանը¹⁴ և Անանիա Շիրակացուն է վերագրել «Յաղագս զղջման և արտասուաց» և «Վասն խոնարհութեան» խրատները: Նրա կողմից չի որոշված «Խրատ քահանայից»-ի և

¹² Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, Հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 800:

¹³ Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Հաղբատ և Սանահն վանքերը, «Արարատ», 1901, էջ 274:

¹⁴ Տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 72-75 և 154-163:

«Վասն այն կենաց»-ի հեղինակային պատկանելության հարցը¹⁵: «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի մասին նա գրում է. «Մեզ հայտնի գրեթե բոլոր ընտիր գրչագրերում վերնագրում որպես հեղինակ է հիշված պարզապես Անանիա Շիրակացին, իսկ պատվիրատուն՝ Գրիգոր Միայնակեցը. «Անանիա Շիրակացւոյ Յաղագս զղջման արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի»: Մի քանի ընդօրինակություն է մեզ հայտնի միայն, որ «Անանիայի Շիրակացւոյ» փոխարեն ունեն «Անանիա վարդապետի», իսկ պատուիրատուի անունը բոլորովին չեն հիշում: Ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ գրչագրերի տեքստը, սակայն, ուշ շրջանում է խմբագրված: Հարազատ է առաջին խմբի գրչագրերի տեքստը:

Նշված խրատի Շիրակացուն պատկանելը երևում է ոչ միայն նրա վերնագրից, ուր անունով հիշված է Շիրակունի ձեռվ, այլև լեզվից, շարադրման մեթոդից, բերված օրինակ-ներից և այլն»¹⁶:

Անանիա վարդապետի անունով հանդիպող մի այլ վիճելի գործի մասին խոսելիս («Սակս բացայայտութեան թուոց») Ա. Աբրահամյանը ժխտում է նրա Անանիա Շիրակացուն պատկանելու հնարավորությունը՝ ելակետ ընդունելով այդ գործի միստիկ բովանդակությունը¹⁷, սակայն այդ սկզբունքը չի կիրառում «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի հարցը քննելիս, որը նույնպես շեշտված միստիկ բովանդակություն ունի:

Ա. Աբրահամյանը տալիս է խրատը պարունակող ձե-

¹⁵Տե՛ս նույն տեղում, էջ 160-163:

¹⁶Նույն տեղում, էջ 156:

¹⁷Տե՛ս նույն տեղում, էջ 74:

ուագրերի ցանկը, ուր նկատի է առնված 14 միավոր¹⁸: Նրա ձեռքի տակ չեն եղել մեծ թվով օրինակներ, որ հայտնի դարձան Հ. Անասյանի հիշյալ աշխատության և հետագա տարիներին լույս տեսած ձեռագրացուցակների շնորհիվ: Այստեղ «Յաղագս զղջման և արտասուաց» խրատը հանդիպում է ոչ միայն Անանիա Շիրակացու և Անանիա վարդապետի, այլև Անանիա Նարեկացու¹⁹ և Գրիգոր Նարեկացու անուններով²⁰: Բացի այդ, մի շարք ձեռագրերում այն պահպանված է առանց հեղինակի անվան²¹: Ըստ Ա. Աբրահամյան՝ Անանիա վարդապետի անունով հանդիպող բնագիրն ավելի ուշ շրջանի խմբագրություն է, և նախնականը Անանիա Շիրակացու անունով հասած բնագիրն է: Սակայն իր իսկ բերած ցուցակում Անանիա վարդապետի անունով հասած ձեռագրերը շատ ավելի հին են (XII-XV դդ.), քան Անանիա Շիրակացու անունով հայտնի ձեռագրերը (XVI-XVIII դդ.): Ավելացնենք, որ ոչ «Լեզվով», ոչ «շարադրման մեթոդով», ոչ «բերված օրինակներով» այս խրատը հարազատ չէ Անանիա Շիրակացու գործերին:

Անանիա Նարեկացու գրական ժառանգության մասին խոսելիս մեզ հետաքրքրող խրատներին անդրադարձել է նաև Մ. Աբեղյանը, գրելով. «Նա եղել է քաջ մեկնիչ Ա. Գրքի, գրել է մեկնություններ, ճառեր՝ «Վասն աղօթից,

¹⁸Տե՛ս նույն տեղում, էջ 156-158:

¹⁹Մատենադարան, ձեռ. - - 5707 (311ա-36թ), 1521 (282ա-86թ), Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարան, ձեռ. - 1 (մասն Գ, 295թ), Նոր Զուղայի Ամենափրկիչ վանք, ձեռ. - 420 (18թ-29ա):

²⁰Մատենադարան, ձեռ. - 6907 (108ա-124թ):

²¹Մատենադարան, ձեռ. - - 8532 (117ա-129թ), 1856 (58թ-65ա), 1473 (148թ, թերի), 1475 (16ա-27թ), Վիեննայի Միհթարյան Մատենադարան, ձեռ. - 247 (90ա):

պահոց և արտասուաց», «Վասն զղջման և արտասուաց և աղօթից» և մի ուրիշը՝ «Խրատ հոգեոր թէ որպէս կարասցէ մարդ որոշել զմիտու յերկրաւորաց և աստուծոյ միայն ցանկալ և արքայութեան նորա»²²:

Այս գրվածքը «Խրատ ոգեշահ, թէ որպէս կարասցէ մարդ՝ զմիտու որոշել յերկրաւորացս» վերնագրով՝ ձեռագիրների մեջ կա նաև Անանիա Սանահնեցու անունով՝²³:

Ն. Եպ. Ծովականը (Պողարյան) նույն այս խրատի տպագրության առթիվ²⁴ գրում է. «Վերոգրեալ կտորը առնված է Ս. Աթոռույս 1128 ձեռագրեն, որ Գրիգոր Տաթևացիի հորինած Մեկնութեանց ժողովածո մըն է, օրինակված 1411-ին մանրորակ բոլորգրով։ Վերնագիրը կըսէ. «Անանիայ սր. վարդապետի ասացեալ՝ Վասն սուտ և անցաւոր աշխարհիս (էջ Միջ)։ Որոշ չէ թէ որ Անանիան է այս»²⁵։

Քննվող խրատներից մեկին անդրադարձել է նաև Ն. Թահմիզյանը։ Քննելով առավելապես Անանիա Նարեկացու երաժշտական գործունեությունն ու Նարեկա վանքի երաժշտական ավանդույթները, նա կանգ է առնում «Խրատ քահանայից» գործի վրա։ Հստ նրա, այս խրատը բաղկացած է չորս մասից, որոնցից մեկն է «Յաղագս գիտութեան ձայնից» հատվածը։ Այս հատվածի հիման վրա հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ ամբողջ խրատը X դարի հեղինակի գործ է և պատկանում է Անանիա Նարեկացու գրչին, քանի որ առավելապես այդ ժամանակաշրջանում

²² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 520։ Հեղինակը հենվել է Գ. Զարբհանալյանի տվյալների վրա։

²³ Նույն տեղում, ծանոթ։ Յ. Հեղինակը հղել է Երվանդ Տեր-Մինասյանի աշխատությանը (տե՛ս «Արարատ», էջմիածին, 1901, էջ 274)։

²⁴ «Սիրոն», 1958, էջ 120-122։

²⁵ Նույն տեղում, էջ 122։

են հայկական միջավայր մուտք գործել ձայների և թվերի խորհրդապաշտական նշանակության մասին եղած տեսությունները²⁶:

Համաձայնելով հոդվածի հեղինակի հետ «Խրատ քահանայից»-ի պատկանելության հարցում, պիտի նշենք, որ այն մի ամբողջական գործ է, բաղկացած չէ չորս մասից: Նրա հղած ձեռագրերի համապատասխան հատվածում (*Մատենադարան, ձեռ. - 6031, թերթ 176ը-186ը*) բուն խրատը վերջանում է թերթ 183ը-ում: Իսկ «Յաղագս գիտութեան ձայնից»-ը, ինչպես նաև մյուս նյութերը (թվով 6 և ոչ 3, ինչպես նշել է հոդվածագիրը, ներառելով դրանք «Խրատ քահանայից»-ի մեջ) կապ չունեն այս խրատի հետ և Անանիա Նարեկացուն չեն պատկանում)²⁷:

²⁶Տե՛ս Ն. Թահմիզյան, Անանիա Նարեկացու և Նարեկա վանքի երաժտական ավանդույթների մասին, էջ 33-34:

²⁷Աչա հեղինակի հղած ձեռագրի վերոհիշյալ հատվածում եղած նյութերի ցանկը.

ա) 176ը-182ը Անանիա վարդապետի ասացեալ խրատ քահանայից - արդ քահանայական աստիճան... յայնժամ ունիս համարձակություն առ տէր, թէ ահաւասիկ ես և մանկունք իմ, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն:

բ) 182ը-183ա Այս են թիւք աստուածունչ գրոց եւ որք ընդունելիքն - Հինգ գիրք Մովսիսի, ծնունդքն... Ե՝ զոր Վարդան վարդապետ գրեաց զքարոզութիւն Պետրոսի առաքելոյն և է պիտանի... (Վարդան վարդապետի անունն ինքնին վկայում է, որ այս հատվածը չի կարող 10-րդ դարի հեղինակի գործ լինել):

գ) 183ա-184ա Յաղագս գիտութեան ձայնից - Առաջինն յԱղամայսկսաւ զի նմա տուաւ առաջի ձայնն...

դ) Յատկութիւն խոստովանութեան այսքան է - Մէկ՝ որ պարզ լինի...

ե) 184ը [Հարց] Զի՞նչ է ասել տեսառն Պետրոսի, եթէ տաց քեզ զփականս արքայութեան երկնից: Պատասխանի. Փականս զգիտութիւն Հոգոյն Արքոյ ասէ...

զ) 184ը-185ը [Քաղուածք ի Հարանց վարուց] - Երկու եղբարցն գնացեալ ի վաճառ... Պատմեցին ոմանք վասն եղբօր ուրումն, որ անկեալ

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ խրատների մասին հայագիտության մեջ տեղ գտած կարծիքները հիմնականում հակասական են: Սրանից ելնելով է, որ Հ. Անասյանը, վերջնական չհամարելով դրանցից ոչ մեկը, իր աշխատության մեջ նշված խրատները զետեղել է «Անանիա վարդապետ» անվան տակ՝ հետևյալ ծանոթությամբ. «Այս ընդհանուր անվան տակ ամփոփում ենք այն բնագրերը, ~ մեծ մասամբ ճառեր, ~ որոնց հեղինակության հարցը վիճելի է: Զեռագրերն ընդհանրապես չեն նշում հեղինակի մականունը, և երբեմն նաև նրանց ցուցումները հակասական են միմյանց, որով և բանասերների մոտ կարծիքները տարբերվում են այս կամ այն ճառը համանուն Անանիաներից մեկին կամ մյուսին վերագրելու հարցում»²⁸:

*

Նշված խրատների բնագրերին ծանոթանալիս առաջին հերթին ուշադրություն է գրավում մի հանգամանք. դրանք մեծ մասամբ միանման սկիզբ ունեն, որից իմացվում է, որ գրվել են ինչ-որ պատվիրատուի խնդրանքով: Այսպես, օրինակ, «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի սկզբում կարդում ենք. «Ո՞վ աստուածամէր սիրելի եղբայր, խնդրող սիրոյն աստուծոյ, զբանն՝ վասն որոյ աղաչեցեր զիս և ասացեր ցուցանել քեզ ճանապարհ յաղագս զղջման և արտասուաց, և արդ՝ ես սակաւուք պատճառս

էր ի մեղս և երթեալ առ հայրն Ղովտ... (տե՛ս «Վարք Հարանց» Ա. հատոր, Վենետիկ, 1855, էջ 638):

Է) 185թ-186թ (Նեղոսի Յաղագս աղօթից) – Նախ յաղագս առնլոյ արտասուս աղօթեա... (նույն տեղում, Բ. հատոր, էջ 700-702):

²⁸ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Հ. Ա., էջ 786-787:

տամ յաղագս քում աստուածսիրութեանդ...»²⁹: Նման սկիզբ ունի նաև «Վասն անցաւոր աշխարհի» խրատը. «Այլև զայդ հարցեր, թէ զիա՞րդ կարէ մարդ զերկրաւորս արհամարհել, որ անցանէ...»³⁰: Ահա «Յաղագս խորհրդոց զգուշութեան» խրատի սկիզբը. «Այլև զայդ աղաչեցեց, եթէ յաղագս խորհրդոց խրատ գրեա, որ զգուշանալ գիտեմ և պատրաստուել...»³¹: Հիշենք նաև «Վասն խոնարհութեան» խրատի համապատասխան տողերը. «Այլև զայդ հարցեր, եթէ որչա՞փ մասունք են, որ մարդն կատարեալ խոնարհութիւն ստանայ և աղաչեցեր, եթէ գրեա ի գիրս...»³²:

Առաջին անգամ նկատված այս երեսույթը հիմք է տալիս մտածելու, որ նշված խրատները գրված են միևնույն հեղինակի կողմից նույն պատվիրատուի խնդրանքով: Այս կարծիքը հաստատվում է նաև հետեւյալ իրողությամբ. չնայած նշված խրատները փոված են բազմաթիվ ձեռագրերում և մեծ մասամբ հանդես են գալիս իրարից անջատ, սակայն մի քանի ձեռագրերում դրանք հանդիպում են միասին և մի ամբողջական շարք են կազմում: Այդպիսի ձեռագրերի թվին են պատկանում Մատենադարանի ~ ~ 641 (5 խրատ), 2121 (3 խրատ), 2335 (5 խրատ), 2711 (5 խրատ), 2680 (5 խրատ), 5077 (5 խրատ), 5453 (3 խրատ), 5707 (5 խրատ), 8029 (4 խրատ), 8281 (3 խրատ), Անթիւիասի ~ ~ (6 խրատ), 421 (5 խրատ), 430 (3 խրատ), Մյունխենի ~ ~ 3 (3 խրատ) ձեռագրերը:

Առաջադրված վարկածը հաստատվում է նաև մի ուրիշ

²⁹ Մատենադարան, ձեռ. - 2680, թերթ 309ա:

³⁰ Մատենադարան, ձեռ. - 2335, թերթ 284բ:

³¹ Մատենադարան, ձեռ. - 5707, թերթ 330ա:

³² Մատենադարան, ձեռ. - 5707, թերթ 328ա:

ուշագրավ փաստով. բանն այն է, որ այս գործերի հետ լեզվագաճական հարազատություն ունեցող «Անանիայի խօսք և խրատ աւետարանական, առաքելական և մարդարէական, որ տանին զմեզ ի կեանս յաւիտենական և ոչ տան խոտորել յաջ կամ յահեկ» ընդարձակ խորագրով խրատը (8-րդ)³³ շատ դեպքերում բնագրային նույնություններ ունի դրանց հետ, որից հետեւում է, որ բոլոր այս գործերը պատկանում են հեղինակի գրչին:

Սույն խրատը վերոհիշյալ մյուս խրատների հետ համեմատելիս ակնհայտ է դառնում է, որ հեղինակը հաճախ նրանցում կիրառել է նույն օրինակներն ու համեմատությունները: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ «Խօսք և խրատ աւետարանական...»-ը զգալիորեն գերազանցելով ամբողջ խրատաշարքին թե ծավալով և թե բովանդակությամբ, թեմատիկ առումով իր մեջ ընդգրկում է այն ամբողջ խրատական նյութը, որ առկա է թվարկված գործերում: Ուստի հաճախ նույն նյութի շուրջը խոսելիս հեղինակը կիրառում է նույն օրինակները, որոնք, փոքրինչ տարբերություններով հանդերձ, հանդես են գալիս միևնույն լեզվական կաղապարներով ու ոճա-քերականական կառուցվածքներով: Ամբողջությամբ, սակայն, «Խօսք և խրատ աւետարանական...»-ը ինքնուրույն գործի արժեք ունի և շատ կողմերով գալիս է հարստացնելու հեղինակի մտքերի ու պատկերների համակարգը, որ առկա է նրա մյուս խրատներում: Նրանում չկա նյութի այն թեմատիկ դասակարգումն ու մշակվածությունը, որ հանդիպում է շարքի մեջ, և դա ենթադրել է տալիս, որ այն նախահիմք է հանդիսացել ամբողջ շարքի ստեղծման համար:

³³Մատենադարան, ձեռ. - 732, թերթ 212ա-250բ:

Այժմ մեջ բերենք համապատասխան հատվածներից մի քանիսը Մատենադարանի ~ ~ 5707, 732 և 7131 ձեռագրերից:

ա) Անանիայի վարդապետի Անանիայի խօսք և խրատ Խրատ վասն համբերութեան և խաղաղութեան...

Զոր օրինակ խոցի սրով Զոր աւրինակ խոցի սրով
մի յանդամոց մարդոյն, և մի ինչ յանդամոց մար-
նա պատէ զվէրն և դեղ ի դոյն, և նա զվաղվաղակի
վերայ դնէ, յայնժամ վաղ- պատէ զվէրն և դեղ ի վե-
վաղակի բժշկի, իսկ եթէ րայ դնէ, և նայ արագապէս
անփոյթ առնէ զվէրսն, նայ բժշկի, իսկ եթէ անփոյթ
շարաւ անցեալ յամենայն առնէ նայ շարաւն յամե-
անդամսն տարածի կսկիծն, նայ նայն անդամսն տարածի
այսպէս և զտրտմութիւն կսկծա: Այսպէս ուրուք ընդ
եղբօրն՝ եթէ խաղաղ առ- ումեք տրտմութիւն լինի, և
նես, վաղվաղակի բժշկի նայ խոնարհի և մեղայ ա-
միտք քո, և սէրն հաստա- սէ, յայնժամ սէրն հաստա-
տուն կայ... և միտք բժշկին...
տուցանես զբանսն, դու իսկ եթէ ոչ խոնարհի ի
կարծես թէ ի խաղաղել եմ, հաշտութիւն, այլ աղաղակ
բայց այն բանք ի բազումս առնէ, ինքն կարծէ եթե
տարածի և տրտմութիւն ածէ և ի տրտմութենէն գա
թշնամութիւն (- 5707, 732, թերթ 226թ-27ա):

և անտի թշնամութիւն ծնա-
նի և յանցանք բազում (-
732, թերթ 225ա):

«Վասն խոնարհութեան» խրատը համարյա ամբողջությամբ ընդգրկված է «Խօսք և խրատ աւետարանական...»-ում: Ահա մի քանի բնորոշ օրինակներ.

բ) Վասն խոնարհութեան

Խօսք և խրատ

աւետարանական...

Արդ է նախ և առաջին Եւ այսպէս խոնարհութեան թիւն է, որ խոնարհ համազամենայն մարդ զինքն ըիսպէս զամենայն ոք, որպէս մաքսաւորն...:

Խոնարհութիւն է սուգ և արտասուս, որ ոչ համարի զինքն ի վարձկանի կարգի... այլ ժտութեամբ յուսա առնուլ զարքայութիւն:

Խոնարհութիւն է սուգ և արտասուգ, որ ոչ համարի զինքն ի վարձկանի կարգի, այլ շնորհիւ և ժտութեամբ յուսայ առնուլ զարքայութիւն աստուծոյ:

Խոնարհութիւն է յոր [ժամ] վշտի յանդիպիս, և նեղութիւն հասանաէ ի վերայ, դու ոչ տրտմիս, այլ գոհանաս զաստուծոյ, և թէ ես ոչ այսչափ միայն, այլ բազում պատժոց արժանի եմ ըստ մեղաց իմոց...

Խոնարհութիւն է և գձուծ հանդերձ... քանզի փառք մարդիկ ի հանդերձից առնեն (- 5707, թերթ 228ա):

Խոնարհութիւն է յորժամ նեղութեան հանդիպի և փորձութեան, ոչ տրտնջէ... այլ գոհանա զաստուծոյ և ասէ, եթէ ոչ ևս այսմ միայն եմ արժանի, այլ բառում նեղութեանց...

Խոնարհութիւն է և գձուծ հանդերձ, քանզի փառք մարդիկ ի պայծառ հանդերձից առնուն... (- 732, թերթ 214ա-16ա):

Նույնատիպ կրկնություններ կան նաև «Վասն անցաւոր աշխարհիս», «Վասն խորհրդոց մաքրութեան», «Խրատք քահանայից» և վերոհիշյալ «Խօսք և խրատ աւետարանական...» խրատներում։ Այստեղ դարձյալ կանգնում ենք նույն փաստի առաջ. Հեղինակն իր խոսքը պատկերավոր դարձնելու համար տեղ-տեղ կիրառել է նույն օրինակները, նույն նյութի շուրջ խոսելիս գործածել է նույն արտահայտություններն ու գեղարվեստական հնարքները։ Մեջ բերենք համապատասխան հատվածներից մի քանի նմուշ.

**գ) Վասն անցաւոր
աշխարհիս**

**Խօսք և խրատ
աւետարանական...**

Զոր օրինակ տեսանես զոր աւրինակ տեսանէ ոք զքեզ յերազի թագաւոր զինքն յերազի ի թագաւոր փառօք մեծութեամբ, իսկ ըութեան և յուրախույուժամ զարթնուցուս, ու թեան, իսկ յորժամ զարթչինչ ունիս ընդ քեզ, բայց զայն միայն, որ յիշես, թէ զայս ինչ տեսի յերազի։ Այսպէս եթէ յայգուէ մինչև ցերեկոյ եթէ ուտես, եթէ ըմպես, եթէ ի բազմաց պաշտոն առնուս, իսկ յորժամ երեկն հասանէ՝ անցաւ և ի վաղիւն որպէս զանցեալ երազ երեկի...

Զոր աւրինակ տեսանէ ոք զինքն յերազի ի թագաւոր փառօք մեծութեամբ, իսկ յորժամ զարթչինչ ունիս ընդ քայլ, բայց միայն զյիշումն, իւր, բայց միայն զյիշումն, թէ զայս ինչ տեսի յերազի։ Այսպէս և երկրաւոր վայելչութիւնն. այսաւը թէ ուշես, թէ ըմպես. ... թէ ի ծառայից պաշտոն առնուս, յորժամ ելանես ի վաղիւն՝ ամենայն անց[աւ] և որպէս զանցեալ երազ երեկի...

Զոր օրինակ հանդերձ մարդոյ հնանայ և մաշի, և ելանէ ի գունոյ ...այսպէս և մարմին մարդոյն առ սակաւ սակաւ մաշի և հնանայ, քանզի ծերանան ալիքն, թառամի գեղեցկութիւն... անկանի ի զօրութենէ, և եթէ յերկարէ ժամանակն՝ մարմինն հոգոյն գերեզման լինի... (~ 5707, թերթ 239աբ):

Եւ որպէս հանդերձ հնանայ և մաշի, և ելանէ ի գունոյն, այսպէս և մարմին մարդոյն առ սակաւ սակաւ հնանայ և ապականի, քանզի ծերանան ալիքն, թառամի գեղեցկութիւն, պակասի զաւրութիւն, և մինչդեռ կենդանի է մարմինն, հոգոյն գերեզման լինի... (~ 732, թերթ 219բ-20ա):

դ) Վասն խորհրդոց մաքրութեան

Արդ զոր օրինակ արծիւթուցեալ և տեսանէ կերակուր որոգայթից, իջանիցէ հանդերձ զօրութեամբ իւրով ի բաց ձգելոյ զկերակուրն և ըմբռնիցէ ծայր մագլին յորոգայթն, և ի ձեռն նուազ մասին այնորիկ խոնարհի ամենայն զօրութիւն նորա, այսպէս և մարդն... (~ 5707, թերթ 330բ):

Դարձեալ նման է առաքինութիւն արծուի հզաւրի թուցեալ յաւթս, որ տեսանէ կերակուր յորոգայթէ և իջանէ հանդերձ զաւրութեամբ իւրով ի բաց ձգել զկերակուրն, և ըմբռնիցի ծայր մագլին յորոգայթն, յաղագս նուազ մասին այնորիկ խոնարհի ամենայն զաւրութիւն նորա: Այսպէս և կրանաւորն... (~ 732, թերթ 236բ):

ե) Խրատք քահանայից
 Եւ լեր ուսուցանել և շա-
 հել զաշակերտսն հանա-
 պագ, քանզի սայ է գործ
 քահանային... վասն որոյ
 ասէ մարդարէն. «Դուք
 քահանայքդ անարդէք զօ-
 րէնսն իմ, քանզի սուրբն ի
 պղծոյն ոչ ընտրէք և զա-
 րատաւորն յանարատէն ոչ
 որոշէք... և զասրն զգենուք
 և զիսաշինս իմ ոչ արա-
 ծէք... Սաստեա, յանդիմա-
 նեա և միսիթարեա, ընդ
 հիւանդն հիվանդացիր, ի
 վերայ մեռելոցն ողբայ,
 ընդ գայթ գայթակղեալսն
 տրտմեայ, զթշնամիսն ընդ
 աստուծոյ հաշտեցոյ... զվի-
 րավորեալսն ի սատանայէ
 առողջացո... (- 7131, թերթ
 114թ-15թ):³⁴

Կրկնությունների այս շարքը կարող է կասկած հարու-
 ցել, թե «Անանիայի խօսք և խրատ աւետարանական...»-ը
 նրա մյուս գործերից կատարված քաղածո մի աշխատանք
 է: Բայց, ինչպես արդեն ասել ենք, մյուս խրատների հետ
 ունեցած ընագրային համապատասխանությունները նրա

Այսպէս յառաջնորդաց ե-
 կեղեցւոյ պահանջէ աս-
 տուած զժողովուրդն և
 պարտապան են վասն նոցա
 համար տալ առաջի աս-
 տուծոյ, որպէս ասէ Եղե-
 կիէլ «Դուք քահանայք որ
 պղծէք զաւրէնս իմ, զի
 սուրբն ի պղծոցն ոչ ընտ-
 րեցէք և զանարատն յարա-
 տաւորէն ոչ որոշէք, և զա-
 սրն սգենուք և խաշինս իմ
 ոչ արածէք...»: Արդ՝ պարտ
 է առաջնորդին ընդ հի-
 ւանդսն հիւանդանալ, ի
 վերայ մեղուցելոյն ողբալ,
 ընդ գայթակղեալսն տրտ-
 մել, զթշնամիս ընդ աստու-
 ծոյ հաշտեցուցանել, զվի-
 րաւորեալսն ի սատանայէ
 առողջեցուցանել... (- 732,
 թերթ 228ա):

³⁴ Այս ձեռագրում խրատի վերնագիրն է՝ «Անանիայի Հայոց վարդա-
 պետի ասացեալ խրատ» (տե՛ս թերթ 104թ):

բովանդակության մի փոքր մասն են կազմում միայն, և իր ամբողջության մեջ այն ինքնուրույն գործ է՝ հարուստ կենդանի պատկերներով, կյանքից ու բնաշխարհից վերցված օրինակներով, համեմատություններով և իր ուրույն տեղն ունի նույն հեղինակի մյուս գործերի շարքում:

Այս խրատների մեջ կենտրոնական տեղ է գրավում «Յաղագս զղջման և արտասուաց»-ը: Այն նախորդ խրատներում արծարծված հարցերի տրամաբանական զարգացման արդյունքն է, որով հեղինակի տեսական հայացքները ավարտուն տեսք են ստանում: Սույն խրատը բնագրային նույնություններ ունի ոչ միայն «Խօսք և խրատ աւետարանական...»-ի, այլև «Խրատ քահանայից» և «Վասն խոնարհութեան» խրատների հետ: Ահա դրանցից մի քանիսը.

Յաղագս զղջման և

արտասուաց

Խօսք և խրատ

աւետարանական...

Խորհրդեամբ արա զար- Եւ լինի ժամանակ, որ տասուաց ժամանակն... և իւրով[ի] գայ ի զղջումն, և բռնադատեա զբնութիւնդ... լինի, որ բռնադատել պիտի (- 5707, թերթ 331թ): և ի զղջումն ածել... և այս

Լինի երեմն, որ իւրովի ոչ է թէ առաքինութիւն, գայ ի զղջումն և լինի, որ դիւրաւ գայ զկնի, այլ բազում ջանիւ ոչ կարեն բռնութեամբ... (- 732, արտասուել... (- 5707, թերթ 236թ):

թերթ 332թ):

Եւ զքեզ մի ի վարձկանի Խոնարհութիւն է սուգ և կարգի համարիր, որ յար- արտասուք, որ ոչ համարի տասուացն չթուլանաս, այլ զինքն ի վարձկանի կարգի, շնորհիւ և ժառանգմբ յու- այլ շնորհիւ և ժառանգմբ

սա առնուլ զարքայութիւն յուսայ առնուլ զարքայու-
(- 5707, թերթ 332ա): թիւն աստուծոյ (- 732,
Եւ որպէս զերևելի բարքդ:
ուղղես՝ զպահս, զաղօթս,
զաշխատութիւն, զանըն-
չութիւն, այսպէս և զանե-
րևոյթ բարքդ ուղղես՝ հեզ,
խոնարհ, ողորմած... խա-
ղաղարար... (- 5707, թերթ
333թ):

Վասն խոնարհութեան
խոնարհութիւն է սուգ և
արտասուս, որ ոչ համարի
զինքն ի վարձկանի կար-
գի... այլ ժտութեամբ յուսա
առնուլ զարքայութիւն (-
5707, թերթ 228ա):

Խրատք քահանայից
[Որպէս] զերևելի վարս
ուղղես՝ զպահս, զաղօթս,
զանընչութիւնս, զաշխա-
տութիւնս, այսպէս և զան-
երևոյթ վարս քո ուղղես՝
հեզ, խոնարհ, ողորմած,
անոխակալ... (- 7131,
թերթ 108թ):

Այս ամենից ելնելով կարելի է ասել, որ վերոհիշյալ
«Խօսք և խրատ աւետարանական...», «Վասն զղջման և
արտասուաց», «Յաղագս խորհրդոց զգուշութեան», «Վասն
խոնարհութեան», «Վասն համբերութեան և խաղաղու-
թեան», «Վասն անցաւոր աշխարհիս», «Խրատք քահանա-
յից» խրատները միենույն հեղինակի երկերն են:

Իսկ թե ո՞վ է այդ երկերի հեղինակը, պարզվում է
Մաշտոցի անվան Մատենադարանի ~ 5707 ձեռագրից,
որը վերջնական լույս է սփռում մեզ հետաքրքրող հար-

ցերի վրա: Այն XIV դարից մեզ հասած հատուկ ընտրված նյութերի ժողովածու է, որտեղ քննվող խրատները հանդես են գալիս Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի երկերի մեծարժեք ընդօրինակությունների կողքին: Այստեղ առկա են նշված խրատներից Հինգը, որոնք ինչպես այլ ձեռագրերում, մի ամբողջական շարք կազմելուց բացի, նույն մուտքն ունեն, որից հասկացվում է, որ գրվել են նույն անձնավորության պատվերով: Բայց որ ամենաարժեքավորն է, այստեղ շարքի վերջին՝ «Յաղագս զղման և արտասուաց» խրատի խորագրին կցված է մի ընծայական՝ ուղղված պատվիրատուին, իսկ խրատի խորագրում նշված են թե՛ Հեղինակի և թե՛ պատվիրատուի անունները: Ահա այդ ընծայականն ու խորագիրը. «Արդ, ով տէր հոգեոր, դու խոնարհեցար յիմ նուաստութիւնս և աղաչեցեր, թէ ինձ խրատ գրեա քահանայական կարգի և խաղաղութեան, և խոնարհութեան, և վասն այս կենացս ունայնութեան, ծանո ինձ և վասն խորհրդոց մաքրութեան, և ասացեր թէ գի[ր]ք արա, որ առ իս պահեմ և հանապաշ ընթեռնում, և ես սակաւուք քո իմաստութեանդ պատճառ ետու: Այդ յօրժամ ընթեռնուս, յիշեա ի քո աղօթս:

Ի խնդիր հարցման Խաչկա եպիսկոպոսի և խրատ[ք]
Անանիա Նարեկա վարդապետի:

Խրատք ոգէշահք, զոր արարեալ է Անանիայի Նարեկա վարդապետի, Յաղագս արտասուաց»³⁵:

Ընծայականում հիշված են ձեռագրի մեջ եղած նաև խորդ չորս խրատները՝ խաղաղության, խոնարհության, կյանքի ունայնության և խորհուրդների մաքրության մա-

³⁵ Մատենադարան, ձեռ. - 5707, թերթ 328ա:

սին: Այստեղ հարկ է նշել, որ խորագրի առաջին մասը («Ի խնդիր հարցման Խաչկա եպիսկոպոսի և խրատ[ք] Անանիա Նարեկա վարդապետի») վերաբերում է ոչ միայն վերջին խրատին, այլև ընծայականում նշված նախորդ խրատներին, և դա ես մի ապացույց է, որ դրանք միասին մի ամբողջական շարք են կազմում և պատկանում են Անանիա Նարեկացու գրչին: Իսկ վերջին՝ «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի՝ ընծայականում հիշատակված չլինելը բացատրվում է նրանով, որ այն բնագրի սկզբում հանդես եկող մի առանձին ընծայական ունի, որը պակասում է սույն ձեռագրի օրինակում, և որը մի անգամ արդեն հիշատակել ենք, սակայն պատկերը պարզ դարձնելու համար հարկ կա մի անգամ ևս ներկայացնել այն: «Ով աստուածակը սիրելի եղբայր, խնդրող սիրույն աստուծոյ, զբանն՝ վասն որոյ աղաչեցեց զիս և ասացեր ցուցանել քեզ ճանապարհ յաղագս զղջման և արտասուաց. և արդ՝ ես սակաւուք պատճառս տամ յաղագս քում աստուածասիրութեանդ...»³⁶:

Վերոհիշյալ - 5707 ձեռագրում չկա ընծայականում նշված առաջին՝ քահանայական կարգի մասին խրատը: Դա արդեն քննված «Խրատ քահանայից»-ն է, որ նույնպես պատկանում է Անանիա Նարեկացու գրչին և որից քաղվածքներ կան «Խօսք և խրատ աւետարանական»-ում: Այս են վկայում նոր Ձուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրերից երկուսը (- - 169, 72), որտեղ Անանիա Նարեկացու այս խրատաշարքն սկսվում է «Խրատ քահանայից»-ով: - 169 ձեռագրի խրատաշարքը, փոքր-ինչ փոփոխություններով, նույնն է Մաշտոցի անվան Մատենադարանի - 5707-ում եղածի հետ. միայն այստեղ տեղ է գտել նաև

³⁶ Մատենադարան, ձեռ. - 2680, թերթ 209ա:

«Խրատ քահանայից»-ը։ Պահպանված է նաև ընծայականը («Արդ, ո՞վ տէր հոգեսոր, դու որ խոնարհեցար...»), այն տարբերությամբ, որ այն կցված չէ «Յաղագս արտասուաց»-ի խորագրին, այլ եզրափակում է նախորդ հինգ խրատները, և այստեղ պակասում են պատվիրատուի և հեղինակի անունները։ Նշված խրատի լրիվ վերնագիրն է. «Դարձեալ Անանիայի, Խրատք ոգեշահք մանկանց եկեղեցւոյ, յաղագս արտասուաց»։ Սակայն այս ձեռագրում նույնպես խրատաշարքը պահպանված է Անանիա Նարեկացու անվամբ, որն իմացվում է առաջին խրատի խորագրից՝ «Անանիա Հայոց վարդապետի ասացեալ Խրատ վասն քահանայից, Նարեկացի Անանիայն»³⁷:

Այս շարքի բաղադրիչներից մեկն է նաև «Նորին Բանք աղօթից» փոքրիկ խրատը, որը թեև դուրս է մնացել Մաշտոցի անվան Մատենադարանի - 5707 և Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի - 169 ձեռագրերի խրատաշարքից և նշված չէ նրանց ընծայականում, բայց հիշատակված է Մաշտոցի անվան Մատենադարանի - 2680 ձեռագրում եղած նույն ընծայականում։ «Արդ՝ ո՞վ հոգեսոր եղբայր, դու խոնարհեցար ի մեր նուաստութիւնս և աղաչեցեր, թէ ինձ խրատ գրեա կրաւնաւորական կարգի և խոնարհութեան, և խաղաղութեան, և աղօթից, և վասն այսց կենաց ունայնութեան, ծանո ինձ և վասն խորհրդոց մաքրութեան...»³⁸։ Այս ձեռագրում խախտված է խրատների ընծայականով սահմանված հաջորդականությունը, և նշված գործն այստեղ ևս (հավանաբար ծավալի փոքրության պատճառով) դուրս է մնացել շարքից, բայց մի քանի ուրիշ

³⁷ Ա. Տեր-Ավետիսյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 633-634:

³⁸ Մատենադարան, ձեռ. - 2680, թերթ 322թ:

ձեռագրերում այն հանդես է գալիս իր սահմանված տեղում, որպես շարքի բաղադրիչներից մեկը³⁹.

Այսպիսով, լրանում է Անանիա Նարեկացու վեց խրատներից բաղկացած «Գիրք»-ը՝ գրված Խաչիկ Եպիսկոպոսի պատվերով⁴⁰: Իսկ թե ո՞վ է Խաչիկ Եպիսկոպոսը, մեզ օգնում է պարզել Ուխտանես պատմիչը: Հայտնի է, որ վերջինս աշակերտել է Անանիա Նարեկացուն: Իր Պատմության առաջաբանում, ինչպես արդեն նշել ենք, նա կարևոր տեղեկություններ է տալիս իր ուսուցչի անձի և գործի վերաբերյալ: Խոսելով իրենց կապերի, թղթակցության և իր գրելիք պատմության մասին, որի պատվիրատուն Անանիա Նարեկացին է, հիշատակում է Անանիա Նարեկացու այցելությունը Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսին (972-992 թթ.), որին Անանիա Նարեկացին ընծառ է բերում իր «Հաւատար-

³⁹Տե՛ս Մատենադարանի ձեռ. - - 641 (26թ-29թ), 2335 (284աթ), 8029 (190ա), 8281 (176ա-177թ), Նիկոսիայի - 40 այժմ Անթիլիասի - (46ա), Նոր Ջուլյայի - - 72 (30թ-33ա), 63 (98աթ):

⁴⁰Ինչպես արդեն ասել ենք, այս խրատներից երկուսը («Վասն խոնարհութեան», «Յաղագս խորհրդոց զգուշութեան») հրատարակվել են Եփրեմ Ասորու անունով: Այս խրատները վերօհիշյալ ամբողջական շարքի միավորներից են: Իսկ որ այս շարքը Եփրեմ Ասորուն չի կարող պատկանել, դա երեսում է թեկուզ զղջման և ապաշխարության վերաբերյալ եկեղեցու հայրերից բերված այն վկայություններից, որոնցով ավարտվում է «Յաղագս զղջման և արտասուաց» խրատը, որն ուղղակի կապունի խրատաշարքի հետ: Այստեղ, ի թիվս Գրիգոր Աստվածաբանի, Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի (մի քանի ձեռագրերում նաև Եղագրի և Նեղոսի), վկայված է նաև Եփրեմ Ասորին: «Եւ ի վարդապետաց անչափ կա վկայութիւն վասն արտասուաց՝ և Աստուածաբան ասէ. «Մի արհամարհէր զարտօսր...», և Բարսեղ ասէ. «Ձերմին արտասուաց...», և Յոհան ասէ. «Զիք ինչ սիրելի...» և Եփրեմ ասէ. «Յորժամ իսօսի մարդ արտասուաց ընդ աստուծոյ...»: Բնականաբար, Եփրեմ Ասորին, ինչպես նաև վկայված մյուս հեղինակները, չեն կարող խրատաշարքի հեղինակը լինել:

մատ» երկը⁴¹: Խաչիկ Արշարունին Անանիա Մոկացի կաթողիկոսի քեռողջին էր և մինչև կաթողիկոս ընտրվելը եղել է Արշարունյաց գավառի եպիսկոպոսը: Անանիա Նարեկացու կենսագրական փաստերը քննելիս մենք եկանք այն եզրակացության, որ նա ազգակցական կապ ուներ Խաչիկ Արշարունու հետ և ծագումով միևնույն, հավանաբար Արշարունյաց գավառից էր, որ նրանք միասին են անցկացրել իրենց մանկության և ուսումնառության տարիները, որ Անանիա Նարեկացին Նարեկա վանք տեղափոխվելուց առաջ Պետրոս վարդապետի հետ երկար տարիներ պաշտոնավարել է Այրարատյան նահանգի Արշարունյաց և Հավոնունյաց գավառներում: Այսպիսով, ժամանակի այս նշանավոր գործիչները միմյանց հետ կապերի մեջ են եղել իրենց ողջ կյանքի ընթացքում:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Անանիա Նարեկացու խրատների գրքի ընծայականում հիշված Խաչիկ եպիսկոպոսը Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսն է: Դրա հիման վրա կարող ենք ասել, որ Անանիա Նարեկացին իր խրատագիրքը կազմել է մինչև 972 թիվը՝ Խաչիկ Արշարունու կաթողիկոս ընտրվելու տարեթիվը:

Այժմ ներկայացնենք շարքն իր ամբողջական տեսքով ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի - - 1098, 2335 և 5707 ձեռագրերի.

1) Անանիայի Հայոց վարդապետի Խրատք քահանայից - Արդ՝ քահանայական աստիճանն ինքն յայտնի է արժանաւորութեամբ, թէ որպէս պարտ է լինել սուրբ և անարատ... (- 1098, թերթ 398ա-399ը):

⁴¹ Տե՛ս Ուխտանես, Պատմութիւն, էջ 11:

2) Անանիայի վարդապետի խրատ Վասն համբերութեան և խաղաղութեան - Արդ՝ յորժամ մարդն չնորհս առնու յաստուծոյ իմաստութեան և երկիւղի... (- 5707, թերթ 326թ-327թ):

3) Այլև զայդ հարցեր, եթէ որչոփ մասունք են, որ մարդն կատարեալ խոնարհութիւն ստանա և աղաչեցեր, եթէ զայդ գրեա ի գիրս, Անանիա (Վասն խոնարհութեան) - Արդ՝ որպէս ասէ առաքեալն՝ ամենայն խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել... (նույն տեղում, թերթ 328ա-329ա):

4) Նորին Բանք աղաւթից - Զկարգեալ աղաւթին հասարակաց՝ զտուընջեան և զգիշերոյ բնաւ մի անտես առներ... (- 2335, թերթ 284ար):

5) Այլև զայդ հարցեր, թէ զիա՞րդ կարէ մարդ արհամարհել երկրաւորս որ անցաւոր է և աստուծոյ միայն ցանկալ և արքայութեան նորա, Անանիա (Վասն անցաւոր աշխարհիս) - Արդ՝ եթէ կամիս, որ յաղթես աշխարհի... (- 5707, թերթ 329ա-330ա):

6) Այլև զայդ աղաչեցեր, եթէ յաղագս խորհրդոց խրատ գրեա, որ զգուշանալ գիտեմ և պատրաստ[ու]ել, Անանիա (Յաղագս խորհրդոց զգուշութեան) - Արդ՝ նախ յառաջ քան զամենայն ինչ խորհրդոց մաքրութեան ջան տար... (նույն տեղում, թերթ 330ա-331ա):

Ի խնդիր հարցման Խաչկա եպիսկոպոսի և խրատ[ք] Անանիա Նարեկա վարդապետի:

Այնուհետև խրատագրքին այս ձեռագրում հաջորդում է «Յաղագս արտասուաց» խրատը, որի պատվիրատուի խնդրին մենք դեռ կանդրադառնանք:

Խրատ ոգէշահք, զոր արարեալ է Անանիայի Նարեկա վարդապետի՝ Յաղագս արտասուաց - Արդ՝ չնորհ արտա-

սուաց նշանակ է սիրելոյ զՔրիստոս և ցանկալ զարքայութեան նորա... (թերթ 331ա-336թ):

Վերջին խրատի պատվիրատուի և խրատաշարքի կազմում լինելու հարցը լրացուցիչ պարզաբանման կարիքունի:

*

Անանիա Նարեկացու խրատների քննությունից հետո հարկ է առաջանում բանասիրական ևս մի ճշգրտման: Եղած նյութի հիման վրա Հնարավոր է դառնում խոսել Անանիա Նարեկացուն պատկանող ևս մի խրատի մասին: Դա Մատենադարանի - - 2680 ձեռագրում եղած «Նորին Անանիայի գլխաւորեալ և համառաւտ բանք վասն յառաջ ասացելոցդ»⁴² խրատն է: Ինչպես նշել ենք, սույն ձեռագիրը այն հազվագյուտ նմուշներից է, որ առավել ամբողջականությամբ է պահպանել Անանիա Նարեկացուն պատկանող խրատաշարքը (5 խրատ): Բացի վերոհիշյալ խրատներից, նրանում տեղ են գտել Անանիա վարդապետի անունով ևս երեք գործեր: Դրանք են.

ա) 315ա-317ա Նորին Անանիայի թուղթ վասն ապաշխարութեան - Որք սուրբ Հոգոյն են ցանդացեալք...

բ) 365թ-368թ Նորին Անանիայի գլխաւորեալ և համառաւտ բանք վասն յառաջ ասացելոցդ - Հաւատ հաստատուն՝ մայր Հրաժարման և հակառակն սորա յայտ է...

գ) 507ա-509ա Բանք աստուածային պիտանի ամենայն կրօնաւորաց Անանիայի Հայոց վարդապետի ասացեալ - Երևեցոյ, Տէր զշնորհս քո ի ծառայս քո...

⁴² Մատենադարան, ձեռ. - 2680, թերթ 365թ-368թ: Թերթ 365թ-ի լուսանցքում կարդում ենք. «Խրատ Անանիայի վարդապետի»:

Այս խրատներից առաջինը պատկանում է Հովհան Մանդակունուն (տե՛ս «Յոհաննու Մանդակունոյ ճառք»։ Վենետիկ, 1860, ճառ Ա, էջ 13-20), երրորդը՝ Եփրեմ Ասորուն (տե՛ս «Գիրք աղօթից սրբոյն Եփրեմի խուրին Ասորւոյ»։ Երուսաղեմ, 1933, էջ 85-108, աղօթք Ա, 86-118)։ Եփրեմ Ասորու աղօթքի վերոհիշյալ հատվածը Անանիա վարդապետի անունով հանդիպում է նաև մի քանի այլ ձեռագրերում (տե՛ս Մատենադարան, ձեռ. - - 6103 (163ա-172ա), 9100 (219ա-226թ) և Թագիզի մասնավոր անձանց ձեռագիր - 12 (189-206)։ Իսկ երրորդը այժմ մեր ձեռքի տակ եղած միակ օրինակն է՝ Անանիա վարդապետի անունով։

Բուն խորագիրն ու այս փաստն արդեն բավարար հիմք են տալիս այս խրատը Անանիա Նարեկացուն վերագրելու համար։ Այս գործը թեև բառացի համընկնումներ ու լեզվական կաղապարներ չի տրամադրում նրա մյուս խրատների հետ համեմատելիս, բայց մի շարք մասերով նրանց հարասությունն է։ Նման հատվածները բազմաթիվ են ու սփռված են ամբողջ խրատում։ Հարկ ենք համարում մեջ բերել մի քանի բնորոշ օրինակներ, նշելով այն խրատների խորագրերը, որոնց հղվում են նրանք։

Վասն խոնարհութեան

«Որպէս որ կրեն զխունկս գաղտնի գաղտնի՝ ակամայ յայտնի է մերձաւորացն, նոյնպէս և առ որս բնակէ Հոգի աստուծոյ, յայտնի լինի ի բանից և ի խոնարհութենէ իւրմէ ամենեցուն⁴³...

Արդ պարտ է ունել զինքն ընդ մեղաւորս և զխոնարհութենէ բուռն հարկանել՝ և ապա հասանիցէ արքայութեան աստուծոյ...⁴⁴

⁴³ Նույն տեղում, թերթ 366ա:

⁴⁴ Նույն տեղում, թերթ 367թ:

Եւ եթէ կամիք բնակել ընդ միմեանս, զխոնարհութենէ
և զսիրոյ բուռն հարէք, զի խոնարհութիւն և սէր՝ անքակ
պահէ ի միմեանց»⁴⁵:

Յաղագս խորհրդոց զգուշութեան

«Զար խորհրդոց սատակիչ՝ տքնութիւն և պահք... Որպէս ձու ծածկեալ յալզր ձագս հանցէ, նոյնպէս խորհուրդք ծածկեալք և անյայտք՝ կատարեն գործովք... Որպէս ամպ ծածկէ զպայծառութիւն արեգական, նոյնպէս և չար խորհրդք խաւարին զմիտս...⁴⁶ Պնդեա յաւրըստօրէ զվարս ուղղութեան, զգուշացիր յամենայն խորհրդոց և ի բանից, և սրբեա զքեզ յամենայն մեղաց և ի ցանկութեանց...»⁴⁷:

Խօսք և խրատ աւետարանական, առաքելական և մարգարէական, որ տանին զմեզ ի կեանս յաւիտենական, և ոչ տան խոտորել յաջ կամ յահեկ

«Արդ՝ դիցուք հիմն ի վերայ վիմի անշարժ՝ ուղղեսցուք զկեանս մեր ըստ կամացն աստուծոյ և մի յաջ խոտորեսցուք կամ յահեակ, այլ ընդ միջնաշաւիղս երթիցուք և ի նմին հաւատատուն կացցուք...»⁴⁸:

Խրատում արտահայտված են նաև «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի գաղափարները։ Նրանում ևս մեծ դեր է հատկացվում արտասկելու չնորհին մարդու փրկության գործում։ Այն դարձյալ կապված է աղոթքի հետ, համեմատվում է դարձյալ մկրտության ավագանի հետ, որ մաքրում է մեղքերից և արժանացնում երկնային արքայության։

⁴⁵ Նույն տեղում, թերթ 368թ։

⁴⁶ Նույն տեղում, թերթ 365թ։

⁴⁷ Նույն տեղում, թերթ 367թ։

⁴⁸ Նույն տեղում, թերթ 368թ։

Յաղագս զդջման և արտասուաց

«Որպէս ջուր ջնջէ զգրեալ, նոյնպէս և զարտասուա՝ զմեղս: Որպէս ոմանք գրեալք՝ որք ջրով ոչ եղծին՝ ջնջեսցեն զնա այլով հնարիւք, նոյնպէս և անձինք, որք ոչ ունին արտասուաք, ջնջեսցեն զմեղս հառաչանաւք և սգով և հոգւովք...⁴⁹: Այլ պարտ է յամենայն ճգնել պահօք պնդութեամբ և զարդարիլ առաքինութեամբ, տքնութեամբ և հսկմամբ, և ջերմեռանդ արտասուաւք և աղաւթիւք անդադար...⁵⁰ Աչք քո՝ յանապազ լցցի արտասուաւք: Եւ եթէ մեղաւոր իցէ և դառնայցէ և ապաշխարիցէ ջերմեռանդ արտասուաք և ազգի-ազգի ճգնութեամբ՝ թողու նմա աստուած, թէ բիւր յանցանաց տէր իցէ, և ոչ եթէ զայս միայն, այլև զերկնից արքայութիւն շնորհէ նմա...⁵¹ Եկայք եղբարք... հայցել արտասուաւք հանապազ, քանզի արտասուաք հաշտեցուցանէ զաստուած, ընդ մարդն: Արտասուեղ միայնակեաց՝ քան զարեգակն լուսաւոր է, և արտասուաքն երկրորդ աւազան է լուսափայլ՝ մաքրէ ի մեղաց, և արտասուաքն ուրախ դնէ զաստուած և ի գութ շարժէ»⁵²:

Ակնառու կապ կա այս և «Վասն անցաւոր աշխարհիս» խրատի միջև: Խրատի մի շարք հատվածներ համակված են նույնատիպ խոհերով, նրանց հիմքում ընկած է նույն պատկերային մտածողությունը:

Վասն անցաւոր աշխարհիս

«Ոչ կարէ ելանել հուր ի ձիւնէ, նոյնպէս և որ խնդրէ զպատիւ աշխարհիս այսորիկ, ոչ հասանէ պատույ երկնաւորին:

⁴⁹ Նույն տեղում, թերթ 366ա:

⁵⁰ Նույն տեղում, թերթ 367ա:

⁵¹ Նույն տեղում, թերթ 367բ:

⁵² Նույն տեղում, թերթ 368ա:

Մի յագիր կերակրովք և ըմպելեաւք անուշիւք։ Մի զգեստիւք պաճուծիր իբրև զթերահաւատ, որ ոչ հաւատան յարութեան, այլ ակն կալ յաւիտենական կերակրին և անապական զգեստին, և արհամարհեայ զերկրաւորս, զի թէ զայս ոչ արհամարհես, զյաւիտենականն ոչ ժառանգես⁵³։

... Եթէ ոք ոչ համարեսցի զայս կեանս իբրև ապաշխարանոց և իբրև ասպնջակնոց... ոչ կարէ առնուլ զիսստացեալ աստուծոյ։

Արդ, եղբարք, այնչափ բարիս խորհիմք, քանզի եթէ ամս հազարս վայելեմք յաշխարհի աստ յուրախութեան և փափկութեան, սակայն մեռանելոց մեք, քանզի նման է ժամանակս այս իբրև զաւթեանոց մի անցաւորի, որ աւթեալ զգիշերն, և վաղիւն երթա զճանապարհ իւր։ Նոյնպէս և կեանքս այս՝ իբրև զօթեանոց է առ յաւիտենականաւն։ Արդ, աղաչեմ, փութացարուք մտանել յաւիտենական ուրախութիւնսն, ուրասցուք զառժամանակեայ անցաւորս զի եթէ զայս ոչ ուրանամք՝ զայն ոչ ժառանգեմք»⁵⁴։

Նշված փաստերն ու համեմատությունները ապացուցում են, որ քննարկվող խրատը ևս պատկանում է Անանիա Նարեկացու գրչին։

Այսպիսով, Անանիա Նարեկացու խրատները ավելանում են ևս մեկով և նրանց թիվը հասնում է իննի։ Հեղինակի այս գործը, «Խօսք և խրատ աւետարանական...»-ի նման, աչքի է ընկնում իր ընդգրկուն ու խտացած շարադրանքով։ Դժվար է ասել, այն մեզ է հասել սկզբնական տեսքով, թե՝ հեղինակի կողմից կամ հետագայում կատարված բանաքաղություն է նրա այլ գործերից։ Երկրորդ

⁵³ Նույն տեղում, թերթ 368թ։

⁵⁴ Նույն տեղում, թերթ 366ա։

կարծիքի համար հիմք կարող է լինել սեղմ և խիստ շարադրանքը, որ երևան է հանում նաև համառոտման հետքեր, ինչպես նաև խորագրում եղած «համառոտ բանք» արտահայտությունը։ Սակայն նշված առանձնահատկությունները կարող են նաև այս գործի ոճական յուրահատկությունը լինել։ Ամեն դեպքում այն հուշում է նմանատիպ այլ խրատների գոյությունը։ Հեղինակի նախորդ խրատների հարասությունները նրա մի մասն են միայն կազմում, պատերային համակարգը համարյա ամբողջությամբ նոր է։

Եղած փաստերի հիման վրա մենք իրավամբ կարող ենք ասել, որ ներկայացվող ինը խրատը հեղինակի խրատական արձակի մի մասն է միայն։ Նման ենթադրության տեղիք են տալիս նաև նշված վերջին երկու խրատները, որոնք ընդգրկուն բովանդակություն ու խիտ շարադրանք ունեն և ինքնուրույն շերտերից զատ ամփոփ ձեռվ իրենց մեջ ներառել են ամբողջ խրատաշարի նյութը։

*

Անանիա Նարեկացու խրատների մեջ, ինչպես նշել ենք, առանձնանում է «Յաղագս զղման և արտասուաց» երկը, որն, ինչպես պարզվում է նախադրություն-ընծայականից և բովանդակության մեջ տեղ գտած հեղինակային դիմումներից, ուղղված է իր աշակերտին, որի վարդապետն է նա։

Ժամանակին, ելնելով ձեռագրական տվյալներից, մենք կարծիք ենք հայտնել, որ այս գործը ևս մտնում է Խաչիկ Արշարունի եպիսկոպոսի (Հետագայում Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոս (972-992թթ.) պատվերով գրված

խրատագրքի մեջ⁵⁵, սակայն ընծայականների պատվանունների տարբերությունը, ինչպես նաև «Յաղագս զղջման և արտասուաց» խրատում շեշտվող վարդապետ-աշակերտ հարաբերությունները, որոնց մենք կանդրադառնանք, ստիպում են տարանջատել այս խրատն ընդհանուր խրատագրքից և վերանայել նրա պատվիրատուի հարցը:

Խրատագիրքն ամբողջությամբ պահպանած կարեորագույն ձեռագրերից մեկում, ուր տեղ են գտել նաև Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի երկերի ընդօրինակությունները (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 5707, XIV դ.) խրատագիրքն ավարտվում է պատվիրատուին ուղղված ընծայականով, որին հաջորդում է «Յաղագս զղջման և արտասուաց» խրատը:

«Արդ, ով տէր հոգեոր, դու խոնարհեցար յիմ նուաստութիւնս և աղաչեցեր, թե ինձ խրատ գրեա քահանայական կարգի և խաղաղութեան, և խոնարհութեան, և վասն այս կենացս ունայնութեան, ծանո ինձ և վասն խորհրդոց մաքրութեան, և ասացեր թե գի[ր]ք արա, որ առ իս պահեմ և հանապազ ընթեռնում, և ես սակաւուք քո իմաստութեանդ պատճառ ետու: Եւ յորժամ ընթեռնուս, յիշեա ի քո աղօթս:

Ի խնդիր հարցման Խաչկա եպիսկոպոսի և խրատ[ք] Անանիա Նարեկա վարդապետի:

Խրատք ոգէշահք, զոր արարեալ է Անանիայի Նարեկա վարդապետի, Յաղագս արտասուաց»⁵⁶:

⁵⁵ Այս մասին տե՛ս «Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը», էջ 210-217:

⁵⁶ Մատենադարան, ձեռ. թիվ 5707, թերթ 331ա:

Հեղինակն իր ամփոփիչը ընծայականում թվարկում է խրատագրքի գործերը, որոնց մեջ «Յաղագս զղջման և արտասուաց» խրատը չկա: Զեռագրում այն անմիջապես հաջորդում է խրատագրքին, ենթագրել տալով, որ հատուկ նպատակով է առանձնացվել կամ հետագայում է կցվել նրան: Ամեն դեպքում, այս ձեռագրի տվյալներով, նշված խրատի պատվիրատուն ևս Խաչիկ Արշարունի եպիսկոպոսն է:

Սակայն այս ձեռագրում դուրս է մնացել «Յաղագս զղջման և արտասուաց» խրատի առանձին ընծայականը, որն հանդիպում է այլ ձեռագրերում. Ահա այն. «Ով աստուածասէր սիրելի եղբայր, խնդրող սիրոյն Աստծոյ, զբանն՝ վասն որոյ աղաչեցեր զիս և ասացեր ցուցանել քեզ ճանապարհ յաղագս զղջման և արտասուաց, և արդ՝ ես սակաւոք պատճառս տամ յաղագս քում աստուածասիրութեանդ»⁵⁷:

Այստեղ ակնհայտ է պատվանունների տարբերությունը: Ընծայականների ոճական նույնությունն է, հավանաբար, պատճառ հանդիսացել այն խրատագրքին կցելու համար:

Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թիվ 169 ձեռագիրը, ուր խրատագիրքը ներկայացված է ամբողջությամբ: Պահպանված է նաև ընծայականը («Արդ, ո՛վ տէր հոգեոր, դու որ խոնարհեցար...»), որն ամփոփում է խրատագիրքը: Նրանում պակասում են հեղինակի և պատվիրատուի անունները: Անանիա Նարեկացու անունը հիշատակվում է խրա-

⁵⁷ Մատենադարան, ձեռ. թիվ 2680, թերթ 309ա:

տագրքի առաջին խրատում՝ «Անանիա Հայոց վարդապետի ասացեալ Խրատ վասն քահանայից. Նարեկացի Անանիան»⁵⁸:

Այս ձեռագրում ևս նշված խրատագրքին հաջորդում է «Յաղագս զղման և արտասուաց» խրատը, սակայն այն կցված չէ Հիշատակարանին, ինչպես Մատենադարանի թիվ 5707 ձեռագրում, այլ հանդես է գալիս նրանից զատ: Հետագրքիրն այն է, որ գրիչը նկատել և շեշտել է այս երկի խրատագրքից դուրս լինելու հանգամանքը, որ արտահայտված է խորագրում. «Դարձեալ Անանիայի. Խրատք ոգեշահք մանկանց եկեղեցւոյ. Յաղագս արտասուաց»: Գրիչը նկատել է նաև հեղինակի և պատվիրատուների տարբերությունը՝ մի գեպքում պատվիրատուն «Հոգեորտերն» է, որը «խոնարհվել է մինչև իր նվաստությունը», մյուս գեպքում «աստվածաներ սիրելի եղբայրը», և նրանց միջև, ինչպես երեսում է խրատի մի քանի հատվածներից, առկա է վարդապետ-աշակերտ աստիճանակարգությունը: Դա է հիմք հանդիսացել գրչին նշելու, որ խրատն ուղղված է «եկեղեցու մանուկներին»:

Այս խրատը պարունակող հնագույն ձեռագրերից մեկում (Մատենադարան, ձեռ. թիվ 2557, 1333 թ. թերթ 159թ-174թ), ուր որպես հեղինակ հիշատակվում է Անանիա Նարեկացին, այն ուղղված է միանձնացյալներին. «Խրատք արտասուաց առ միանձունս երանելոյ և հոգեշնորհ վարդապետին Անանիայի ասացեալ յաղօթից Նարեկացոյ», սակայն կարծես կապ է ստեղծվում նաև Գրիգոր Նարեկացու աղոթքների հետ՝ «յաղօթից Նարեկացոյ», քանի որ խորա-

⁵⁸ Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 633-634:

գրի այս հատվածը տրամաբանորեն տարանջատվում է նախորդից: Խրատը միանձանց է ուղղված նաև Մատենադարանի թիվ 4973 (226ա-236թ), 4909 (461թ-469ա), Նոր Զուղայի թիվ 219 (256ա-263թ), 220 (247ա-254թ) ձեռագրերում: Այս խրատի բովանդակությունից նաև պարզվում է, որ այն ուղղված է ոչ թե բարձրաստիճան հոգեորականի, այլ ստեղծագործող անհատի, որ նոր է ուսանում «զղջման և արտասուաց» արվեստի գաղտնիքները, որոնք, ինչպես պարզվում է, հոգեոր բանաստեղծության հմտություններն ու նրբություններն են.

«Արդ, ով եղբայր պատուական, ըստ խնդրոյ քո արժան էր ինձ տալ պատասխանի, վասնզի վերագոյն խնդրեցեր զարտասուս, վասն որոյ ոչ է հարկ գրել զքեզ, եթե յաղօթս կաց հանապազ և սաղմոսեա յաճախ, զի այդ հասարակաց է, և գու հանապազ առնես, այլ ես զընտրութեան արուեստն գրեմ քեզ, զոր ի բազմաց ծածկեալ է...»⁵⁹:

«Այլ արդ, զղջման շնորհ արուեստ է և բազում հնարիւք և ջանիս պարտ է ստանալ զնա»⁶⁰:

«Եւ յորժամ զինքն քեզ գործ առնես և փոյթ յանձին կալեալ ջանս դնես, յայնժամ շնորհքն ուսուցանէ քեզ զարուեստն պաղատանացն թե՝ որպէս պարտ առնել:

Զոր աւրինակ ուսանի ոք արուեստ յումեքէ և արուեստն ժամանակ ինչ ի գործ արկանէ, յայնժամ յարուեստէն առաւել իմանա [զհանդամանս], քան զոր ի վարդապետէն ուսաւ:

⁵⁹ Մատենադարան, ձեռ. թիվ 4215, թերթ 379ա:

⁶⁰ Մատենադարան, ձեռ. թիվ 2680, թերթ 310թ:

Այսպէս և դու՝ զարտասուաւք պաղատանս քեզ գործ արա, և նա ինքն ուսուցանէ զքեզ, և ի շնորհէ՛ն վարդապետիս...»⁶¹:

Իր այս երկի մեջ, որ ընդգծվում է իր նորարարական չնչով և ուր զուգորդված են տեսությունն ու ստեղծագործական փորձը, Անանիա Նարեկացին տալիս է նաև բանաստեղծության նմուշներ, որոնք նախօրինակի նշանակություն պիտի ունենան սկսնակ ստեղծագործողի համար.

«Արդ, յորժամ կամիս արտասուել, և սիրտդ քարացեալ լինի, դու զայդ(ս) արա պատճառ զղջման»⁶²:

«Արդ, դու յորժամ... բռնադատես զբնութիւնդ, և ոչ գայ զղջումն՝ այ[ս]պիսի բանիւք պատճառս տուր աղաւթից, յայնժամ զղջանա սիրտդ և արտասուես:

Եվ բազում անգամ զայ[ս]պիսի պատճառէ գայ զղջումն, որի գրի ի ոչ է պարտ արկանել, բայց ջան մեծ կալ և ի շնորհեն վարդապետիս»⁶³:

Այսպես, ահա, վարդապետի աղոթքները, զուգորդվելով անձնական փորձառության հետ, կարող են ոչ միայն օրինակ ծառայել աշակերտի համար, այլև ունենալ հոգեորդիքառական նշանակություն՝ հասցնել նրան հուզագայական վիճակի՝ էքստազի, որ զղջման և արտասվաց արվեստի բուն նպատակն է: Վարդապետի աղոթքն, օրինակի դեր է կատարում ներանձնական, ներքին ծեսի մեջ խորասույց ստեղծագործ անհատի համար: Բնականաբար հեղինակի խրատն, ուղղված լինելով կոնկրետ անձի, նաև ընդհանրական ուղղվածություն ունի:

⁶¹ Նույն տեղում, թերթ 309բ:

⁶² Մատենադարան, ձեռ. թիվ 5707, թերթ 334ա:

⁶³ Մատենադարան, ձեռ. թիվ 10182, թերթ 230 ար:

Նշված մի շարք դրույթներով այն ուղղակիորեն աղերսվում է Գրիգոր Նարեկացու «Մատեանի» բուն հղացքի հետ։ Այդ կապն զգալի է արդեն «Մատեանի» խորագրում, որում ուղղակի արտահայտված են Անանիայի վերոհիշյալ կանխադրույթները. «...զղջականաց կանոնաց կենաց, առիթք արտասուաց, պատճառք աղաւթից ի խնդրոյ հայցման հարց միանձանց եւ բազմաց անապատականաց...»։ Համեմատենք Անանիայի խրատի խորագրի հետ՝ «Խրատք արտասուաց առ միանձունս երանելոյ և հոգեշնորհ վարդապետին Անանիայի ասացեալ՝ յաղօթից նարեկացոյ»։

Թեև խորագրերը երկու գեպքում էլ հեղինակային չեն, բայց ակնհայտ է նրանց բովանդակային հարազատությունը, որ նկատել են հետագայի գրիչները։

Ահա ուղղակի համընկնումների նմուշներ բուն «Մատեանի» հետ։

Եղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն...

Հնկալցի այսու միջնորդիւ ձեռն քո զնա...

Բան գ, գ

Զաւրացոյ զբանս զղջման՝ առաքեալ ի մեզ Հոգի...
իջ, Ա

Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց
վերընծայելոց

Զդրութիւն թուոցս յարմարեցի՝

Կական եւ հեծութիւն, հառաչանք

Կողկողատինք,

Դառնութեան լալումն եւ արտասուաց երգ, ~

Դարձեալ սկսայց զճառ պաղատանացս
Խոստովանաւրէն, զղականաբար...

ԻԷ, Ա

Ակներև է, որ այս խրատի պատվիրատուն Խաչիկ Արշարունի եպիսկոպոսը չէ, որ այն ուղղված է երիտասարդ կամ պատանի տարիքի ստեղծագործական ձիրք ունեցող մի անհատի, որն աշակերտել է Անանիա վարդապետին։ Ո՞վ է այդ անձը, այդ խորհրդավոր պատվիրատուն։ Հարցի վրա լույս է սփռում մի կարևոր հանգամանք. մի շարք դեպքերում, երբ այս երկը հանդես է գալիս խրատաշարքից զատ, իբրև խրատի պատվիրատու հանդես է գալիս Գրիգոր անունով մի միայնացյալ կրօնավոր։

Դրանք XVI-XVIII դդ. ձեռագրեր են (տե՛ս Մատենադարանի ձեռ. թիվ 785 (422թ-429թ), 792 (467ա-476ա), 4215 (376թ-383ա), 5952 (83ա-98թ), Երուսաղեմի Հայկական Մատենադարանի թիվ 154դ (էջ Սիե), 461 (էջ 932), 2408 (էջ 376), Անկյուրիայի Կարմիր վանքի թիվ 225 (էջ 72), Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի թիվ 371 (17ա-33թ), ուր խրատը սխալմամբ վերագրված է Անանիա Շիրակացուն և որպես պատվիրատու նշված է Գրիգոր Միայնակյացը («Անանիայի Շիրակացոյ ասացեալ Յաղագս զղջման և արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի»)։ Եթե Շիրակացու անունն ակնհայտ սխալագրության արդյունք է, ապա Գրիգոր Միայնակյացի անունը պատահաբար չէր կարող հայտնվել խրատի խորագրում։ Դժվար է ենթադրել, որ այն միջնադարյան որևէ գրչի կուահման արդյունք է, թեև այդպիսի թեական կարծիք հայտնել ենք ժամանակին (տե՛ս «Անանիա Նարեկացի. Կյանքը և մատենագրությունը», էջ 216-217)։ Բանն այն է, որ այս ձեռագրերում նշված

խրատը հանդես է գալիս խրատաշարքից զատ և միևնույն նյութերի հերթագայությամբ։ Այդ հանգամանքը հուշում է, որ նրանք սերում են նույն աղբյուրից։ Իսկ այս սկզբնաղբյուրում, ինչպես ցույց են տալիս ձեռագրերից մի քանիսը (Երուսաղեմի թիվ 2408 (Էջ 218), Վիեննայի թիվ 371 (1ա), Անկյուրիայի թիվ 225 (Էջ 41-71), այս խրատին նախորդում է Գրիգորի անունով մի ուրիշ խրատ («Կարգ և կանոն աղօթից, զոր խնդրեալ է հոգեկիր արանց յումեմնէ միայնացելոյ՝ արթուն և զուարթուն հոգոյ Գրիգորոյ»)։ Այս խրատը պարունակող 18 ձեռագրերից (XIV-XVIII դդ.) 14-ում այն վերագրված է Գրիգոր Նարեկացուն, մնացած 5-ից 4-ում այն վերագրված է ոմն Գրիգոր միայնակյացի կամ միայնացյալի և միայն մեկում է անանուն⁶⁴։

Այս գործը Գրիգոր Նարեկացուն է վերագրել նաև Ղազար Զահկեցին⁶⁵։

Մեր վերջին շրջանի աշխատություններից մեկում անդրադարձել ենք այս խրատի հեղինակային պատկանելության հարցին, բանասիրական-բնագրային քննությամբ փորձելով ապացուցել, որ այն պատկանում է Գրիգոր Նարեկացու գրչին⁶⁶։ Այս հարցին մենք կանդրադառնանք առանձին քննությամբ։

Հարցը կարևորվում է նաև նրանով, որ, ինչպես նշել ենք, այս խրատը մի շարք ձեռագրերում հանդիպում է

⁶⁴ Այս ձեռագրերի ցանկը տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և Հայ միջնադարը, Էջ 129-130։

⁶⁵ «Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ճահկեցւոյե, Կ. Պոլիս, 1735, Էջ 628։

⁶⁶ Այս մասին տե՛ս «Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը», Էջ 396-401։

«Յաղագս զղջման և արտասուաց» խրատին կից, որին իբրև պատվիրատու հիշատակվում է Գրիգոր Միայնակյացը: Նույն աղբյուրից սերող այս ուշագրավ փաստը վկայում է, որ սկզբնաղբյուրում նույնացվել են երկու Գրիգորները և այնտեղ Շիրակունի անվան տեղ, բնականաբար, եղել է Նարեկացի՝ «Անանիայի Նարեկացւոյ (կամ առավել հավանական է՝ Անանիա վարդապետի) ասացեալ Յաղագս զղջման և արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի»:

Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2680 ձեռագրում, որ խրատագիրքը ամբողջությամբ պահպանած լավագույն ձեռագրերից է, այս խրատը ոչ թե հաջորդում, այլ նախորդում է խրատագրքին և խորագրված է՝ «Անանիայի հոգիանորոգ վարդապետի ասացեալ Խրատ ոգեշահ Յաղագս զղջման արտասուաց ի խնդրոյ միայնաւորի ուրումն՝ առն պատուականի» (տե՛ս անդ, թերթ 309ա-315թ): Այդպես է նաև Մատենադարանի թիվ 640 ձեռագրում (XIII դար), ուր այս խրատը նախորդում է ոչ թե խրատագրքին, այլ Անանիա Նարեկացու մի այլ առավել ծավալուն խրատի («Խրատք ոգեշահք վասն զղջման և արտասուաց ասացեալ Անանիայի վարդապետի ի խնդրոյ միայնաւորի ումեմն» (5ա-19թ), «Անանիայի Խաւոք և խրատք աւետարանական և մարգարէական, և առաքելական, և որ ոչ տան խոտորել ոչ յաջ, ոչ յահեակ» (19թ-46ա):

Խրատը «ոմն միայնավորի» է ուղղված նաև Մատենադարանի թիվ 8033 (105թ), 10182 (213ա-220թ) ձեռագրերում: Վերջինում այն հաջորդում է Գրիգոր Նարեկացու «Մատեանին»: Այս երկի ու Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ներքին հարագատությունն ու աղերսները

պատճառ են դարձել, որ միջնադարյան գրիչներն այն վերագրեն նաև Գրիգոր Նարեկացուն⁶⁷:

Բոլոր այս փաստերը վկայում են, որ այս երկու գործերում հիշատակվող Գրիգոր Միայնակյացը նույն ինքը՝ Գրիգոր Նարեկացին է: Սա ևս մի կարեռ վկայություն է Անանիա և Գրիգոր Նարեկացիների կենդանի ստեղծագործական կապերի մասին, որոնք տարածվում են ոչ միայն տեսական ազգեցությունների, այլև բուն ստեղծագործական ընթացքի վրա՝ տեսանելի դարձնելով այդ ազգեցությունները Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ամենավաղ շրջանից մինչև նրա «Մատեան ողբերգութեան» երկը, որի ստեղծման նախագաղափարն արդեն իսկ տեսնում ենք Անանիա Նարեկացու խրատներում և բանաստեղծություններում:

*

«Յաղագս զղջման և արտասուաց» գործը՝ իբրև բանաստեղծական արվեստի նորարարական տեսության և դրա կիրառման արտահայտություն, ընկած է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության նախահիմքերում:

Այն կարեռ դեր է կատարել Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ստեղծման գործում: «Մատեանը» ստեղծվել է Անանիա Նարեկացու խրատներով ու հորդորներով, և, ըստ մի պահպանված տեղեկության, ընծայվել է վերջինիս:

⁶⁷ Այդպես է Մատենադարանի թիվ 2546 (ԺԴ դ., 241մ-248թ), 3940 (ԺԵ դ., 214մ-219թ), 6907 (ԺԵ դ., 109մ-124թ), 7292 (ԺԷ դ. 251մ-254մ), 7937 (ԺԹ դ., 42աթ) ձեռագրերում:

Այս հարցին մենք անդրադարձել ենք առանձին քննությամբ⁶⁸. Համառոտ շարադրենք մեր տեսակետները հարցիվերաբերյալ:

Գրիգոր Նարեկացու «Մատեանում» կա մի մաղթանք՝ հիշատակարան, ուր նա խոսում է իր վարդապետի մասին՝ խնդրելով Աստծուն իր «Մատեանի» մաղթանքներով հիշել և ողորմել նրան և իրեն.

Արդ, բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի

Ողորմեա՛ վասն խաչի եւ չարչարանաց,

Եւ մահու Որդւոյ քոյ, Հայրդ գթութեան,

Սկիզբն առաքողի ողբերգութեան ձայնի այսմ

արտաւրածին նուագի,

Որ գայս դեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց,

Եղիցի՛ բժշկեալ յանուն քո, հզաւր:

Որ յետս ելից խոստովանութեան մեզ նկատեցոյց

Այսու պայմանաւ պատշաճականաւ,

Լիցի՛ անարատ յիւրոցն պարտեաց:

Որ գհպարտութեանն թեւս հարթել մեզ

վարդապետեաց

Ի սոյն կանոնի կենաց պատգամի,

Եղիցի՛ զերծեալ ի չար կապանաց մահու արկածից

Սկզբնականաց, վերջնոց եւ միջնոց,

Եղրորդութեամբդ բարեգործեալ,

Ի նորոգութիւն լուսաւորութեան,

Ընդ դորում եւ մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ

ընդ սմին:

(Բան Իլ, Զ)

⁶⁸ «Նարեկյան դպրոցը», Էջ 94-105:

Գրիգոր Նարեկացին իր վարդապետի հետ է կապում «Մատեանի» ստեղծման գաղափարը, նրա ձեռնարկումն ու սկզբնավորումը. վարդապետն է նրան ուսուցանել խոստովանության այն արվեստը, որ փրկության դեղ է դարձել իր համար: Համեմատությունը «Ապարանից Սուրբ Խաչի պատմությունից» և երկու ներբողներից բաղկացած եռագրության, ինչպես նաև Կճավա վանքի վանահորն ուղղված թղթի այն հատվածների հետ, ուր Գրիգոր Նարեկացին հիշատակում է իր ուսուցչին, կասկած չի թողնում, որ խոսքն այստեղ Հայոց մեծ վարդապետի՝ Անանիա Նարեկացու մասին է, որ Գրիգոր Նարեկացու ուսուցիչն էր, և մի ողջ խրատագիրք է գրել միստիկ կենցաղավարության և հոգեոր արվեստների մասին: Իսկ Գրիգոր Նարեկացու պատվերով գրված «Յաղագս զղջման և արտասուաց» երկը, որն, ինչպես նշել ենք, երևան է հանում բանաստեղծական արվեստի մի ամբողջական տեսություն և դրա հիման վրա ստեղծված բանաստեղծության նմուշներ, որ նախօրինակը չունեին հայ գրականության մեջ՝ կապվելով այս հիշատակարանի հետ, պարզորոշություն է մտցնում այս հարցի մեջ: Այդ երկերը գրվել են մինչև 972 թվականը («Յաղագս զղջման և արտասուացը» գուցե ավելի ուշ) և նախաձեռք ու նմուշներ են հանդիսացել Գրիգոր Նարեկացու համար իր «Մատեանը» ստեղծելիս. նրա տեսական հայացքներն ուղղակի կիրառություն են գտել «Մատեանում»⁶⁹: Ամենայն հավանականության Գրիգոր Նարեկացու հիշատակարանում հենց այս հանգամանքն է շեշտադրվում՝ Անա-

⁶⁹ Այս մասին տե՛ս «Անանիա Նարեկացի. կյանքն ու մատենագրությունը», էջ 182-292, «Նարեկան գպրոցը», էջ 113-156, 198-227, «Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը», էջ 269-318:

նիա Նարեկացու «Յաղագս զղման և արտասուաց» երկում կա «Մատեանի» ստեղծման նախագաղափարը:

Հստ Գ. Ավետիքյանի մեկնաբանության՝ «Մատեանի» վերոհիշյալ հատվածում Գրիգոր Նարեկացին ակնարկել է կամ իր ծնողներին, կամ վարդապետին, կամ այն անձանց, որոնց հորդորներով գրել է իր երկը⁷⁰: Միջնադարյան մեկնիչի կռահումն ուղղակի և անվրեպ է. հեղինակն այստեղ նկատի ունի իր ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն.

«Որպէս իջ ճառսն վասն իւր ասաց աղօթել, նոյնպէս եւ աստ, որ սկիզբն եղեւ առաքել զողբերգութիւն առաջի Աստուծոյ, եւ վասն Անանիայի վարդապետի իւրոյ ասէ. լինի թէ նորա խրատովն արար զբանս»⁷¹:

«Մատեան ողբերգութեան» երկի նախագաղափարը, իրոք, կա Անանիա Նարեկացու խրատներում և բանաստեղծություններում, ուր նա խոսում է ներանձնական աղոթքների ու բանաստեղծական մենախոսությունների կառուցման արվեստի, նրանցում անձնական սկզբի ու փորձի բացարձակացման, վարդապետից ստացած գիտելիքների և անձնական փորձառության նշանակության, ստեղծագործական ազատության սկզբուքների մասին⁷²:

⁷⁰Տե՛ս Գ. Ավետիքյան, Նարեկ աղօթից համառօտ եւ զգուշաւոր լուծմամբ, Վենետիկ, 1824, էջ 139, ծնթ. 19:

⁷¹Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 5650, էջ 366ա:

⁷²Հատկանշական է, որ Գրիգոր Նարեկացու նշված եռագրության և մյուս ներբողների մեջ նույնպես նկատելի է ժանրերի փոխներթափանցման այն երևույթը, որն առկա է Անանիա Նարեկացու խրատներում, հատկապես «Յաղագս զղման եւ արտասուաց» խարտում: Նրանցում նույնպես արձակ բնագիրն ընդմիջվում է բանաստեղծական՝ հիմնականում հանգավոր ընդարձակ հոսվածներով, որոնք, ըստ էության, Գրիգոր Նարեկացու վաղ շրջանի հանգավոր բանաստեղության նմուշներից են:

*

Կան նաև այս տեսակետը հաստատող այլ փաստեր։ XVIII դարի հայ նշանավոր վարդապետներից մեկը՝ Հակոբ Պատկանցին (Պատկանցը Վասպուրական աշխարհի գյուղերից մեկն էր), որի անունը կապվում է 1774 թվականին Նարեկի սրբագրության և հրատարակության հետ, ըստ իր հայտնած տեղեկությունների՝ Մոկաց գավառում հայտնաբերել և ընդօրինակել է Գրիգոր Նարեկացու ինքնագիր «Մատեանը» և 1769 թվականին առաքել «Մատեանի» նոր հրատարակության նախանձեռնողին։ Ահա թե ինչ է նա գրում իր թղթում իր այցելած վանքի ու Գրիգոր Նարեկացու այդ ինքնագիր Նարեկի մասին։ «Որ եւ ի խորս խուզեալ ի հարուստ պատմութեանց յաւանդութենէ նախնեաց, ի յերկարկէն հաւուց, ի զարմանահրաշ ներգործութեանց՝ հաւատ արմատացեալ ներ մտի բազմաց գոլով ի վանս քաւութեանց, որ յետոյ հրաժարման տեղի վարկանի տեառն Անանիայի մեծ վարժապետի մաքուր սովեստի՝ արեան ընտանի սրբոյն Գրիգորի պուետաբանի եւ ճոխ յօդողի. եւ զի նոյն մատենի ձեռնարկման, ըստ Տեառն ազգեցման, եւ փաստ անուանի տէր Անանիան. յարատենչ հայցուածով՝ խանդակաթ սիրով՝ լցեալ անթերի, որ եւ յաւարտին բանի նմին ընծայեալ՝ յիւրոցն ոգեցմանց՝ յայտնի իմանի»⁷³։ Պարզվում է, որ նշված վանքը հայտնի Կճավա վանքն է, որ համարվում է Անանիա Նարեկացու քավության վանքը։ Հ. Ռոկյանն այդ մասին նշում է. «Կճաւայ Ա. Աստուածածնի կամ Քաւայ Նարեկացիի վանքը»⁷⁴, որը,

⁷³ Մատենագարան, ձեռ. N5037, էջ 160բ-161բ:

⁷⁴ Հ. Ռոկյան, Վասպուրական-Վանի վանքերը, մաս 9, Վիեննա, 1947, էջ 870։

ըստ Խորենացու, Հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը։ Վերոհիշյալ փաստերը երևան են հանում Անանիա և Գրիգոր Նարեկացիների կյանքի և ստեղծագործության մի քանի կարեորագույն դրվագներ։ Փաստերը վկայում են, որ Անանիա Նարեկացին կենդանի էր 990-ական թվականներին, իսկ Գրիգոր Նարեկացու մեծ կտավի առաջին գործը՝ «Երգ երգոցի» մեկնությունը, գրվել է 977 թվականին՝ արքունական պատվերով։ Դա ենթադրել է տալիս, որ այդ ժամանակ արդեն նա հայտնի էր հոգեսոր և բարձրաշխարհիկ շրջանակներում՝ իր գրական ձիրքով և գործունեությամբ։ Երկար տարիներ նրանք ապրել և ստեղծագործել են միասին, և Անանիան մեծ դեր է կատարել Գրիգորի բանաստեղծական աշխարհի ձևավորման, հմտությունների ձեռքբերման գործում՝ իր խրատներով և հորդորներով սատարելով նրան բանաստեղծական քերթվածները ստեղծելիս։

Դժվար է ասել՝ Գրիգոր Նարեկացու վերոհիշյալ մաղթանք-հիշատակարա՞նը, թե՞ այլ հիշատակարան է վկայաբերում Հակոբ վարդապետն իր թղթում։ Համենայն դեպս, նշված փաստերը փոխում են մեր պատկերացումները Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ստեղծման մասին։ Մեր կարծիքով, 1001-1003 թվականներին նա ամբողջացրել է «Մատեանը» մի միասնական հորինվածքի մեջ՝ «ի հրաշակերտութիւն միագոյ իրի»։ «Մատեանի» գաղափարը Գրիգոր Նարեկացին հղացել է ավելի վաղ՝ իր ուսուցչի կենդանության օրոք։ Հավանաբար, այդ շրջանում են ստեղծվել նրա աղոթք-խոստովանությունների առաջին նմուշները։ «Մատեանը» կառուցվել է հեղինակի կյանքի վերջին տարիներին, բայց արարվել է նրա ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում։ Այդ են վկայում նաև նրա վաղ շրջա-

նի գործերը, որոնք բնագրային և գաղափարական անմիջական կապ ունեն «Մատեանի» հետ, և որոնց մեջ նշմարվում են «Մատեանի» ստեղծման ծրագիրն ու նախագաղափարը:

Այս ամենից բացի, օժանդակ փաստարկներ է տրամադրում նաև «Մատեանի» կառուցվածքի ուսումնասիրությունը: «Մատեանում», բանաստեղծական աղոթքներից զատ, ի մի են բերված նաև այլ ժանրի նմուշներ՝ խրատ, քնարական մենախոսություն, առակ, մեկնություն, ստուգաբանություն, հարասություն, ներբող:

Կյանքի վերջին տարիներին Գրիգոր Նարեկացին ի մի է բերել, ամբողջացրել իր նախորդ տարիների գրական փորձը՝ ներառելով նաև տարբեր ժանրերի գործեր՝ «ի հրաշակերտութիւն միագոյ իրի»⁷⁵:

Այս առումով հետաքրքրական է Անանիա Նարեկացու աշակերտներից Ուխտանես Պատմիչի «Հայոց պատմության» ընծայական-առաջաբանը, ըստ որի՝ Ուխտանեսն իր «Պատմությունը» գրել է Անանիա Նարեկացու պատվերով՝ պատմագրության արվեստի նրա մշակած սկզբունքներով, որոնք գալիս էին V դարից: Ըստ այս փաստերի՝ բացի բուն գիտական-ստեղծագործական աշխատանքից, որով Անանիա Նարեկացին մեծ դպրոց էր ստեղծել՝ դնելով նրա նախահիմքերն ու ձևավորելով գիտական-կրթական և հոգևոր արվեստների համակարգը, նա նաև մանկավարժական մեծ գործունեություն էր ծավալել՝ խթանելով և ուղղորդելով դպրոցի տաղանդավոր ներկայացուցիչների ստեղծագործական հակումներն ու ձիրքերը: Հոգեմտավոր այդ համա-

⁷⁵ Այս մասին տե՛ս «Նարեկյան դպրոցը, Էջ 103-104, 123-132:

տեղ, տեական և լարված գործունեության և բեղուն ստեղծագործական կյանքի գերազույն արդյունքը հանդիսացավ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը, որի խտացումը նրա «Մատեան ողբերգութեան» երկն է։ Վարդապետ-աշակերտ Խորհրդավոր, ստեղծագործական տարերքով ու ներշնչանքով լեցուն, տասնյակ տարիներ տեած հոգեոր այդ կապը, ահա, Անանիա և Գրիգոր Նարեկացիների «ներքին» և «արտաքին», հոգեոր և մարմնավոր կենսագրության կարեռագույն դրվագներից է։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
ԵՐԿԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՑԻՆ
ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՆՈՐ
ՓԱՍՏԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

**

Նարեկացիագիտության մեջ առանձին խնդիր է Գրիգոր Նարեկացուն վերագրված մի խումբ երկերի հեղինակային պատկանելության հարցը, որը տարակարծությունների տեղիք է տվել:

Այդ երկերի մասին ձեռագրական տվյալներն ու արտահայտված կարծիքներն ամբողջացրել է մեծավաստակ նարեկացիագետ Պ. Խաչատրյանն իր «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» մեծարժեք աշխատության մեջ¹ հիմնականում ժխտելով դրանց Գրիգոր Նարեկացուն պատկանելու հնարավորությունը: Թվով 15 այդ գործերից մեզ հետաքրքրում են 5-ը, որոնք, մեր կարծիքով, պատկանում են Գրիգոր Նարեկացու գրչին:

Դրանք են՝ «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան», «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», «Կարգ եւ կանոն աղաւթից, զոր խնդրեալ է ի հոգէկիր արանց յումեմնէ միայնացելոյ՝ արթուն եւ զուարթուն հոգւոյ Գրիգորի Նարեկացւոյ...», «Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ վասն վարդապետաց եւ իմաստուն քահանայից վախճանի բան գովութեան եւ մխիթարութեան», «Մեկնութիւն «Ո՞վ է դա»-ի»:

Այս երկերը ուղղակի առնչություններ են ի հայտ բերում Գրիգոր Նարեկացու և Նարեկյան դպրոցի մատենագրական ժառանգության բոլոր շերտերի հետ: Այդ առնչությունները և՛ տեսական-ստեղծագործական են, և՛ բնագրային: Դրանք, առաջին հերթին, Գրիգոր Նարեկացուն է վերագրում ձեռագրական ավանդույթը: Բացի դրանից, փի-

¹ Պ. Խաչատրյան, «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը», Ա. Էջմիածին, 1996, էջ 119-158:

լիսովայական-աստվածաբանական և գրական-գեղարվեստական խոր առնչություններից զատ, այս երկերը համաձայնն և հարազատ են Նարեկյան դպրոցի ընդհանուր համատեքստին։ Ավելին, հետագոտությունը բնագրային էական աղերսներ և համընկնումներ է երեան հանում Նարեկյան դպրոցի ներկայացուցիչներին պատկանող հայտնի և նշված թեական համարվող երկերի միջև, որը, մեր կարծիքով, վճռորոշ նշանակություն ունի հեղինակային պատկանելության հարցը քննելիս։ Նարեկյան դպրոցն իր մեկնողական, դավանաբանական բառապաշարով, ոճաբանությամբ, հոգեւոր արվեստների, մասնավորապես բանաստեղծական արվեստի նորարարական տեսությամբ, պոետիկայով այնքան յուրատիպ է, որ առանձնանում և ընդգծվում է նախորդ և հետագա դարերի հայ մատենագրության մեջ։ Մատենագրական այդ հսկա ժառանգությունն ահա, իր ներքին կապերով ու փոխառնչություններով զգալիորեն ընդլայնվում է դպրոցի ներկայացուցիչների նորահայտ գործերով, որոնցից են Գրիգոր Նարեկացու նշված երկերը։

Այս երկերը զգալիորեն խորացնում են դպրոցի ոչ միայն գաղափարական, գիտակրթական հենքը, ներքին հղացքների, ստեղծաբանության պատմությունը, այլ թույլ են տալիս ընկալել նրա համարնագիրն իր ամբողջության մեջ՝ իբրև միեղեն ընթացք և կառույց, ուր ամեն տարր ու միավոր ունի իր ուրույն նշանակությունը։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱԽԱՏՈՅ ԵՒ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՅ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ» ԽՐԱՏԸ¹

Նարեկյան դպրոցի բարոյագիտական համակարգի ուսումնասիրության ընթացքում մեր ուշադրությունը գրավեց մի էական հանգամանք. բարոյագիտական այդ կառույցը նույնությամբ ընդգրկված և ներկայացված է նաև Գրիգոր Նարեկացուն վերագրվող և նրան պատկանող երերի ցանկում հրատարակված «Վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում (լրիվ խորագիրն է՝ «Արքոյ վարդապետի յոքներանեան մենաւորի Գրիգորի՝ համառօտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադպրի»)²: Այս խրատն ավանդաբար վերագրվել է Գրիգոր Նարեկացուն, չնայած նարեկացիագետների շրջանում տարակարծությունների տեղիք է տվել: Առարկողների հիմնական փաստարկներից մեկն այն է եղել, որ խրատի իմաստասիրական ոգին հարազատ չէ Գրիգոր Նարեկացու քերթողական ոճին: Այս պնդումը, սակայն, առնվազն, տարակուսանք է հարուցում:

Հստ նորագույն, առավել հիմնավորված վարկածի, խրատն իրոք պատկանում է Գրիգոր Նարեկացուն: Այդ տեսակետն է պաշտպանում Հ. Միրզոյանը: Հենվելով նոր հայկազյան բառարանի հեղինակների, Մ. Զամչյանի և Բ.

¹ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամբազյան, «Գրիգոր Նարեկացին և նորպալատոնականությունը», Երևան, 2004, էջ 76-91:

² Խրատի վերջին հրատարակությունը տե՛ս Ա. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնք, տպարան Կաթողիկոսութեան Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիսա, 2003, էջ 681-724:

Սարգիսյանի համոզիչ փաստարկների վրա, և բովանդակային-բնագրային զուգահեռներ անցկացնելով՝ Գրիգոր Նարեկացու Երգ Երգոցի մեկնության, «Մատեանի» և վերոհիշյալ խրատի միջև, ուսումնասիրողը բովանդակային նմանություններ է նշում, որոնք վկայում են այս Երկերի հեղինակային նույնությունը³: Մեր ուսումնասիրություններն ու բնագրային համեմատություններն ի հայտ բերեցին նաև էական առնչություններ և ակնհայտ համընկնումներ այս Երկի և Խոսրով Անձևացու խրատատիպ քարոզների, ինչպես նաև Անանիա Նարեկացու խրատների, «Սակս բացայայտութեան թուոց» և «Հաւատարմատ» Երկերի միջև:

Նշված խրատի հեղինակային պատկանելության հարցում, մեր կարծիքով, վերջնական պարզություն է մտցնում դրա դիտարկումն ու քննությունը Նարեկյան դպրոցի այս խոչոր ներկայացուցիչների տեսական ժառանգության հետ ունեցած կապերի մեջ՝ բնագրային առնչությունների ու համընկնումների, ընդհանուր դիտական-տեսական համակարգի համատեքստում:

Նմանատիպ զուգահեռները գալիս են անվերապահորեն հաստատելու այս Երկի՝ Գրիգոր Նարեկացուն պատկանելու վարկածը: Իր հերթին համեմատությունը Գրիգոր Նարեկացու այլ Երկերի հետ՝ Երևան է հանում նրա խորքային առնչությունները՝ «Մատեանում», տաղերում և

³Տե՛ս Հ. Միքոյան, Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1(112), 2004, էջ67-85: Պ. Խաչատրյանը հավանական է համարում, որ խրատի հեղինակը Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն է (1065-1105 թթ.) (տե՛ս նշվ. աշխ., ծնթ. 83, էջ 114-150):

ներբողներում արտահայտված էքստատիկ աստվածաբանության համակարգի հետ, որոնց մենք դեռ կանոլազառնանք։ Խրատն իր արծարծած բարոյագիտական և գեղագիտական հարցերով խորապես առնչվում է Նարեկյան դպրոցի գեղագիտական-աստվածաբանական համակարգի հետ և նրա արգասիքն է։

Խոսքն առաջին հերթին Անանիա Նարեկացու «Սակս բացայայտութեան թուոց» գիտական աշխատասիրության մասին է, որի զորեղ ազդեցությունը նկատելի է Գրիգոր Նարեկացու վերոհիշյալ խրատի վրա։ Համեմատությունը ցույց է տալիս, որ այս երկը նախագաղափար և նախօրինակ է եղել Գրիգոր Նարեկացու համար ինչպես «Մատեանի» մի շարք հատվածներում, տաղերում և ներբողներում, այնպես էլ այս խրատի ստեղծման ընթացքում։ Այդ ազդեցությունը նկատելի է բարոյագիտության, աղոթքի տեսության և պոետիկայի համակարգերում։ Այսօրինակ քննության ընթացքում ի հայտ են գալիս միևնույն գիտական սկզբնաղբյուրների կիրառման փաստեր, բնագրային համընկնումներ և մեկնաբանության նույնություններ։

Ստորև բերում ենք խրատում հեղինակի արտահայտած հայացքները մարդկային հոգու կառուցվածքի, հոգեոր կատարելագործման, հոգեոր առաքինությունների ձեռքբերման և կառավարման մասին՝ հար և նման նորավատոնական ավանդույթին և Անանիա Նարեկացու տեսությանը։ Այսպես, հետեւելով իր ուսուցչին՝ Գրիգոր Նարեկացին ներկայացնում է մարդկային արարչաստեղծ հոգու եռամասնյա կառույցը՝ նրանում գերիշխող դեր հատկացնելով մարդու բանական-խոհական տարելքին, որով նա նմանվում է «վերնայիններին»։

«Եւ զի նախադաս է եւ պատուական ամենայնիւ անձն բանական քան զմարմին՝ ըստ իմանալին գոլոյ եւ ազգակից վերնոցն եւ տիրականին պատկեր, իրաւացի է նախ զնորայն զարդարել մասունս՝ իւրական եւ բնաւոր առաքինութեամբք:

Եւ վասն զի եռամասնեայ գոլով ոգի՝ ունելով բան, ցառումն եւ ցանկութիւն, արարչաստեղծ հրամանաւ եւ դրութեամբ, որով ուղիղ բանականին վարելով՝ ոչինչ ի վերնոցն վերջանայ նմանութենէ: Եւ իւրաքանչիւր սոքա ունին ինքեանց յատուկ առաքինութիւնս»⁴:

Ինչպես Դավիթ Անհաղթը և Անանիա Նարեկացին, Գրիգոր Նարեկացին ևս մարդու եռամասնյա հոգուն համապատասխան նշում է Հոգեկոր երեք առաքինությունները՝ խոհականություն, արիություն և ողջախոհություն.

«Եւ է բանականին առաքինութիւն խոհականութիւնն, եւ ցասմնականին՝ արիութիւնն, իսկ ցանկականին՝ ողջախոհութիւնն:

Եւ խոհականին գործ է խորհելն եւ ընտրելն զլաւն ի վատթարէն: Իսկ արիութեանն՝ զառ ի խոհականէն ընտրեալն քաջապէս եւ արիաբար կատարել: Իսկ ողջախոհութեանն՝ ըստ ընտրութեան և կատարմանն՝ ի սէրն որ առ Աստուած բորբոքել. որով զնախադասսն ինքեան՝ սիրոյն ջերմութեամբ առաւել զօրացուցանէ ի բնաւորսն ունակութիւնս»⁵:

Գրիգոր Նարեկացին կրկնում է մարդկային հոգու և մարմնի համամասնության նորպլատոնական կառույցը,

⁴Տե՛ս «Մատենագիրք հայոց», 4. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, էջ 1035:

⁵Նույն տեղում:

որն հանդիպում է նաև Անանիա Նարեկացու «Սակս բացայատութեան թուղը» երկում:

«Յայտնէ զայս եւ կայումն նոցա ի մարմինս: Վասն զի բանականին կայումն է ի գլուխ եւ ի խելապատակն եւ յուղեղ: Եւ որպէս գլուխ զվեհն եւ զառաջինն ընկալեալ նախադասութիւն յանդամս մարմնոյ՝ է իբրեւ զթագաւոր եւ զիշխան եւ հրամանատար ի վերայ ամենայն մարմնոյն, այսպէս եւ խոհականն անդ ունելով զնիստ արքունեացն՝ որպէս զթագաւոր իշխէ ի վերայ խոնարհ կացելոցն՝ ցասմնականին եւ ցանկականին:

Իսկ ցասմնականին կայումն է ի սրտի ի ներքոյ քան զգլուխ. իշխի ի բանականէն ի վերոյ կացեալ քան զինքն, եւ իշխէ ցանկականին՝ որ ի խոնարհ քան զնա:

Իսկ ցանկականն ընակէ յերիկամունսն եւ ի ներքին կամսն. վասն այնորիկ եւ իշխի ի ցասմնականէն՝ որ ի վերոյ քան զնա, եւ ինքն ոչ իշխէ ումեք. զի եւ ոչ է զօրութիւն ինչ ի խոնարհ քան զնա, եթէ հնազանդեսցի նմա»⁶:

Թրիգոր Նարեկացին, Անանիա Նարեկացու նման, Հետեւում է գործնական փիլիսոփայության անհաղթյան կառուցյին՝ մարդու աստվածացման գաղափարը կապելով Անհաղթի փիլիսոփայության երրորդ և չորրորդ սահմանումներին, այն է՝ կրքերի սանձահարման և բարոյական մաքրագործության հետ: Դավիթ Անհաղթի նման՝ նա զուգահեռ է անցկացնում մարդկային հոգեոր եռամասնյա կառուցվածքի աստիճանականության և Աստծո, մարդու և բնության հարաբերությունների միջև՝ շեշտելով աստվածայինի և նրա նմանութեամբ մարդու բանական էության

⁶ Նույն տեղում, էջ 1036:

գերիշխանությունը նրանց հաջորդող աստիճանակարգությունների նկատմամբ։ Բանականի գերիշխանությունն է շեշտվում նաև Անանիա Նարեկացու «Սակս բացայայտութեան թուոց» երկում։

«Բայց տեսանել անարժան է եւ զբարեձեւ սոցա կարգաւորութիւն։ Զի նախ բանականն յառաջադասի որպէս վեհ քան զայլսն, եւ իշխան և հրամանատար ի վերայ նոցա. զի նորա է գործ խորհելն եւ ըստ նմին աւանդել երկաքանչիւրոցն՝ ցասմնականին եւ ցանկականին զանարժանն։ Իսկ ցասմնականին՝ հաւանութեամբ եւ արիութեամբ հրամայելոցն հետեւել. ունել եւ սաստ ի վերայ ցանկականին. զի զաւանդեալն նմա ի բանականէն՝ ուղիղ ցանկութեամբ առ Աստուած եւ աստուածային պատուիրանսն ամբողջ եւ անարատ պահեսցէ։

Եւ է բանականն ինքիշխան՝ ոչ ունելով եւ ոչ մի ոք համակարգիցն իշխանութիւն ի վերայ նորա։ Իսկ ցասմնականն իշխի ի բանականէն եւ իշխէ ցանկականին։ Իսկ ցանկականն իշխի ի ցասմնականէն և ինքն այլում ոչ իշխէ…

Այս բարւոք կարգաւորութիւն տեսանի եւ յոյժ հրաշափառապէս եւ պատկառելի յարացուցիւ։ Վասն զի Աստուած ինքնիշխան գոլով եւ թագաւոր ի վերայ ամենայն եղելոց՝ իշխէ ի վերայ բնաւից. որով եւ ի վերայ մարդոյ, եւ ինքն անիշխան գոլով։ Իսկ զմարդն ի պատկեր իւր արարեալ՝ ասաց իշխել ի վերայ երեւելի արարածոցս ընդ իշխանութեամբ ինքեան. իսկ զգալիքս ամենայն ընդ իշխանութեամբ մարդոյն, ինքեանք ոչ իշխելով ումեք։

Արդ, որքան այս կարգաւորութիւն վայելչեպէս ըստ բնաւորն սահմանի ուղղի ի մեզ, ամենայն ինչ բարեձեւ եւ ըստ առաքելոյ կարգի լինիցի. եւ տէրունականն ի մեզ

Հրաման պատուիրանի անխափան կատարեսցի: Զի խոռականն միշտ յաստուածայինսն խոկասցի... եւ զի ամենայն գործոյ, եթէ՛ բարի եւ եթէ՛ չար, նախ խորհելն է եւ ապա առնելն, եւ առանց խորհելոյ ոք ինչ ոչ գործէ, ապա ուրեմն որ բարւոք եւ ուղիղ խորհի, ըստ նմին եւ զգործն կատարէ: Եւ յորժամ խոհականն զիշխանութիւն իւր եւ զգործ ամբողջ ունի, իշխէ ի վերայ ցասմնականին, եւ հրաման տայ զամենայն բարելաւութեանց իրողութիւնս. եւ ցասմնականն արիութեամբ եւ քաջութեամբ ամենայնի հպատակեալ՝ բարւոք կատարէ:

Նոյնպէս եւ ցասմնականն ընաւորականին հետևելով՝ կայ ի հնագանդութեան բանականին, եւ իշխէ ի վերայ ցանկականին:

Իսկ ցանկականն ուղիղ եւ ամբողջ պահելով զբնականն՝ ոչ ապստամբէ ի հրամանէ ցասմնականին, այլ որպէս զծառայ հլու եւ հնագանդութեամբ կատարէ զամենայն հրամանսն, եւ ինքն ոչ ամբառայ զեղջիւր ի վերայ ուրուք. զի չէ ոք ընդ նորա իշխանութեամբ»⁷:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Նարեկացին իր հայցքները շարադրում է՝ առաջնորդվելով «հույժ պատկառելի հրաշափառ յարացույցով», այսինքն՝ տիպական օրինակով, որ նրանից առաջ կիրառել էր Դավիթ Անհաղթը:

Մարդկային հոգու այս կառույցը՝ «համակարգը», իբրև բարձրագույն առաքինություն, ներդաշնակում և կառավարում է արդարությունը, որով միայն մարդը դառնում է կատարյալ: Այստեղ ևս Գրիգոր Նարեկացին կրկնում է իր ուսուցչին, որի սկզբնաղբյուրը Դավիթ Անհաղթն է:

⁷ Նույն տեղում, էջ 1035-1037:

Արդարությունը դիտվում է իբրև բանական հոգու լավագույն մասը.

«Է եւ այլ միւս եւս մասն բանականին, որ կոչի արդարութիւն. եւ է սա կառավար եւ ուղղիչ եւ դատաւոր ամենայն մասանցն: Քանզի նովաւ որպէս գործեաւ բանականն զբոլորսն ուղղէ, զիւրաքանչիւր ոք յիւրումն անսայթաքպահելով՝ բնաւոր շարժութիւնս: Եւ այսմ այսպէս լինելով՝ այնուհետեւ է բանականն խոհական, եւ ցասմնականն արիական, եւ ցանկականն ողջախոհական: Եւ յայսմհետէ ոչինչ է խափան եւ արգել կամացն Տեառն եւ պատուիրանացն ի մարդն կատարելոյ. ըստ որում եւ եղ զզաւրութիւնն ի մեզ, եւ պահանջէ զկատարումն: Վասն զի բանականն խորհի զուղիդն եւ զաւգտակարն, եւ արդարութիւնն բաժանէ ստորակայիցն, եւ նոքա կատարեն անխափան:

Վասն զի է ցասմնականն ի ձեռին խոհականին որպէս զընտանի գաղան, այսինքն շուն. վասն զի նոքա կրկին ունին բնաւոր շարժութիւնս. զտեարսն եւ զընտանիսն սիրեն եւ շողոքորթեն եւ քծնին. իսկ աւտարացն եւ անընդելից գաղանային, եւ վայրենի եւ պատառող բարս եւ գործառութիւնս ցուցանեն:

Այսպէս և ցասմնականն յորժամ ուղիղ զբանականն ունի, ամենայն բարւոք խորհելոցն ի բանականէն՝ արիաբար սիրելի եւ բարեկամ, եւ կատարող երեւի. իսկ հակառակ եւ անընտանի, եւ աւտար խորհրդոցն եւ չար գործոցն ընդդէմ յառնէ ցասմամբ մեծաւ, եւ ի բաց վարէ եւ կամ չարաչար պատառէ՝ ոչ բնաւ թոյլ տուեալ դժրել ինչ ընտանեացն:

Նմանապէս եւ ցանկականն ի բանականին գոլով, լինի եւ անուանի ողջախոհութիւն եւ սէր արիականին վերակա-

ցութեամբ. անշարժ լինելով առ ախտաւորսն ցանկութիւնսն, եւ դիւրաշարժ առ ամենայն բարեաց սէր եւ բաղձանս: Եւ սատարութեամբ արդարութեանն ուղիղ կարգաւորէ զսիրոյն աւրէնս, զառաջինն եւ զմեծն Աստուծոյ տալով ըստ նորին աւրինադրութեանն, որ ասաց... զի ասէ, «Սիրեցե՛ս զՏէր Աստուած քո յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զաւրութենէ եւ ի մտաց քոց»⁸:

Հստ Գրիգոր Նարեկացու, մարդը պետք է անխաթար պահպանի հոգեոր այդ կառուցը, աստվածային հավասարակշռութեան այդ խախտումից խաթարվում է մարդկային բնությունը, և այնտեղ մուտք են գործում մեղքերը.

«Արդ, որպէս վերագոյն ցուցաք, յորժամ մասունք հոգւոյն ուղիղ զիւրեանց կարգաւորութիւնսն պահեն, զի իշխանն յիշխանութեան կացցէ եւ իշխեցեալն ի հնազանդութեան, ամենայն այսոքիկ բարեգործութիւնք անսխալ կատարին: Իսկ եթէ եղծեալ ապականի վայելչական կարգն, եւ ծառայքն ի վերայ տերանցն յառնեն եւ զիշխանութիւնն յափշտակեն եւ զտեարսն ծառայեցուցանեն, այսինքն՝ ցանկականն ցասմնականին եւ ցասմնականն խոհականին տիրելով, ամենայն շփոթեալ վեր ի վայր կործանի, եւ իւրաքանչիւրքն ի հակառակ ներգործութիւնս շարժին: Եւ ըստ գործոյն եւ անուանցն փոփոխումն լինի. Եւ այնուհետեւ ոչ խոհականութիւն եւ արիութիւն, եւ ողջախոհութիւն եւ արդարութիւն ասի, այլ անմտութիւն եւ սրտմտութիւն, եւ բղջախոհութիւն եւ անիրաւութիւն կոչին: Քանզի ոչ խոհականն զբարւոքն խորհի, եւ ոչ ցասմնականն ընդդէմ չարին կքրի, եւ ոչ ցանկականն ողջախոհաբար Աստուծոյ եւ

⁸ Նույն տեղում, էջ 1037-1038:

աստուածայնոցն ցանկայ, եւ ոչ արդարութիւնն այսոցիկ ուղղիչ լինի, վերակացու եւ կառավար, այլ ի բնականէն յանբնականսն շարժեալ՝ չարաչար տապալմամբ կործանի...»⁹:

Մարդու կատարելագործման և աստվածանմանության հասնելու քրիստոնեական կատարելատիպն, ահա, մեծապես կապված է նրա բնության աստվածային հավասարակշռության և ներդաշնակության հետ, նրա հոգեոր-բանական աշխարհների և զգայական բնության, իբրև միեղեն ամբողջության, համակարգի, ինչպես հեղինակն է ասում, աստիճանակարգված առաքինաջան գործունեության հետ, որին իշխում և կառավարում է մարդու բանական-խոհական տարերքը: Այդպես է «մարդու բանական հոգին», որ Աստծո պատկերն է, «յուրական առաքինություններով» նմանվում «առաջին լուսատիպ կերպարանքին» և «գաղափարում իր հրաշազարդ նմանությունը նախատիպին»:

«Այսքան եւ այսպիսի անկարգութիւն բարեաց եւ կարգաւորութիւն չարեաց յանձնական մասանցն՝ ի բնականացն խոտորմանց եւ յանբնականացն հետեւմանց լինին: Վասն որոյ բազում զգուշութեամբ եւ արթնութեամբ պարտ է հսկել ամենայն ումեք. զի զբանական իւր հոգի, որ է պատկեր Աստուծոյ, իւրական առաքինութեամբքն զարդարեացէ. որով յառաջինն փայլեացէ լուսատիպ կերպարան, եւ զնախատպին հրաշազարդապէս յինքեան գաղափարեացէ նմանութիւն: Որով լիցի տաճար և բնակարան անվայրափակ էութեանն՝ ըստ ասելոյն. «Ես եւ Հայր առ նա եկեսցուք, եւ աւթեւանս առ նմա արասցուք» (ՅՀ 14. 23):

⁹ Նույն տեղում, էջ 1042:

Արդ, մինչ այսպէս գեղեցկայարմար պատկանաւորութեամբ ուղղեցաք զանձնական առաքինութիւնսն, պարտ է նմին հետեւեցուցանել եւ զմարմնական բարեգործութիւնսն, որպէս զի ըստ առաքելոյ՝ «Լիցի մարդն Աստուծոյ կատարեալ ամենայնիւ»¹⁰:

Գրիգոր Նարեկացին, իր խնդրի համեմատ, Դավիթ Անհաղթից եկող գործնական փիլիսոփայության այս համակարգը ներկայացնում է պարզ ու մեկին ոճով, առանց խրթնաբանությունների՝ մանրամասնելով ու ամբողջացնելով Անանիա Նարեկացու տեսությունը, որ սերում է նույն ակունքներից, հաճախ, ինչպես իր ներբողատիպ գործերում, իր ուսուցչի նման փայլելով ճարտասանական հմտություններով։ Մնացած շարադրանքի ընթացքում նա պահպանում է բարոյախրատական հանդարտ պատումի եղանակը՝ առնչություններ ի հայտ բերելով, հատկապես աղոթքի տեսության հարցերում, Անանիա Նարեկացու խրատական գործերի հետ։ Տեղ-տեղ, հանրային արատների մերկացման ընթացքում, նրա խոսքը ձեռք է բերում ուժգին և պաթետիկ շեշտադրումներ՝ հիշեցնելով Խոսրով Անձեւացու «խարազանող» խրատներն ու քարոզները։

Ընդ որում՝ նրա մեկնաբանություններն ավելի ծավալուն են, քան սկզբնաղբյուրներում։ Նորպլատոնական բարոյագիտական համակարգից սերող այս կառույցի վրա են հենվում, նրանից են սկզբնավորվում խրատի հետագա ճյուղավորումները, որոնք շոշափում են մարդկային մեղքերի և արատների հաղթահարման և հոգեոր առաքինությունների ձեռքբերման, ինչպես նաև գեղագիտական և հոգեոր արվեստի տեսության հետ կապված այլ հարցեր։

¹⁰ Նույն տեղում, էջ 1047։

Այս համակարգված կառույցի, հոգեոր ընթացքի մեջ են մտնում մարդու ներքին մաքրագործման՝ զգայությունների և խորհուրդների մաքրման, ինքնահաղթահարման, ինքնահակողութեան տեսական վարժանքի սկզբունքները՝ հոգեոր կառույցի կատարելագործման ընթացքը կապելով նաև մարմնական սխրանքի հետ, քանզի Քրիստոսի մարդկագման խորհրդից հետո մարդն Աստծուն է կապվում նաև իր արարչաստեղծ անապական բնությամբ։ Այստեղ ևս Գրիգոր Նարեկացին ի հայտ է բերում իր խրատի առնչությունները Անանիա Նարեկացու խրատագրքի՝ հատկապես նրա «Յաղագս խորհրդոց զգուշութեան» խրատի հետ, ուր այս խնդիրները դիտարկվում են իբրև միստիկ կենցաղավարության, հոգեոր կատարելագործման կարեոր աստիճաններ։

Նկատելի է կապը նաև Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» երկի հետ՝ սկսած խորագրի իմաստային խաղարկումներից մինչև տեղ-տեղ հանդիպող գիտական-տրամաբանական-հակաճառական ոճի ու եզրաբանության փոխանցումները։ «Եւ արդ, սկսցուք, ուստի սկսանելն է արժան՝ ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն եւ արմատ ամենայն բարեաց...¹¹ Այլ պարտ է գիտել, զի թէպէտ անուն հաւատոյն մի է, այլ ի բազումս զանազանին. զի մեծ եւ առաջին հիմն եւ արմատ ամենայն հաւատոյ...»¹², – գրում է Գրիգոր Նարեկացին՝ բացահայտելով իր երկի ուղղակի կապը ուսուցչի «Հաւատարմատ»-ի հետ։ Այս ազդեցությունները ի հայտ են գալիս նաև երկաբնակների դեմ հակաճառության եղանակի և եզրաբանության

¹¹ Նույն տեղում, էջ 1024:

¹² Նույն տեղում, էջ 1029:

մեջ. «Այսինքն հաւատալ զեկեղեցի Քրիստոսի որ ընդ տիեզերս, որք ճշմարիտ եւ աներկբայ հաւատով խոստովանին զհամագոյ եւ զպաշտելի Երրորդութիւնն, եւ զներմարդութեան խորհուրդ՝ Միածնին՝ Աստուած եւ մարդ կատարեալ... մի եկեղեցի Քրիստոսի համարեալ, եւ միոյ գլխոյն Քրիստոսի պատուական մարմին եւ անդամք՝ ըստ առաքելոյ: Ոչ բաժանել եւ պատառել հայհոյական բանիւ վասն դոյզն ինչ եկեղեցական աւանդութեան զմարմինն Քրիստոսի, զոր խաչիւ եւ չարչարանաւք ստացաւ, եւ փրկական արեամբն գնեաց եւ սրբեաց եւ միացոյց ինքեան»¹³:

Գրիգոր Նարեկացին տալիս է «Համագոյ և Համաբուն» Սուրբ Երրորդության, Քրիստոսի մարդեղության՝ «ներմարդության», փրկագործության խորհուրդների, դրանց շնորհիվ մարդկային բնության վերափոխման, նախնական անապականության վերականգնման Նարեկյան դպրոցին հատուկ մեկնաբանություններ, որոնք հարագատ են Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» երկին և, ինչպես նշել ենք, առկա են նաև Գրիգոր Նարեկացու՝ Աստվածածնին նվիրված ներբողում:

«Քանզի մինն ի յերից այս անբաւից անձնավորութեանց, ծնեալն ի Հաւրէ անժամանակ եւ անմարմին նախքան զյաւիտեանս, էակից եւ փառակից Հոգւոյն, կամաւ եւ հաճութեամք համարենիցն՝ խոնարհի յանձառ փառացն եւ յանբաւ բարձրութինէն՝ ի խնդիր եղծեալ եւ ապականեալ իւրաստեղծ պատկերին: Ոչ զբնաւոր զաւրութիւն ամենակարող իշխանութեանն արկեալ ի կիր, այլ զամենահնար բազմապատիկ իմաստութիւնն:

Աւետեաւք հրեշտակապետին բնակի յարգանդի Հոգ-

¹³ Նույն տեղում, էջ 1029-1030:

ւով մաքրելոյ ամեներջանիկ եւ փառաւորեալ կուսին Մարիամու. եւ ի նորին բնութենէն զգենու մարմին Հոգւով եւ մտաւք. մարդ կատարեալ, եւ Աստուած ճշմարիտ՝ անշփոթ միութեամբ խառնեալ զանխառնելիսն նոր եւ սքանչելի խառնմամբ: Քանզի ոչ պարզութիւն անյաւդ եւ անմարմին էութիւն Աստուածութեանն փոփոխեցաւ ի նիւթական եւ յաւդաւոր թանձրութիւն մարմնոյ, եւ ոչ հիւթաւոր եւ թանձր բնութիւն մարմնոյն յեղաւ յանաւսր եւ յաննիւթ Աստուածութեանն պարզութիւն. այլ երկաքանչիւրոցն յատկութիւն բնութեանց պահեալ անշփոթ, եւ միացեալ անճառապէս, եւ ի վեր քան զամենայն խառնումն եւ միութիւն: Մի Որդի եւ մի Տէր Յիսուս Քրիստոս յերկուց կատարելոց: եւ ի քրայս հրակիր որովայնին ձուլեաց ամենարուեստն վերստին զբնութիւնս յառաջին անապականութիւնն: Եւ զի ոչ մասամբ էր ապականեալ մեղաւք մարդկութիւն, այլ բոլորովին հոգւով, մարմնով եւ մտաւք, վասն այնորիկ զբոլորս զգեցաւ Բանն եւ միացոյց յինքն. զի իւրով անմեղութեամբն եւ անապականութեամբն արասցէ զմեղանչականն անմեղ, եւ զապականեալն անապական»¹⁴:

Այսեղ նշենք, որ ընդգծված հասկացությունն Անանիա և Գրիգոր Նարեկացիները Աստծո զորություններից մեկն էին համարում, որով Աստված, իբրև գերագույն արվեստագետ, կապվում է ստեղծագործ անհատի հետ: Գրիգոր Նարեկացին Աստծուն կոչում է նաև «ամենահնար արվեստավոր», «արծաթագործ», «երկնավոր իմ ճարտարապետ», որ «խոսքի զորության արվեստ» է չնորհել նրան: Այս արվեստին նա տարբեր բանաձևումներ է տալիս՝ անսայթաք խոսք, անխզելի կապ, հրաշալի բարբառ, բաղձալի

¹⁴ Նույն տեղում, էջ 1026-1027:

աղերս, արվեստ բարձրության և այլն¹⁵, որոնք կարևոր ուղենիշներ են նրա բանաստեղծական արվեստի համար:

Այս տեսական առնչությունը ևս լրացուցիչ փաստարկ է գործը Գրիգոր Նարեկացուն վերագրելու համար:

Իրատի վերջում Գրիգոր Նարեկացին ամբողջացնում և ամփոփում է իր մանրամասնորեն շարադրված տեսական համակարգը, ուր մարդու հոգեոր կատարելատիպի պատկերացման մեջ միահյուսված են մարմնավոր անարատությունն ու անապականությունը, և բանական-խոհական արարչագործ տարերքը՝ «ոգու և մտքի շարժումը», որով ամբողջանում է Աստծո մարդը, նրա արարչաստեղծ կերպարն՝ իբրև «անարատ մաքրություն և նախատիպ պատկերի լուսանկար գեղեցկություն».

«Եւ արդ, ահաւասիկ շնորհաւք Աստուծոյ՝ մասանց ոգւոյ եւ շարժմանց, մտաց եւ զգայութեանց մարմնոյ, որ ինչ մուտք մեղաց են, փակեցան, եւ որ ինչ առաքինութեան եւ սրբութեան յառաջատուութիւնք, բացան։ Զի եւ այս իսկ է մարդ բոլորովին՝ ոգի եւ զաւրութիւնք իւր, միտք եւ շարժմունք իւր, մարմին եւ զգայութիւնք իւր. զորս պարտ է ըստ վերագրելոցդ ամենայն զգուշութեամբ պահել։ Ոչ ընդ հրաժարեցուցեալսն ընտանենալ, եւ ոչ ի համարձակելոցն աւտարանալ. զի մի՛ ի բարւոք եւ յընտանի կայից սողոսկեալ ի վայր քարշեսցի մարդն Աստուծոյ, եւ բիծ ինչ արատոյ ընդ անարատ մաքրութիւնն խառնեսցի՝ եղծանելով զնախատպին պատկերի լուսանկար գեղեցկութիւնն։ Քանզի վերագրելովքո՛ յառաջինն յայն ամե-

¹⁵Տե՛ս «Նոր բառգիրք Հայկագեան լեզուի», Ա, էջ 68, Հ. Հ. Թամրազյան, Նարեկայն դպրոցը, էջ 165-172:

նայնիւ զարդարեսցի արարչաստեղծ կերպարան՝ ճոխ բոլոր վիճակներուն...»¹⁶:

Այս խրատում, ինչպես և այլ երկերում, Գրիգոր Նարեկացին հանդես է գալիս իբրև նորպլատոնական մտածող և իր բարոյագիտական համակարգը, Նարեկյան դպրոցի նախորդ Ներկայացուցիչների նման, կառուցում է՝ հենվելով նորպլատոնական ավանդույթի վրա, հետագայում զարդացնելով այն իր մյուս երկերում և բանաստեղծական քերթվածներում: Այս խրատում ևս, ինչպես Գրիգոր Լուսավորչին նվիրված գանձում, Գրիգոր Նարեկացին իր նախորդների նման զարդացնում, ամբողջացնում է պատկերի և նախատիպի արեօպագիտյան և անհաղթյան տեսությունը՝ կապելով այն մարդու հոգեւոր կառույցի ներդաշնակության և հոգեւոր կենցաղավարության, և մաքրագործության տեսական ընթացքի հետ՝ որ նրան տանում է հնարավոր աստվածանմանության՝ «Հրաշագարդապես» նմանեցնելով նախատիպին՝ Աստծուն, երբ մարդը դառնում է «մարմնավոր անմարմին» և «հոգեւոր մարմին»՝ ըստ Աստծո պատկերի և ձեփ (տե՛ս «Քարոզ Գրիգորի Նարեկացւոյ, ասացեալ ի սուրբ Լուսաւորիչն Գրիգոր»): Այս հոգեւոր ինքնակատարելագործման ընթացքում, ինչպես Անանիա Նարեկացու տեսության մեջ, գերագույն նշանակություն է տրվում մարդու բանական-խոհական տարերքին՝ կրթությանը, վարժանքին, ստեղծագործական ձիրքերին, որոնց նա հասնում է աստվածային ներշնչանքով՝ ներթափանցելով աստվածային արարչագործության ոլորտները: Այս գաղափարները նա բացարձակացնում է իր «Մատեանում» և տաղերում, որոնց կանորադառնանք առանձին քննութեամբ:

¹⁶ Նույն տեղում, էջ 1081:

Այստեղ մեջ բերենք բանական-խոհական հոգու կատարելագործման, հոգելոր այդ վարժանքի մի գեղեցիկ նկարագրություն, որ տեղ է գտել նրա «Պատմութիւն Ապարանից Ս. Խաչին» ներբողում: Այստեղ նախատիպի դերում, ինչպես Անանիա Նարեկացու «Հաւատարմատում», հանդես է գալիս ուսուցիչը, վարդապետը, իսկ իբրև պատկեր՝ աշակերտը, որն ուղղակիորեն հիշեցնում է իր և Անանիա Նարեկացու ազգակցական, կենսագրական և ստեղծագործական կապերը և ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները՝ ենթագրել տալով, որ այս հատվածում իբրև նախատիպար Գրիգոր Նարեկացին նկատի է ունեցել իր ուսուցչին և նրանից ստացած գիտելիքներն ու հոգելոր վարժանքի հմտությունները.

«Արդ, զկնի տիրահրաւէր հանգստեան նորա, սրբասնեալ ոմն պատանի՝ որդի դստեր համածին եղբաւը նորա, ըստ հաւաստի ազգաբանութեան՝ քաղցրածաղիկ ծառոյն բարետիպ պտուղ, ի նմին իսկ յերանելւոյ ուսեալ եւ հրեշտակահանգէտ կարգաւք հրահանգեալ, եւ ի ձեռն աստուծամերձ ձեռին նորա ձեռնադրեալ ի քահանայութիւն, եւ վանականաց ի վերակացութիւն: Որ նկարագրեաց իբր գտարացոյց գեղոյ պատկերի ձեռոյ տեսակի զնմանութիւն նորին ի յանձին գեղեցկապէս հետեւեալ նախնեացն: Իսկ ի դատումն ընտրութեան վարժից՝ առաքելագէտ եւ մարդարէածանաւթ եւ աւետարանաժառանգն գիտութեանց եւ այլոց բազմաց սովեստից, վայելչապէս համբուրիւ պատահեալ»¹⁷:

Այստեղ ևս նա երկրորդում է իր ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն, որն իր «Հաւատարմատ» երկում, համագրե-

¹⁷ Նույն տեղում, էջ 917:

լով պատկերի և սկզբնատիպի գաղափարները աշակերտի և վարդապետի հարացույցի հետ, գրում է.

«Արդ՝ նախ պարտ է գաղափարին նմանել, եւ լինել պատկեր վերին փառացն... զի նոյնատիպ եւ նոքա զինքեանս յարդարիցեն... Զի ի վարդապետն հայելով բազմութիւն աշակերտելոցն եւ զնոյն ճշգրտաքանդակ պատկերն պայծառակշիռ յիւրեանց տախտակսն նկարագրեն՝ զմի և զնոյն ունելով ամենիցն զնմանութիւն սկզբնատպին բերելով յինքեանս»¹⁸:

¹⁸ Մատենադարան, ձեռ. - 6453, թերթ 54ր-55ա:

«ՃԱՌ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ»

(Հայեա՛ց յանձն քո. գուցէ լինիցի բան
ծածուկ ի սրտի քո անօրէն)

Գրիգոր Նարեկացուն վերագրվող երկերի մեջ առանձնանում է «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» խորագրով երկը, որ նաև տրամախոսական-իմաստամիրական խորք ունի՝ համահունչ Գրիգոր Նարեկացու մյուս երկերին։ Զեռագրական ավանդույթն այն համարում է Գրիգոր Նարեկացունը¹։ Սակայն նշված փաստերը բավարար չեն համարվել, և այս «Ճառը» չի դասվել Գրիգոր Նարեկացու գործերի շարքում ու անհարկիորեն դուրս է մնացել գիտական շրջանառությունից։ Դրա պատճառներին մենք կանդրադառնանք։

«Ճառը» հրատարակված է Գրիգոր Նարեկացու անվամբ և զետեղված է 1852 թ. Կ. Պոլսում հրատարակված «Արքոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան» հատորում (էջ 313-337), (այսուհետ՝ «Ճառ»)։ Այն ընդգրկված է նաև «Մատենագիրք հայոց» մատենաշարում։

Հրատարակիչն այդ առթիվ գրում է.

¹ Մաշտոցյան Մատենագարանի երեք ձեռագրերից երկուսում այն վերագրված է Գրիգոր Նարեկացուն, մեկում՝ անխորագիր և անհեղինակ (Մատենագարան, NN 1324 (1281 թ., Հաղպատ, թերթ 267ա-276ա), 639 (1409 թ., թերթ 253ա-274ա), 5704 (1852 թ., գրչ. վայր՝ հավանաբար Լիմ անապատ, թերթ 3ա-18թ): Ճառը Գրիգոր Նարեկացուն է վերագրված վերջին երկու ձեռագրերում։ Ընդ որում, N 5704 ձեռագիրում միայն այս ճառն է զետեղված։

² Այն ընդգրկված է «Մատենագիրք հայոց» մատենաշարում (տե՛ս Հ. Ժ. Ժ տար, էջ 1048-1072):

«Զմիոյ ի քարողից աստի զձեռագիր օրինակ գտեալ ուստեք Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս նախկին Պատրիարք Կոստանդնուպօլսոյ՝ ետ մեզ, ի մերոց մամլոյ ընծայել ազգիս, զոր աւասիկ դրոշմեմք աստանօր»:

Թուի իմն՝ որոց ընթեռնուեն զսա, գուշակել եթէ առաջին ատենախօսութիւն իցէ սրբոյ վարդապետիս, ուստի եւ պտուղ աղօթից սորա՝ որ սկսանի բառիւքս. «Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն», զոր ի հանդիսարանս խօսից ատենի ասաց մաղթել զԱրբոյ Հոգւոյն օգնականութիւն, եւ է ի կարգս աղօթական ողբերգութեանցն յերեսներորդի չորրդի բանին»³:

Փաստորեն, հմուտ հրատարակիչը կապ է տեսնում այս «Ճառիք» և Գրիգոր Նարեկացու «Մատեանի» միջև՝ զուգահեռ անցկացնելով «Մատեանի» Լ.Դ գլխի հետ, որը ևս համարում է ատենախոսություն հանդիսարանի առջև: Բնականաբար, նրա հետ համակարծիք է եղել ձեռագրի հայտնաբերողն ու հրատարակության հանձնողը՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք Տեր Մատթեոս արքեպիսկոպոսը (Մատթեոս Չուխաճյան): Հրատարակիչը նաև կարծիք է հայտնում, որ Գրիգոր Նարեկացին այդպիսի շատ ատենախոսություններ է հեղինակել:

*

«Ճառը» կառուցված է բնաբանի հարակրկնության հիման վրա, որ համահունչ է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը՝ հատկապես նաև «Մատեանին». «Հայեա՛ց յանձն քո. գուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քո անօրէն» (Հմմտ. Բ.Օր. ԾԵ 9): Այս բնաբանը, մեր կարծիքով, ներքին

³ «Մատենագիրք հայոց», Հ. Ժ. Ժ դար, էջ 1019:

կապ է հուշում «Մատեանի» բոլոր գլուխներում կրկնվող «ի խորոց սրտի խաւսք ընդ Աստուծոյ» բնաբանի հետ:

Այս բնաբանի և «Մատեանի» կապի մասին է վկայում «Ճառի» հատվածներից մեկը, ուր հետաքրքրիր և խորի մաստ դիտումներ կան խոսքարվեստի մասին.

«Տեսցուք այնուհետեւ զասացեալն ի Բարսղէ թէ՝ «Գուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քում անաւրէն». բանիւ մեզ ետ Աստուած ստացողն մեր, զպէտս մեր վճարել, զի եթէ մերկ էաք՝ Հոգւով իմաստիւքն առ իրեարս մերձ լինէաք, որպէս զհրեշտակսն, այլ զի վարագուրաւ մարմնոյ ծածկեալ է անձն մեր բանից եւ անուանցն՝ կարաւտանամ առ ի յայտնել, զ’ի խորոց կացեալ իմաստքն: Բայց բանն վարժ եւ առաքինի պարտ է լինել, եւ առաքինութիւն բանին այն է՝ ո՛չ թագուցանել անյայտութեամբ զմիտսն եւ ո՛չ դժուարիմացս եւ խրթինս, եւ ո՛չ ընդ վայր շատախաւսութեամբ ցնդեալ, որպէս զբանս զայս Հոգին Սուրբ կարճ եւ համառաւտ եղիր, զի դիւրաւ պահեսցուք զյիշատակն եւ շատ գանձել զմիտսն, եւ մի՛ խաւարաւ ծածկել զբանն, քանզի լոյս տայ բանս իմաստիցս մեր եւ վկայէ ասացելոցս, եթէ դիւրին եմք մարդիկք ի մտաւք մեղանչելն... քանզի գիտելով Տեառն դիւրակործանս զմեզ մտաւք լեալս՝ զերկիւղ Տեառն եւ զհայելն յինքն պահապանս դնէ՝ ասելովն. «Հայեաց ի քեզ, գուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քո»⁴:

Հստ հեղինակի՝ խոսքարվեստը ծառայում է ի հայտ բերելու, լուսավորելու մարդու Հոգու և սրտի ծածուկ, խորին խորքերը, կուտակված «գանձեալ մտքերը», իմաստնե-

⁴ «Մատենագիրք Հայոց», Հ. Ժ, Ժ դար, էջ 1063:

ըր, քանզի մարդը ծածկված, քողարկված է վարագույրով։ Խոսքի առաքելությունն է բացահայտել այդ դյուրակորժան մտքերը և ոչ թե թաքցնել անհայտությամբ («յայտնելի խորոց կացեալ իմաստն, ոչ թագուցանել անյայտութեամբ զմիտսն»):

Մեր կարծիքով, հատվածում շոշափվում են «Մատեանի» տեսական նախահիմքերը։ Այս առնչությունները բազմաթիվ և բազմաշերտ են թե՛ «Մատեանի», թե՛ Գրիգոր Նարեկացու այլ երկերի հետ։ Այստեղ ներբերենք նմանատիպ մի հատված «Մատեանից», որ հոգեհարազատ և համահունչ է նարեկացու այս քարոզին։

Եւ արդ, եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ,
Եւ առ երեսս ոչ կերպարանեսցի,
Եւ կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ,
Եւ մարդ զինքն ծանիցէ,
Եւ հասարակաց բնութեամբ վարեսցի,
Եւ երկրածին զանձն դիտեսցէ,
Եւ ի չափ իւրում կանոնին կացցէ,
Իմասցի, ծանիցէ զնախաթիւ մասունս
արկածիցդ վերագրելոց,
Թէ ոչ ընդունայն ինչ գրեցի
Եւ կամ զբնաւ իսկութիւնն սահմանեցի,
Որ ի մերս բնութեան պտուտկի ազգի ազգի
վրիպականութիւն,
Այլ ի բիւրուցն արգասեաց չարեաց չափ
մի երեւեցուցի,
Զի նոքաւք եւ զայլսն իմաստասիրեսջիք,
Թէպէտ եւ ոչ բովանդակապէտ։

(Բան Զ, 6)

Ինքնաճանաչման, ինքնահայեցողության այս գաղափարն է դրված «Մատեանում», որը նաև «Ճառի» բուն գաղափարն ու բովանդակությունն է կազմում։ Այս գաղափարն է հեղինակը դնում իմաստասիրության հիմքում, որի մասին բազմիցս խոսվում է «Ճառում»։ *Օրինակ, հետեւյալ հատվածներում.*

«Եւ իմաստունք, հայելով յինքեանս, եւ յիմարք լիցին ի չարիս՝ բնաւ չճանաչելով, թէ զինչ իցէ չարն. եւ իմաստունք ի բարիս՝ յառաջ ածելով զբազումս ի խելս եւ ի հանճարս՝ ըստ Աստուծոյ...»⁵:

Զափաւոր եւ սակաւ կենաւքս իմաստունքն յաւիտենից հանգիստ գուգին անեզր եւ անսպառ մշտնջենաւորութեամբ...»⁶:

Նմանություններն այնքան ակնհայտ են, որ կասկած չեն թողնում, որ մենք գործ ունենք նույն հեղինակի հետ։

Այդ քննական ոգին, որ թափանցել է հոգեոր արվեստների մեջ, ներհատուկ է ընդհանրապես Նարեկյան դպրոցին։

Գրիգոր Նարեկացու ուսուցչի՝ Անանիա Նարեկացու «Յաղագս զղջման եւ արտասուաց» երկում, ուր հեղինակը բանաստեղծական աղոթքի իր տեսությունն է ներկայացնում, հանդիպում են նման դրույթներ։

«Եւ փորձեա՝ զբնութիւնդ, թէ յորպիսի պատճառէ գայ զղջումն, եւ յայն յաճախեա, եւ դարձեալ՝ միտ դիր, թէ յորպիսի պատճառէ շիջանի, եւ զայն ի բա՛ց ընկեա...»

Եւ քննեա՝ զմիտսդ եւ տե՛ս. եթէ գտանէս պատճառս, որ խիղճդ դատէ զքեզ, զայն ի բա՛ց ընկեա։ Յայնժամ

⁵ Նույն տեղում, էջ 1060:

⁶ Նույն տեղում, էջ 1061:

աղաւթիցն լոյսն ի հոգիդ ծագէ, եւ շնաւրհն ի միտսդ ազդ առնէ, եթէ ընդունելի⁷ եղեն աղաւթքն քո եւ եթէ ոչ»⁷:

Այդ քննական, վերլուծական միտքն է, ահա, Գրիգոր Նարեկացին զարգացնում իր «Ճառի» մեջ:

*

«Ճառի» հեղինակային պատկանելության խնդիրը, սակայն, հետագայում տարակարծությունների տեղիք է տվել, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ:

Այս երկին և նրա հեղինակային պատկանելության հարցին անդրադարձել է Պ. Խաչատրյանն իր «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» մեծարժեք աշխատության «Գրիգոր Նարեկացուն վերագրված գործեր» գլխում⁸: Հեն-վելով բնագրի երկու վկայությունների վրա՝ նա բացառում է այս երկի՝ Գրիգոր Նարեկացուն պատկանելու հնարավորությունը: Այդ վկայությունները զետեղված են բնագրի մի հատվածում, որ մեջբերում ենք ստորև.

««Սակայն զի ո՛չ ըստ մեղաց իմոց արար Տէր եւ ոչ ըստ անօրէնութեան հատոյց ինձ, այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր ի վերայ նուաստութեանս իմոյ, եւ որպէս գթայ հայր ի վերայ որդւոց՝ գթացաւ Տէր յերկիւղած անձն իմ, զի ոչ միայն եկի ի պատկեր Արարչին՝ յարգանդ եկեղեցւոյ ի նա անկայ եւ կաթնաբուծ եղեալ ի հոգեւոր ստեանցն՝ քահանայ մեծ ի տան նորա մեծարեցայ, եւ հին եւ նոր գանձուց նորա ընդունակ լինել արժանաւրեցայ, թէ եւ ո՛չ ըստ արժանւոյն յոգի եւ ի միտս գանձել՝ փոքր կացուցեալ զանօթս, այլ ի լսելիս եւ ի

⁷ Մատենադարան, ձեռ. N 2680, թերթ 305թ:

⁸ Ս. Էջմիածին, 1996, էջ 134-136:

շրթունս, եւ ի տեսիլ աչաց, եւ ի բազուկս բառնալով գգիրս աստուածաշունչս՝ հոգեշունչ լինել յուսացայ՝ մինչեւ յայս ահաւոր ատեանս եւ ի սոսկալի ժամու յառաջ կոչեցեալ հրաւիրեցայ, եթէ ըստ արժանեաց ո՛չ ունիլ ասել, յամենայնի գոլով անբաւական եւ անարժան, բայց եթէ նախախնամութեամբ ներել ազատ կամաց մերոց... առաւել ցուցեալ յիս զամենայն երկայնամտութիւն եւ զանյիշաչարութիւն, քան թէ առ հովիւսն եւ առ ձկնորսսն, կամ առ մաքսաւորսն եւ հալածիչսն, յաղագս որոյ առեալ ընդ իս զբոլոր գոյս ի մասունս բաժանելով եւ ստիքս կոտորելով՝ քան զկիտուածս մանրութեան հատիդ մանանխոյ, տալով բնաւիցն խօսուն լեզուս, եւ ամենեքումբք գոհանամք զնմանէ, որ ետ ինձ ի վայելս զայս ամենայն։ Եւ ի կատարման աստ, եւ յոտն կալ պարզեւաց առակի աստուածարկու եւ քրիստոսաժողով հարանց եւ հարազատաց եղբարց՝ առնուլ զօրհնութիւնս եւ զաղօթս աղեկիզեալ եւ սիրալի եւ աստուածագութ խնամոցն, եւ արկանել ջուր ի վերայ մաքուր ոտից ձերոց ի տանէ Տեառն բխմանէ, յորմէ արբեալ իբրեւ յանապակ գինւոյ՝ անդիտացաք զչափս անձին մերոյ, որ եւ բնաբանիս անգամ ո՛չ զգուշացաք...»⁹ (այստեղ և այսուհետև ընդգծումները մերն են – Հ. Թ.):

Դ. Խաչարյանի տեսակետը հենվում է հիմնականում տպագիր տարբերակի այս հատվածի վրա։ Այսպես, նա գրում է. «Վերադառնալով երկի հեղինակային պատկանելության խնդրին՝ ամենք, որ նրանում հատկապես երկու վկայություն կա բուն հեղինակի դասային աստիճանի ու պարտավորվածության վերաբերյալ, որոնք բացառում են

⁹ «Ճառ», էջ 314-315:

Նարեկացու առնչությունը քարոզի հետ։ Հեղինակն ինքն իր մասին ասում է. «...զի ոչ միայն եկի ի պատկեր Արարչին՝ յարգանդ եկեղեցւոյ ի նա անկայ, եւ կաթնաբուծ եղեալ ի հոգեւոր ստեանցն՝ քահանայ մեծ ի տան նորա մեծարեցայ...» (Էջ 314)։ Ընդգծված կապակցությունը ցույց է տալիս, որ հանձին հեղինակի մենք գործ ունենք կաթողիկոս հայրապետի և կամ եպիսկոպոսապետի հետ, որպիսին Նարեկացին չի եղել։ Ի հավելումն այդ խոստովանության՝ քարոզասացը շարունակության մեջ անդրադառնում է «աստուածարկու եւ քրիստոսաժողով հարանց եւ հարազատաց եղբարց», որոնք ստանալու են իր, իբրև եկեղեցում Քրիստոսի փոխանորդի, «զաւրհնութիւնս եւ զաղերս», և ինքը պարտավոր է «արկանել ջուր ի վերայ մաքուր ոտից» նրանց՝ «ի տանէ Տեառն բխմանէ» (315): Հեղինակը, ուղեմն, սոսկական քահանա չէ (ինչպես Նարեկացին է իրեն կոչում), այլ բարձրաստիճան քահանա-եկեղեցական։ Քարոզը մեկ ուրիշ մատենագրի գործ է։ Եթե ենթադրելու իրավունք վերապահեինք մեզ, կանգ պիտի առնեինք 13-14-րդ դարերում Հայկական Կիլիկիայում գործած որևէ կաթողիկոսի անվան վրա»¹⁰:

Ինչպես տեսնում ենք, վերջին ենթադրությունը շատ զգուշավոր ու թեական է։ Հարց է ծագում՝ եթե նման ընթերցման հիմքեր լինեին, «Ճառի» ձեռագիր օրինակը հայտնաբերող և հրատարակության հանձնող Կ. Պոլսի նախկին պատրիարք, արքեպիսկոպոս Մատթեոս Զուխանցյանը, ինչպես նաև բուն հրատարակիչը, որի անունն անհայտ է, մի՞թե չէին նկատի այդ հանգամանքը՝ գործն ան-

¹⁰ Պ. Խաչատրյան, «Գրիգոր Նարեկացին և Հայ միջնադարը», Էջ 136:

վերապահորեն Գրիգոր Նարեկացունը համարելուց առաջ՝ Ավելին, հրատարակիչն, իբրև հմուտ բնագրագետ, էական առնչություն է բացահայտել Գրիգոր Նարեկացու «Մատեանի» և այս «Ճառի» միջև։ Այս մասին հպանցիկ նշում է նաև Պ. Խաչատրյանը՝ որևէ հիմնավոր փաստարկով չերքելով այն. «Նրա կարծիքով, հավանաբար Նարեկացին գրել է նման շատ քարոզներ՝ ուղղված «առ ժողովելոցն բազմութիւն», «ի յորդոր պատշաճից կենացն»։ Նույնիսկ «Ողբերգութեան մատեանում», ԼԴ գլխում, մատնացույց է անում այդպիսի մի հատված՝ «Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն» սկսվածքով, որը գրած է նույնպես քարոզի նպատակով՝ «ի հանդիսարանս խաւսից ատենի» (տե՛ս քարոզի հրատարակությունը (Էջ 312), ինչպես նշվում է բազմաթիվ ձեռագրերում ու տպագիրներում»¹¹:

Պ. Խաչատրյանի նմանօրինակ փաստարկներում ի հայտ է գալիս ևս մի հակասություն։ Ըստ նրա՝ հեղինակը գործի ավարտին «շարադրում է դաւանութիւն – հաւատոյ հանգանակ՝ իսկապես մի փառաբանություն Ս. Երրորդությանը։ Այս հատվածը տարբեր է Նարեկացու՝ Մատյանում եղած նույնաբնույթ բաժնից (ԼԴ գլուխ, Բ-թ Հատվածներ), մինչդեռ, թվում է, եթե Նարեկացունը լիներ, այս կետում է, որ հարազատություն պիտի բերեր նրան»¹²:

Բանն այն է, որ Գրիգոր Նարեկացին ունի նաև հավատո հանգանակի այլ տարբերակ՝ զետեղված նրա «Համառաւտ բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» գործում, որը նույնպէս չի համընկ-նում «Մատեանում» տեղ գտածի հետ։ Սա ընդհանրապես

¹¹ Նույն տեղում, Էջ 135:

¹² Նույն տեղում։

լուրջ փաստարկ համարվել չի կարող, քանի որ մեկ անգամ չէ, որ հեղինակը հանդես է գալիս նույն գաղափարախոռության տարրեր շարադրանքով՝ պահպանելով ընդհանուր ուղղվածությունն ու բովանդակությունը։ Սակայն կա մի ուշագրավ փաստ ևս. «Մատեանի» նշված հավատու հանգանակը նույնությամբ կրկնված է Գրիգոր Նարեկացու անունով մեզ հասած «Կարգ եւ կանոն աղաւթից» խրատում¹³։ Սակայն այս դեպքում ևս, մերժելով ձեռագրական ավանդույթը և շրջանցելով այս, մեր կարծիքով, էական փաստը, հեղինակը հերքում է նաև այս երկի Գրիգոր Նարեկացուն պատկանելու հնարավորությունը¹⁴։

Հեղինակը չի համեմատել նաև այլ ձեռագրական տվյալները, որոնց կանդրադառնանք։

*

Կրկին վերընթերցենք վերոհիշյալ հատվածը՝ ներառելով նաև դրա նախորդ մասը։

«Սակայն զի ո՛չ ըստ մեղաց իմոց արար Տէր եւ ոչ ըստ անօրէնութեան հատոյց ինձ, այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր ի վերայ նուաստութեանս իմոյ, եւ որպէս գթայ հայր ի վերայ որդւոց՝ գթացաւ Տէր յերկիւղած անձն իմ, զի ոչ միայն եկի ի պատկեր Արարչին՝ յարգանդ եկեղեցւոյ ի նա անկայ եւ կաթնաքուծ եղեալ ի հոգեւոր ստեանցն՝ քահանայ մեծ ի տան նորա մեծարեցայ, եւ հին եւ նոր գանձուց նորա ընդունակ լինել

¹³ Այս խրատին մենք անդրադարձել ենք մեր «Գրիգոր Նարեկացին և նորպլաստնականությունը» գլուխում (Երևան, 2004, էջ 396-401)։

¹⁴ Տե՛ս Պ. Խաչատրյան, «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը», էջ 129-134։

արժանաւորեցայ, թէ եւ ո՛չ ըստ արժանւոյն»։ Այս հատվածում, մեր կարծիքով, հավանական է մեծի տան և ոչ մեծ ի տան ընթերցվածը, և մեծ ածականը վերաբերում է Աստծո տանը, ինչպես է ՄՄ, թիվ 1324 հնագույն ձեռագրում (1281 թ., Հաղպատ)՝ «Քահանայ տան նորա մեծի մեծարեցայ...»։

Անգամ եթե ճիշտ է տպագիր տարբերակը, մեր համոզմամբ, մեծ քահանա արտահայտությունը եկեղեցական բարձրագույն աստիճան չի նշանակում, այն կրոնական համայնքի կողմից հեղինակի մեծարման վկայություն է, որի մասին պարզորոշ գրել է ինքը։ Դրա ապացույցն են Գրիգոր Նարեկացու «Մատեանի» հետևյալ հայտնի տողերը.

Պետ վարժից կոչեցայ...
Ուաբբի ուաբբի անուանեցայ...
Սուրբ վկայեցայ ի մարդկանէ...

(ՀԲ, Դ)

Մարդիկ մեծարել են «Մատեանի» հեղինակին սուրբ, ուաբբի ուաբբի, վարժապետ անվանումներով։

Նշված հատվածների կապն առավել քան ակնհայտ է, ինչպես ակնհայտ է նաև ոճական հարազատությունը (մասնավորապես կիրառված են հակադրության նույն սկզբունքն ու նույնատիպ օրինակներ)։

Այս, Գրիգոր Նարեկացին, արդեն իր կենդանության օրոք, իր իսկ վկայությամբ, սրբի և մեծ վարդապետի համբավ ուներ, որ հավասարազոր և ավելին է, քան մեծ քահանա անվանումը, որն այստեղ կարող էր կիրառվել ոչ թե եկեղեցական բարձրագույն աստիճանի, այլ ուսուցչապետի, մեծ վկայողի ու աղոթասացի իմաստով, որ բացահայտ-

վում է ատենախոսության հաջորդ հատվածներում։ Այսպես. «Քահանայ մեծ ի տան նորա մեծարեցայ, եւ հին եւ նոր գանձուց նորա ընդունակ լինել արժանաւորեցայ, թէ եւ ո՛չ ըստ արժանւոյն յոգի եւ ի միտս գանձել՝ փոքր կացուցեալ զանօթս, այլ ի լսելիս եւ ի շրթունս, եւ ի տեսիլ աչաց, եւ ի բազուկս բառնալով զգիրս աստուածաշունչս՝ հոգեշունչ լինել յուսացայ՝ մինչեւ յայս ահաւոր ատեանս...»

Թաղագս որոյ առեալ ընդ իս զբոլոր գոյս ի մասունս բաժանելով եւ ստիքս կոտորելով՝ քան զկիտուածս մանրութեան հատիդ մանանխոյ, տալով բնաւիցն խօսուն լեզուս, եւ ամենեքումբք գոհանամք զնմանէ, որ ետ ինձ ի վայելս զայս ամենայն։ Եւ ի կատարման աստ, եւ յոտն կալ պարգեւաց առակի աստուածարկու եւ քրիստոսաժողով՝ հարանց եւ հարազատաց եղբարց՝ առնուլ զօրհնութիւնս եւ զաղօթս աղեկիզեալ եւ սիրալի եւ աստուածագութ խնամոցն»¹⁵.

Հեղինակը խոսում է Սուրբ Հոգու շնորհով և ազդեցությամբ իր հոգեշունչ, աստվածախոս լինելու, ամբողջ էությամբ, բոլոր զգայարաններով բազկատարած աղոթելու մասին։ Ավելին, նա աղոթում է բոլորի փոխարեն, նա բոլորի պատգամախոսն է և օրհներգուն։ Սուրբ Հոգին նրան պարգևել է «բոլորի լեզվով» խոսելու ձիրքը, և նա իր մեջ է առել բոլոր գոյերին, բնության բոլոր տարրերը և տարերքները, համայն քրիստոնյաներին և «աղէկիզեալ եւ սիրալի» աղոթում և օրհներգում է առ Աստված։

Որքան հարազատ և համահունչ է այս խորհրդավոր հատվածը Գրիգոր Նարեկացու «Մատեանին»։ Կարծես նրա նախագաղափարը կամ ծրագիրը լինի։ Հոգեշունչ աղոթք-

¹⁵ «Ճառ», էջ 314-315:

Ների միջոցով բանաստեղծը բացում է իր հուզագեղության և տեսիլքների աշխարհը, որոնց բացառիկ արտահայտությունները կան հեղինակի «Մատեանում» և տաղերում:

Այստեղ խոսվում է առավել միստիկ, խորհրդագգած բանաստեղծի մասին, որ նաև եկեղեցու մեծ քահանա, վարդապետ է, ինչպիսին և էր Գրիգոր Նարեկացին:

*

Այժմ անդրադառնանք «Ճառի» և «Մատեանի» ԼԴ գլխի առնչություններին, որոնց մասին նշում է հրատարակիչը: Ատենախոսության մեջ ևս պարզորոշ արտահայտված է «Մատեանի» ԼԴ գլխի ներքին հղացքը՝ բանաստեղծ-քարոզիչը Սուրբ Հոգու զորությամբ «հոգեշունչ» դարձած, բոլորի փոխարեն խոսելու ձիրք ստացած՝ ատենախոսում է քրիստոսաժողով բազմության և միաբանների առջև՝ միախառնելով այն իր աղեկեղ աղոթքների և օրհնաբանության հետ:

Աղոթքի, քարոզի, օրհնաբանության և իմաստասիրության այս «հոգեշունչ» միախառնությունն, ահա, ներքին խորքի ու կառուցվածքի է բերվել «Մատեանի» տարբեր հատվածներում, և դրա ցայտուն օրինակներից է ԼԴ գլուխը: Այստեղ տեղին է հիշել նաև միանձանց ու վանականներին ուղղված «Մատեանի» խրատատիպ հատվածները, որոնք շարակցված են աղոթքների ու օրհնաբանությունների հետ և, գուցե հատվածաբար, ընթերցվել են նման բեմախոսությունների ընթացքում:

Այս ներքին աղերսներն ու արտահայտությունները «Մատեանի» ծիսական-կիրառական նշանակության նոր կողմերն են բացահայտում:

Հիշենք մեկ-երկու հատված «Մատեանից», որոնց մեջ
ատենախոսության և հանդիսարանի այդ զգացողությունը
կա:

Եւ քանզի զկերպարանն առաջին լքի
ի վնասակարին թելադրութենէ,
իմովս ծուլութեամբ կորուսեալ իսպառ, —
Յուցից արդ այժմուս զհնոյն յիս տեսակ՝
Ողորմելի հեծութեամբ թախծեալ ի հոգի,
Անաչառ խայտառականաւք հրապարակաւ
ի յեկեղեցիս բազմութեան ազգաց վերապատմեցից՝
Բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով:

(ԼՌ, Ա.)

Եւ քանզի առ ամենայն հասարակ տնկեցեալ
յերկրի ազգ բանականաց
Այս պատուէր նկարագրական նորոգ մատենի
ողբոց նուագի,
Որ զամենեցունց ունի կրից պատահմանց,
նշաւակեալ յիւրում պատկերի,
Իբր կցորդ մեծգիտակական կարեաց
համայնից՝
Առ բոլոր գումարս բազմահոլով
տիեզերակոյտ քրիստոնէից...
Որոց ոմանց՝ աղերս աղաչանաց, եւ ոմանց՝
խրատ բարեաց
Առ դէմս աղաւթից այսու մատենիւ
մատակարարեացի,
Զեռնարկեալ Հոգւոյդ զաւրութեամբ...

(Գ, Բ.)

Հնդհանրապես, կարծում ենք, համաքրիստոնեական հանդիսարանի և բեմախոսության այդ հղանցքն ընկած է «Մատեանի» հիմքում, որ պաթետիկ հզոր շեշտեր և հռետորական ոճ է հաղորդում նրան։ Սա վկայում է, որ Գրիգոր Նարեկացին նաև կենդանի շփում է ունեցել իր լսարանի հետ։ «Մատեանի» շատ հատվածներում այդ ներքին հանդիսարանը ծավալվում է՝ իր մեջ ներառելով համաշխարհը, և մենախոսությունը դառնում է տիեզերական բեմախոսություն։

*

Հարցի մեջ վերջնական պարզություն մտցնելուն օգնում են նաև Գրիգոր Նարեկացու հիշատակարանները, ուր նա կարեոր տեղեկություններ է տալիս իր հոր՝ Խոսրով Անձեացու, եղբայրների՝ Սահակի և Հովհաննեսի, իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու, ինչպես և իր մասին, որոնք լույս են սփռում վերը նշված հանդամանքների վրա։

Առաջինը Երգ Երգոցի մեկնության հիշատակարանն է, որից պարզվում է, որ նա երիտասարդ հասակում արդեն նշանավոր գիտնական և քահանա էր, և երկը գրել է արքունական պատվերով։

«Ի ՆԻԶ (977) թուականութեանս Հայոց հարկեցայ ես՝ Գրիգոր քահանայ ի Նարեկայ, որդի տեառն Խոսրովայ Անձաւացեաց եպիսկոպոսի, ի Գուրգէնայ աստուածասէր քրիստոսապակեալ արքայէ... առ ի մեկնութիւնս ահաւոր բանիցն Սողոմոնի...»¹⁶։ Մեկնության խորագրում հեղինակը կոչվում է «ներանձնաւոր քահանայ եւ հոգեշնորհ վարդապետ»։

¹⁶ Տե՛ս «Մատենագիրք Հայոց», Հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Էջ 882։

Ներսես Լամբրոնացին Գրիգոր Նարեկացու մասին իր հեղինակած վարքում գրում է. «Սուրբ Հայրս մեր, աստուածաշնորհ քահանայս եւ կրաւնաւոր Գրիգոր... եւ վախճանեալ եղբաւը մնաց Գրիգոր միայնակ յերկս առաքինութեան եւ յաշխատութիւն ընթերցման անյագ բաղձանաւք չնորհաւք գիտութեան»¹⁷:

Գրիգոր Նարեկացու վարքը զետեղված է «Մատեան ողբերգութեան» երկի՝ Լամբրոնացու պատվիրած օրինակում, որ հնագույնն է պահպանվածների մեջ (1173 թ.). և կարևորագույն սկզբնաղբյուր է նարեկացիագիտության համար: Այս վարքով է Գրիգոր Նարեկացին պաշտոնապես սրբացվել և դասվել հայ եկեղեցու սրբերի շարքը:

Գրիգոր Նարեկացու վարքի երկրորդ տարբերակում շեշտվում է. «Երիցս երանեալ սուրբ Հայրս մեր եւ աստուածաշնորհ մեծ վարժապետս Գրիգորիոս...»¹⁸:

Լամբրոնացու պատվիրած ձեռագրի առաջին մանրանկարը խորագրված է «ՄԲ ԳՐԻԳՈՐ ՓԻԼԻՍՈՓԱՅ», իսկ զուգադիր կիսախորանում նշված է. «Գրիգորի Նարեկայ վանից վանականի հոգեմատեան հոետորի եւ Հայոց փիլիսոփայի ի խորոց սրտի խաւաք ընդ Աստուծոյ»¹⁹:

Հիշարժան են նաև Գրիգոր Նարեկացու մյուս երկու հիշատակարանները: Մեկում, որը կցված է նրա հայտնի եռագրությանը, Գրիգորն իր և իր եղբոր մասին գրում է. «Ես Գրիգոր՝ յետին վարդապետաց եւ կրտսէր բանասիրաց... եւ զեղբայրն իմ զանդրանիկ զթովհաննէս՝ ցանկալի

¹⁷ Մատեանագարան, ձեռ. N 1568, թերթ 128ա:

¹⁸ Տե՛ս «Մատեան», քննական բնագիր, Առաջաբան, էջ 172-173:

¹⁹ Մատեանագարան, ձեռ. N 1568, թերթ 8ը:

անուն, հանճարեղ գիտնական եւ իմաստասէր, առաւելքան զիս...»²⁰:

Երկրորդը «Մատեանի» նույնաբովանդակ հիշատակարանն է. «Ես՝ Գրիգոր կրաւնաւոր քահանայ, յետին բանահիւսաց եւ կրտսէր վարժապետաց, գործակցութեամբ եղբաւր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ, Նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ ուխտի վանականի, որք իբրեւ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղակցելով, ոչ միայն հարազատք, այլ եւ միաշունչք, միակրաւնք, համապատիւք, զուգահաւանք...»²¹:

Կերջին հիշատակարանից, որով ավարտվում է «Մատեանը», կարելի է եզրակացնել, որ Հովհաննես Նարեկացին, որ այդ ժամանակ վանքի առաջնորդն էր, կենդանի էր «Մատեանի» ավարտի ժամանակ: Ընդհանրապես, Գրիգոր Նարեկացու կյանքի վերջին տարիները ծածկված են առեղծվածային մշուշով. ընդունելի է այն տեսակետը, որ նա մահացել է «Մատեանն» ավարտելուց հետո՝ 1003 կամ 1004 թվականին (Մ. Աբեղյան, Մ. Մկրյան, Պ. Խաչատրյան և այլք): Բանասերների մի խումբ էլ (Գ. Զարբհանալյան, Ե. Դուրյան, Ս. Քիպարյան և ուրիշներ) նրա մահը գնում են 1010-11 թթ.: Վարքի տարբերակները վկայում են, որ նա ապրել և կենցաղավարել է եղբօր մահից հետո: Այդ դեպքում ո՞վ, եթե ոչ «սուրբ եւ ուաբքի», Հայոց փիլիսոփիա և հոգեմատյան հոետոր, աստվածաշնորհ մեծ վարդապետ հոչակված Գրիգորը պետք է ստանձներ վանքի առաջնորդությունը: Ընդ որում, Ներսես Լամբրոնացու ձեռագրում

²⁰ «Մատենագիրք հայոց», հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, էջ 963:

²¹ Նույն տեղում, էջ 605:

նա, իր եղբոր նման, «Նարեկայ վանից վանական» է կոչվում, որն այստեղ, ամենայն հավանականությամբ, վանահոր նշանակությամբ է գործածված: Նա իրեն համապատիվ է համարում իր եղբորը, որը ևս մի կռվան է այս վարկածի օգտին:

Բայց, անկախ այս հանգամանքից, բնական է, որ իշարս բարձրագույն վարդապետական աստիճանի և թվարկված պատվանունների, Գրիգոր Նարեկացին նաև մեծ քահանա կոչվեր:

Սակայն, ցանկանում ենք շեշտել՝ Գրիգոր Նարեկացու առաքելությունը ժամանակի հայ հոգեոր կյանքում շատ ավելի մեծ էր, քան քահանայագործությունը կամ վանքի առաջնորդությունը: Նա մեծ վարդապետ և սուրբ էր հոչակված, և նրան էր վերապահված զորացնել և բարեշրջել եկեղեցական խաթարված կարգերը, փոխել հոգեոր արվեստների ողջ համակարգը՝ հոգեոր ազգեցության նոր շունչ ու ողի հաղորդելով դրանց: Նա հենց այդ նպատակով է ստեղծել իր «Գանձտետր» եկեղեցական-ծիսական ձեռնարկը՝ իրեւ գանձերի և տաղերի ժողովածու, որոնք պետք է կատարվեին եկեղեցական տոնակատարությունների ժամանակ: Նա նաև այս ժանրերի ստեղծողն է հայ հոգեոր բանաստեղծության և երաժշտության մեջ²²:

²² Այս մասին տե՛ս Գրիգոր Նարեկացի, Գանձեր և տաղեր, աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի, Երևան, ԳԱ հրատ., 1982, Ներածություն, էջ 7-56: Աշխատասիրողն այս մասին գրում է. «Բերված համեմատությունները ցույց են տալիս գանձերի կապը ժամագրքային հնագույն քարոզների հետ, որոնցից հիմնականում օգտվել է Գրիգոր Նարեկացին նորորակ իր քարոզները՝ գանձերը հորինելիս: Դա ամենեին պատահական չէ. հայտնի է, որ Գրիգոր Նարեկացին զբաղվել է մեր եկեղեցու ժամակարգությանը և հոգեորական դասին վերաբերող զանազան ինդիրներով ու կատարել որոշ քարեփոխումներ: Հայսմավուր-

Դրան էին ծառայում իր նորաշունչ, պաթետիկ հզոր շեշտադրումներով ու փիլիսոփայական խորքով օժտված քարոզները:

Նա իր «Մատեանով» կոչված էր համաքրիստոնեական խնդիրներ լուծելու և իրբե հանճարեղ փիլիսոփա-բանաստեղծ դրան էր ի սպաս դրել արարման և ստեղծաբանության իր ողջ ձիրքը:

*

Ինչպես նշեցինք, հրատարակիչը համեմատում է այս «Ճառը» «Մատեանի» ԼԴ գլխի հետ՝ երկուսն էլ համարելով քարոզ, ատենախոսություն, ատենաբանություն:

Նարեկացին ինքն է առաջինը կիրառել այս աղոթքատենախոսությունը՝ քահանայագործություններից առաջ, որից հետո այն կանոնակարգվել է եկեղեցու կողմից:

Իսկ դրան մեծապես նպաստել է Ներսես Լամբրոնացին, իր պատվիրած ձեռագրով, Գրիգոր Նարեկացու իր հեղինակած վարքով և ձեռագրում արված իր ընդգծումներով, գլխակարգության լուսանցագրային բացահայտումներով:

Քում այդ մասին որոշակիորեն ասվում է. «Զի ջան եւ փոյթ էր Սրբոյն վասն միաբանութեան եկեղեցեաց, զի գեղծեալ եւ անփոյթ արարեալ կարգս եկեղեցու սրբոյ ի ծուլից եւ ի մարմնասէր առաջնորդաց կամէր հաստատել եւ վերստին նորոգել»: Այս ուղղությամբ Գրիգոր Նարեկացու ձեռնարկած միջոցառումները, ըստ երևույթին, բավական լուրջ բնույթ են կրել, պատճառ դառնալով եկեղեցականների վրդովմունքին, որի համար նրան մինչև իսկ հանդիմանել են» (Էջ 39):

Իր մի այլ աշխատության մեջ («Գանձարանային մշակույթ, սկզբնավորում և զարգացում», Երևան, 2008) գեղինակը դրում է. «Գրիգոր Նարեկացու կենսագրությունից հայտնի է, որ նա հետամուտ է եղել բարեփոխումներ կատարելու եկեղեցու ժամակարգության մեջ, վերջինս համապատասխանեցնելով վերընթաց զարգացում ապրող տվյալ ժամանակաշրջանի թելադրանքին: Այդ բարեփոխումների կարևոր մեկ արգասիքն էր նաև գանձարանային բանաստեղծությունների և Գանձարան ժողովածուի ծնունդը» (Էջ 30):

ԼԴ գլխի դավանաբանական-ատենախոսական բնույթի և բովանդակության մասին են խոսում՝ հենվելով Նարեկացու հիշյալ տողերի վրա, նաև «Մատեանի» քննական բնագրի հրատարակիչները (Պ. Խաչատրյան, Ա. Ղազինյան): Նարեկացու հիշատակության հիման վրա նրանք զուգահեռ են անցկացնում նաև «Մատեանի» ԼԳ գլխի հետ, որ դարձյալ դավանաբանական բովանդակություն ունի: «Նախորդ գլխի նման այս գլուխը ևս ունի դավանաբանական բովանդակություն: Առաջին մասը նվիրված է Սուրբ Հոգուն՝ ատենախոսության կամ բեմախոսության շնորհի հայցմամբ, երկրորդ մասը՝ նիկիական հավատի հանգանակին, երրորդը՝ գոհաբանություն է Քրիստոսին... բանախոսն այն պարզ միտքն է արտահայտում, որ ինքը բանախոսությամբ, քարոզով, բեմախոսությամբ բազմության, ժողովրդի առջև հանդես գալուց առաջ աղոթքով դիմում է Սուրբ Հոգուն, որ նա լուսավորի իր միտքը աստվածային գիտության անստվեր ծագմամբ, որ ինքն արժանի լինի «առնել եւ ուսուցանել՝ յաւրինակ բարեաց աստուածասէր լսողաց» (տե՛ս անդ, Էջ 1040-1041):

Հստ «Ճառի» հրատարակչի՝ այն Գրիգորի առաջին ատենախոսությունն է, և նրանից է բխում «Մատեանի» ԼԴ գլուխը, որ մաղթանքի խոսք է հանդիսարանի առջև. «Ի հանդիսարանս խօսից ատենի ասաց մաղթել զՍրբոյ Հոգույն օգնականութիւն»:

Բացի բուն «Մատեանի» նշված հատվածների բովանդակությունից, այս տեսակետը հենվում է նաև «Մատեանի» ձեռագրական ավանդույթի վրա, որից ձևավորվել է նաև տպագրական ավանդույթը: Բանն այն է, որ ԼԴ գլխի

առաջին հատվածից՝ «զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք» տողից հետո եկող մասը բոլոր ձեռագրերում ենթախորագիր ունի, այն է՝ «ի հանդիսարան խաւսից ատենի՝ բանս մաղթանաց, որով Հոգին Աստուծոյ հաշտեալ՝ հասանէ յաւգնականութիւն»:

Հստ քննական բնագրի հեղինակների՝ այս ենթախորագիրը, ինչպեսև «Մատեանի» բոլոր ենթախորագրերը, հեղինակային չեն, թեև ծագում են նարեկացու բնագրից²³:

Մեր համոզմամբ, այդ ավանդույթի հիմքում դարձյալ Ներսես Լամբրոնացու պատվիրած «Մատեան» է, ուր այս ենթախորագիրը լուսանցագարդի մեջ է առնված:

Այս առումով հարկ է անդրադառնալ նաև նարեկացու «Մատեանի» ԼԳ գլխի Զ-Ը հատվածներին, որ Սուրբ Հոգուն ուղղված մի ամբողջական աղոթք են ներկայացնում: Նարեկացու այս աղոթքը պետք է հնչեր նախքան պատարագը, այսինքն՝ այն մաքրագործության խորհուրդ ուներ:

Քանզի եւ ի դէմս Հոգւոյն Սրբոյ այս են
աղաչանք,

Նախընծայ սկզբան պատարագին,
Յորում գառդ երկնաւոր գենանի, գայս
աղաւթեցի:

(ԼԳ, Ե)

Ներսես Լամբրոնացուն պատկանող հնագույն ձեռագրում, դարձյալ լուսանցագարդի մեջ առնված, այս տողերին հաջորդում է բուն աղոթքի ենթախորագիրը՝ «Աղաւթք, որ նախքան պատարագն մատուցանի»:

²³ Տե՛ս անդ, Էջ 1041:

Եվ դարձյալ մենք գործ ունենք ավանդույթի ձևավորման հետ։ Դրանից հետո բոլոր ձեռագրերը կրկնում են այդ ենթախորագիրը (տե՛ս «Մատեան», քննական բնագիր, էջ 1035)։

Մեր համոզմամբ, այս ձեռագրի բոլոր ենթախորագրերի ու բնագրային ընդգծումների հեղինակը Ներսես Լամբրոնացին է։ Նրա ներմուծած այս ենթախորագրերն օդնում են վերհանել «Մատեանի» այս երկու գլուխների միջև եղած առանցքային կապը։ Դրանք բանալիներ են՝ այս գլուխների և ընդհանրապես «Մատեանի» բնագրային խորքերը թափանցելու համար։

Առաջին անգամ Լամբրոնացին է ընդգծում «Մատեանի» Լ. Դ գլխի նշված հատվածի ատենախոսական բնույթը։

Հատկանշական է նաև, որ Ներսես Լամբրոնացին իր առաջին ծավալուն մեկնության մեջ Լ. Գ գլխի աղոթքը խորազնին մեկնաբանության է ենթարկել՝ տալով արժեկորումներ և բնութագրումներ, որոնք էական և ընդհանրական են Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործության համար²⁴։

Այս մեկնությունից պարզվում է, որ Ներսես Լամբրոնացու օրոք Լ. Գ գլխի նշված աղոթքն արդեն ներմուծվել էր պատարագի արարողակարգի մեջ։ Նրանով մաքրված՝ եպիսկոպոսը պետք է մոտենար խորանին՝ սուրբ խորհրդի կատարման համար։

Ահա «Մատեանի» այս բուն հղացքի հիմքում ընկած ներքին, խորքային կապերը, կառուցվածքային առնչակցությունները, ճյուղավորումներն ու զարգացումներն են երեան հանում նշված երկու գլուխները, որոնք ոչ միայն

²⁴Տե՛ս Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին, Վենետիկ, Ս. Ղազար, 1847, էջ 195-197, 250-260։

գրավել են Ներսես Լամբրոնացու ուշադրությունը, այլև արժանացել յուրովի մեկնաբանության՝ բացահայտելով դրանց ժանրային առանձնահատկություններն ու ներքին աղերսները։ Ակնհայտ է, որ Լամբրոնացու ԼԴ գլխի մեջ ներմուծած ենթախորագիրն է առիթ հանդիսացել հետագայում նշված «Ճառի» ու «Մատեանի» միջև բնագրային կապ տեսնելու ու նույն հեղինակի գործ համարելու համար։ Այս կարևոր փաստը ևս գալիս է միանալու ձեռագրական ու տպագրական ավանդույթին։

Այս զուգահեռները և բնագրային աղերսները հուշում են նաև, որ «Մատեանի» որոշ գլուխներ ևս ընթերցվել են եկեղեցում։ Խոսքը հատկապես վանականներին և մենակյացներին նվիրված խրատաքարողատիպ հատվածների մասին է։ Հավանաբար, նման ներքին կառույց ևս պետք է փնտրել նաև «Մատեանի» այլ գլուխներում։

*

Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ԼԴ գլուխը և «Ճառի» նշված հատվածը նաև ոճական և ժանրային ընդգծված առնչություններ և ընդհանրություններ ունեն, որ հարկ ենք համարում ներկայացնել։

Այս առնչություններն ի հայտ են գալիս հատկապես ԼԴ գլխի աղոթքի մասում, ուր հեղինակը բարձրածայնում է հանդիսարանի առջև խոսելու, աղոթելու, քարողելու իր առաքելության մասին։

«Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս, ի կոյտս բազմութեան ազգաց եւ թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք։

(ԼԴ, Ա)

Շնորհեա՛ եւ ինձ՝ մեղաւորիս խաւսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ՝ հետեւել արագաթոիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց...

Եւ ի մատչել իմ ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժամանեացէ առ իս գթութիւն քո՛ խաւսելով յիս զարծանն եւ պիտանիսն եւ զհաճոյսն քո ի ժամանակի՝ ի փառս եւ ի գովեստ աստուածութեանդ քոյ եւ ի լրութիւն շինութեան կաթողիկէ եկեղեցւոյ...

Լուսաւորեա՛ ի յիս վերստին զծագումն անստուեր հրաշից գիտութեան աստուածութեանդ քոյ, հզաւը, արժանի լինել առնել եւ ուսուցանել՝ յաւրինակ բարեաց աստուածասէր լսողաց...

(ԼԴ, Բ)

Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի, զոր շաւիդ կարգիդ վերանկարէ...

(ԼԴ, Գ)

Արդ, զայս գոչումն ծածուկ խորհրդոց՝ կերպաւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ Աստուծոյ ընծայեցուցի, սովիմբ սպառազինեալ՝ եւ ապա մտի ի հանդէսն...

Այլ արդ, քանզի բազմաւք պաղատեցայ դրուատաւք խանդաղատականաւք, որ ոչ է գրեալ ի յայս կարգ ձայնի, լո՛ւր, բարեգութ, ըստ սմին բանի այնմ ամենայնի՛: Եղիցի եւ այս աղերս բարբառոյ հայցման աղաւթից յաւդեալ ընդ նոսին...»

(ԼԴ, Ժ)

Բանաստեղծն ակնարկում է նմանատիպ այլ բեմախոռնություն-աղոթքների մասին, որ տեղ չեն գտել «Մատեանություն»:
Դրանցից մեկն է, հավանաբար, նշված Ատենախոռնությունը, որում ևս հեղինակը խոսում է բոլոր քրիստոնյաների անունից և բոլորի առջե խոսելու, աղոթելու և օրհնաբանելու իր առաքելության մասին.

«Այլ ի լսելիս եւ ի շրթունս եւ ի տեսիլ աչաց եւ ի բազուկս բառնալով զգիրս աստուածաշունչս՝ հոգեշունչ լինել յուսացայ...»

Ֆաղագս որոյ առեալ ընդ իս զբոլոր գոյս... տալով բնաւիցն խաւսուն լեզուս... եւ ի կատարման աստ, եւ յոտն կալ... աստուածարկու եւ քրիստոսաժողով հարանց եւ հարազատաց եղբարց՝ առնուլ զաւրհնութիւն եւ զաղաւթս աղէկիզեալ եւ սիրալի եւ աստուածագութ խնամոցն...»²⁵:

Այս հատվածներում առկա են բնագրային ընդգծված առնչություններ և ներքին հղացքներ, որ ծագումնաբանական կապ են բացահայտում:

*

Հեղինակի փիլիսոփայության հիմքում բանական հայեցողությունն է, որին նա անդրադառնում է բազմիցս. նա մարդկային բանականության պաշտամունք ունի, մարդկային հայեցողությունը կատարվում է հոգու, մտքի աչքով, «մտաւոր խորհրդով եւ քննութեամբ»: Սա է նրա փիլիսոփայության անկյունաքարը:

«Հոգին Սուրբ բոլորից է ստեղծող եւ խնամածու, եւ զոր խաւսեցաւ աւրինաւք եւ մարդարէիւք եւ Աւետարանաւս, ընդ ամենեսեան խաւսի, որոց տուեալ է միտս եւ բա-

²⁵ «Մատեանագիրք հայոց», հ. Ժ, Ժ դար, Էջ 1042:

նականութիւն... զի որքան աստ են՝ յասպարիսի են. եւ ի տեղուջն հանդիսական...²⁶

Եթէ հայելովն ի մեզ կրկին իմաստք են երեւելի եւ աներեւոյթ աչաց պարզեւելոց մեզ ի Տեառնէ, ապա քննելի է, թէ որոց աչաց է հրամանս հայել յինքն... յայտ է, թէ մտացն է կարելի այս, որ ակն է ի հոգւոջն տեսաւղ եւ իմացաւղ, որով գիտէ հոգին զմարդոյն իբրեւ զաստուծայինսն Հոգին Սուրբ... բանաւոր մարդ, մտաւոր խորհրդով եւ քննութեամբ հայելով յինքն, կարէ զգուշանալ...²⁷

Մեք հայիմք ի մեզ յաճախ՝ իբրեւ ի հայելիս, եւ հստակեմք զակն հոգւոյ մերո՝ մաքրելով յախտից եւ ի մախանաց, եւ ի նախանձուէ, եւ ի հպարտութենէ, որք առնեն զաչս հոգւոյն շամանդաղ, յայնժամ կարեմք տեսանել զական ականսն... թեւաւքն վերացեալ ի ստորոտս երկրէ ի վերնական եւ յիմանալի...

Հայեա՛ց ի քեզ: Դարձեալ բան փիլիսոփայական, որ ասեն երեք մասունք են մարդկայինք՝ ա՛յլ եմք մեք, եւ ա՛յլ է մերն, եւ ա՛յլ է շուրջ զմեաւք. մեք եմք հոգի եւ միտք, զի այս է մարդն, որ է պատկեր Աստուծոյ՝ անմահ եւ երկնային, եւ մեր է մարմինս եւ հինգ զգայարանքս, որովք տեսանեմք եւ լսեմք եւ խաւսիմք, շաւշափեմք եւ հոտոտիմք... եւ շուրջ զմեաւք է տուն, հանդերձ եւ կերակուր եւ ինչք: Արդ, յորժամ ասէ՝ հայեա՛ց ի քեզ, ի հոգին, ասէ, հայել եւ ի միտս...²⁸

Իմաստունք, հայելով յինքեանս, եւ յիմարք լիցին ի չարիս՝ բնաւ չճանաչելով, թէ զինչ իցէ չարն. եւ իմաս-

²⁶ Նույն տեղում, էջ 1045:

²⁷ Նույն տեղում, էջ 1049:

²⁸ Նույն տեղում, էջ 1050:

տունք ի բարիս՝ յառաջ ածելով զբազումս ի խելս եւ ի հանձարս ըստ Աստուծոյ...²⁹

Զափաւոր եւ սակաւ կենաւքս իմաստունքն յաւիտենից հանգիստ զուգին անեղը եւ անսպառ մշտնջենաւորութեամբ...»³⁰:

Բանական այդ հայեցողությամբ է մարդ բարձրանում աստվածային ոլորտները, քանի որ հոգով և մտքով է անմահ և երկնային՝ իբրև Աստծո պատկեր: Այդ հայեցողությամբ է բացվում «աչքերի աչքը», և իմաստուն և հանձարեղ այրը հոգու և մտքի հայեցողության շնորհիվ է թափանցում «վերնական եւ իմանալի» աստվածային ոլորտները: Այս հայեցումն է Գրիգոր Նարեկացին «Մատեանում» անվանում «վերնական իմաստասիրութիւն»:

Մարդկային բանականության՝ իբրև հոգեոր գերագույն արժեքի այդ պաշտամունքը ևս ներհատուկ է նարեկան դպրոցին և Գրիգոր Նարեկացուն, և նրանց է փոխանցվել նորպլատոնական ուսմունքներից՝ հատկապես Փիլոն Ալեքսանդրացուց, Դավիթ Անհաղթից և Դիոնիսիոս Արեոպագացուց:

Իբրև դրա վկայություն՝ մեջ բերենք Գրիգոր Նարեկացու «Մատեանի» հայտնի հատվածը, որ «Ճառում» հանդիպող մարդկային բանականության փիլիսոփայական ձևակերպումների բանաստեղծական համարժեք արտահայտությունն է՝ դարձյալ այս երկու երկերի առանցքային կապը բացահայտող.

Հստ ձեւոյ հրեշտակի կառուցար,

²⁹ Նույն տեղում, էջ 1060:

³⁰ Նույն տեղում, էջ 1061:

Իբր ի թոիչս թեւոց կրկնաբարձ
 բազկաց վերատանողաց՝
 Յաշխարհն հայրենական հայել...
 Իբր գճրագ բազմաբերանեան
 ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ
 գլխոյդ բոլորութիւն,
 Զի եւ այսու ի յաւրինակէն շնորհէ
 մի՛ աւտարասցիս
Աստուած տեսանել եւ զմնացականացն
 իմաստասիրել:
 Բանականութեանն յարգանաւք կրկին
 ճոխացար,
 Զի զյաղթանակ բարեմասնութեանն,
 որ առ քեզ եղեն,
 Անարգել լեզուով խաւսեսցիս...
 Իբր կցորդ համացեղութեամբ
 ամենաբաշխ աջոյն
Աստուծոյ՝ Աստուած կոչեցար:
 Երից հարիւրոց եւ տասանց վեցից յաւդիւք
 շաղկապեցար՝
 Յարեալ ի քեզ ընդ նոսին ի նոյն
 եւ պատշաճական մասունս չափուց
 ազգողականաց հինգ զգայութեանց...
 Զի մի՛ եւ երեւելիդ նիւթականութիւն
 քումդ տեսութեան՝
Մտացդ դիտման անդատ եղիցի...
 (ԽԶ, Բ)

Հստ նարեկացու՝ մարդն իր բանականությամբ, իմաստասիրությամբ, արարելու ձիրքով համացեղ է Աստծուն:

ինչպես տեսնում ենք, փաստերն առավել քան խոսուն են: Գրիգոր Նարեկացին *X* դ. հայ եկեղեցու գերագույն հեղինակությունն էր և կարող էր ակնարկել իր մեծության, սրբության և ուսուցչապետի ու մեծ քահանայի առաքելության մասին, ինչպես և արել է:

*

Ինչպես նշել ենք, իր փիլիսոփայական-տրամախոսական շերտով «Ճառը» համահունչ է Նարեկյան դպրոցի իմաստասիրական-գեղագիտական համակարգին և Հարստացնում է այն նոր կողմերով:

Այստեղ ևս բարոյագիտական համակարգը կենտրոնանում է արևելաքրիստոնեական միստիկայի և Նարեկյան դպրոցի համար էական՝ ներքին և արտաքին մարդու, ներքին մարդու մաքրագործության շնորհիվ աստվածանմանության հասնելու գաղափարների վրա.

«Որքան արտաքին մարդս մեր ապականի եւ չարչարի, այնքան ներքինն մեր նորոգի եւ պայծառացեալ գեղեցկանայ, քանզի հակառակ են միմեանց. մինն ի վեր ջանայ ելանել՝ առ Աստուած, սրբութեամբ, եւ միսն ի վայր բերի ի յախտս եւ յապականութիւնս...

Հայեա՛ց ի քեզ. տե՛ս, թէ առողջ ես եւ անմեղ հոգւով եւ զպատկերն Աստուծոյ անարատ ունիս, երանելի ես եւ ցանկալի Հոգւոյն Սրբոյ, այր ցանկութեանց, իբրեւ զգեղեցիկն Դանիէլ, փափաքելի հրեշտակաց, զի ճառագայթ Աստուծոյ փայլատակէ ի քեզ, եւ գեղեցիկ լինիս տեսանելով, քան զամենայն որդիս մարդկան, նման գլխոյն մերոյ Քրիստոսի եւ սկզբնատպին քրիստոնէից...³¹

³¹ Նույն տեղում, էջ 1051-1052:

Թէ կին մարդ է, թող հայի յինքն, զի եւ նա ներքին մարդովն, այսինքն՝ հոգւովն, Աստուծոյ պատկեր է...»³²:

*

«Ճառը» սկսվում է Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող հայտնի երկերի հեղինակին հղումով.

«Գութ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յստակ սիրոյ նորա. եւ անմեկնելի եւ անորիշ են յարարելոցն յիւրմէ լուսաշարժ եւ բարեբուղիս ստեղծագործելոցն յառաջնոցն, մինչեւ ի հուսկ յետին յարարածս, որք բոլորովին անշունչք են եւ անշարժք, ըստ մեծին Դիոնիսեայ Արիսպագացւոյ, յոր հայելով ոք ի խաւսնոց մտաւորաց, որ չէ արժան յուսահատութեամբ զինքն արտաքոյ դնել մասին այցելութեան Աստուծոյ...»:

Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերը, ըստ ընդունված տեսակետի, գրվել են V դ. վերջին քառորդում: Նրանց հեղինակը, իբրև քրիստոնեական աստվածաբանության մեջ նորպատոնական ուղղության հիմնավորող և արևելաքրիստոնեական միստիկայի հայեցողական-իմաստասիրական ուղղության ներկայացուցիչ, խոր հետք է թողել Նարեկյան դպրոցի և հատկապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա: Այդ ազդեցություններն առկա են գոյաբանական, իմացաբանական, գեղագիտական համակարգերում, ապօֆատիկ (անձառելի, ժիստողական) և կատաֆատիկ (ճառելի, հաստատող) աստվածաբանության, ինչպես նաև աղոթքի տեսության մեջ: Այս հարցերին բազմիցս անդրադարձել ենք Խոսրով Անձեացուն, Անանիա Նարեկացուն, Գրիգոր Նարեկացուն վերաբերող մեր աշխա-

³² Նույն տեղում, էջ 1055:

տություններում, հատկապես «Գրիգոր Նարեկացին և նորապլատոնականությունը» գրքում³³: Այդ ազգեցությունն առկա է Գրիգոր Նարեկացու բոլոր երկերում՝ աստվածաբանության, արվեստի տեսության և բուն ստեղծագործության մեջ՝ հատկապես գանձերում և տաղերում:

Վերոնշյալ հատվածի հիմքում Դիոնիսիոսի հիերարխիկ տեսությունն է, ըստ որի՝ աշխարհում ամեն ինչ կապված է գերագույն գոյի՝ Աստծո հետ, նրա ստեղծագործությունն է և լուսեղեն բխման արդյունք լինելով՝ գտնվում է հավերժական շրջապտույտի մեջ՝ հրեշտակներից մինչև ամենահետին արարածները: Այս տեսությունն իր գեղարվեստական մարմնավորումն է գտել հատկապես Գրիգոր Նարեկացու տաղերում: Այս առումով Գրիգոր Նարեկացին մեծ նորարար է, քանի որ ոչ միայն ստեղծագործաբար յուրացրել, այլև կիրառել է այդ տեսությունն իր ստեղծագործական հղացքների մեջ՝ իբրև միստիկ բանաստեղծ հասնելով զարմանալի խորքերի ու ներթափանցումների:

Երկի մեջ հստակ անդրադարձներ կան Դիոնիսիոսի երկնային և երկրային քահանայապետությունների և նրանց կապի, մարդու՝ իբրև այս աստիճանակարգության հանգույցի և աստվածային էության մասին տեսություններին:

Համեմատենք «Ճառի» սկզբնահատվածը արենպագիտյան բնագրերից մի հատվածի հետ.

«Ի նմանէ են աստուածատեսակքն հրեշտակականացն զարդուց զաւրութիւնք…

Յառաջ գայ աննուազն զաւրութիւն եւ ի մարդիկ, եւ ի կենդանիս, եւ ի տունկս, եւ ի բոլորն ամենայնի բնութիւն:

³³Տե՛ս անդ, «Խորհրդական աստվածաբանությունը Գրիգոր Նարեկացու երկերում», էջ 180-208:

Եւ զաւրացուցանէ զմիաւորեալսն առ միմեանց սէր եւ կցորդութիւն... եւ զմիմեամբք յաւդաւորութիւն տարեցս եւ մարմնոյ շաղկապութիւն շարունակէ, եւ զտնկոց սննդականսն եւ աճողականս զաւրութիւնս ի վեր շարժէ: Եւ ունի զգոյեղէնսն զաւրութիւնս բոլորիցն, եւ զամենեցունց անլոյծ աւթեւանն հաստատուն պահէ, եւ զնոյն աստուածանալն պարգեւէ՝ զաւրութիւն չնորհելով աստուածացելոցն»³⁴:

Այժմ ներկայացնենք «Ճառի» համանման հատվածներից մեկը, որն ակնհայտորեն բխում է Դիոնիսյան տեսությունից:

«Այսուհետեւ դարձուսցուք զիմանալի աչս մեր ի մեզ՝ հայելովն ի վեր՝ ի բարձունս բարձանց եւ ի յերկինս երկնից եւ ի սուրբն սրբոց, որ անդը է, քան զիմանալի դաւառն հրեղինաց, ուր միայնակ Սուլք երրորդութիւնն ըրջի, զամենայն արարածս արտաքս թողեալ առաջին վարագուրաւն զիմանալիսն յինքենէ եւ երկրորդաւն՝ զմեզ ի նոցանէ, զոր եւ աստուածաբանեալ փառաւորեսցուք աստուածաբան փառատրութեամբ՝ աւրհնելով զնա յերիս երեւեալ երեսս եւ անձինս...»³⁵

Հայեսցի եւ ինքն այժմ յիւր անեզրական բարիսն եւ իւրական գիտութեամբն յիւր արարածս, եւ բացեալ զաննիրհնելի եւ զողորմած ակն՝ տեսցէ զկարիս եւ զկարաւտութիւն աշխարհիս, եւ լցուսցէ զպակասութիւն ամենեցուն յանծախելի ծովէն...»³⁵:

³⁴ Դիոնիսիոս, «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց», Էջ 199-200:

³⁵ «Մատենագիրք հայոց», Հ. Ժ. Ժ դար, Էջ 1068:

Ինչպես Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների շատ երկերում, այս «Ճառում» ևս իրար են ներհյուսված արևելաքրիստոնեական միստիկայի երկու՝ բարոյագործնական և փիլիսոփայական-հայեցողական ուղղությունները։ Վերջինիս խոշորագույն ներկայացուցիչը Դիոնիսիոս Արենպագացին է, որի փիլիսոփայական-աստվածաբանական համակարգի ուժեղ ազդեցության տակ է գտնվում այս երկը։ Դրա վառ արտահայտությունն է հենց բնաբանը՝ «Հայեաց յանձն քո...», ինչպես նաև այն, որ երկը սկսվում է Դիոնիսիոսից մի ընդարձակ քաղվածքով, որ նրա ողջ փիլիսոփայական համակարգի մի խտացված բանաձեռումն է։ Ակնհայտ է, որ հեղինակը Դիոնիսիոսի ուսմունքի հետևորդն է, բայց հետաքրքիրն այն է, որ նա այդ ուսմունքը մտցնում է կիրառության նոր ոլորտի՝ աղոթասացության մեջ։ Իր ճառի մի հատվածում, որն ուղղակի առնչվում է վերոնշյալի հետ, նա խոսափանում է, որ Սուրբ Հոգուց շնորհ, լեզու ստացել բարբառելու աստվածային բոլոր գոյերի, տարերքների և ողջ մարդկության փոխարեն։ Սա բխում է Դիոնիսիոսի նշված ուսմունքից, ըստ որի՝ աստվածային ողջ նվիրապետությունը, ողջ տիեզերքը՝ աստվածային էակներից մինչև բնության ամենաչնչին արարածները, ներթափանցված է աստվածայինով։

Իբրև ասվածի վկայություն՝ զուգադրենք «Ճառի» նշված երկու հատվածները։

«Գութ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յստակ սիրոյ նորա անմեկնելի եւ անորոշելի են յարարելոցն յիւրմէ լուսաշարժ եւ բարեբուղիս ստեղծեցելոցն յառաջնոցն մինչեւ ի հուսկ յետին յարարածս, որ բոլորովին անշունչք են եւ անշարժք. ըստ մեծին Դիոնի-

սեայ Արիսպագացւոյ՝ յոր հայել ոք ի խաւսնոց մտաւորաց ոչ է արժան յուսահատութեամբ զինքն արտաքոյ դնել մասին այցելութեան Աստուծոյ...³⁶:

Յաղագս որոյ ընդ իս առեալ զբոլոր գոյսս ի մասունս բաժանելով եւ ի ստիքս³⁷ կոտորելով, քան զկիտուածս մանրութեան հատոյ մանանիոյ, տալով բնաւիցն խաւսուն լեզուս՝ եւ ամենեքումբ գոհանամբ զնմանէ, որ ետ ինձ վայելս զայս ամենայն: Եւ ի կատարման աստ յոտն կալ պարգեւեաց ինձ առաջի աստուածարկու եւ քրիստոսաժողով հարանց եւ հարազատից եղբարց՝ առնուլ զաղաւթս եւ զաւրչնութիւն աղէկիզեալ սիրալի եւ աստուածագութ խնամոցն...»³⁸:

³⁶ Նույն տեղում, Էջ 1040:

³⁷ Ստիք բառը, ի թիվս այլ իմաստների, բնության տարր եւ տարերք է նշանակում (տե՛ս «Նոր Հայկազեան բառարան», հ. II, Էջ 746): «Ի մասունս բաժանելով եւ ի ստիքս կոտորելով, քան զկիտուածս մանրութեան հատոյ մանանիոյ» բառակապակցությունը «Նոր Հայկազեան բառարանում» հղված է Տօնանամակ կամ Տօնապատճառ Ժողովածուներին: «Տօնակ: Տօնական մատեան, որ եւ Տօնանամակ, եւ Պատճառք տօնից կամ Տօնապատճառք: Այն է եւ ճառօրեն մեկնաբանութիւն խորհրդոց տօնից՝ տէրունականաց կամ սրբոց գլխաւորաց. միանգամայն եւ քաղուած մեկնութեան ընթերցուածոց ըստ աւուր պատշաճի, համարեալ մասամբ գործ Գրիգորի կամ Յովհաննու Գանձակեցւոյ, եւ Յովհաննու Տարօնեցւոյ, եւ այլոց անանուն անձանց, պէս-պէս յարմարեալ ըստ կամս գրչաց ցյետին դարս. այլ յամենայնի գտանին եւ հետք հնութեան յընտիր բառս ինչ» (տե՛ս անդ, հ. I, Էջ 19-20): Այս հղումը մի շարք ենթադրություններ և Հարցեր է Հարուցում, որ առանձին քննության կարիք ունեն: Մասնավորապես պարզ չէ, թե որ Գրիգորի մասին է խոսքը: Նույն ժողովածուին է բառարանում հղում նաև «Ճառում» հանդիպող «Ճորեկեան կոչէին, որ թարգմանի ազատութիւն» արտահայտությունը (Էջ 318): Մնում է ենթադրել, որ «Ճառը» ընդգրկված է նման ժողովածուներից մեկում, որից օգտվել են բառարանը կազմողները: Յոքելեան բառը հիմնամյա ժամանակ նշանակությամբ օգտագործված է նաև «Մատեանի» հիշատակարանում:

³⁸ «Մատենագիրք հայոց», հ. Ժ, Ժ դար, Էջ 1042:

Այսպես բանաստեղծն աղոթում է Աստծո խնամակալության տակ գտնվող բոլոր արարածների, համայն մարդկության և բնության անունից, որոնք Աստծո ստեղծագործությունն են: Բանական մարդն անմասն չէ այդ աստվածային, տիեզերական աստիճանակարգությունից՝ աստվածային էություններից մինչև հետին արարածները, և դեպի աստվածային այդ արարչագործությունը պետք է ուղղվի նրա հայեցողությունը, և այդ հայեցողության, աստվածատուր ձիրքի, խոսքի շնորհիվ բանաստեղծն աղոթում է և օրհնաբանում է բոլոր գոյերի, բնության տարերքների, արարածների և համայն մարդկության փոխարեն:

Սա Գրիգոր Նարեկացու ձեռագիրն է:

Նա առաջինն է իր երկերում՝ հատկապես տաղերգության մեջ, ստեղծաբանության ոլորտ մտցրել նորապատուական, հատկապես Դիոնիսիոս Արեոպագացու գեղագիտության խոր հղացքները՝ հասնելով աննախադեպ արդյունքների և, ըստ էության, լիովին բարեշրջել հոգեոր արվեստների համակարգը:

Այս ամենը կասկած չի թողնում, որ «Ճառի» հեղինակը Գրիգոր Նարեկացին է:

*

Կան նաև մեր տեսակետն ապացուցող օժանդակ փաստեր, որ հարկ ենք համարում ներկայացնել:

Գործը հոգեհարազատ է Նարեկյան դպրոցին և Գրիգոր Նարեկացուն նաև իր արծարծած դավանաբանական հարցերով, որոնք վերաբերում են Քրիստոսի մարդեղության խորհրդին, նրա բնության և դրա հետ կապված չարի

և բարու, ապականության և անապականության խնդիրներին: Այսպես, ատենախոսության մեջ կարդում ենք.

«Քանզի չարն ոչ եթէ գոյացութիւն է իսկական կամ յԱստուծոյ եղեալ կամ յինքենէ գոյացեալ կամ յայլմէ սկզբանէ, այլ ի պակասութենէ բարւոյն լինի չարն, որպէս պակասութիւն լուսոյ խաւար է, եւ պակասութիւն արդարութեան՝ անիրաւութիւն, եւ պակասութիւն սրբութեան՝ պղծութիւն, եւ պակասութիւն կենաց՝ մահն, որ եւ գոյացաւ յազատ կամաց ծուլացելոց ի բարի ընտրութենէ, որպէս որք ընտրեն զհեշտութիւն մարմնոյ եւ զընչեղութիւն ապականացու գանձուցն առաւել, քան զմեծութիւն հոգեւոր ուրախութեան եւ զանանց բարութիւնս երկնաւորս, այս է չար եւ մեղք... եւ բամբասէ զառաջախնամութիւնն Արարչին: Բայց թէ ապականեալ միտս ոք ունիցի, իբրեւ ախտացեալ աչք, որ կամ ոչինչ տեսանէ եւ կամ այլ ընդայլոյ տեսանէ, ուստի զգուշացուցանէ Հոգին Սուրբ ասելով. «Հայեա՛ց ի քեզ. գուցէ լինիցի քեզ բան ծածուկ ի սրտի քում անօրէն...»»³⁹:

Զարի ու բարու հասկացությունների հետ են առնչվում նաև ապականության և անապականության հասկացությունները, որոնց հեղինակն անդրադառնում է «Ճառի» այլ հատվածում:

Բարու սուբստանցիոնալ, նախնական և չարի ոչ սուբստանցիոնալ ընույթի մասին այդ տեսությունը դարձյալ գալիս է Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերից⁴⁰: Այս խնդրին սերտորեն աղերսվում է ապականության և անապականության խնդիրը, որ բազմիցս արծարծ-

³⁹ Նույն տեղում, էջ 1067:

⁴⁰ Տե՛ս Դիոնիսիոս, «Յաղագս բարւոյ... եւ եթէ չար ոչ գոյ է, եւ ոչ ի գոյից, եւ ոչ ի գոյս», V, 17, էջ 169-183:

վում է Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների, հատկապես Անանիա Նարեկացու երկերում:

«Եւ արդ՝ ի միտ առ քաջ, զի ապականութիւն ոչ բնութիւն ինչ է եւ ոչ որակութիւն բաղկացուցիչ ենթակային, այլ լուծիչ էակին յանէակն, զի ո՛չ Արարչէն իսկ գոյացեալ եղեւ ընդ բնութեան առաջին ստեղծուածին, որպէս քաջայայտ է ի գրելոցն, թէ ըստ պատկերի Աստուծոյ ստեղծաւ մարդն՝ յայտ է թէ անապական, որպէս սկզբնատիպն: Զի թէ ի նախահայրն ինչ գոյր մասն ապականութեան, ապա առ սկզբնատիպն վերաբերի այսպիսի կարծիս: Եւ արդ՝ ուր ոչ բուսանի արմատ մեղաց, ուստի՝ գոյանայ պտուղ ապականութեան, զի ոչ է հնար առանց արմատոյ մեղացն գոյանալ պտղոյ ապականութեան, զի ինքն ըստ ինքեան անգոյական է ապականութիւն»⁴¹:

Անանիա Նարեկացու այս և բազմաթիվ նմանատիպ հատվածներին համահունչ է «Ճառի» հետեւյալ հատվածը.

«Միակն միական Միածին Որդին Աստուծոյ՝ ծագումն եւ ծնունդն Հաւր, յառաջ քան զարուսեակն, որ ի լրման աւուրց եղեւ պտուղ կուսութեան եւ Նոր Աղամ՝ յինքն առեալ զբնութիւնս անթերի, եւ որ ինչ է մարդ, բաց ի մեղաց. մի Որդի եւ մի Քրիստոս՝ ի միում բնութեան եւ ի մի կամս եւ ի մի ներգործութիւն խոստովանեալ յուղղադաւան սուրբ եկեղեցւոյ, որ եւ խաչիւն աւարտեալ զմեր փրկութիւնն եւ թաղմամբ թաւթափեալ ի մէնջ զապականութիւնն մեր, եւ կործանմամբ դժոխոց ազատեաց զհոգիս: Նորն յԱղամ յարեաւ աստուածաբար եւ ել յերկինս նովիմբ աստուածացեալ մարմնովն...»⁴²:

⁴¹ Մատենադարան, ձեռ. 6453, թերթ 11աբ, տե՛ս նաև 16բ-17ա, 80աբ:

⁴² «Մատենագիրք հայոց», Հ. Ժ. Ժ դար, Էջ 1068-1069:

«Ճառի» այս հատվածին համահունչ է նաև Գրիգոր Նարեկացու Աստվածածնին նվիրված ներբողը, ուր իբրև մարդկային բնության աստվածային սկիզբ, անապականության գերագույն խորհրդանիշ նա փառաբանում է Աստվածամորը, որն իբրև մարդուն կենցաղակից և նմանատիպ՝ «նոր հոգեղին Աղամ է ծնել». «Քեւ զանմատոյց հուրն կիզանող անապական ծասքմամբ ծախսեցաք... քեւ զանձանաւթն Հաւը տերութիւն ազգակցապէս աւրհնաբանեցաք... քեւ զանսահման Բանին բնութիւն ի հասարակածին տիպ համբուրեցաք, քեւ զԱղամն նոր հոգեղին ի չափ հասակի առաջնոյն տեսաք, քեւ զարեգակն արդարութեան կենցաղակից մեր կցորդ ստացաք... քեւ զանհամեմատն մարդոյ պատկերի մեզ նմանատիպ գործով գրեցաք»⁴³:

Ապականության և անապականության, չարի ու բարու այս հասկացությունները կապված էին Փրիստոսի մարդեղության և բնության խորհրդի հետ և ընկած էին հայ եկեղեցու՝ երկաբնակների դեմ դավանաբանական պայքարի հիմքում: X դ. այդ պայքարի առաջամարտիկն էր դարի խոշորագույն աստվածաբաններից մեկը՝ Անանիա Նարեկացին, որ Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (972-992 թթ.) հետ գլխավորում էր այդ շարժումը: Այդ նպատակին է ծառայել նրա կոթողային աստվածաբանական-դավանաբանական երկը՝ «Հաւատարմատը», ուր, ի նպաստ հայ եկեղեցու դավանաբանության, հայրաբանական գրականությունից զատ ի մի են բերված նաև անտիկ շրջանի սկզբնաղբյուրներից քաղված տվյալներ: Ի թիվս այլոց, նա շրջանառում է նաև Փիլոն Ալեքսանդրացու, Դիոնիսիոս Արեոպագացու

⁴³ «Մատենագիրք հայոց», Հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, էջ 971:

անունները, որոնք գերազույն հեղինակություններ էին հայ եկեղեցու համար։ Բնականաբար, այդ շարժման նախանձախնդիր առաջամարտիկներից էր նաև Գրիգոր Նարեկացին, որի վկայություններից են վերոնշյալ և նմանատիպ այլ հատվածները նրա երկերում։ Երկաբնակների դեմ դավանաբանական պայքարի հիմքում Քրիստոսի մարդեղության խորհրդի ավանդական մեկնաբանությունն է, ըստ որի նա իր մարդեղությամբ թոթափել է նախահոր մեղքը՝ մարդկային մարմինը վերադարձնելով նախնական անապականությանը և դառնալով նոր Աղամ։ Այդ աստվածային մարմնով է նա երկինք համբարձվել։ Ինչպես տեսնում ենք, ակնհայտ է կապը նարեկյան դպրոցի այս ներկայացուցիչների՝ Անանիա և Գրիգոր Նարեկացիների միջև, որոնք ծրագրված և նպատակամղված պայքար են մղում հայ եկեղեցու դավանաբանական հիմքերն ամրապնդելու համար։ Այս առումով նկատելի է կապը նաև Խոսրով Անձեւացու մեկնությունների հետ։

*

Ի լրումն այս ամենի, կան նաև լեզվառճական փաստեր, որոնք ապացուցում են «Ճառի» Գրիգոր Նարեկացուն պատկանելու տեսակետը։

Այսպես, գործի սկզբում կարդում ենք. «Գութ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յստակ սիրոյ նորա...»⁴⁴:

Գրիգոր Նարեկացու երգ երգոցի մեկնության հիշատակարանում կարդում ենք. «...եւ զայլն ամենայն այսպի-

⁴⁴ «Մատենագիրք Հայոց», հ. Ժ, Ժ դար, Էջ 1040:

սեաց բանից տուփականաց եւ սրտից խտղտանաց, սեռն սիրոյ շաղկապ միաւորութեան...»⁴⁵:

Նույն արտահայտությունն է օգտագործված նաև «Մատեանի» հիշատակարանում. «Արդ, հայցեմք ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ... յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս եւ ի պատկանաւոր խնդրուածո՝ սեռն սիրով ի միտսքարիս...»⁴⁶

Իսկ ահա երկի վերջնահատվածը՝ հար և նման Գրիգոր Նարեկացու ներբողների ոճական ճյուղավորումներին և Հռետորական ոգուն.

«Որ պատուիրեաց մեզ հայել ի մեզ, հայեսցի եւ տեսցէ Հարբ եւ Հոգւով Սրբով զվէրս կողին տիգախոցիւ եւ զհարուածս բեւեռացն յոտսն եւ ի ձեռսն, եւ այնու եռանդնաշարժ սիրովն հայեսցի ի գինս արեան իւրոյ, եւ երկնակազմ եւ աշխարհաշէն ձեռամբն բեւեռեսցէ զամենեսեան յերկիւղն իւր եւ ի սէրն, եւ ջնջեսցէ զամենեսեանն, որ հակառակ կան սուրբ եկեղեցւոյ, եւ մաքրեսցէ զամաւթ եւ զարտաւսր յամենայն երեսաց քրիստոնէից՝ դաւանել ի ճշմարիտ կրաւնից նուիրական համատարած կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի, հարսնազգեցեալ ի զարդ անկողոպտելի անարատ առագաստին, որ է տեղի լայնագոյն եւ երկնաձիգ, խորագոյն եւ բարձրագոյն, ընդ անչափին Աստուծոյ մեծացեալ եւ բարձրացեալ յանհասական բարձրութիւն, որ է հաւատն համահաւաք տիեզերագրաւ համաշխարհական ամենասպիթւո եւ բոլորից բաւանդակող, որոյ հիմունքն

⁴⁵ «Մատենագիրք հայոց», հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Էջ 883:

⁴⁶ Սեռն սիրոյ արտահայտությունն, ուր սեռն բառը անխառն, պարզ, հստակ, անապակ իմաստով է գործածված, Գրիգոր Նարեկացոց առաջըստ «Նոր Հայկազեան բառարանի» հանդիպում է Դավիթ Անհաղթի և Հովհան Ոսկեբերանի երկերում (տե՛ս անդ, հ. II, Էջ 707):

Հաստահեղոյսք, եւ պաղպաջունքն, ականակուռք եւ մարդարտայեռք եւ ոսկեփայլք եւ արծաթաձոյլք, որ են ամրաւերինք մշտնջենաւորք եւ բլուրք յաւիտենականք, յորոց առաջինն եւ նշանաւորն, մեկնակն եւ աննմանն, լեառն Աստուծոյ կոչեցեալ եւ լեառն մածեալ, լեառն պարարտ եւ լեառն սուրբ լուսընկալ»⁴⁷:

*
Ամփոփենք ասելիքը:

Նշված բոլոր փաստերը, բնագրային համեմատություններն ու բազմաշերտ ու համակողմանի վելուծություններն ապացուցում են, որ նշված «Ճառի» հեղինակը Գրիգոր Նարեկացին է:

Նրանում, ինչպես Գրիգոր Նարեկացու այլ երկերում, միահյուսված են բանաստեղծական-քերթողական, հռետորական-ճարտասանական և փիլիսոփայական-աստվածաբանական սկիզբները, որ մեծապես հարստացնում են երկը՝ ստեղծելով այն յուրատիպ ոճը, որը Նարեկյան դպրոցի ներկայացուցիչներից հատուկ է Անանիա և Գրիգոր Նարեկացիներին: Այս երկը մեծապես հարստացնում է Գրիգոր Նարեկացու և Նարեկյան դպրոցի տեսական-գրական ժառանգության պատկերը, կարեոր գրվագներ ավելացնելով նրա ստեղծագործական կենսագրության և փիլիսոփայական հայացքների համակարգում: Մեր կարծիքով, այն Գրիգոր Նարեկացու հասուն շրջանի գործերից է և գրված է «Մատեանից» առաջ:

Մասնավորապես, այս ատենախոսությունը տեսանելի և ակնառու է դարձնում Գրիգոր Նարեկացու բանաստեղծության կենսական կապը նրա տեսական ակունքների՝

⁴⁷ «Մատենագիրք հայոց», Հ. Ժ. Ժ դար, Էջ 1069-1070:

արևելաքրիստոնեական միստիկ տեսությունների և նորապլատոնական փիլիսոփայության, հատկապես Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերի հետ, որոնք կարևորագույն սկզբնաղբյուրներ էին Նարեկյան դպրոցում և էական դեր են կատարել նրա տեսական համակարգի ձեւավորման գործում։ Այդ կապը հատկապես առկա է Գրիգոր Նարեկացու «Մատեանում» և տաղերգության մեջ։ Դիոնիսյան փիլիսոփայական-գեղագիտական այդ համակարգը նամարմնավորել է իր քերթվածների մեջ՝ բարեփոխելով և բարեշրջելով հոգեոր արվեստների համակարգն ընդհանրապես։ Այս առումով նա հանդես է գալիս իբրև խոչորագույն նորարար և բարենորոգիչ, որ կանխել և նախանշել է հոգեոր բանաստեղծության զարգացումները հետագա դարերում։

«Ճառը» կարևոր դրվագներ է երևան հանում նաև նրա կենսագրության, ստեղծագործության և հոգեոր կենցաղավարության ոլորտներում։ Գրիգոր Նարեկացին կենդանի հաղորդակցության և մշտական կապի մեջ է եղել իր լսարանի և ընթերցողների հետ։ Նրա այս «Ճառը», ինչպես նաև «Մատեանի» որոշ գլուխներ, իբրև բեմախոսություն և ատենաբանություն՝ ընթերցվել են եկեղեցում։ Այս փաստն առաջինը նկատել է Ներսես Լամբրոնացին՝ բոլոր ժամանակների այդ մեծագույն նարեկացիագետր։

«ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆ ԱՂԱԼԻԹԻՑ»

Գրիգոր Նարեկացուն վերագրվող վիճելի գործերի թվում է նաև «Կարգ եւ կանոն աղաւթից» կանոնախրատական-դավանաբանական երկը, որին նույնպես անդրադառնում է Պ. Խաչատրյանն իր հիշյալ աշխատության մեջ. «Վերնագրի այս համառոտումով ենք ներկայացնում կանոնախրատական, միաժամանակ և դավանաբանական այն գրվածքը, որ ավելի երկար խորագրումով տեղ է գտել Մաշտոցյան Մատենադարանի 18 գրչագրում։ Դրանցից տասնչորսում այն վերագրված է Գրիգոր Նարեկացուն, ընդորում 10 օրինակում այսպիսի վերտառությամբ. «Կարգ եւ կանոն աղաւթից, զոր խնդրեալ է ի հոգէկիր արանց յումեմնէ միայնացելոյ՝ արթուն եւ զուարթուն հոգւոյ Գրիգորի Նարեկացւոյ, որ եւ ցուցանէ նախադրութիւն բանիս, թէ ոչ համարի զանձն արժանի այսպիսի իրի, վասն այն զառաքելոյն ի մէջ առեալ՝ դնէ սկիզբն կանոնիս պատմութեան եւ ոգէշահ խրատու»¹: Երկու ձեռագրում խորագիրն ընդհատվում է «Գրիգոր Նարեկացւոյ» բառերով², իսկ մեկում այն համառոտ է ու տարբեր՝ «Գրիգորոյ Նարեկացւոյ խրատ յոգէշահ վասն աղօթից»³: Մնացած 5 ձեռագրերից չորսում

¹ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 129-130: Հեղինակը տալիս է ձեռագրերի ճշգրտված ցանկը: Տե՛ս ձեռ. 4137 (1359 թ., Ս. Գրիգորի վանք՝ Ղրիմում, էջ 279թ.-286թ.), 2680 (1371-1378 թթ., Անկեղակույտ գյուղ, էջ 260թ.-263թ.), 4135 (ԺԵ դ., Ս. Հովհաննեսի վանք՝ Տաթևի մոտ, էջ 279թ.-286թ.), 1326 (ԺԶ դ., Գրչ. վայր՝ անհայտ, էջ 250ա-256ա), 507 (1625 թ., Երևան, էջ 306ա-310թ.), 2608 (1635 թ., Շինահայր, էջ 413թ.-418թ.), 1327 (1653 թ., Հալիձոր, էջ 269թ.-276ա), 5154 (1683 թ., Աղանա, էջ 253թ.-259ա), 8272 (ԺԷ դ., Գրչ. վայր՝ անհայտ, էջ 147ա-161թ.), 1330 (1711 թ., Շոռով, էջ 136ա-140ա):

² Նույն տեղում, էջ 130: Ձեռ. 7295 (1660 թ., Գրչ. վայր՝ անհայտ, էջ 72թ.-76թ. թերի օրինակ), 6643 (ԺԷ դ., Գրչ. վայր՝ անհայտ, էջ 144ա-148թ.):

³ Նույն տեղում: Ձեռ. 3450 (ԺԷ դ., Գրչ. վայր՝ անհայտ, էջ 88ա-93թ.):

Երկը վերագրված է ոմն Գրիգոր վարդապետի կամ միայնացյալ Գրիգորի⁴, իսկ մեկում հեղինակային վերագրումը բացակայում է, պարզապես խորագրված է «Յաղագս կրաւնաւորաց եւ եկեղեցականաց ասացեալ»⁵: Ի դեպ, Մաշտոցի անվան Մատենադարանի «Զեռագրաց ցուցակում» նշված է, որ «Կարգ ու կանոն աղօթից»-ը կա նաև 7292 և 7937 ձեռագրերում (տե՛ս Բ հատ., Էջ 1286), սակայն ստուգումից պարզվեց, որ դրանցում տեղ գտածը Նարեկացուն վերագրված մեկ այլ գործ է՝ սույն աշխատության «Կանոնակրատական-դավանաբանական երկեր» շարքի առաջին միավորը (տե՛ս վերը):

Ինչպես տեսնում ենք, բոլոր ձեռագրերը, բացի վերջինից, հավաստում են, որ «Կարգ ու կանոն աղօթից»-ը Գրիգոր անունով հեղինակի գործ է: Խնդիրն այն է, թե ո՞վ է իսկապես այդ Գրիգորը՝ Գրիգոր Նարեկացի⁶ն, որին որոշակիորեն հեղինակ են դիտում ձեռագրերից տասներեքը, թե՞ Գրիգոր վարդապետը (1 ձեռագիր) կամ Գրիգոր միայնացյալը (3 ձեռագիր): Ասենք, որ «Վարդապետ» և «միայնացեալ» բնութագրումներն ընդհանուր մակդիրներ են, գործածելի այն բոլոր գրիգորների համար, որոնք եղել են ուսուցիչ-ուսումնական և նվիրվել առանձնության և ճգնության: Հետեւապես կարող են ասվել նաև Գրիգոր Նարեկացու համար»⁶:

Ուսումնասիրողը հավանական է համարում այս գործի՝ Գրիգոր Սկևորացուն պատկանելու վարկածը:

⁴ Նույն տեղում: Զեռ. 1548 (1357 թ., Տեր Հովհաննեսի անապատ, Էջ 172ա-179թ, 372ա-376թ), 9309 (1397 թ., Երուսաղեմ, Էջ 70ա-93ա), 5324 (1627 թ., Վարագ, Էջ 406թ-414թ), 709 (Ժէ դ., Գրչ. Վայր՝ անհայտ, Էջ 137ա-157թ):

⁵ Նույն տեղում: Զեռ. 3676 (Ժէ դ., Գրչ. Վայր՝ անհայտ, Էջ 68թ-78ա):

⁶ Նույն տեղում:

Նա հիշատակում է Վ. Հացունու տեսակետը, որը, «Հայոց Աղօթամատույցին նվիրված իր դասական հետազոտության մեջ բազմիցս քաղվածքներ բերելով խնդրու առարկա երկից, այն անվարան ներկայացնում է որպես Լեռն Բ-ի խոստովանահայր, վարքագիր Գրիգոր Սկեռացու գործ»⁷: Քննելով Թեղենիս տեղանվան հիշատակության փաստը՝ նա նշում է, որ Թեղենյաց վանքի վկայակոչումը կարող է վերաբերել մեր պատմության կիլիկյան շրջանին, երբ Ներսես Շնորհալին բուն հայրենիքից բերված ժամասացության օրենքների հիման վրա փորձում էր վերականգնել և հարստացնել եկեղեցական ժամասացությունը: Ուստի այս երկը, ուսումնասիրողի եզրակացությամբ, 12-13-րդ դարերի գործ է, երբ ապրել է Գրիգոր Սկեռացին⁸:

Նա մեջ է բերում նաև միջին հայերենի կիրառման միքանի նմուշներ («ամենեցուն այս ուսած պիտի», «աղօթանովքն», «զի թէ չափես՝ կէս կանոնի չափ չէ», «յեկեղեցոյս ի դուրս մի՛ կենար», «որ յետոյն էր աշխատել», «լման», «կու ասեն»), որոնք, մեր կարծիքով, կարող են հետագա գրչական միջամտության արդյունք լինել⁹:

Նա, ինչպես նշել ենք, բերում է խրատը պարունակող 18 ձեռագրերի ցանկը (XIV-XVIII դդ.), որոնցից 13-ում այն վերագրված է Գրիգոր Նարեկացուն: Հետեւելով ավանդույթին՝ այն Գրիգոր Նարեկացուն է վերագրել նաև Ղազար Զահկեցին¹⁰:

⁷ Նույն տեղում, էջ 132-133. Հեղինակը հղում է՝ Վ. Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատույցին, էջ 33, 37-38, 66, 249, 268, 354 և այլն:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 133:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 133-134:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 131:

Ուսումնասիրողը նշում է, որ խրատի հեղինակը՝ Գրիգոր կրոնավորը, իր երկում ամբողջապես ներառել է Գրիգոր Նարեկացու «Մատեանի» և Դիլիթի Գլուխ հատվածում ներկայացված Սուրբ Երրորդության դավանությունը՝ նշելով, որ նրա ավարտը բանաձևված է Նարեկի Հե դիլիթ նմանությամբ¹¹:

Ահա ՀԲ դիլիթի վերջավորությունը՝ հար և նման խրատի դավանաբանության ավարտին. «Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն, եւ այս ի մայրն իմ լուսափառ խոստովանեալ դաւանութիւն»: Խրատում համապատասխան հատվածում կարդում ենք. «Այս իմ հաւատ եւ դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւն»¹²: Հմուտ բնագրագետը նշում է կարեոր փաստը, բայց չի մեկնաբանում, մինչդեռ այն լրացուցիչ կովան է՝ գործը Գրիգոր Նարեկացուն վերագրելու համար: Այլապես ստացվում է, որ Գրիգոր Սկևուացին, նրա հավատո հանգանակը ներառելուց բացի, պատճենել է նրա հեղինակային հիշատակությունները: Իսկապես, այս խրատի հեղինակային պատկանելության հարցում առաջանում են մի շարք հարցականներ, որոնք այն Գրիգոր Սկևուացուն վերագրելու պարագայում թվում են անլուծելի: Ինչպես է Գրիգոր Սկևուացին՝ նշանավոր մատենագիրը, վարքագիրը, Լեռն Բ թագավորի խոստովանահայրը, Ներսես Լամբրոնացու վարքի հեղինակը¹³ նույնությամբ օգտագործել Գրիգոր Նարեկացու «Մատեանի» և դիլիթ նշված հատվածներում ամբողջացած նրա հավատո հանգանակը՝ ոչ միայն չնշելով հեղինակի անունը, այլև այն վերագրելով իրեն:

¹¹ Նույն տեղում, էջ 132:

¹² Մատենագրաբան, ձեռ. N 2680, թերթ 262ա:

¹³ Այս մասին տե՛ս նշված մենագրության էջ 133, 141:

Այս գործի հեղինակային պատկանելության հարցի շուրջ հարկ ենք համարում արտահայտել ևս մի քանի նկատառում:

Գրիգոր Սկևուացին Կիլիկիայի Հոգեուոր-գրական միջավայրի ծնունդ էր: Այս Հոգեուոր միջավայրում, նույն դպրոցի շրջանակներում Գրիգոր Նարեկացին գերագույն հեղինակություն էր, նրա անձը սրբացված էր և «Մատեանը» դասվում էր սուրբ գրքերի շարքը: Պահպանված հնագույն «Նարեկը»¹⁴ պատվիրել է Ներսես Լամբրոնացին՝ ինքն անձամբ գրելով Գրիգոր Նարեկացու վարքը: Իր հերթին Գրիգոր Սկևուացին Ներսես Լամբրոնացու վարքագիրն է: Հետագայում «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին» աշխատության մեջ (1187թ.) Ներսես Լամբրոնացին մեկնում է Նարեկացու ԼԴ գլխի Զ-Ը հատվածը¹⁵, որը Սուրբ Հոգուն ուղղված աղոթք է: Այդ աղոթքով, ինչպես պարզվում է, եպիսկոպոսը պետք է մաքրագործվեր պատարագի արարողությունից առաջ (հավանական է, որ Լամբրոնացու ժամանակ է կատարվել այդ ներմուծումը պատարագի ծիսակարգի մեջ, և գուցե դրա հեղինակը հենց ինքը՝ Լամբրոնացին է, որ իր մեծ նախորդի՝ Ներսես Շնորհալու նման կարեորում էր ծիսական ժողովածուների և արարողակարգի բարեկոխումները): Գրիգոր Սկևուացու օրոք, փաստորեն, Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ԼԴ գլխի մեջ մտած Սուրբ Հոգուն ուղղված աղոթքը ներառված էր պատարագի արարողակարգի մեջ: Գրիգոր Սկևուացին չէր կարող ծանոթ չլինել նաև Ներսես

¹⁴ Մաշտոցի անվան Մատեանագարան, ձեռ. N 1568, 1173 թ., գրիչ և մանրանկարիչ՝ Գրիգոր Սկևուացի:

¹⁵ Տե՛ս անդ, Վեհստիկ, Ս. Ղազար, 1847, էջ 195-197, 250-260:

Լամբրոնացու վերոհիշյալ աղոթքի մեկնությանը։ Ընդունում, «Մատեանի» ԼԳ գլխում զետեղված հավատո հանգանակը բովանդակային և կառուցվածքային առումով նախորդի անմիջական շարունակությունն է։ Այդ մասին հիշատակում է Գրիգոր Նարեկացին. «Արդ, առ այսոքիկ թշուառացեալ չնչոյս իմոյ իղձք եւ առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն, Աստուած, զոր ի նախնին ճառեալ՝ եւ յերկրորդումս ցուցից» (ԼԴ, Ա)¹⁶:

Հնարավո՞ր էր եկեղեցական հայտնի գործչի, վարքագրի կողմից՝ Գրիգոր Նարեկացու գաղափարած հանրահայտ դավանախոսության՝ հավատո հանգանակի նման ներմուծում խրատական գործի մեջ՝ առանց հիշատակելու հեղինակի անունը։ Մեր կարծիքով՝ ոչ։ Ավելին, երկի նախադրության մեջ հեղինակը նշում է, որ Սուրբ Երրորդության դավանությունն ինքն «ուսել է սուրբ հայրերի աւանդությունից», այսինքն՝ գրել է՝ հետեւելով նրանց, այլ ոչ թե քաղել է այլ հեղինակների կամ հեղինակի գործից։

«Բայց նախ զայս գիտեա, եղբայր, զի ամենայն հոգեւոր բարեաց հիմն՝ դաւանութիւն Սուրբ Երրորդութեան է, զոր կամեցայ ի գլուխ բանի կարգել, զոր ուսայ ի սուրբ հարցն աւանդութեանց»¹⁷։ Այսինքն՝ «դաւանութեան հիմունքը» հեղինակային է եւ ոչ քաղուած։ Անհաւանական է, որ որևէ մատենագիր իրեն վերագրեր սրբացված հեղինակի գործը, այն էլ հավատոյ հանգանակը, որի մասին հեղինակը՝ Գրիգոր Նարեկացին, գրում է. «Իսկ զհաւատոյ սահման բանի

¹⁶ Այս մասին տե՛ս «Մատեան ողբերգութեան», քնն. Քնագիր, ծնթ., էջ 1040։

¹⁷ Մատենադարան, ձեռ. 2680, թերթ 260թ։

ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ» («Մատեան», Բան Հ, Գ):

Գրիգոր Նարեկացու «Վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում, ուր նույնպես տեղ է գտել Սուրբ Երրորդության նույնատիպ մի դավանություն՝ հիմնված Նիկիայի տիեզերական սուրբ ժողովի «ընդհանրական դաւանութեան» վրա, կարդում ենք. «Եւ արդ, սկսցուք, ուստի սկսանելն է արժան, ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն եւ արմատ ամենայն բարեաց... Եւ արդ, այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն... Այլ պարտ է գիտել, զի թէպէտ անուն հաւատոյն մի է, այլ ի բազումս զանազանին. զի մեծ եւ առաջին հիմն եւ արմատ ամենայն հաւատոյ՝ վերագրեալդ է... Զայս վայել-չական կարգ հաւատոյ գտցես եւ յընդհանրական դաւանութեանն սուրբ եւ տիեզերական ժողովոյն Նիկիոյ Քանզի յետ խոստովանելոյ զհամարուն եւ պաշտելի Երրորդութիւնն, եւ զներմարդութեան տնաւրէնութիւն, յաւելուն, թէ՝ «Հաւատամք եւ յայս միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի....»:

Այսոքիկ լի եւ անթերի հաւատոյ խոստովանութիւն, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից»¹⁸:

Ինչպես տեսնում ենք, բնագրային, կառուցվածքային - ըովանդակային կապն այս երկու խրատների միջև ակնհայտ է:

Սա ևս մի վճռորոշ կռվան է՝ գործը Գրիգոր Նարեկացուն վերագրելու համար:

¹⁸ «Մատենագիրք հայոց», ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Էջ 1024, 1029, 1033:

Այստեղ նշենք նաև, որ խրատի հեղինակը, որն ամենայն հավանականությամբ Գրիգոր Նարեկացին է, նրանում զարգացնում է ներքին աղոթքի միստիկ մի տեսություն, որն անմիջականորեն առնչվում է Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների հետ։ Հատկապես նկատելի է կապը Անանիա Նարեկացու «Յաղագս զղման եւ արտասուաց» խրատի հետ, որի պատվիրատուն Գրիգոր Նարեկացին է¹⁹:

Այս խրատում քննվում են ներքին և արտաքին մարդու ներդաշնության, հասարակաց և առանձնական աղոթքների, զղման և արտասվաց շնորհի և նրան արժանանալու համար անձնական ջանքերի և փորձի, «գիտութեամբ եւ ընտրութեամբ» աղոթելու հիմնահարցերը, որոնք Անանիա Նարեկացու խրատաշարքի հիմնական նյութն են կազմում, ինչպես նաև աղոթքի ընթացքում մարդկային բանական և հոգեգգայական մակարդակների, ներքին՝ հոգեոր և արտաքին՝ մարմնավոր ուժերի փոխառնչության և ներդաշնակ գործունեության հետաքրքրական մի տեսություն²⁰, որն ուղղակիորեն առնչվում է Նարեկյան դպրոցի տեսական համակարգին։

* *

Կան նաև մեր տեսակետն ամրապնդող այլ կարևոր հանգամանքներ, որոնց վրա ցանկանում ենք կանգ առնել։

Երկը վկայում է, որ դրա հեղինակը ժամանակի ճանաչված հոգեորական գործիչներից և մատենագիրներից է եղել, քանի որ նշանավոր մատենագիրը կամ վարդապետը

¹⁹ Այս մասին տե՛ս Հ. Հ. Թամրապյան, Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը, էջ 58-73։

²⁰Տե՛ս Մատենագարան, ձեռ. 2680, թերթ 262ա, 263ար։

կարող էր աղոթքի կանոնների և սահմանումների մասին խրատ գրել։ Ավելին, պարզվում է, որ նա սրբի համբավ է ունեցել հոգեորականների շրջանում։

«Այլեւ զամենայն ժամանակս իմ մեղաւք անցուցեալ, մարդկան հաճոյ լեալ եւ ոչ Աստուծոյ, արտաքոյ մարդոյ եւ ի ներքոյ վարակեալ՝ աստ զտեսաւդքս խաբել եւ անդ՝ Քրիստոսի ատենին դատիլ։

Եւ ամենայն ոք, որ աստ իբրեւ ի սուրբ նայեցեալ են յիս, անդանաւը յամաւթալի երեսս իմ թքանելոց են, ասեն։ «Այդպիսի գործովք էիր եւ առ մեզ որպէս սուրբ կերպարանէիր»։ Եւ զի՞նչ ասեմ սաստիցն դատաւորին, զի զորպէսն Աստուած գիտէ»։

Նման հատված կա նաև խրատի մի այլ տարբերակում.

«.... Քան զամենայն ոք զիս սուրբ եւ բարի անուանեցի, վասն որոյ յամենեցունց Արարէն խրատեցայ եւ անարգեցայ....»²¹:

Ինչպես հայտնի է, սրբի համբավ, արդեն իր կենդանության օրոք և հետագայում, ուներ Գրիգոր Նարեկացին, որի մասին նա հիշատակում է իր «Մատեանում»։

Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ,

Ռաբբի ուաբբի անուանեցայ,

Եւ զգովեստն առ Աստուած եղծի,

Բարի ասացայ՝ առ եղկութեանն

Ժառանգութիւն,

Սուրբ վկայեցայ ի մարդկանէ,

Որ եմ անմաքուր առաջի Աստուծոյ,

²¹ Մատենադարան, ձեռ. 709, թերթ 154ա.

Արդար դաւանեցայ ամենայն իրաւք
 ամբարիչտու,
 Հեշտացայ ի գովեստ մարդկան,
 Զի ծաղը եղէց յատենին Քրիստոսի...
(ՀԲ, Դ)

Խրատում ընդգծված են արտաքին մարդ և ներքին մարդ հասկացությունները, որոնք, ինչպես նշել ենք, կարևորագույն նշանակություն ունեն Նարեկյան դպրոցի միստիկ աստվածաբանության համակարգում և սերտորեն կապված են դպրոցի արվեստաբանական հիմունքների՝ հատկապես բանաստեղծական արվեստի տեսության հետ:

Այս հասկացությունները հանդիպում են խրատի նաև այլ հատվածում. «Քանզի յերկուց է մարդս՝ իմանալի եւ զգալի, պարս է, որպէս ասէ առաքեալն՝ արտաքին մարդ եւ ներքին, յորժամ աղաւթել կամիցին, մտաւք առ Աստուած վերանալ...»²²:

Այս հասկացությունները բազմիցս օգտագործված են Խոսրով Անձեւացու, Անանիա և Գրիգոր Նարեկացիների երկերում: Ներբերենք օրինակներ նաև Գրիգոր Նարեկացու «Մատեանից»:

«Մի՛ երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշտամբութիւն, զի մի՛ կիսամասնեայ առ մարդն ներքին եւ առ արտաքին՝ չարի եւ կամ բարւոյ փոխատրութիւնն կարծեսցի՝ յանմահ զաւրութիւն արքայական որդեգրութեանն, զի ընտելութեամբ երկրայնովս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի»:

(ՀԵ, Է)

²² «Մատեանագիրք հայոց», Հ. Ժ. Ժ դար, Էջ 1084:

Իսկ որքան պատիժ անմաքրութեանս եղիցի՝
Աստուած զգեցողիս ներքոյ եւ արտաքոյ:

(ԼԳ, Դ)

Այս հասկացությունները, որոնք ընկած են աղոթքի
սահմանումների հիմքում, ինչպես նաև բուն սահմանում-
ները, որոնց կանդրադառնանք, չեն հանդիպում Գրիգոր
Սկայուացու պահպանված երկերում:

Հավատո հանգանակից հետո հեղինակը երկիցս շեշ-
տադրում է, ի պատասխան պատվիրատուի խնդրանքի, որ
ինքը աղոթքի նոր կանոններ ու սահմանումներ չի տալիս,
այլ «Համառոտ հատընտիր» է կազմելու եկեղեցական
հայրերի սահմանումներից:

«Եւ զաղաւթից սահման, զոր եւ խնդրեցեր, ամենայնն
ի հոգէկիր արանց սահմանեալ կայ, եւ աւելորդ է ինձ ի
վերայ նոցին բանիցն յաւելու կամ նուազեցուցանել:

Այլ հատընտիր եղեալ մեր ի բանից սուրբ հարանցն՝
լցցուք զփափազ ըղձից ձերոց համառաւտաբար...

Եւ մեք պարտիմք զփափագ խնդրոյդ ձեր լնուլ, զոր ի
սուրբ եւ հոգէկիր արանց սահմանեալ կայ, զի աւելորդ է
ինձ ի վերայ նոցին բան յաւել, բայց ըստ փափաքանաց
ձերոց ասասցուք համառաւտաբար»²³:

Հեղինակը, ընդգծելով աղոթքի կարևորությունը, այն
ուղիղ հավատի և ճշմարիտ դավանության հետ դնում է
հոգեոր կյանքի հիմքում:

«Զի ամենայն հոգեւոր բարեաց հիմն դաւանութիւնն է
յԱստուած ճշմարիտ եւ ի տնաւրինութիւնն Քրիստոսի, ո-
րով փրկեցաքն, եւ ապայ՝ աղաւթից հոգ ստանալ»²⁴:

²³ Նույն տեղում, էջ 1083-1084:

²⁴ Նույն տեղում, էջ 1084:

Այնուամենայնիվ, իր այդ ծաղկաքաղից հեղինակնընտրում է հինգ սկզբունք՝ դնելով դրանք աղոթքի սահմանումների հիմքում:

«Եւ թէ լեզուաւ կամ յաղաւթս, հոգիս անպտուղ լինի, եւ ոչ ինչ աւկտիմ, վասն որոյ զհինգ բանս մտաւք ընտրեցի, քան զբազում բանս լեզուաւք: Եւ Տէրն հրամայէ չլինել շատախաւս յաղաւթեն:»

Եւ այս ոչ թէ զբազում աղաւթեն արգելու, քանզի եւ ինքն զգիշերն ի գլուխ հանէր յաղաւթսն Աստուծոյ՝ մեզ ի խրատ: Եւ դարձեալ՝ թէ՝ «Յամենայն ժամ աղաւթս արարէք»: Այլ զվայրապարն եւ զմարմնաւորն եւ զանցաւոր խնդիրն արգելցէ, որ լեզուաւն է միայն, առանց մտաց:

Եւ աղաւթից ուսուցանելն անհնար է, բայց թէ ի փորձոյ ուսցի, եւ կարի աշխատութեան պէտք է եւ արտասուաց առնուլ զշնորհս աղաւթից:

Քանզի յերկուց է մարդս՝ իմանալի եւ զգալի, պարտ է, որպէս ասէ առաքեալն՝ արտաքին մարդ եւ ներքին, յորժամ աղաւթել կամիցին, մտաւք առ Աստուած վերանալ եւ զմարմինս մտացն իբրեւ հովանի մարմնոյ ունել:

Յորժամ սա անդ ի յոտն կայ, որ է իմանալի միտքսն, եւ մարմինս՝ աստ, եւ յորժամ նա անդ զձեռն ամբառնայ, սա՝ ընդ նմին, եւ երբ նա խաւսի, եւ սա, եւ յորժամ նա ծունդը կրկնէ, ընդ նմին եւ սա: Քանզի ընդ մտացն պարտ է զմարմինն շարժել, եւ զամենայն ինչ, որ մարմինն առանց մտացն առնէ, շատխաւսութիւն է եւ լեզուաւ աղաւթել: Քանզի իմանալի է Աստուած եւ զիմանալի մտացն աղաւթեն խնդրէ»²⁵:

²⁵ «Մատենագիրք Հայոց», հ. Ժ, Ժ դար, էջ 1084-1085:

Այսպիսով, հեղինակն աղոթքի սահմանումներից առանձնացնում է հետևյալները.

ա. մտավոր աղոթքի սկզբունքը, քանի որ առանց դրա աղոթքը վերածվում է շատախոսության,

բ. անձնական փորձի սկզբունքը, ըստ որի՝ աղոթքի արվեստի ուսուցումն անհնար է, քանի որ այն ձեռք է բերվում անձնական փորձով,

գ. երկարատև փորձառության անհրաժեշտությունը, որ ենթադրում է մտավոր և զգացմունքային ուժերի զուգակցում, երկարատև վարժանք, զղջում և արտասուք, որ հնարավոր լինի հասնել աղոթքի շնորհին,

դ. մարդու հոգեֆիզիկական ուժերի լարում. մարդը երկու մասից է բաղկացած՝ իմանալի և զգալի, արտաքին մարդ և ներքին մարդ, և ներքին աղոթքի ընթացքում անհրաժեշտ է մտքով բարձրանալ առ Աստված, որ նա հովանի դառնա մարմնի համար,

ե. մարդու մտավոր և զգայական սկիզբների, ներքին և արտաքին մարդու ներդաշնակության սկզբունքը. աղոթքի ժամանակ մարդու հոգեսոր և մարմնավոր կողմերը պետք է գործեն ներդաշնակորեն, աղոթքը պետք է լինի և՝ զգայական, և՝ մտավոր։ Մտքերի հետ պետք է նաև մարմինը շարժել և հակառակը։ Զեռքերը ամբառնալիս, ծնրադրելիս և բարբառելիս մարդու մարմինը և հոգին պետք է գործեն կատարյալ համաձայնությամբ և ներդաշնակությամբ, քանզի Աստված իմանալի է, և մտավոր աղոթքն է միայն հասու նրան։

Աղոթքի տեսությանը հեղինակն անդրադառնում է նաև խրատի այլ հատվածներում՝ շեշտելով առանձնական

աղոթքի նշանակությունը, ինչպես նաև բանաձևելով աղոթքի զգացմունքային զորության անհրաժեշտությունը.

«Յորժամ յառանձնականն ժամանես, կնքեա՝ զքեզ՝
ասելով.

«Հա՛յր Սուրբ, Աստուած ճշմարիտ,

Բա՛ց զմիտս իմ:

Որդի Սուրբ՝ Աստուած ճշմարիտ,

Սրբեա՝ զմարմինս իմ:

Հոգի Սուրբ, Աստուած ճշմարիտ,

Սրբեա՝ զհոգի իմ:

Ամենաւրհնեալ Սուրբ Երրորդութիւն,

Սրբեա՝ զսգայութիւնս իմ

Եւ շնորհեա՝ ինձ

Ի հաճոյս քեզ աղաւթել...»:

Եւ զինչ է աղաւթեն, եթէ ոչ մղկտումն սրտին եւ արտասուքն...

Հանապազ արտասուաց ջանք դիր, զի ամենայն աղաւթք ծառ է տերեւալի եւ տայ պտուղ գեղեցիկ, որով մշակն երկրաւոր կերակրի...»²⁶:

Ահա այս ներքին, մտավոր աղոթքի տեսությունն է առաջ քաշում հեղինակը՝ աղերսելով այն զգայական-զգացմունքային աղոթքի տեսության հետ, երևույթ, որ ներհատուկ է նարեկյան դպրոցին, և որից այն ժառանգել են Կիլիկյան գրական դպրոցի ներկայացուցիչները:

Այս տեսությունն, ինչպես տեսնում ենք, վերաբերում է առավելապես ներանձնական, ներքին աղոթքներին, թե-

²⁶ «Մատենագիրք հայոց», Հ. Ժ. Ժ դար, Էջ 1087, 1090:

պետ հեղինակն այնուշետ անդրադառնում է կանոնական աղոթքների և աղոթասացության կարգին:

Ներքին, մտավոր աղոթքի, զղջման և արտասուքի, ներքին և արտաքին մարդու մասին այս դրույթներն էաւես աղերսվում են Նարեկյան դպրոցի բարոյագիտական և արվեստաբանական տեսությունների հետ:

Դժվար է վերականգնել այս խրատի նախնական պատկերը, քանի որ այն ունի բազմաթիվ հավելագրություններ, միջին հայերենին հատուկ ձեեր, որ ներմուծել են հետագա գրիչները։ Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել Մաշտոցյան Մատենադարանի, ինչպես նաև այլ հայերեն ձեռագրերի հավաքածուների տարբերակները։

Համենայն դեպս, որ այդպիսիք կան, վկայում են սույն խրատի՝ Մաշտոցյան Մատենադարանի երեք հնագույն ընդօրինակությունները, որոնք հարուստ են տարբնթերցվածներով, և որոնք հիմք են հանդիսացել բնագրի կազմման համար։ Նրանցից N 769-ը ունի մի ամբողջական ծավալուն հատված, որ չկա մյուս բնագրերում։ Այն հարուստ է միջին հայերենի դարձվածներով, և նրանում նույնպես երկիցս հիշատակվում է Թեղենիս տեղանունը, ինչպես նաև խրատում տեղ գտած դավանությունը։

Հավանաբար խրատում ընդգրկվել է դավանության նախնական տարբերակը, որ հետագայում հատվածների բաժանված մտել է «Մատեանի» Լ.Դ գլխի կառույցի մեջ, սկզբունք, որ օրինաչափ բնույթ է կրում «Մատեանի» ստեղծման ընթացքի համար²⁷։

Չնայած որոշ հակասություններին, այս խրատն իր

²⁷ Այս երեսույթի մասին տե՛ս Հ. Հ. Թամրապյան, Նարեկյան դպրոցը, էջ 103-104։

տարընթերցվածներով ներառում ենք Գրիգոր Նարեկացու երկերի շարքում, մի քանի պատճառներով՝

ա. ձեռագրական ավանդույթն այն վերագրում է Գրիգոր Նարեկացուն,

բ. երկի կարեորագույն հատվածը՝ դավանությունը կամ հավատո հանգանակը, Գրիգոր Նարեկացունն է,

գ. խրատի մի շարք գրույթները միստիկ կենցաղավարության և աղոթքի ներքին փորձընթացի մասին լիովին համընկնում են Նարեկյան դպրոցի և Գրիգոր Նարեկացու տեսություններին՝ ինչ-ինչ կողմերով հարստացնելով այն,

դ. խրատի մի շարք հատվածներ Նարեկյան դպրոցի խրատական ժանրի գործերի հարասություններ են հիշեցնում և համահունչ են նրա համատեքստին:

ե. հեղինակն իր մասին բացահայտում է կենսագրական փաստեր, որոնք համընկնում են Գրիգոր Նարեկացու հայտնի կենսագրական տվյալներին և հիշատակություններին:

Միջին հայերենին հատուկ ձևերի և դարձվածների առկայությունը, ինչպես նաև թեղենիսի վանքի մասին հիշատակությունը, որոնց հիման վրա նարեկացիագետ Պ. Խաչատրյանը բացառում է այս գործի՝ Գրիգոր Նարեկացուն պատկանելու հնարավորությունը՝ վերագրելով այն Գրիգոր Սկևորացուն, կարող են հետագա գրիչների հավելումների և ընդմիջարկությունների արդյունք լինել: Նշենք, որ դրանցով հարուստ են նաև Անանիա Նարեկացու խրատները, հատկապես XIV-XV դդ. գրչագրերում²⁸:

²⁸ Այդպիսի օրինակները շատ են հատկապես «Խաւաք եւ խրատ աւետարանական...» ընդարձակ խրատում:

«ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ
ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԽ ՔԱՀԱՆԱՑԻՅ
ՎԱԽՃԱՆԻ ԲԱՆ ԳՈՎՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ»

Այս խորագրով մի երկ է պահպանվել Գրիգոր Նարեկացու անունով, որ, ինչպես խորագիրն է հուշում, գրված է նշանավոր մի վարդապետի մահվան կապակցությամբ: Պ. Խաչատրյանը հրատարակել է այն իր «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» գրքում՝ համարելով այն դամբանական ճառ, գրված հետագա դարերում, որի հեղինակը գտնվում է Գրիգոր Նարեկացու զորեղ ազգեցության տակ. «Գրիգոր Նարեկացու անվան տակ թաքնված անհայտ հեղինակն օժտված է գեղագետի անուրանալի ձիրքով, սակայն տիրականորեն գտնվում է նրա ազգեցության տակ: Ճառը հաջողված ոճավորում է: Զգացվում է ուշ ժամանակների շունչը: Նկատելի է և ճաշակի պակաս՝ ինչ-ինչ բառերի ոչ հաջող ընտրություն, միենույն բառի անհարկի կրկնություն իրար հարևանող նախադասություններում. Հատկանիշներ, որոնք անհարիր են Նարեկացու արվեստին: Ճառագրի պատկերավոր բնութագրումներն ու համեմատությունները, եթե ուղղակի փոխառված չեն մեծ բանաստեղծից, ապա նմանակում են նրան: Այդ հանգամանքն էլ հավանաբար խթանել է հեղինակին, գուցեև հետագա գրիչներին, գրվածքի մեջ տեսնելու Նարեկացու ստեղծագործումը, համարձակություն տվել այն վերագրելու նրան»²:

¹ Ս. Էջմիածին, 1996, էջ 153-157: Հեղինակը տալիս է երկը պարունակող ձեռագրացանկը. ՄՄ, 6708 (1635 թ., գրչ. վայր՝ անհայտ), 3504 (1676, 1692 թթ., Կաֆա), 152 (ԺԵ-ԺԷ գլ., Հովհաննավանք), 2752 (1799 թ., գրչ. վայր՝ անհայտ), 7581 (1822, գրչ. վայր՝ անհայտ):

² Նույն տեղում, էջ 153-154:

Հստ էության, հմուտ բանասերն այս գործը համարում է Գրիգոր Նարեկացու նմանակում՝ չդիմելով համեմատական վերլուծության, բնագրագիտական աղերսների վերհանման և չխորանալով բուն բովանդակության մեջ, չքննարկելով նաև հիմնական հարցերը՝ ո՞ր դարի գործ է այն, և ո՞վ է հեղինակը, ո՞ւմ է այն նվիրված, քանի որ նրանում խոսք է գնում երևելի, մեծանուն վարդապետի մահվան մասին:

Երկն աչքի է ընկնում գեղարվեստական անուրանալի արժանիքներով, գրված է բանաստեղծական շնչով, չափաբերված է և հեշտորեն տողատվում է: Այն իր ժանրային հատկանիշներով ավելի նմանվում է գանձի կամ տաղի, հիշեցնելով XI դ. Կիլիկիայում Վարդան Հայկազնի գրած «Տաղ գերեզմանական»-ը՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահվան առթիվ: Հետաքրքիր է, որ նմանատիպ մի այլ նշանավոր գործի՝ Ներսես Լամբրոնացու՝ Ներսես Շնորհալի կաթողիկոսի մահվան կապակցությամբ գրված բանաստեղծական երկը խորագրված է «Գովեստ ներբողական... Յաղագս վարուց մեծի հայրապետին տեառն Ներսիսի Կլայեցւոց Հայոց կաթողիկոսի...»: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում հեղինակն առավել շեշտել է իր երկի ներբողանման և վարքագրական բնույթը: Նույնն է նաև մեր հեղինակի երկի դեպքում, որ ծավալով շատ ավելի փոքր է և ավելի քննարական շունչ ունի՝ «Բան գովութեան եւ մխիթարութեան», ուր միախառնված են ներբողն ու ողբը՝ գրված «տիեզերալուր» վարդապետի մահվան առթիվ և հանուն նրա հրեշտակակերպ անձի ներբողման: Այս ներբողախառն ողբն աղերսներ ունի Գրիգոր Նարեկացու և Նարեկյան դպրոցի այլ ներկայացուցիչների երկերի հետ: Խոսքը հատ-

կապես Գրիգոր Նարեկացու ուսուցչի՝ Անանիա Նարեկացու «Վասն անցաւոր աշխարհիս» բանաստեղծության մասին է, որ քնարական շնչով գրված խորհրդածություն է մարդու և ընդհանրապես կյանքի անցողիկության մասին, և անխառն բանաստեղծության առաջին նմուշներից է X դ. Հայ բանաստեղծության մեջ:

Հեղինակն իր «Բան գովութեան եւ մխիթարութեան» երկում կերտում է հոգեոր մարդու, ուսուցչի, վարդապետի մի կերպար, որը նախատիպ է Հանդիսացել իր ժամանակի հոգեոր միջավայրի համար, մի հոգեոր կատարելատիպ, որին ձգտում էին միջնադարյան միստիկ աստվածաբանության և նորավատոնական ուղղության ներկայացուցիչները, որի կենտրոնն էր X դարում Նարեկյան դպրոցը։ Նման ներբողանման դամբանականների միջնադարյան հայ մատենագրության մեջ շատ քչերն են արժանացել։

Ո՞վ է նրա հեղինակը և ո՞ւմ է այն նվիրված։

Մեր կարծիքով, այս դեպքում ևս ճիշտ է ձեռագրական ավանդույթը, և երկի հեղինակը Գրիգոր Նարեկացին է։ Փորձենք հաստատել մեր տեսակետը բնագրային ուղղակի առնչությունների վերհանումով և այլ օժանդակ փաստերով։

Գրիգոր Նարեկացին նման ներբողատիպ հատվածներ և արտահայտություններ ունի իր վարդապետի՝ Անանիա Նարեկացու մասին թողած փոքրիկ հիշատակարաններում և հիշատակագրություններում, ինչպես, օրինակ, «Մատեանի» Բան իլ, Զ հատվածում։

Արդ, բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի Ողորմեա՛ վասն խաչի եւ չարչարանաց եւ մահու Որդւոյ քո, Հայրդ գթութեան,

Ակիզբն առաքողի ողբերգութեան ձայնի այսմ
արտաւարածին նուագի,
Որ զայս գեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց,
Եղիցի՝ բժշկեալ յանուն քո, հզաւը:
Որ յետո ելից խոստովանութեան մեզ նկատեցոյց
Այսու պայմանաւ պատշաճականաւ,
Լիցի՝ անարատ յիւրոցն պարտեաց:
Որ գհպարտութեանն թեւս հարթել մեզ
վարդապետեաց
Ի սոյն կանոնի կենաց պատգամի,
Եղիցի՝ գերծեալ ի չար կապանաց մահու արկածից...
Երրորդութեամբդ բարեգործեալ,
Ի նորոգութիւն լուսաւորութեան,
Հնդ որում եւ մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ
ընդ սմին:

Այս մաղթանք-հիշատակարանը համահունչ է «Բան
գովութեան եւ մխիթարութեան» երկին:

Հատկանշական է, որ Գրիգոր Նարեկացու մի այլ գոր-
ծի՝ Գրիգոր Լուսավորչին նվիրված գանձ-ներբողի և «Բան
գովութեան...»-ի միջև ևս կան գաղափարական, ոճական,
տեղ-տեղ ուղղակի բնագրային առնչություններ:

Ահա բնորոշ հատվածներ «Գանձից».

Ի փշաբեր ոստոց՝ ծաղիկ վարդից բուսեալ,
Քրքում եւ շուշան հովտաց վայելուչ,
Բոյս ի գոսացեալ արմատոյ
Տնկեալ ի գնացս գէտոց պտղալից...
Ի քարանց բղիսեալ բարերար բաժակ զովարար...
Ուր զկրկինս արբեր զկաթինս ի ստեանցն
ելեալ Սիոնի,

Յարբումն մանկանց զնոր եւ զշին
 Կտակարանս հոգեբուղիս...
 Ի չափ հասէր կատարման այրացելոյն
 Յիսուսի եւ Փրկչին բոլորից,
 Խորին խորհրդոց նորին եղեր հասու
 ըստ Պաւղոսի եւ հազարապետ,
 Անթարգմանելի ծածկեալ խորհրդոյն՝
 յայտնիչ վարդապետ եւ քարոզ...
 Ռաբուն բարի, վարդապետ խոհեմ...
 Բաշխող շնորհաց Հոգւոյն Սրբոյ
 մանկանց բոլորից...
 Կաթամբ մայրաբար դիեցուցեր գերկամբք
 Քո ծնեալ զգաւակսն անհամարս...
 Գերագոյն մաքրութեամբ երեւեալ՝
 Փայլեցար յորդիս Սիոնի, տէր սուրբ Գրիգոր,
 Առաւել ծագմամբ լցեալ որպէս
 յաստեղս արեգակն...
 Մետասան գնդին գերագոյն քարոզ աշխարհի,
 Հետեւողաց նոցին հայրապետաց վեհագոյն՝
 արի եւ քաջ հովիւ...
 Միանձանց կրաւնիցն գլուխ եւ պետ արագապէս,
 Մարդ երկնային եւ հրեշտակ երկրային,
 Մերովբէ հողեղէն եւ քերովբէ նիւթական,
 Աթոռ մարմնեղէն եւ հանգիստ կամաց
 մեծին Աստուծոյ...³

Այժմ հատվածներ ներկայացնենք «Բան գովութեան...»
 թից.

³ «Մատենագիրք հայոց», Հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, էջ 684-688:

Այսաւը ծաղկազարդ եւ աստուածախաւս
վարդապետութիւնն խափանեցաւ...
Եւ որպէս անուշահոտ ծաղիկ ցամաքեցաւ եւ
թառամեցաւ:

Այսաւը յորդառատ եւ անուշահամ աղբիւրն
ցամաքեցաւ,
Եւ որ բխէր զաստուածային վտակն՝ այլ ոչ
եւս երեւի...

Այսաւը արեգակն խաւարեցաւ եւ որպէս զլուսին
նուազեաց,

Եւ արգել զլոյսն իւր:

Այսաւը աստեղք մթացեալ կան յերկինս,
Քանզի կորեաւ արուսեակն վարսադիտակ
Եւ փայլածուն գեղեցկապաճոյճ...

Այն, որ պարծանք էր քահանայից եւ վարդապետաց
Եւ բարբառ տիեզերալուր՝ հնչեցեալ ի
ծագս աշխարհի,

Այն, որ ըստ երկրաւոր բնութեանս մարդ էր
Եւ երկնաւոր զաւրութեանցն դասակից եւ
հանդիսակից...

Հազարապետ էր Քրիստոսի Աստուծոյ եւ Հաւը
կամարար...

Հմուտ վարդապետ, անքուն դէտ...

Բանաւոր ոչխարաց հովիւ քաջ,
Նաւապետ բարի, դեկաւար ճարտար...

Անվրէպ առաջնորդ ընդ սէրովբէսն սրբասաց,
Մարմնաւոր հրեշտակ...

Մասն ի հովուապետէն Քրիստոսէ...
Յստակ աղբիւր եւ վտակ առաքելական...

Աթոռ վերացեալ եւ ընդ հրեշտակս դասեալ,
Որ աղաւթիւք իւրովք հաշտեցուցանէր զմարդիկ
Հետ Աստուծոյ...

Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսք է գնում մի գերագույն վարդապետի մասին, որ հայտնի է եղել իր միտիկ կենցաղավարությամբ, եկեղեցական և կրթական լայնածավալ գործունեությամբ և սրբի համբավ է վայելել հոգեոր շրջանակներում։ Այդպիսի վարդապետ էր Անանիա Նարեկացին, որ սկզբնաղբյուրներում հիշվում է իբրև Հայոց վարդապետ, եռամեծ, հզոր, հոգելից, աստվածային վարդապետ, մեծ հռետոր և փիլիսոփա։

Հեղինակը գերագույն պատվանուններով է բնորոշում իր վարդապետին, որն իր համար հոգեւոր նախատիպ է, միջնորդ՝ Աստծո և մարդկանց միջեւ, առ Աստված տանող ճանապարհ, մարմնավոր հրեշտակ, երկնային աթոռ, հրեշտակներին դասակից։

Նույնանման գերանուններով է Գրիգոր Նարեկացին բնորոշում նաև Գրիգոր Լուսավորչին՝ նրան ձոնված հիշյալ գանձում։ Բավական է համեմատել երկու հատվածների ընդգծված տեղիները։

Գանձ	«Բան գովութեան...»
Գերագոյն քարոզ աշ-	Բարբառ տիեզերալուր՝
խարհի...	հնչեցեալ ի ծագս աշխար-
Խորին խորհրդոց նորին հի...	հազարապետ էր Քրիստո-
Եղեր հասու...	Նապարապետ էր Քրիստո-
Հստ Պաւղոսի եւ հազա-	սի Աստուծոյ եւ Հաւը կա-
րապետ...	մարար...
Մարդ երկնային եւ հրեշ-	Հստ երկրաւոր բնու-
տակ երկրային,	թեանս մարդ էր

Աերովբէ հողեղէն եւ քե-
 թովբէ նիւթական,
 Աթոռ մարմնեղէն եւ
 Հանգիստ կամաց մեծին
 Աստուծոյ...

Եւ երկնաւոր զաւրու-
 թեանցն դասակից եւ հան-
 դիսակից...
 Անվրէպ առաջնորդ ընդ
 սերովբէսն սրբասաց, մարմ-
 նաւոր հրեշտակ...
 Աթոռ վերացեալ եւ ընդ
 հրեշտակս դասեալ...

Նույն գերանունություններն ու պատկերաշարերն են
 նաև Գրիգոր Նարեկացու՝ առաքյալներին նվիրված գան-
 ձում («Քարոզք համաւրէն ի սուրբ առաքելոցն»).

Հազարապետք մեծի խորհրդոյն...
 Ի վերին կարգեալ պետութիւնս հրեշտակացն
 գոլով համապատիւք...
 Լուսատուք տիեզերաց եւ պաշտեցեալք ի յերկինս...
 Տարրեղէն բնութեամբ՝ անաւթք մաքրագոյնք...
 Ռաբունք անճառք լուսոյն ճառագայթք եւ
 իմաստութեան էին հեծանոցք...⁴

Նմանատիպ փոխներթափանցումներն այս բնագրերի
 միջև գրեթե անհնար են դարձնում դրանք ազդեցություն-
 ներով և նմանակումներով պայմանավորելը։ Դրանք միեւ-
 նույն ստեղծաբանական ընթացքի տարբեր արտահայտու-
 թյունների և դրսկորումների տպավորություն են թողնում,
 քանի որ ունեն հեղինակի ինքնության կնիքը։

Այս երկերն իրար հարազատ են նաև պատկերավորման
 միջոցներով և արտահայտչածերով, որով այս ներբողը
 կապվում է նաև Գրիգոր Նարեկացու այլ երկերի հետ։

⁴ Նույն տեղում, էջ 722-724:

Այստեղ ասենք, որ ինչպես Նարեկյան դպրոցի և Գրիգոր Նարեկացու շատ երկերի դեպքում, այդ կապերը հաճախ սքողված են, ներհյուսված են շարժունակ բառապաշտի, բառաստեղծման տարերքի ու փոխներթափանցումների, բառիմաստների հնչերանգային փոխանցումների հետ, որոնք, ի վերջո, բերում են այս բնագրերի համահյուսվածքի ներըմբռնման: Սակայն, ինչպես վերոնշյալ բնագրային քաղվածքները, որ նաև գաղափարական նույն հենքն ունեն, կան նաև այս երկի և Գրիգոր Նարեկացու այլ երկերի միջև առկա բնագրային և գաղափարական կապեր, որոնք ավելի ակնառու և տեսանելի են դարձնում փոխներթափանցումներն այս բնագրերի և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության՝ իբրև համաբնագրի միջև:

Եվ դարձյալ մենք պիտի ներբերենք Գրիգոր Նարեկացու «Մատեանի» հայտնի հատվածը, որ հանգուցակետ-գաղափարատիպ է հեղինակի բնագրերի համահյուսվածքում: Այն, ինչպես նշել ենք, ներբող է մարդկային բնությանը, նրա բանականությանը, նրա արարչագործ տարերքին, որով, ըստ հեղինակի, մարդն համացեղ է դառնում Աստծուն:

Ահա ի յոտս տանողականս
Կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց,
Հստ ձեւոյ հրեշտակի կառուցար,
Իբր ի թռիչս թեւոց կրկնաբարձ բազկաց
վերատանողաց՝
Յաշխարհն հայրենական հայել...
Իբր գճրագ բազմաբերանեան
Ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ զգլխոյդ
բոլորութիւն,
Զի եւ այսու ի յաւրինակէն շնորհէ մի՛ աւտարասցիս՝

ԶԱՍՏՈՒԱԾ ՄԵՍԱՆԵԼ Եւ զմնացականացն
իմաստասիրել:

Բանականութեանն յարգանաւք կրկին ճոխացար,
Զի զյաղթանակ բարեմասնութեանն, որ առ
քեզ եղեն,

Անարգել լեզուով խաւսեսցիս...

Իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն
Աստուծոյ՝

Աստուած կոչեցար:

(ԽԶ, Բ)

Ահա այս հատվածին համահունչ մի հատված «Բան
գովութեան եւ մխիթարութեան» երկից:

Այսաւր շիջաւ եւ խաւարեցաւ կանթեղն եւ ջահն
լուսափայլ,

Որ եղեալ էր ի վերայ ոսկի աշտանակին...

Մարմնաւոր հրեշտակ,

Լուսեղին ձեռք, ոսկեղին մատունք, հրեղին թեւք,

Շնորհք ի շնորհողին մեզ շնորհեալ,

Մասն ի հովուապետին Քրիստոսէ,

Յոգնազան բխումն եւ ամենեցուն փրկութիւն,

Քաղցր շառաւիղ եւ շահեկան պտուղ,

Յստակ աղբիւր եւ վտակ առաքելական,

Գերազանցեալ լոյս եւ անձկալի տեսիլ,

Միշտ բոլորեալ պսակ անձին իւրում,

Աթոռ վերացեալ եւ ընդ հրեշտակս դասեալ,

Որ աղաւթիւք իւրովք հաշտեցուցանէր զմարդիկ
Հետ Աստուծոյ

Եւ վարդապետական բերանովն բխէր զբանն կենաց
ի լսելիս հաւատացելոց...

Ինչպես տեսնում ենք, այս հատվածում ևս հեղինակը գաղափարում է իր հոգևոր կատարելատիպը՝ «Մատեանին» նման արտահայտություններով ներկայացնելով իր վարդապետի աստվածային բարեմասնությունները:

Դարձյալ, ինչպես նախորդ հատվածներում, այստեղ առկա են բնագրային առնչություններ, որոնք մոտենում են նույնությունների և համընկնումների:

Մատեան

Հստ ձեւոյ հրեշտակի կառուցար,

իբր ի թռիչս թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց...

իբր զճրագ բազմաբերանեան

ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ բոլորութիւն...

Զեռինդ հատմամբ յարմարոստեան մատանցդ շռաւիղաւք...

իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն

Աստուծոյ՝ Աստուած կոչեցար...

«Բան գովութեան...»

Մշտավառ ճրագ էր աննուազելի,

Լոյս պայծառ էր յարափայլ...
... Կանթեղն եւ ջահն լուսափայլ,

Որ եղեալ էր ի վերայ ոսկի աշտանակին...

Մարմնաւոր հրեշտակ,
Լուսեղէն ձեռք, ոսկեղէն մատունք, հրեղէն թեւք...

Շնորհք ի շնորհողէն մեզ շնորեալ,

Մասն ի հովուապետէն Քրիստոսէ...

Միշտ բոլորեալ պսականձին իւրում...

(ԽԶ, Բ)

Նման պատկերներ եւ բառակապակցութիւններ կան նաեւ Գրիգոր Նարեկացու ներբողներում։ Ահա մի օրինակ Հակոբ Մծբնեցուն նուիրուած ներբողից։

Լուսապատրոյգ, ճաճանչեղ... աշտանակակիր ճրագացն
տեսանողին ջահացեալ⁵:

Ահա մի այլ զուգադիր օրինակ.

Ներբող

Քանզի որպէս ի ծիրս աս-
տեղաց զարուսեակն երկ-
նից ի ճահ է դասել...⁶

«Բան գովութեան...»

Այսաւը աստեղք մթա-
ցեալ կան յերկինս,
Քանզի կորեաւ արու-
սեակն վարսադիտակ
եւ փայլածուն գեղեցկա-
պաճոյն...

«Բան գովութեան...»

Սակայն սա դեռ բոլորը չէ. «Մատեանի» և այս երկի
մեջ կան նաև այլ նմանատիպ առնչություններ: Այսպես.

«Մատեան»

Եւ ընկա՛լ զցաւղ ողբեր-
գութեան լալոյ արտա-
սուաց...

(ԼԲ, Դ)

«Բան գովութեան...»

Այսաւը երկինք խոնար-
հեալ
Յաւղեն ի մեզ զցաւղ ող-
բոց եւ արտասուաց...

Տենչալի տուր, անձկալի
ձիր,

Բաղձալի բերկութիւն...
Խնդութեան մուտք, ան-
վրէպ շաւիդ, փառաց գուռն,
Ճշմարտութեան ճանա-
պարհ...

(ԼԲ, Գ)

Շաւիդ էր անվրէպ,

Ճանապարհ էր արքայու-
թեան,

Դուռն էր լուսոյ եւ մուտ
դրախտին...

Գերազանցեալ լոյս եւ
անձկալի տեսիլ...

⁵Տե՛ս «Մատենագիրք Հայոց», Հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Էջ 993:

⁶Նույն տեղում, Էջ 991:

Նույնությունն ակնհայտ է. Հեղինակը նույն և նույնանման գերանուններով է դիմում Աստծուն և աստվածացնում իր մեծ ուսուցչին և վարդապետին:

Եվ այս երկույթը ոչ միայն նույն հեղինակի բառաշխարհի ներքին աղերսների կամ ուսուցչի և աշակերտի երկարամյա հոգեոր և ստեղծագործական կապի արդյունք է, կամ մեծարանքի խոսք մարմնավոր կյանքից հեռացած ուսուցչի հասցեին, այլև ամբողջական և հստակ աշխարհայացքի արտահայտություն ներքին մարդու աստվածացման հոգեոր ընթացքի մասին, որ Նարեկյան դպրոցի աստվածաբանության, բարոյագիտության, արվեստի տեսության և փորձի հիմնաքարն էր և բխում էր նորպլատոնական ակունքներից և վաղ քրիստոնեական միստիկ տեսություններից⁷:

Համեմատենք այս հատվածներն Ուխտանես պատմիչի «Հայոց պատմության» առաջաբանի հետ, որ ձոն-ընծայական է իր ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն: Պատկերը նույնական է. Անանիա Նարեկացին մեծարվում է իբրև աստվածատուր և տիեզերաքարոզ վարդապետ, հրեշտականման, մարգարեաքարոզ և առաքելաշնորհ. «Աստուածազարդ և վսեմական Տէր իմ Տէր և տիեզերական վարդապետ, իբր ծառ իմն բազմապտուղ և բարձր ի մեջ վայելուչ և աստուածատունկ դրախտիդ Նարեկայ կոչեցեալ ուխտի... աստուածարեալ Տէր և բազմերջանիկ հայր, երկրորդ Կեփաս և առաջին առաքեալ... և կենդանի վկայեալ ի մարմնի զանմարմնոցն բերելով նմանութիւն, մարգարէաքարոզ և առաքելաշնորհ...»⁸

⁷ Այս մասին տե՛ս Հ. Թամրապյան, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Երևան, «Նախրի», 2004:

⁸ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, էջ 8-10:

Եվ այսպես, ձեռագրական ավանդույթը և բնագրագիւտական քննությունը մեզ բերում են այն համոզման, որ այս երկը պատկանում է Գրիգոր Նարեկացու գրչին և գրվել է իր մեծ ուսուցչի՝ Նարեկյան դպրոցի հիմնադրի և առաջնորդի՝ Անանիա Նարեկացու մահվան առթիվ:

Չնայած ժանրի սահմանափակումներին՝ իր գեղարվեստական արժանիքներով, քնարական-էլեգիկ շնչով, պատկերավորման և բառաստեղծման համակարգով և, վերջապես, անկրկնելի ձեռագրով այն առանձնանում է հետագայում գրված նմանատիպ երկերից. խոսքը նաև Վարդան Հայկացնի և Ներսես Լամբրոնացու՝ Գրիգոր Վկայասերին և Ներսես Շնորհալուն նվիրված նմանատիպ երկերի մասին է, որոնք չունեն գեղարվեստական այն արժանիքները, որով օժտված է այս երկը:

Հետագայում այն ոչ միայն նախօրինակ է հանդիսացել նման երկերի համար, այլև օգտագործվել է այլ նշանավոր վարդապետների և եկեղեցական գործիչների մահվան ծիսակարգի ժամանակ: Մատենադարանի N 3504 ձեռագրում (1676, 1692 թթ. Կաֆա) հայտնի տաղասաց, եպիսկոպոս Վարդան Կաֆայեցին, որը նաև ձեռագրի գրիչն է, Գրիգոր Նարեկացուն վերագրված «Քան գովութեան...» երկի խորագրից հետո նշում է.

Ո՞վ քահանայք եղբայրասէրք,
Լալով, ողբով գիրս ընթերցէք,
Որ լըսողացն գեղճ բերէք (Էջ 227):

Իսկ տողատակում հստակ նշում է. «Քահանայ իմաստուն եւ վարդապետ վախճանելոյ ասա ողբով», երկի նախավերջին պարբերության մեջ «սրբասէր քահանայիս»

բառերի արանքում գրելով «այս անուն», տեղ թողնելով հետագայում վախճանվող նշանավոր վարդապետների և հոգեոր գործիչների անվան հիշատակության համար⁹:

Սա խոսում է այն մասին, որ հեղինակը, հետեւելով ձեռագրական հին ավանդույթին, ոչ միայն Գրիգոր Նարեկացուն է վերագրում այս երկը, այլև, ընդգծելով նրա գեղարվեստական արժեքը, հոգեմտավոր ու հուզական ազգեցության ուժը և ընդհանրացնող ոգին, կիրառելի է համարում այն նշանավոր եկեղեցական գործիչների հուզարկավորության ծիսակարգի ժամանակ:

Արդյոք երկի ծիսականացման այս խորհուրդը գալիս է դարավոր ավանդույթի⁹ գ, թե՝ տաղասաց եպիսկոպոսի նորամուծության արդյունք է, դժվար է ասել: Սակայն այն վկայում է երկի մեծ համարման և ազգեցության ուժի մասին: Ի դեպ, «այս անուն» արտահայտությունը հանդիպում է նաև Գրիգոր Նարեկացու գանձերում, հայրապետների անվան կողքին («ԶՀայրապետն մեր՝ զտէր [այս անուն]»): Այդպես են վարչել, հավանաբար, Գանձարանների գրիչները՝ տեղ թողնելով հետագա հայրապետների անվան տեղադրման համար (տե՛ս «Ի սուրբ Յովաննէս Մկրտիչն», «Ի գալուստ Սուրբ Հոգւոյն» և «Քարոզ եկեղեցւոյ» գանձերը):

*

Այս երկը զգայացունց, եղրափակիչ դրվագն է Անանիա և Գրիգոր Նարեկացիների՝ մեծ վարդապետի և հանձարեղ աշակերտի համատեղ կենցաղավարության և ստեղ-

⁹ Այս մասին տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 153:

ծագործական կյանքի, նաև վկայագրությունն այն գերադույն գնահատանքի, որով Գրիգոր Նարեկացին հավերժացնում է իր ուսուցչի հիշատակը:

Այն համահունչ և հոգեհարազատ է Անանիա Նարեկացու «Վասն անցաւոր աշխարհիս» բանաստեղծությանը, որը խոր ազգեցություն է թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա:

Մեջ բերենք մի հատված այս քնարական քերթվածի վերջնամասից.

Նա եւ մարդն
Կարի արագապէս փոփոխի,
Զի թէպէտ որպէս զերկինս բարձրանայ,
Որպէս զերկիր մոխրանայ,
Որպէս զամպ սփոխ
Եւ որպէս կաթիլ պակասէ,
Որպէս ծաղիկ պայծառանայ
Եւ որպէս խոտ չորանայ,
Որպէս բոց բորբոքի
Եւ որպէս ծուխ լուծանի,
Որպէս մրրիկ փոթորկի
Եւ որպէս սարդիոստայն անկանի,
Որպէս հնոց սաստկանայ
Եւ որպէս առկայծեալ շիջանի,
Որպէս ծով յառնէ,
Որպէս զաւագ ի խորս ընկղմի,
Որպէս ծառ վայելչանայ
Եւ որպէս տերեւ թաւթափի...
Այսաւը ի մեծութեան
Եւ վաղիւն ի թաղման,

Այսաւը ի գանձի
Եւ վաղիւն ի գերեզմանի...
Եւ չի՞ք ինչ յայս կեանքս հաստատուն,
Այլ ամենայն ինչ փոփոխական է...

Այսպես ներհյուսվում են ճակատագրերն ու բնագրերը, և խոսքն ու բանաստեղծությունը ձեռք են բերում կենսական արժեք և նշանակություն՝ կամուրջ կապելով անցողիկ կյանքի և հավերժության միջև:

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «Ո՞Վ Է ԴԱ»-Ի

Գրիգոր Նարեկացուն վերագրվող այս մեկնությունը պահպանված է միակ՝ այն է՝ Մխիթարյանց Մատենադարանի թիվ 1030 ձեռագրով (1299 թ.)¹; Ձեռագիրը թերի է, առաջին երկու թերթերը չկան, առաջին թերթից մնացած մի փոքր ծվենի վրա պահպանված է գրչի կամ պատվիրատուի («Յիշէ Թորոս» և հեղինակի («Գրիգոր Նարեկացւոյ») անունները:

Մեկնության նախագրությունից մի հատված է պահպանվել (5ա-7ա), մնացած մասը կազմում է բուն մեկնությունը (7ա-72ա), որն ընդգրկում է Հոբի ԼՀ 8 – ԼԹ 30 հատվածի մեկնությունը: Հավանաբար մեկնության մասն է կազմել նաև Հոբի գրքի մնացած մասը՝ մինչև ԽԲ 8, քանի որ մեկնության խորագիրը՝ «Ո՞վ է Դա», վերցված է այս հատվածից: Սա Հոբի գրքի ամենաղբամատիկ և հանդիսավոր մասն է, որ ներկայացնում է Աստծո և Հոբի երկխոսությունը:

Նրանում իրար են միահյուսված մեկնողական և ներբողական ժանրերը: Բնագիրը թերի է: Պահպանված հատվածը ոճական և բովանդակային առումով լիովին ընդգրկվում է Նարեկյան դպրոցի գրական-գեղարվեստական համատեքստի մեջ: Նրան ևս հատուկ են ինքնաբուխ պատկերաշարերը, բառաստեղծման տարերքը:

Կա նաև մի այլ ձեռագրական տվյալ. XIX դ. մի ձեռագրում, ուր այս երկը դարձյալ վերագրված է Գրիգոր Նարեկացուն, մեջ է բերված երկից մի բառացանկ, որի պարու-

¹ Բնագիրը հրատարակված է (տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. ԺԲ, Ժդար, Գրիգոր Նարեկացի, Երևան, Նախրի, 2011, էջ 885-910):

նակած շատ բառեր նորաբանություններ են, և դրանք գրիչը փորձում է բացատրել, վերծանել բառիմաստները՝ մի յուրատեսակ բացատրական բառարան։ Սակայն այդ բառերը չեն հանդիպում «Ո՞վ է Դա»-ի պահպանված հատվածում, վկայելով, որ դրանք քաղված են բնագրի այլ մասերից։

Այս երկի՝ Գրիգոր Նարեկացուն պատկանելու վարկածը կարիք ունի լրացուցիչ փաստարկման, որը մենք կփորձենք անել՝ քննելով այն Նարեկյան դպրոցի համատեքստում։

Նախ նշենք այս երկի ոճական հարազատությունը Նարեկյան դպրոցի մեկնողական և ներբողական բնույթի երկերի հետ։ Ոճական այդ հարազատությունը բերում է բառացի համընկնումներ, որ տիպական երևույթ է Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների համար։ Նման փաստերի ենք հանդիպում նաև Անանիա Նարեկացու «Ներբողեան ասացեալ ի Սուլբն Կաթուղիկէ եկեղեցի» և այս երկերի միջև։

Ներբող
«Եւ փոխանակ եռանդաւպոյտ կայծակնատարափ շանթիցն ցոլմանց՝ ի սէրութէսասարսափ աստուածակայծակն սեղանոյն առլցմանէ արտաշիկագոյն արտաձգութեամբ, իբր յեւ ուանդնուտ քրայէ հրանուտ հոսմամբ՝ արտաքս արձակեալ։

«Մեկնություն «Ո՞վ է Դա»-ի մասին»
«Ծարաւեալք արեամբ Նոր Ուխտին նոր եւ նորոգիչ զենմամբն, որ զմեղս տիերովքէսարսափ զերաց ծախեաց հրախառն եւ քրովքէստոչոր սուրբ արեամբն, որ բղխեացն ի գառնազէն կողիցն»։

Եւ հրախառն կայլակաւք
կողահոս հիւթից հորդա-
սահ վտակաց ամենակե-
ցոյց բոլորիցն Արարչի...»²: «Ոսկէպատեան արտաշե-
կագոյն հրախառն սուրբ
արեամբն մատոռւակեալ ի
ձեռանէ Տեառն...»³:

Սրանք պատահական զուգագիպություններ լինել չեն
կարող, քանի որ այս երկի և՛ ոճը, և՛ պատկերամտածողու-
թյունը, և՛ բառագանձը ներհատուկ են Նարեկյան դպրո-
ցին:

Մեջ բերենք բնորոշ մի քանի հատվածներ մեկնությու-
նից. «Այս զենումն զիսաչն փառաւորեաց եւ բոցակերպեալ
աստուածային արեամբն ահաւորեցաւ ի վերայ դիւական
զորացն...»

Այս զենումն աստուածային քրիստոսասէր թագաւո-
րաց թագ երկնաւոր եւ ծիրանի հրանիւթեաց... եւ սուր
բոցեղէն...»⁴

Եւ նորին արեամբն ներկեալ՝ իբրեւ զնկարս ոսկւոյ եւ
արծաթոյ գեղեցիկս փայլեսցուք...

Եւ զարիւնն կողահոս ընդ վիշապսն արբցուք եւ խո-
րագէտք լիցուք»⁵:

Նման բազմաթիվ հատվածներ կան Անանիա և Գրիգոր
Նարեկացիների այլ երկերում, որոնց մենք բազմիցս անդ-
րադարձել ենք: Ահա համանման հատվածներ «Մատեանից».

Զոր կողից քոց կայլակք նորոգեցին...
(ՀԲ, Ա)

² «Մատենագիրք հայոց», հ. Ժ, Ժ դար, էջ 637:

³ «Մատենագիրք հայոց», հ. ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, էջ 906, 908:

⁴ Նույն տեղում, էջ 907:

⁵ Նույն տեղում, էջ 910:

Զվճիռ հոգւոյս մահու ջրեսցես
Այլակաւք արեան Որդւոյդ սիրելւոյ...

(ԽԸ, Ա)

Արեամբ քո սրսկեա՛ զշրջարկութիւն կայիցս,
Զհետ ելամտիցն կաթուածով կենարար
կողիդ գծագրեա...

(ՂԱ, Բ)

*

Բնագրային այս ակնհայտ առնչություններից բացի՝
գործը Գրիգոր Նարեկացուն վերագրելու համար կան նաև
այլ փաստեր, կապված Նարեկյան դպրոցի տեսական նա-
խահիմքերի հետ:

Մենք մեր վերջին շրջանի ուսումնասիրություններում
անդրադարձել ենք Դիոնիսիոս Արեոպագացու անունով
հայտնի երկերի գորեղ ազգեցությանը Նարեկյան դպրոցի
տեսական համակարգի և Գրիգոր Նարեկացու ստեղծագոր-
ծության վրա:

Առկա փաստերը հիմք են տալիս ասելու, որ արեոպա-
գիտյան բնագրերի ստեղծագործական յուրացման, խորքա-
յին ընկալման ու գեղագիտական-գեղարվեստական վերա-
մարմնավորման այնպիսի երևույթ, ինչպիսին Գրիգոր Նա-
րեկացու ստեղծագործությունն է, չի հանդիպում ողջ հայ
միջնադարում՝ և՝ խորքային, և՝ ծավալային իմաստով, քա-
նի որ նրանցով ներթափանցված են Գրիգոր Նարեկացու
բոլոր երկերը և հատկապես բանաստեղծական քերթվածնե-
րը:

Դիոնիսիոսն աստվածաբանության իր համակարգը
ստեղծել է իբրև օրհնաբանությունների ու փառատրու-

թյունների շարք, որոնք ներհյուսված են փիլիսոփայական-աստվածաբանական բնագրերի հետ:

Գրիգոր Նարեկացին զարգացրել է Դիոնիսիոս Արեոպագու գեղագիտությունն իր ստեղծագործության ծիրում՝ վերածելով այն անվերջ ստեղծաբանության, արարման շրջապտույտ տարերքի, հոգեոր, բանական շարժման մի անվերջ հղացքի՝ անվերջ նորարարության:

Մեջ բերենք Նարեկացու «Ո՞վ է Դա»-ի մեկնությունից մի հատված, ուր ի հայտ են գալիս դիոնիսիոսյան օրհնաբանական աղոթքի տեսության պատկերավոր բանաձևումները և հեղինակի բանաստեղծության նորարարական տարերքը:

Արդ, ո՞վ երանելի ժառանգք
Եւ որդիք Վերին երուսաղէմին,
Եւ մանկունք լուսեղէն եւ պանծալի առագաստի,
Լուարո՛ւք զայս բան նորասացիկ եւ աւրհնութիւն
նոր...

Եւ ընծայաբերական, եւ պտղաբերութիւն հոգեւոր
շրթանց,
Եւ ծաղիկ աստուածային մերոց խորհրդոց...
Արդ, զայս նոր ոսկէճաճանչ պսակ եղեալ ի գլուխս
ձեր՝
Գոհացարուք զպսակողէն եւ եկայք ընդ մեղ,
Զայնակցեալ փառաւորեսցուք զհիմնարկողն երկնի
եւ երկրի...

Իբրեւ հրեղէն լարս՝
Զսուրք զաղաւթս յերկինս առաքեսցուք⁶...:

⁶ Նույն տեղում, էջ 908-909:

Ցնծալով խայտասցուք ընդ առաջ նորա
Զհողեղէնս մեր բնութիւնս,
Ի գոյն պատուական ոսկւոյ փայլեսցուք
արժանաւոր գործաւք...
Եւ զանապատացեալ անձինս մեր
Կանաչազգեստս եւ ծաղկածինս [արասցուք]...
Եւ զշաւիղս ցողոյ սրբութեամբ...
Վերացեալք ընդ բազմաստեղսն,
Փայլեսցուք ընդ դասս անմարմնոց,
Իբրեւ զշայկն գեղեցիկ փայլելով՝
ԶԱստուած ընկալցուք:
Բացցուք զշտեմարանս մտաց մերոց
Եւ անցցուք իբրեւ զմազորաւթն՝
Փայլելով զպտուղ աւրհնութեան
ի շրթանց մերոց,
Եւ իբրեւ զգիշերավարն
Պայծառասցուք հոգւով խաւարային
կողմ աշխարհիս...
Աստուածային զաւրութեամբն զինեալ՝
Դեգերեսցուք Հոգւոյն արթնութեամբ
առ դուրս գեղեցիկ...
Եւ նորին արեամբն ներկեալ՝
Իբրեւ զնկարս ոսկւոյ եւ արծաթոյ՝
գեղեցիկս փայլեսցուք⁷...

Իսկապես, բանաստեղծի «Հոգեոր շուրթերը նորասացիկ խոսք և նոր օրհնաբանություն են պտղաբերում՝ իբրև հրեղեն լար սուրբ աղոթքներ երկինք առաքելով»:

⁷ Նույն տեղում, էջ 909-910:

ինչպես տեսնում ենք, բանաստեղծը այս ներբողում կրկնում է Դիոնիսիոսի՝ աղոթքներով՝ իբրև «Հրեղեն լարով» երկինք բարձրանալու պատկերը՝ օժտելով այն բառաստեղծման և պատկերավորման իր արտասովոր հանճարով:

Համեմատության համար ներբերենք Դիոնիսիոսի՝ աղոթքի տեսության այդ հատվածը.

«Եւ որպէս... բազմալոյս ինչ լար ի յերկնից ծայրութենէն կախեալ ի վերուստ մինչ ի վայր, եւ բուռն հարեալ զնմանէ ձեռն ձեռամք փոփոխելով քարշել թուելով զնա, ոչ զնա ի մեզ քարշեաք, զի վերուստ կապեալն, այլ մեք ելանեաք առ բարձրագոյնան բազմաճաճանչ ճառագայթիցն պայծառութիւն»⁸:

Նշված փաստերն, ահա, միանալով ձեռագրական ավանդույթին, ակներև են դարձնում, որ այս երկի հեղինակը Գրիգոր Նարեկացին է:

⁸ Տե՛ս The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by R. W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peters, 1987, էջ 149-150:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ներկա աշխատությունն ամբողջացնում է մեր բնագրագիտական հետազոտությունները նարեկացիագիտության բնագավառում, որի արդյունքում ի հայտ են եկել մեծաթիվ նոր բնագրեր, մեծարժեք երկեր, որոնք ներքին շերտերով փոխներթափանցված են, ներհյուսված են իրարիբուծ համարնագիր:

Հենց այս նորագյուտ բնագրերի՝ հիմնականում Անանիա Նարեկացու երկերի քննությամբ պարզորոշ դարձավ, որ Նարեկա վանական համալիրում ստեղծվել է հայ միջնադարի խոշորագույն դպրոցներից մեկը, որ նախատիպ է հանդիսացել հետագա հայ միջնադարյան բարձրագույն դպրոցների համար¹:

Այդ տեսակետն ամրապնդվում է նաև վերջին շրջանի մեր հետազոտություններով, որոնք ի հայտ են բերել դպրոցի ներկայացուցիչների նոր, մեծարժեք երկեր, որոնք հնարավորություն են տալիս պարբերացնել դպրոցի ձևավորման և զարգացման ընթացքի պատմությունը:

Նման խորապատկերում մեծապես աճում են դպրոցի գրական ժառանգության ուսումնասիրման հնարավորությունները. յուրաքանչյուր նոր բնագրային աղերս ու խորքային վերլուծություն շարժման մեջ է դնում, ի հայտ է բերում նոր բառաշխարհներ, իմաստային ոլորտներ, ներքին հղացքներ ու ճյուղավորումներ:

¹ Այս մասին տե՛ս Անանիա Նարեկացի. Կյանքն ու մատենագրությունը, Երևան, ԳԱ Հրատ., 1986:

Դպրոցի գրական ժառանգությունը հառնում է իբրև միեղեն կառույց, գոյաշխարհ, կենսադաշտ, որն անընդհատ ներքին շարժման մեջ է:

Հետազոտության ընթացքում այդ համաբնագիրը ներառում է դպրոցին հարազատ ամեն երկ և օտարում ամեն խորթ բնագիր, մեկնաբանություն ու վերլուծություն: Գրական ամեն փաստ անցնում է այդ փորձադաշտով՝ դառնալով չսխալվելու ամենամեծ երաշխիքը:

Աս, իրոք, հարաշարժ, հարակայող մի կառույց է, որ, թվում է, գտնվում է ինքնարարիչ խոսքի տիրույթում և իբրև հղացման ներքին տարերք՝ երբեք չի սպառվում և անընդհատ մեկնաբանութան կարիք ունի:

Ամեն սերունդ նորովի պետք է իմաստավորի այս հսկա գրական ժառանգությունը, իսկ մեր առաջնահերթ խնդիրն է եղել ի մի բերել այն՝ յուրաքանչյուր բնագիր ստուգելով, քննելով, լուսաբանելով այդ խորապատկերում:

Այս երկերի նմանատիպ լուսաբանությունը աննախադեպ մեծացնում է նարեկացիագիտության տեսադաշտը, դպրոցի ներքին աղերսներից զատ կամուրջ կապելով անցյալի հոգեոր ժառանգության և հետագա դարաշրջանների հոգեոր դպրոցների և զորեղ գրական ընթացքների միջև, որի կարելորագույն օրակներից մեկը նարեկյան դպրոցն է:

Շեշտենք մի հանդամանք:

Այս բնագրագիտական հետազոտությունները տեսանելի են դարձնում նարեկյան դպրոցի պատմության ընթացքը: Դրանք վերաստեղծում են բնագրերի, ծագումնա-

բանության, ժառանգական կապերի, փոխներթափանցման ու փոխազդեցության, դրանց գոյավորման կենդանի ընթացքի պատկերը:

Մեր խնդիրն է եղել առաջին հերթին բացահայտել այդ ստեղծաբանական կենդանի ընթացքը, քանի որ այդ բնագրերը հաճախ շատ ավելի խոսուն են, հարաշարժ ու վերծանելի այս փոխառնչությունների, ասոցիատիվ կապերի ու հարասությունների ոլորտում, քան առանձին մեկնաբանությունների ընթացքում:

Արդյունքում վերաստեղծվում է մի համարնագիր, որ նոր խորք, ծավալ ու տարածականություն է հաղորդում յուրաքանչյուր ստեղծագործությանը՝ մեծացնելով նրա իմաստային-խոհական դաշտը, ընդգծելով համընդհանուր կառույցի ճարտարապետությունը։ Այս ամենը նաև նոր ներքին հնչողություն է ստեղծում տաճարանման այդ կառույցի համար, խոսքն օժտելով նաև բեմբասացության և ճարտասահնության հնչերանգներով՝ բանաստեղծական հզոր տարերք հաղորդելով նրան։

Այս համարնագիրն իր ճյուղավորումներով ու ծավալումներով վկայում է ստեղծագործական հզոր պաթոսի, արարման մեծ տարերքի մասին, որ հատուկ էր Նարեկյան դպրոցին։ Այն վիթխարի ազդեցություն է թողել հայ մատենագրության, գիտության ու մշակութի վրա՝ ընդհուպ մինչև նոր և նորագույն շրջանները՝ կանխորոշելով նրանց զարգացման զորեղ ընթացքները։

Այս նորարարական տարերքը, որ ստեղծել է նաև նոր, աննախաղեպ բառապաշար, հազարավոր նորաբանություններ, անվերջ նորովի մեկնաբանության կարիք ունի: Նման մի մեկնաբանության փորձ է լինելու, ահա, աշխատության երկրորդ մասը, որ կներկայացնենք առաջիկայում: Այն ամփոփելու է մեր փորձը նարեկացիագիտության բնագավառում՝ հարստացված նոր հետազոտություններով:

L'ÉCOLE DE NAREK ET LA LITTÉRATURE ARMÉNIENNE DU X^e SIÈCLE

Les recherches des dernières années permettent de réunir en un tout l'héritage littéraire conservé des représentants de l'École de Narek, de l'examiner sur le fond général, avec ses nombreux liens et relations, d'étudier l'histoire de la création, de la formation et du développement du système éducatif de l'École. Dans cette optique, une circonstance est à noter. Dans l'histoire de la culture arménienne, l'École de Narek a aussi ceci de particulier qu'elle se base sur l'histoire de la vie et des activités d'une famille d'hommes de lettres. Rappelons qu'on compte parmi les membres de cette famille Anania Narékatsi, fondateur et recteur de l'École, et Khosrow Andzévatsi avec ses trois fils : Sahak, Hovhannes et Grigor. L'histoire de la vie et de l'œuvre de ces deux derniers est étroitement liée à l'École de Narek. Après Anania, c'est Hovhannes Narékatsi qui devient prieur du monastère. Khosrow et ses fils ont aussi des liens de parenté avec Anania Narékatsi, puisque l'épouse de Khosrow est la cousine d'Anania.

Les sources biographiques permettent d'établir qu'Anania Narékatsi est également parent du Catholicos Khatchik I^{er} Archarouni qui, à son tour, est le cousin du Catholicos Anania Mokatsi. Tout ceci témoigne de l'existence d'une unité spirituelle et familiale entre l'élite intellectuelle du X^e siècle.

L'histoire ne nous a pas conservé les noms et les œuvres des nombreux rhapsodes, compositeurs, rhéteurs, poètes, théologiens et commentateurs qui ont étudié et œuvré à l'École de Narek. L'on connaît seulement l'archimandrite Poghos, com-

mentateur des Saintes Écritures et compagnon d’Anania Narékatsi aux périodes de sa vie d’avant et durant les activités de l’École de Narek. Ses œuvres ne nous sont pas parvenues, mais il faut supposer qu’il a eu son rôle à jouer dans la formation des traditions d’analyse et d’exégèse de l’École. En étudiant la sphère du rayonnement de l’École, il faut y inclure l’historien Oukhtanes dont l’ouvrage historique a été écrit à l’exemple de l’*Histoire d’Arménie* de son maître Anania Narékatsi, sur sa commande expresse, d’après un programme et des principes historiographiques élaborés ensemble¹. Récemment encore, l’étude de l’héritage littéraire de l’École se limitait à l’œuvre de Grigor Narékatsi, conservée presque sans pertes. Toutefois, de nouvelles recherches sur les textes permettent d’élargir le cadre du processus littéraire de l’École. Il s’agit principalement de l’œuvre d’Anania Narékatsi dont les écrits récemment découverts sont de précieuses sources pour l’étude de l’époque de la formation et de développement de l’École de Narek, donnant la possibilité de surmonter certaines approches unilatérales dans cette sphère.

À leur tour, les œuvres de Khosrow Andzévatsi, créées dans un nouvel espace culturel, sont directement en relation avec la période de la formation de l’École de Narek et n’ont pas manqué de l’influencer profondément.

Les recherches consacrées aux œuvres de ces éminents auteurs soulèvent tout un système de questions et de problèmes dans les études dédiées à l’École de Narek en général, qui jusqu’alors n’était représentée que par l’œuvre de Grigor Naré-

¹ Voir **Hratchia Tamrazian**, *Anania Narékatsi, sa vie et son oeuvre*, Erevan, 1986, p. 40-43 (en arménien).

katsi, sans ses étapes précédentes, ni la périodicité de son évolution. Son héritage littéraire et philosophique modifie sensiblement nos notions sur la littérature de l'École de Narek, qui se présente à nous désormais comme une histoire à longues péripéties et processus littéraire évoluant. Dès lors, l'École d'art poétique de Narek se caractérise par trois périodes de développement en relation avec ses trois célèbres représentants : Khosrow Andzévatsi, Anania Narékatsi et Grigor Narékatsi.

Les recherches révèlent le lien héréditaire de leurs œuvres en brossant le tableau d'un processus littéraire qui constitue toute une école et une époque entière dans la culture médiévale arménienne.

Tant à sa période initiale qu'au cours de tout le processus de son évolution, la pensée théorique et analytique connaît un essor sans précédent au sein de l'École de Narek. On y rédige des écrits dogmatiques, théologiques et exégétiques, telles les œuvres monumentales *Commentaire du rituel de l'Office* de Khosrow Andzévatsi ; *Contre les Thondrakiens* et *Les Racines de la Foi*, ainsi que le traité *Révélation des symboles des chiffres* d'Anania Narékatsi ; le *Commentaire du Cantique des Cantiques* de Grigor Narékatsi et d'autres œuvres analytiques et exégétiques.

D'une manière générale, l'héritage des représentants de l'École inclut des œuvres de grande envergure, des écrits fondamentaux, dont les ouvrages cités ci-dessus, ainsi que le *Livre de préceptes* d'Anania Narékatsi et son *Histoire d'Arménie*, qui ne s'est pas conservée ; le *Livre de Lamentation* et le *Recueil des Gandz* (Chants de fête) de Grigor Narékatsi. Elles reflètent le système éducatif de l'École et les sources traitées et systéma-

tisées en passant par ce creuset, les connaissances « intérieures » et « extérieures ». Dès lors, elles sont indispensables pour établir le champ de vision et le cadre scientifique et éducatif de l’École.

Les sources utilisées suivent un circuit intérieur compliqué, se mêlant au rythme des activités de l’École et apportant leur contribution au puissant courant littéraire. Des faits récemment découverts attestent que l’École de Narek possède à son époque un ample système éducatif d’un niveau suffisamment élevé : elle atteint de remarquables résultats dans l’assimilation et l’enseignement des connaissances « extérieures » : de la science laïque et de l’art².

Apparemment, les œuvres théologiques des représentants de cette École et surtout les traités exégétiques d’Anania Narékatsi puisent abondamment aux sources de la science antique. La science antique est ici conséquemment et avec succès mise ici à contribution par la théologie ; elle est élevée à un niveau supérieur pour son époque, y accentuant le rôle de la logique et des connaissances systématisées, tout en introduisant dans la dogmatique un élément philosophique et exégétique.

Parmi cet héritage ancien, l’École de Narek choisit et met en relief la philosophie du néoplatonisme : Platon, Philon d’Alexandrie, David l’Invincible, Pseudo-Denys l’Aréopagite, les commentateurs arméniens de Denys de Thrace et Stépanos Siounétsi en chaîne ascendante. C’est probablement à l’exemple de David l’Invincible que s’éveille l’intérêt pour Aristote également.

² *Ibidem*, p. 74-77.

Le choix précis et l'orientation théorique manifestés lors de l'assimilation de l'héritage théorique du passé témoignent en faveur de son essence non éclectique, mais créative. L'assimilation de cet héritage n'est pas un but en soi, en tant que système achevé et clos, il est soumis à l'analyse et à l'exégèse, fournissant ainsi le fondement d'une sorte d'hybridation. Au cours de ce genre de recours et de références, on soulève des problèmes ontologiques, gnoséologiques, chimiques, esthétiques, grammaticaux, mathématiques, logiques, ainsi qu'en sciences naturelles et autres.

Au sein de l'École de Narek, il se passe une sorte de fermentation et d'hybridation, sensibles dans la théorie et la pratique de la théologie et de la littérature. Les connaissances et l'expérience des sciences laïques « extérieures » sont mises au service des exigences de l'époque, elles sont introduites dans les sphères de la théologie, ainsi que de la science et de l'art spirituels, où elles manifestent de nouvelles possibilités et rétablissent la filiation interrompue de l'évolution historique et culturelle.

Tout ceci témoigne en faveur des prémisses historiques du phénomène, de son nouveau développement et de son orientation vers un but précis.

Les œuvres susmentionnées constituent la base rationnelle d'une fermentation et d'un essor ultérieurs, puisque l'essor raisonnable est suivi d'un essor émotionnel, provoquant des décharges d'une puissance sans précédent dans le système des arts spirituels.

Les affinités sont également nombreuses avec le folklore tantôt exprimé directement, tantôt demeuré en profondeur. Si les thèses théoriques fondamentales ont leur source dans la pen-

sée théorique du passé, dans le processus créatif même, c'est le folklore qui est l'objet évident et immédiat à suivre et à imiter (tous les représentants de l'École accentuent spécialement cette circonstance et cherchent des points de comparaison entre leurs œuvres et le folklore. Cette triple entité est à l'origine de la synthèse et de la concentration hautement artistique du chant sacré et de la poésie. Ainsi, dans le système théorique général, l'analyse de l'œuvre des représentants de l'École de Narek est conduite dans plusieurs directions :

- a) précision de leur héritage littéraire qui se présente comme un groupe d'écrits suffisamment volumineux, à sujets et à strates multiples (naturellement, dans ce domaine le travail ne peut être considéré comme terminé, puisque les ouvrages connus ne constituent qu'une partie de cet héritage).
- b) tableau de la vie et de l'activité commune de ces éminents hommes de lettres, leur rôle dans l'évolution de la pensée théorique et de la poésie arménienne.
- c) mise en circulation de précieux documents sur la période de la formation et du développement de l'École de Narek, ce qui permettrait de surmonter les approches unilatérales dans cette sphère.
- d) introduction de tout un système de questions et de problèmes dans la sphère des études consacrées à l'École de Narek en général, sphère qui jusqu'à présent s'est limitée en fait à l'étude de l'œuvre de Grigor Narékatsi, sans ses étapes et ses degrés précédents.
- e) comme résultat, notre notion de la littérature créée à l'École de Narek se modifie sensiblement ; elle se présente désormais comme l'histoire d'un processus littéraire d'une durée d'environ un siècle.

f) révélation de la puissante influence de cette École sur la pensée théologique, la vie ecclésiastique, ainsi que le développement culturel du X^e siècle et de la période suivante.

g) accentuation des particularités et de l'importance de cette étape de la Renaissance arménienne, en tant que phénomène du christianisme et de la culture en général.

Nous avons examiné tous ces problèmes dans nos précédentes monographies³. Ils ont été également discutés aux symposiums internationaux et dans certaines monographies en relation avec le millénaire du *Livre de Lamentation* de Grigor Narékatsi et plus tard.

*

Dans la sphère des études consacrées à Narek, un problème se pose en relation avec l'appartenance à Grigor Narékatsi d'un groupe d'œuvres qui lui sont attribuées, mais qui font l'objet de controverses.

Les données manuscrites et les opinions exprimées au sujet de ces œuvres ont été résumées par P. Khatchatrian dans le remarquable ouvrage *Grigor Narékatsi et le Moyen Âge arménien*⁴ en rejetant dans la plupart des cas la possibilité der leur appartenance à Grigor Narékatsi. Toutefois, six de ces quinze écrits appartiennent, selon nous, à sa plume.

Deux de ceux-là, à savoir *Préceptes pour une foi juste et des mœurs pures et morales* et *Commentaire de « Qui est Ce-*

³ *Anania Narékatsi, sa vie et son œuvre*, Erevan, 1986 ; *L'École de Narek*, Erevan, 2000 ; *Grigor Narékatsi et le néoplatonisme*, Erevan, 2004 ; *La vie de saint Grigor Narékatsi*, Erevan, 2005 ; *Grigor Narékatsi et l'École cilicienne*, Erevan, 2008 ; *Une Homélie de saint Grigor Narékatsi*, Erevan, 2009 (Tout en arménien).

⁴ **P. Khatchatrian**, *Grigor Narékatsi et le Moyen Âge arménien*, St. Etchmiadzine, 1996, p. 119-158.

lui ? », rédigé par saint Grigor Narékatsi sont inclus dans le tome consacré à l’œuvre de Grigor Narékatsi de la série *Auteurs médiévaux arméniens*, publiée par le Catholicossat arménien de la Grande Maison de Cilicie⁵. Ceci est fondé sur les recherches de cette dernière période⁶. Les quatre autres sont inclus dans le tome du X^e siècle, constitué en majeure partie des œuvres de l’École de Narek.

La publication de ce tome a suivi celle du tome de Grigor Narékatsi, bien que chronologiquement parlant cela aurait dû être le contraire. Toutefois, le grand volume de recherches sur les textes, indispensables pour rédiger et compléter ce tome ont exigé du temps (la majeure partie des ouvrages inclus dans ce tome est publiée pour la première fois).

Ces recherches sur les textes ont permis d’élargir nos notions sur l’étendue et le rayonnement de l’École de Narek, ainsi que sur l’héritage littéraire de ses célèbres représentants, plus spécialement Grigor Narékatsi.

Le tome mentionné apporte également des précisions essentielles à l’héritage de Khosrow Andzévatsi et d’Anania Narékatsi, en le complétant.

On y trouve incluse parmi les œuvres d’Anania Narékatsi l’*Ode dédiée à la Sainte Église...*, injustement attribuée à Anania Sanahnétsi⁷, ainsi qu’un précepte découvert dans le ma-

⁵ « Grigor Narékatsi » dans *Auteurs médiévaux arméniens*, t. XII, X^e siècle, Antélias, Liban, 2008 (en arménien).

⁶ Voir en particulier : **H.G. Mirzoyan**, « Sur le problème de l’héritage littéraire de Grigor Narékatsi » dans *Banber Erevani Hamalsarani*, Erevan, 2004, N° 1, p. 64-84 (en arménien) ; **H.H. Tamrazian**, *Grigor Narékatsi et le néoplatonisme*, Erevan, 2004, p. 79-91 (en arménien).

⁷ Voir **H. Keusseyan**, *Anania Sanahnétsi*, St. Etchmiadzine, 2000, p. 19-43 (en arménien).

nuscrit N° 1329 du Maténadaran (1272, scribe : Sarkis, réceptionnaire : évêque Grigor Bdjnétsi, lieu : monastère Néghos de Bdjni) qui est un recueil incluant l'ouvrage *Commentaire du rituel de l'Office* de Khosrow Andzévatsi. C'est dans les marges de ce manuscrit que sont écrits les *Préceptes et canons d'Anania pour les prêtres et le peuple*, dont le dernier était inconnu. Parallèlement, l'étude des quatre autres œuvres de Grigor Narékatsi par comparaison au contexte littéraire et philosophique de l'École de Narek nous a conduit à conclure qu'elles appartiennent également à la plume de Grigor Narékatsi.

Ce sont : *Homélie, composée par saint Grigor Narékatsi* ; *Ordre et canon des prières, composés sur la demande d'un moine par l'âme en éveil de Grigor Narékatsi...* ; *Parole de consolation lors du décès des archimandrites et des prêtres pleins de sagesse, composée par saint Grigor Narékatsi* et *Commentaire de « Notre Père qui êtes aux cieux » enseigné par le Seigneur à ses disciples et par eux, à leur tour, à tous les fidèles pour prier Notre-Seigneur Jésus-Christ*.

Notre but a été de présenter dans ce tome l'histoire de la formation et de l'évolution de l'École de Narek dans le contexte de toute la littérature du X^e siècle, avec ses liens intérieurs et ses interrelations, car elle a eu des relations multiples et variées avec les fermentations internes et les mouvements du siècle, ses bouleversements spirituels et politiques, les puissantes luttes centripètes religieuses et dogmatiques, exprimés dans la littérature ecclésiastique. Les voies d'un certain nombre d'hommes publics du siècle se sont croisées avec l'École de Narek ; certains ont été attirés par cette École ; souvent, ses représentants ont soulevé des opinions contre les manifesta-

tions extrêmes des autorités et de la mentalité ecclésiastique, au point d'être accusés de sympathiser avec les sectes.

Toutefois, l'essentiel est que c'est à eux qu'étaient liés et autour d'eux qu'étaient concentrés les problèmes de la compréhension théorique et théologique de la lutte dogmatique anti-sectes et anti-chalcédonienne, dans le but d'élever cette lutte à un niveau philosophique et exégétique supérieur. Et il s'agit ici, en premier lieu d'Anania Narékatsi, ecclésiastique et homme politique vraiment remarquable, intellectuel libre-penseur, historien, philosophe, théologien, commentateur et musicien, fondateur et chef de l'École de Narek, se trouvant à la tête de la lutte antisectes et anti-chalcédonienne, partageant les opinions des Catholicos Anania Mokatsi et Khatchik I^{er} Archarouni, leur parent, maître de Hovhannes et de Grigor Narékatsi, leur parent du côté maternel.

D'autre part, la vie et l'œuvre de Khosrow Andzévatsi, autre grand homme de l'époque, est repensée et interprétée de nouvelle manière dans ce contexte. Il se présente comme un éminent théoricien des arts spirituels, remarquable représentant de la poésie médiévale arménienne, ayant fortement marqué l'École de Narek, surtout à la période de sa fondation. Ses commentaires, ses sermons enflammés et ses préceptes ont influencé les opinions théoriques d'Anania Narékatsi. Son *Commentaire du rituel de l'Office* a servi de manuel à l'École de Narek.

Traduit de l'arménien par
Aïda Tcharkhtchyan

Բովանդակություն

Նարեկյան դպրոցի մատենագրությունը	3
Խոսրով Անձեացու մատենագրական ժառանգության հարցի շուրջ	13
Անանիա Նարեկացու մատենագրական ժառանգությունը	29
Անանիա Նարեկացու «Հայոց պատմության» հարցը	30
«Հակածառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց»	41
«Սակս բացայայտութեան թուոց»	58
Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դավանաբանական երկը	69
Երանելոյ Հօր՝ Անանիա Հոգեվարժ փիլիսոփայի «Ներբու- ղեան ասացեալ ի սուրբն Կաթուղիկէ եկեղեցի» երկը	121
Անանիա վարդապետի անունով Հայտնի խրատները նոր փաստերի լույսի տակ	163
Գրիգոր Նարեկացուն վերագրվող երկերի Հեղինակային պատկանելության հարցը	213
Գրիգոր Նարեկացու «Բան խրատու վասն ուղիղ Հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատը	216
«Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ»	234
«Կարգ եւ կանոն աղաւթից»	276
«Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ վասն վարդապետաց եւ իմաստուն քահանայից վախճանի բան գովութեան եւ միսիթարութեան»	292
«Մեկնութիւն «Ո՞վ է դա»-ի	309
Վերջաբան	316
L'école de Narek et la littérature arménienne du X ^e siècle	320

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵՎ ՆԱՐԵԿՑԱՆ ԴՊՐՈՑԸ
ԳԻՐՔ Ա.

РАЧЬЯ ТАМРАЗЯН
ГРИГОР НАРЕКАЦИ И НАРЕКСКАЯ ШКОЛА
Книга I

HRATCHYA TAMRAZZYAN
GRIGOR NARÉKATSI ET L'ÉCOLE DE NAREK
Livre I

*Հրատ. խմբագիր՝ Նորայր Ղազարյան
Էջադրումը և համակարգչային ձևավորումը Շողիկ Զադոյանի*